9(47.925)
Բ-15

Խ. Հ. ԲԱԴԱԼՅԱՆ

ԳԵՐՄԱՆԱ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՕԿՈՒՊԱՑՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1918 ԹՎԱԿԱՆԻՆ

ԵՐԵՎԱՆ

9(47,925)
Բ-15

Х. А. БАДАЛЯН

ГЕРМАНО-ТУРЕЦКИЕ ОККУПАНТЫ В АРМЕНИИ В 1918 ГОДУ

ИЗДАТЕЛЬСТВО
ЕРЕВАНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА
19 * ЕРЕВАН * 62

75

Խ. Հ. ԲԱԴԱԼՅԱՆ

ԳԵՐՄԱՆԱ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՕԿՈՒՊԱՆՏՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1918 ԹՎԱԿԱՆԻՆ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
19 * ԵՐԵՎԱՆ * 62

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

Ներկա աշխատությունը լույս է տիրում 1918 թ. Հայաստանում գերմանա-թուրքական օկուպանտների կատարած ավերածությունների, թալանի ու կողոպուտի, ինչպես նաև այդ գործին ամերիկա-անգլիական իմպերիալիստների, անդրկովկասյան կոնտրռևոլյուցիոն բլոկի, դաշնակցականների անմիջական մասնակցության պատմության վրա:

ОТ ИЗДАТЕЛЬСТВА

Настоящая работа освещает историю разрушений, грабежа и разбойнической деятельности германо-турецких оккупантов в Армении в 1918 г., а также непосредственное участие в этом деле американо-английских империалистов, закавказского контрреволюционного блока, дашнаков.

Պատասխանատու խմբագիր՝ Ե. Գ. ՍԱՐԿԻՍՈՎ

Հրատարակվում է
Երևանի Պետական համալսարանի
խմբագրական-հրատարակչական խորհրդի
որոշմամբ

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի պատմական հաղթանակը վճռական նշանակություն ունեցավ ցարական Ռուսաստանի բոլոր ճնշված ժողովուրդների, հատկապես բազմադարյա հայ ժողովրդի ազատության և ազգային վերածննդի համար:

Վ. Ի. Լենինը 1917 թ. հոկտեմբերի 25-ին (նոյեմբերի 7), «Սովետական իշխանության խնդիրների մասին» նշանավոր զեկուցման մեջ, Հոկտեմբերյան ռևոլյուցիայի ազատարար մեծ դերի մասին նշել է.

«...Այս հեղաշրջման նշանակությունն այն է, որ մեր երկրում կլինի Սովետական կառավարություն, իշխանության մեր սեփական օրգանը, առանց բուրժուազիայի որևէ մասնակցության: Ճնշված մասսաներն իրենք կստեղծեն իշխանություն: Հին պետական ապարատը ևս պիտի ջախջախվի հին պետական ապարատը և պետք է ստեղծվի կառավարման նոր ապարատ՝ իր դեմս սովետական կազմակերպությունների»[1]:

«Այսուհետև,—շարունակում է Լենինը,—նոր շրջան է սկսվում Ռուսաստանի պատմության մեջ, և ամբողջ երրորդ ռուսական ռևոլյուցիան վերջին հաշվով պետք է հասցնի սոցիալիզմի հաղթանակին»[2]:

Ինչպես Ռուսաստանի, այնպես էլ Ադրբեջանի, Վրաստանի և Հայաստանի տարբեր դասակարգեր միանգամայն տարբեր դիրք են բռնում Հոկտեմբերյան ռևոլյուցիայի նկատմամբ:

Անդրկովկասի բանվորները, գյուղացիներն ու առաջադեմ ինտելիգենցիան, ոգեշնչված ռուս մեծ ժողովրդի այդ հերոսական հաղթանակով, կոմունիստական կազմակերպությունները Անդրկոմի գլխավորմամբ, պայքարի են ելնում բուրժուա-նացիոնալիստական պարտիաների դեմ, կապիտալիստների և կալվածատերերի

[1] Վ. Ի. Լենին, երկեր, հ. 26, էջ 284:
[2] Նույն տեղը:

տիրապետությունը տապալելու և ռուսական ռևոլյուցիոն պրոլետարիատի օրինակով ամբողջ երկրամասում Սովետական իշխանություն հաստատելու համար։

«Մենք միշտ քարոզել ենք, և այժմ էլ պիտի անդադար քարոզենք,— գրում է «Կոմունիստ» շաբաթաթերթը,— որ հայ աշխատավոր ժողովրդի փրկությունը Ռուսաստանի բանվորա-գյուղացիական խորհուրդների իշխանության մեջ է։ Եվ ով որ դեմ է խորհուրդների իշխանությանը, նա դավաճան է, նա ժողովրդի թշնամին է»[1]։

Անդրկովկասի և Հայաստանի աշխատավորության կողմից երկրամասի բուրժուա-կալվածատիրական հետադիմական բլոկի դեմ մղվող անհաշտ պայքարի ժամանակ ավանգարդային դերը պատկանում էր Բաքվի հերոսական պրոլետարիատին, որը 1918 թվականի գարնանը ջախջախում է հակառևոլյուցիոն սև ուժերը Բաքվում և իշխանությունը վերցնում է իր ձեռքը, որից հետո Բաքվի Սովետը հետևողական պայքար է ծավալում ամբողջ Անդրկովկասում Սովետական իշխանություն հաստատելու համար։

Բաքվի ռևոլյուցիոն պրոլետարիատի կոչով Անդրկովկասի բոլոր մասերում ծավալվում են բանվորա-գյուղացիական և զինվորական հուզումները, որոնք ուղղված էին երկրամասի բուրժուա-կալվածատիրական տիրապետող դասակարգերի դեմ։

«Գանձակի նահանգում,— գրում է այդ մասին Բաքվի բոլշևիկյան կոմիտեի օրգան «Բանվորի խոսք» թերթը,— ագրարային շարժումը սկսվել է հունվարի սկզբներից... և հետզհետե վրիժառության բնույթ ստացավ։ Այրեցին բոլոր հողատիրական կալվածքները, կոտորեցին բոլոր խաներին և բեկերին իրենց ընտանիքներով, գրավեցին նրանց ունեցվածքը»[2]։

Այդպես էր դրությունը նաև Բաքվի նահանգում և Ադրբեջանի մյուս գավառներում։

Ագրարային շարժումները ուժեղ թափով ծավալվում են նաև Վրաստանի ու Հայաստանի բոլոր գավառներում, մասնավորապես Արևմտյան Վրաստանում, Գորիի գավառում, Քութաիսիի նահանգում, Թելավիի և Դուշեթիի գավառներում։

Անդրկովկասյան Սեյմը սարսափահար լինելով օրեցօր ծավալվող ագրարային շարժումներից, Թիֆլիսից ուղարկում է բան-

[1] «Կոմունիստ», շաբաթաթերթ (օրգան հայկական գործերի կոմիսարիատի), Մոսկվա, 1918 թ., № 1։

[2] «Բանվորի խոսք», 1918 թ., № 4։

դանոցներով և գնդացիրներով զինված բազմաթիվ ջոկատներ, որոնք ավերում են բազմաթիվ գյուղեր։ Այդ անհավասար մարտերի ժամանակ ապստամբները անցնում են լեռները և շարունակում պարտիզանական պայքարը Սեյմի հրոսակախմբերի դեմ։

Այդ պայքարի ժամանակ «...տուժել են նաև խաղաղ բնակիչները, մոտավորապես 150 կանայք և երեխաներ սպանվել են»[1] ոստիկանական ջոկատների կողմից։

Այդպես է եղել դրությունը նաև Հայաստանում։ Անդրերկոմի օրգան «Բանվորի կռիվ» թերթը կոչ է անում Հայաստանի աշխատավորությանը վանքապատկան և կալվածատիրական հողերը բռնագրավելու, նշելով, թե՝ «էջմիածնի և ուրիշ վանքերի կալվածները դեռ խլված չեն սեպագլուխներից։ Դեռ կալվածատերերն ու թավադները վայելում են իրենց սեփական հողերից ստացված արդյունքները»[2]։

Այսպիսի պայմաններում ագրարային շարժումն ուժեղ թափով ծավալվում է, ընդգրկելով նորանոր շրջաններ։ Ինչպես բանվորական ռևոլյուցիոն շարժումները, այնպես էլ գյուղացիական շարժումները կազմակերպում և ղեկավարում են կոմունիստական կազմակերպությունները։

«Փրկության ուրիշ ելք չկա Անդրկովկասի հեղափոխության համար, համարձակ ու վճռական կերպով պետք է պարզենք հեղափոխական դրոշակը և անկախ կռիվ սկսենք նացիոնալիստական բեկական կոմիսարիատի դեմ»[3],— կոչ է անում «Բանվորի կռիվ» թերթը։

Բանվորա-գյուղացիական շարժումների ծավալման հետ զուգընթաց, Կովկասյան ռազմաճակատի զորամասերում զարգանում են նաև զինվորական հուզումները, որոնք ուղղված էին Անդրկովկասյան կոմիսարիատի և Սեյմի ներքին ու արտաքին հետադիմական քաղաքականության դեմ, որոնք իրենց հակաժողովրդական քաղաքականությամբ քայքայում էին ռազմաճակատը, լուրջ վտանգ ստեղծելով երկրամասի աշխատավորության համար։

Դեռ 1917 թ. վերջերից սկսած Անդրկովկասի ռազմաճակատի զորամասերում տեղի են ունենում բազմաթիվ միտինգներ, որտեղ դատապարտում են Անդրկովկասի կոմիսարիատի, այնուհետև Սեյմի հակաժողովրդական, դավաճանական քաղաքականությունը։

[1] ՀՒԿՊԱ, ֆ. 393, ց. 4, գ. 13, թ. 35—36։

[2] «Բանվորի կռիվ», 1918 թ., № 3։

[3] Նույն տեղը, № 16։

Ահա այդպիսի միտինգներից մեկի ընդունած բանաձևը.

«Մենք՝ վրացիներս, հայերս, օսեթիներս և իմերեթիներս, Համադանի կայազորի զինվորներս, 1917 թ. դեկտեմբերի 8-ին 300 հոգով հավաքվելով միտինգի, քննարկեցինք գեներալ Պրժևալսկու հեռագիրը ազգային գնդերի ձևավորման և ազգությունների բաժանման մասին։ Մենք չենք ուզում բաժանվել ռուսներից։ Մենք ուզում ենք լինել ռուսների հետ միասին, ինչպես ապրել ենք առաջ։ Դրա համար էլ չենք ենթարկվում գեներալ Պրժևալսկու հրամանին և չենք ճանաչում բուրժուական Անդրկովկասյան կոմիսարիատը, որը բաժանում է մեզ ազատ Ռուսաստանից։ Մենք ճանաչում ենք միայն ժողովրդական Կոմիսարների Սովետի և բանվորների, զինվորների ու գյուղացիների Սովետների իշխանությունը։

Խնդրում ենք բոլոր վրացի, հայ, իմերեթի և օսեթ ընկերներին՝ միանալ մեր որոշմանը։

Կեցցե՛ միասնական ազատ Ռուսաստանը։

Կեցցե՛ միությունը, հավասարությունը և եղբայրությունը ռուսների հետ։

Կեցցե՛ բանվորա-գյուղացիական կառավարությունը՝ հանձին ժողովրդական Կոմիսարների Սովետի»[1]։

Այսպիսին է եղել Անդրկովկասի բանվորների, գյուղացիների և զինվորների դիրքը Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի նկատմամբ։

* * *

Սակայն Անդրկովկասի բուրժուա-նացիոնալիստական պարտիաները՝ դաշնակները, մուսավաթականները, վրացական մենշևիկները և մյուս հակառևոլյուցիոն սև ուժերը, կոմիսարիատի, ապա Սեյմի գլխավորությամբ խիստ թշնամական դիրք են բռնում Սովետական Ռուսաստանի և Հոկտեմբերյան ռևոլյուցիայի նվաճումները հետևողականորեն պաշտպանող Անդրկովկասի եղբայրական ժողովուրդների ու կոմունիստական կազմակերպությունների դեմ, պարզ կերպով զգալով, որ հաղթանակած Հոկտեմբերյան ռևոլյուցիան անխուսափելի մահ է բերում նաև իրենց՝ Անդրկովկասի շահագործող դասակարգերին՝ բուրժուազիային և ազնվականությանը։ Այդ պատճառով էլ բուրժուա-նացիոնալիստական պարտիաները՝ մենշևիկները, դաշնակները և մուսավաթականները

[1] «Կավկազսկի ռաբոչի», 1918 թ. հունվարի 21, № 15։

երկրամասում բանվորա-գյուղացիական ռևոլյուցիոն շարժումները ճնշելու և Սովետական Ռուսաստանի դեմ միացյալ ուժերով պայքարելու համար ժամանակավորապես հրաժարվում են իրենց ներքին տարաձայնություններից և ստեղծում են հակաժողովրդական, հակասովետական կոալիցիա՝ Անդրկովկասյան կոմիսարիատը (1917 թ. նոյեմբերի 15-ին), այնուհետև Անդրկովկասյան Սեյմը, որը բացվում է 1918 թ. փետրվարի 10-ին Ամն-ի և Անտանտի ներկայացուցիչների մասնակցությամբ։

Անդրկովկասի բուրժուա-նացիոնալիստական պարտիաների հակառևոլյուցիոն բլոկ հանդիսացող կոմիսարիատը, այնուհետև Սեյմը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ սեփական ուժերով չեն կարող վերջ տալ երկրամասում ծավալվող բանվորա-գյուղացիական ռևոլյուցիոն շարժումներին, բաբվում Սովետական իշխանությունը տապալելու և Սովետական Ռուսաստանի դեմ միացյալ ուժերով պայքարելու համար սերտ գործարքի մեջ են մտնում իմպերիալիստական երկու բլոկների հետ՝ սկզբում անգլո-ամերիկյան, իսկ հետո՝ գերմանա-թուրքական։

Այսպիսով, Սեյմում բլոկ կազմող բուրժուա-նացիոնալիստական պարտիաների հակաժողովրդական, դավաճանական քաղաքականության հետևանքով Անդրկովկասը դառնում է անգլո-ամերիկյան և գերմանա-թուրքական իմպերիալիստական բլոկների համառ պայքարի ասպարեզ։

Ինչպես կոմիսարիատ, այնպես էլ Սեյմի ստեղծման գործում շատ կարևոր դեր են խաղացել անգլո-ամերիկյան ներկայացուցիչները, հատկապես Թիֆլիսի ամերիկյան կոնսուլ Ստիվենսը։ Անդրկովկասյան կոմիսարիատը և Սեյմը, կատարելով անգլո-ամերիկյան իմպերիալիստների կարգադրությունները, որոշում են պատերազմը շարունակել գերմանա-թուրքական խմբավորման դեմ և հասնել հաղթանակի։

Սակայն Անդրկովկասյան Սեյմը շատ շուտով հրաժարվում է անգլո-ամերիկյան օրիենտացիայից և սկսում է վարել գերմանա-թուրքական օրիենտացիա։ Այդ բացատրվում է նրանով, որ գերմանական հրամանատարությունը 1918 թվականին, մարտից հուլիս ամիսները ընկած ժամանակամիջոցում, Արևմտյան ռազմաճակատում հարձակման է անցնում Անտանտի բլոկի զորամասերի դեմ և հասնում տակտիկական խոշոր հաջողությունների։

Անտանտի զորքերը առաջին լուրջ անհաջողությունը կրում են Ամենի շրջանում (մարտի 21-ից ապրիլի 4-ը)։ Գերմանական

գլխավոր հրամանատարությունը ձգտում է գրավել Համանշի ափերը, անջատել Անգլիան Ֆրանսիայից, ջախջախել թե՛ մեկին, թե՛ մյուսին։

Գերմանական զորքերը երկրորդ լուրջ հաղթանակը տանում են Լիս գետի շրջանում (ապրիլի 9-ից մայիսի 1-ը)։

Գերմանական բանակները երրորդ լուրջ հաջողությունը ձեռք են բերում Ռեյմսի շրջանում, վերցնելով 60 000 գերի, 600 տարբեր տրամաչափի թնդանոթներ, նորից անցնելով Մառն գետը, վտանգ ստեղծելով Փարիզի համար։

Գերմանական հրամանատարությունը չորրորդ հաջողությունը ձեռք է բերում Մառն գետի շրջանում, որտեղ նույնպես հասնում է տակտիկական հաջողությունների։

Արևմտյան ռազմաճակատում ստեղծված այդ արտակարգ ծանր դրության հետևանքով Անտանտի բլոկի պետությունները շեն կարողանում ռազմական և տնտեսական հարկ եղած օգնություն ցույց տալ Անդրկովկասյան Սեյմին, երկրամասում բանվորա-գյուղացիական ռևոլյուցիոն շարժումները ճնշելու և գերմանա-թուրքական խմբավորման դեմ պատերազմական գործողությունները շարունակելու համար։

Ստեղծված դրության հետևանքով, ինչպես մենշևիկները և մուսավաթականները, այնպես էլ Սեյմի մյուս անդամը հանդիսացող դաշնակները անգլո-ամերիկյան օրիենտացիայի փոխարեն ընդունում են գերմանա-թուրքական օրիենտացիա, որպեսզի գերմանա-թուրքական իմպերիալիստների սվինների միջոցով կարողանան ճնշել ռևոլյուցիոն շարժումները և ամրապնդեն իրենց տիրապետությունը։ Անդրկովկասի ժողովուրդների համար ստեղծված այդ ահեղ վտանգի պայմաններում 1918 թվականի ապրիլի 8-ին հրավիրվում է Անդրկովկասի Սեյմի արտակարգ նիստը, որտեղ քննարկվում է Անդրկովկասի, այսպես կոչված, անկախության և նրա օրիենտացիայի հարցը, որի որոշումները ողբերգական նշանակություն ունեցան Անդրկովկասի, հատկապես Հայաստանի աշխատավորության և Բաքվի ռևոլյուցիոն պրոլետարիատի համար։

Սեյմի նիստում Անդրկովկասի անկախության մասին հատուկ զեկուցումով հանդես է գալիս Անդրկովկասի «Անկախության» դեկլարացիան մշակող հանձնաժողովի նախագահը՝ Օնիաշվիլին, հայտարարելով, թե՝ «...այսօր ունենալ ռուսական օրիենտացիա, այդ նշանակում է ունենալ ռեակցիոն օրիենտացիա...»։ «Այսուհետև,—

ասում է նա,—մեր օրիենտացիան պետք է լինի Անդրկովկասյան անկախ ֆեդերատիվ դեմոկրատական հանրապետություն»[1]։

Նրանից անմիջապես հետո, Սեյմի մենշևիկյան ֆրակցիայի անդամներից մեկը՝ Գվազավան, իր ճառում ոչ միայն հաստատում է Օնիաշվիլու հանձնաժողովի դեկլարացիան Անդրկովկասը Սովետական Ռուսաստանից անջատելու և գերմանա-թուրքական օրիենտացիա ընդունելու մասին, այլև ավելացնում է.

«Անդրկովկասի ազգությունները երեք մի դար առաջ ընդունեցին ռուսական օրիենտացիա, որովհետև միայն Ռուսաստանի միջոցով նրանք կարող էին ստանալ Եվրոպայից լույս և գիտություն, այսօր մենք կարող ենք Ստամբուլի և Դարդանելի միջոցով ստանալ եվրոպական լույսը և գիտությունը»[2]։

Իսկ վրացական մենշևիկների պարագլուխ Ջխեիձեն ուղղակի հայտարարում է. «...լավ է Թուրքիայի գիրկն անցնել, քան բոլշևիկներին հարել»[3]։

Սեյմի նիստերում դաշնակների և մուսավաթականների ֆրակցիաները ևս ջերմորեն պաշտպանում են Անդրկովկասը Սովետական Ռուսաստանից անջատելու և թուրքական օրիենտացիա ընդունելու տեսակետը։ Այսպես, օրինակ, Սեյմի ապրիլի 9-ի նիստում մուսավաթական ֆրակցիայի անունից հանդես է գալիս Ռասուլ-Զադեն և հայտարարում, թե՝ անհապաղ «պետք է հրապարակել Անդրկովկասի անկախությունը»[4]։

Մուսավաթական ֆրակցիայի մյուս անդամները՝ Խան-Խոյսկին, Ուսուբ-Բեկովը, Թոփչի-Բաշևը և մյուսները հայտարարում են, թե անհրաժեշտ է «Անդրկովկասը անջատել Ռուսաստանից և Թուրքիայի տիրապետությանը ենթարկել»[5]։

Ապրիլի 9-ին, Սեյմի նույն նիստում մենշևիկյան և մուսավաթական ֆրակցիաների ներկայացուցիչներից անմիջապես հետո հանդես են գալիս նաև դաշնակցության ֆրակցիայի անդամները, որոնք պաշտպանում են մենշևիկյան ու մուսավաթական ֆրակցիաների անդամների առաջարկությունները Անդրկովկասը Սովետական Ռուսաստանից անջատելու մասին։ Այսպես, օրինակ, Ռ.

---

[1] «Մշակ», 1918 թ., № 76։
[2] Նույն տեղը։
[3] Տե՛ս Մ. Շահումյան, Հոդվածներ և ճառեր, 1953, էջ 375։
[4] «Մշակ», 1918 թ., № 76։
[5] Նույն տեղը։

Քաջազունին հանդես գալով դաշնակների ֆրակցիայի անունից, հայտարարում է. «Սեյմի դաշնակցական ֆրակցիայի կողմից հայտարարում եմ, որ գտնելով ամբողջ պատասխանատվությունը մեր արած քայլի, միանում եմ Անդրկովկասը անկախության հռչակելու առաջարկին»[1]։ Այսպիսով, Անդրկովկասի բուրժուա-նացիոնալիստական պարտիաների հեռադիմական բլոկը հանդիսացող Սեյմը 1918 թ. ապրիլի 9-ի իր արտակարգ նիստում միաձայն որոշում է ընդունում Անդրկովկասը Սովետական Ռուսաստանից անջատելու և գերմանա-թուրքական օրիենտացիա ընդունելու մասին։ Սեյմի հակաժողովրդական «...այս որոշումը ընդունվում է ծափահարություններով»[2]։

Դաշնակների ֆրակցիայի մյուս ղեկավարը՝ Ալ. Խատիսյանը 1918 թվականի գարնանը Տրապիզոնում տեղի ունեցած հաշտության բանակցություններների ժամանակ, իր ելույթը նվիրելով Անդրկովկասը Սովետական Ռուսաստանից անջատելու և թուրքական օրիենտացիա ընդունելու հարցին, հայտարարել է, թե՝ «Քանի որ Կովկասը անջատվել է Ռուսաստանից, հնարավոր է, որ հայերը կընտրեն իրենց համար թուրքական օրիենտացիա»[3]։

Վերոհիշյալ փաստերը վառ կերպով վկայում են այն մասին, որ մենշևիկների, մուսավաթականների և դաշնակների հակաժողովրդական բլոկ հանդիսացող Սեյմը ձգտում էր «...Կովկասը բաժանել Ռուսաստանից և թուրքական պրոտեկտորատ հռչակել»[4]։

Սեյմի այդ դավաճանական քաղաքականությունը խոր գայթ է առաջացնում երկրամասի աշխատավորական լայն շրջաններում։ Այդ առթիվ Վրաստանի, Հայաստանի և Ադրբեջանի բոլոր քաղաքներում և գավառներում բողոքի միտինգներ են տեղի ունենում, որտեղ Սեյմին դատապարտում են Սովետական Ռուսաստանից անջատվելու և գերմանա-թուրքական օրիենտացիա ընդունելու առթիվ, համարելով այդ բռնություն։

Սովետական իշխանությունը, արտահայտելով Անդրկովկասի ժողովուրդների անկեղծ ցանկությունները, իր մի շարք նոտաներում, դատապարտելով Սեյմի դավաճանական այդ քաղաքականությունը, նշում է.

[1] «Մշակ», 1918 թ., № 76։
[2] Նույն տեղը։
[3] ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 200, գ. 7, թ. 11։
[4] Ս տ. Շ ա հ ու մ յ ա ն, Հոդվածներ և ճառեր, 1953, էջ 344։

«...Թիֆլիսի այսպես կոչված Կովկասյան կառավարությունը մարդկանց մի խումբ է՝ առանց ժողովրդական լայն մասսաների լուրջ աջակցության», միաժամանակ ավելացնում է, թե՝ «Անդրկովկասի անջատումը երբեք չի ճանաչվել Ռուսական Սովետական կառավարության կողմից»[1]։

Դաշնակների թուրքասիրական քաղաքականությունը սկսվում է մինչև առաջին համաշխարհային պատերազմը, իսկ ավելի հետևողականորեն՝ Հոկտեմբերյան Սոցիալիստական ռևոլյուցիայից հետո։ Այսպես, օրինակ, դեռ 1907 թ. Ժնևում հրավիրված դաշնակների 4-րդ համագումարը ընդունում է հետևյալ որոշումը.

«Միևնույն ատեն, թուրքերու մեջ տարածած անհիմն թյուրիմացություններուն վերջ տալու համար, ժողովը պարտք կհամարի հայտարարել, որ դաշնակցությունը Թուրքիո մեջ ունեցած չէ և չունի անջատական ոչ մեկ ձգտում...»[2]։

Դաշնակների թուրքասիրական քաղաքականությունը ավելի ցայտուն կերպով դրսևորվում է դաշնակների 4-րդ համագումարի կողմից ընդունված ծրագրում, որտեղ նշված է. «Թուրքահայաստանը պետք է կազմի Օսմանյան սահմանադրական պետության անբաժան մասը»[3]։

Դաշնակների 4-րդ համագումարից երկու տարի հետո, 1909 թ. հունիսի 13(26)-ին, դաշնակների Կ. Պոլսի պատասխանատու մարմինը դիմում է Երիտթուրքերի կառավարությանը հետևյալ նամակով. «...Այս երկրի ու պետության վերածննդյան, վերաշինության, ընդհանուր բարօրության, խաղաղության և եղբայրության նվիրված Հ. Հ. Դաշնակցության նպատակը, ուղղությունն ու գործունեությունը այնքան հայտնի են եղած, արժանացած են ընդհանրության համակրության ու Ձեր կուսակցության գնահատմանը»[4]։

Երիտասարդ թուրքերի կառավարության ղեկավարները՝ դաշնակների ավագ եղբայրներ Թալիաթ, Էնվեր և Ջեմալ փաշաները դաշնակների ղեկավարների այդ սիրալիր նամակի առթիվ ուղարկում են հետևյալ պատասխանը.

«Հարգելի եղբայրներ,

Խաղաղության և եղբայրության համար Ձեր կուսակցության

[1] „Документы внешней политики СССР", т. I, М., 1957, стр. 285.
[2] Տե՛ս «Դաշնակների պարտիայի 4-րդ համագումարում հաստատված ծրագիր», Թիֆլիս, 1907, էջ 21։
[3] Նույն տեղը։
[4] «Ազատամարտ», 1909 թ., № 12, էջ 1։

նպատակը և ուղղությունը մեզ բոլորիս հայտնի է... կխնդրենք, ազնիվ եղբայրներ, որ ընդունեք մեր համակրանաց հավաստիքը»[1]։

Այսպիսի սերտ բարեկամական նամակագրություններից հետո դաշնակների և թուրքական կառավարության ղեկավարների միջև կնքվում է հատուկ պայմանագիր, որտեղ նշված է հետևյալը. «Օսմանյան նվիրական հայրենիքը անջատում է և բաժանում է դերծ պահելը երկու կազմակերպության միացած գործունեության նպատակակետը ըլլալով, անոնք պիտի աշխատեն գործնականապես ցրել հանրային կարծիքի մեջ մնացած այն սուտ զրույցները, թե հայերը անկախության կձգտեն»[2]։

Այնուհետև շարունակում է. «Իթթիհատը և դաշնակցությունը որոշեցին աշխատել ձեռք-ձեռքի տված, վերոհիշյալ հիմնական կետերը իրագործելու համար»[3]։

Գեներալ-մայոր Անդրանիկը, որ դաշնակների թուրքասիրական քաղաքականության պատճառով 1907 թ. հեռացել էր դաշնակցության պարտիայից, դաշնակների և երիտասարդ թուրքերի մասին հետևյալն է գրել. «...կերուխումներ սարքվեցան «բնկեր» թալիաթներու և «բնկեր» էնվերներու հետ, որոնց առջև բացին (դաշնակցության ղեկավարները—Խ. Բ.) ինչ դաղտնիք որ ունեին»[4]։

Այնուհետև շարունակում է. «Դաշնակցության պերճախոս երեսփոխանները, արդեն քրիստոներից դինվորագրություն ընդունել տալով ապացուցած էին, թե «հավատարիմ օսմանցիներ են... Կ. Պոլիսեն հարձակումի ազդանշան մը տրվեցավ ցարիզմի դեմ։ Դաշնակցության թերթերը կը պոռային «անկցի Ռուսաստանը, կնցցե ազատ հեղափոխական Թուրքիան»»[5]։

Այսպիսին էին դաշնակների և երիտասարդ թուրքերի փոխհարաբերությունները մինչև առաջին համաշխարհային պատերազմը։

Դաշնակների թուրքասիրական քաղաքականության մասին բազմաթիվ փաստեր են բերել նաև երիտասարդ թուրքերի ղեկավարները։

Այսպես, օրինակ, Ջեմալ-փաշան միաժամանակ խոսելով դաշ-

[1] «Ազատամարտ», 1909 թ., № 12, էջ 1։

[2] Նույն տեղը։

[3] Նույն տեղը։

[4] Գ ե ն ե ր ա լ Ա ն դ ր ա ն ի կ, Հայկական առաձնին հարվածող զորամաս, Պոսթոն, 1921, էջ 227։

[5] Նույն տեղը։

նակների հակառուսական և Թուրքիայի նկատմամբ բարեկամական քաղաքականության մասին, խոստովանում էր. «Դաշնակցության պարտիան, ...ամենից շատ էր մեր նկատմամբ բարեկամաբար տրամադրված և... վախենում էր Հայաստանի նկատմամբ ռուսական լծից»[1]։

Դաշնակների և երիտթուրքերի բարեկամության մասին այդ բնույթի հայտարարություն արել է նաև հայ ժողովրդի մյուս դահիճ Թալիաթ փաշան, 1918 թ. դաշնակների Կ. Պոլսի կոնֆերանսի պատվիրակությանը։ «Դուք,— հայտարարել է Թալիաթ փաշան,—միշտ հավատարիմ եք եղել Թուրքիային և միայն վերջին ժամանակներս, շնորհիվ եվրոպական պետությունների զրպարտությունների, անցաք Թուրքիայի թշնամիների կողմը... Բայց այժմ հանգամանքները բոլորովին փոխվել են և ձեռնարկվելիք միջոցներն էլ ըստ որում պիտի փոխվեն»[2]։

Այսպիսին է եղել դաշնակների դիրքը Թուրքիայի նկատմամբ։ Դաշնակների թուրքասիրական քաղաքականությունը ավելի է ուժեղանում Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի հաղթանակից հետո, երբ Հայաստանում ծավալվում են բանվորա-դյուղացիական ռևոլյուցիոն շարժումները շահագործող դասակարգերի լուծը տապալելու և սովետական կարգեր հաստատելու համար։ Դաշնակցությունը առանց դրսի զինված ուժերի չէր կարող վերջ տալ ռևոլյուցիոն շարժումներին։ Այդ պատճառով էլ դաշնակները, մուսավաթականների և մենշևիկների հետ միասին բլոկ կազմած, իրենց հույսը դնում են գերմանա-թուրքական իմպերիալիստական խմբավորման զինված ուժերի վրա։ Վ. Ի. Լենինը 1918 թ. մայիսի 14-ին Համառուսաստանյան Կենտգործկոմի և Մոսկվայի Սովետի միացյալ նիստում արտաքին քաղաքականության մասին տված իր նշանավոր զեկուցման մեջ դատապարտելով Անդրկովկասի բուրժուա-նացիոնալիստական պարտիաների բլոկ հանդիսացող Սեյմի հակաժողովրդական, դավաճանական գործունեությունը, նշում է, որ Անդրկովկասի անկախությունից «...օգտվում է գերմանական իմպերիալիզմը։ Ուստի Գերմանիային և Թուրքիային, որպես ագրեսիվ պետության, հնարավոր էր առաջ շարժվել ու առաջ շարժվել, ոչ մի բանի չպատասխանելով, ոչ մի բանի ուշադրություն չդարձնելով, հայտարարելով՝ մենք

[1] Джемал-Паша, Записки 1913—1919 гг., Тифлис, 1923, стр. 209

[2] ՀՍՄՌ ԿԳՊԱ, ֆ. 200, գ. 13, թ. 1։

կվերցնենք այն, ինչ կկարողանանք վերցնել, մենք չենք խախտում Բրեստի հաշտությունը, որովհետև անդրկովկասյան բանակը այն չի ճանաչում, որովհետև Կովկասը անկախ է։

Ումի՞ց է անկախ Գեղեչկորիի կառավարությունը։ Սովետական հանրապետությունից նա անկախ է, բայց գերմանական իմպերիալիզմից նա մի քիչ կախյալ է, և դա բնական է»[1]։

Հայաստանի կոմունիստական կազմակերպությունները նույնպես, արտահայտելով երկրի աշխատավորական լայն մասսաների շահերն ու ցանկությունները, ժողովրդին ուղղված բազմաթիվ կոչերում դատապարտում են Սեյմի բուրժուա-նացիոնալիստական պարտիաների, այդ թվում նաև դաշնակների դավաճանական, թուրքասիրական քաղաքականությունը, ցույց տալով, որ այդ քաղաքականությունը կործանիչ հետևանք կունենա Անդրկովկասի ժողովուրդների, հատկապես հայ ժողովրդի համար։ Այդ առթիվ Հայաստանի կոմունիստական կազմակերպությունները 1918 թ. մարտի 16-ին (մարտի 3) ժողովրդին ուղղված կոչում նշում են. «Այս ճակատագրական օրերին, երբ Կովկասի աշխատավոր դասակարգերի վրա կապարի ծանրությամբ իջել է կոշմարը, և Հայաստանի ժողովուրդները ենթակա են բնաջնջման սպառնալիքին, երբ թիկունքի և ճակատի մութ ուժերը դիվային քրքիջ են արձակում, իսկ Անդրկովկասի Սեյմը խաղաղության բանակցություններ է սկսում թուրք բռնապետության հետ և վաճառում է Հայաստանի ժողովրդին թուրքական գերիշխանության, այն վայրկյանին, երբ թշնամին ներս է խուժում լկտիորեն»[2]։

Այսպիսի պայմաններում Հայաստանի կոմունիստական կազմակերպությունները, դիմելով Հայաստանի աշխատավորությանը, ցույց են տալիս գերմանա-թուրքական իմպերիալիստների կողմից Անդրկովկասի վրա հարձակվելու պատճառները և նշում. «Ներկա պատերազմը, ինչ ասել կուզի, որ մի կողմից թյուրքա-գերմանական իմպերիալիզմի դիշատիչ ու ագրեսիվ ցանկությունների և տրամադրությունների քաղաքականության, իսկ մյուս կողմից Անդրկովկասի կառավարության վարած քաղաքականության անմիջական հետևանքն է»[3]։

Հայաստանի կոմունիստական կազմակերպությունները կոչ են անում Հայաստանի աշխատավորությանը՝ ազատագրական պա-

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 27, էջ 462։
[2] «Կարմիր օրեր», 1918 թ., № 3։
[3] «Կարմիր դրոշակ», 1918 թ., № 5։

57

տերազմի դրոշակ բարձրացնել գերմանա-թուրքական զավթիչների դեմ։

«Ի՞նչ է անելու այսօր Հայաստանին,—ասված է ժողովրդին ուղղված կոչերից մեկում,—միթե լքելու է նա իր ինքնորոշման դործը։ Հիասթափված պետք է դիրքերից հեռանա՞ նա, եթե ոչ, ապա ի՞նչ է լինելու նրա տակտիկան և ո՞ւմ կողմից է նա սպասելու դրական աջակցություն։ Մեր խորին համոզմունքով Հայաստանցիք էլ գնալու են այն ճանապարհով, ինչով առաջ է շարժվում Ռուսաստանի և Անդրկովկասի հեղափոխական դեմոկրատիան»[1]։

Այնուհետև շարունակվում է. «Կռիվ, անպայման կռիվ, մինչև վերջին շունչը կռիվ, ընդդեմ թյուրքական բռնակալության ու նրա ագրեսիվ ձգտումների և բոլոր հակահեղափոխական ուժերի դեմ։ Կռիվ հանուն Հայաստանի ժողովուրդների ինքնորոշման, կռիվ հանուն նրանց վերջնական ազատագրման։ Ահա Հայաստանի օրվա լոզունգը»[2]։

Գերմանա-թուրքական զավթիչների դեմ ազատագրական պայքարը ծավալելու համար Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների կողմից ժողովրդին ուղղված մի այլ կոչում նշված է. «Մենք ամենայն լրջությամբ և պարտքի խորը հասկացումնքով դիմում ենք Հայաստանի ժողովուրդների ինքնագիտակցությանը և կոչ ենք անում նրանց խոսացնել ճշմարիտ հեղափոխական շարքերը, բռնել ընդհանուր մասսայական ըմբոստացման ուղին։ Ճակատը պիտի ամրանա երկաթի նման»[3]։

Այսպիսով, հակառակ Սովետական Ռուսաստանի և անդրկովկասյան եղբայրական ժողովուրդների ցանկության, բուրժուա-նացիոնալիստական պարտիաների թույլտվությամբ գերմանա-թուրքական զավթիչները ներխուժում են Անդրկովկաս։ «Մենք ամեն կերպ արգելք ենք հանդիսանում անգլիացիների մուտք գործելուն Բաքու,— հայտարարել է սովետական Բաքվի զինվորական կոմիսար Գ. Կորգանովը,— իսկ մենշևիկները և դաշնակները ընդհակառակը թույլ են տալիս թյուրքերին և գերմանացիներին մուտք գործելու Անդրկովկաս»[4]։

Առավել ևս Սեյմի դավաճանական քաղաքականության հետևանքով Կարսը, Բաթումը, Օղուրգեթը հանձնվում են թուրքերին,

[1] «Կարմիր դրոշակ», 1918 թ., № 5։
[2] Նույն տեղը։
[3] «Կարմիր օրեր», 1918 թ., № 3։
[4] «Գայքար», 1918 թ. մայիսի 23։

առանց որևէ զենքակ արձակելու։ Բաթումը գրավել են 300 ասքյարներով։ Բաթումում մնացած զույքը հաշվվում է ավելի քան 2 միլիարդ ռուբլի[1]։

Այսպիսի պայմաններում վրացական մենշևիկները, հակառակ ժողովրդի ցանկության, գերմանական իմպերիալիստներին հրավիրում են Վրաստան։ Բացի այդ, «Սեյմը օգնում է Վիլհելմին Հյուսիսային Կովկասը գրավելու համար»[2]։

Վրացական ազգային խորհուրդը 1918 թ. մայիսի 14-ին դիմում է Բաթումիի կոնֆերանսի գերմանական պատվիրակության ղեկավար գեներալ Լոսովին, թե՝ «...վրացական ազգային խորհուրդը ցանկություն է հայտնում և միաժամանակ խնդրում է, որ Վրաստանը միջազգային քաղաքական և պետական հարցերում պաշտպանվի Գերմանիայի կողմից»[3]։

1918 թ. հուլիսի 11-ին երեկոյան ժամը 5-ին Գոլովինսկու պրոսպեկտի վրա (այժմ՝ Ռուսթավելի) տեղի է ունենում մենշևիկյան Վրաստանի և կայզերական Գերմանիայի օկուպացիոն կորպուսի զորամասերի միացյալ զորահանդեսը։ Զորահանդեսին ողջունում են մենշևիկյան կառավարության ղեկավար Ն. Ռամիշվիլին և գրաֆ Շուլենբուրգը։ Ն. Ռամիշվիլին դիմելով գերմանա-վրացական զորամասերին, հայտարարում է, թե խոր կերպով համոզված է, որ «գերմանական և վրացական զորքերը ձեռք-ձեռքի տված կարող են լիակատար կարգ ու կանոն հաստատել երկրում»[4]։

Գերմանական օկուպացիոն զորքերի հրամանատարների պատվին կազմակերպված բանկետում Ն. Ռամիշվիլին իր կառավարության անունից շնորհակալություն է հայտնում գերմանական կառավարությանն ու հրամանատարությանը, ասելով՝ «Մենք ցանկանում ենք աշխատել և մտածել գերմանացիների նման և հույս ունենք, որ մեր ուսուցիչները շուտով պիտի հպարտանան իրենց աշակերտներով»[5]։

Իսկ թուրքական իմպերիալիստները հարձակվելով Հայաստանի վրա, ձգտում են ոչ միայն զավթել Հայաստանն ու Ադրբեջանը, այլև կենսագործել իրենց պանթուրքական պլանները՝ գրավել

[1] ՀՌԿՊԱ, ֆ. 1318, ց. 1, գ. 619, թ. 13։
[2] «Գրավոր», 1918 թ., № 31։
[3] Габриладзе М. М., Германские оккупанты в Грузии в 1918 г., Сборник документов и материалов, Тбилиси, 1942, стр. 8.
[4] Նույն տեղը, էջ 40։
[5] ՀՌԿՊԱ, ֆ. 1318, ց. 1, գ. 619, թ. 27։

նաև Դաղստանը, Միջին Ասիան, Աֆղանստանը։ Սուլթանական Թուրքիայի զորքերը Հայաստանի վրայով շարժվելով դեպի սովետական Բաքու, ոչ միայն կողոպտում էին աշխատավորությանը, այլև բնաջնջում խաղաղ աղգաբնակչությանը, հրի ու սրի մատնում քաղաքներն ու գյուղերը։ Թուրքական օկուպանտներն իրենց զավթած շրջաններում թալանում էին ժողովրդական ունեցվածքը և ուղարկում Թուրքիա։ Այսպես, օրինակ, այդ զորքերը «...Ալեքսանդրապոլի շրջանից խլել ու տարել են խոշոր եղջյուրավոր անասուններ 50 հազարից ավելի, ոչխար 100 000 գլուխ, ձի 5 հազարից ավելի։ Տարել են ցորեն երկուս և կես միլիոն փթի չափ, գարի մեկ միլիոն փութ և առհասարակ զանազան մթերքներ... Թալանել և տարել են խանութների ապրանքները—մանուֆակտուրան, երկաթեղենը, երկրագործական գործիքներ ու պարագաներ, կահ-կարասի, գորգեր ու կապերտներ։ Տարել են մեծ քանակությամբ ապակեղեն, թիթեղ՝ նույնիսկ տանիքներից։ Խլված ու յուրացված են տաճկական զինվորների կողմից ահագին կանացի զարդարանքներ՝ ոսկի, արծաթ, բանկարժեք քարեր և դրամներ տասնյակ միլիոնների արժողությամբ...»[1]։

Թուրքական զորամասերը թալանում և Թուրքիա են տեղափոխում ռուսական բանակի Կովկասյան ռազմաճակատի զորամասերի զենքի, ռազմամթերքի, պարենի ու հանդերձանքի հարուստ պահեստները։ Հենց միայն Ալեքսանդրապոլից (Լենինական) Թուրքիա է ուղարկվել «հսկայական հարստություն, որը ոսկով գնահատված էր մի քանի միլիոն ռուբլի, կազմված թնդանոթներից, գնդացիրներից, հրացաններից, արկերից, փամփուշտներից, հանդերձանքից, հարյուր հազար փութ զանազան տեսակի մթերքներից, որ պատերազմի ժամանակ կենտրոնացվել էր Ալեքսանդրապոլում, որպես Կովկասյան բանակի թիկունքային խոշորագույն բազա»[2]։

Թուրքական օկուպանտները նույն կերպ էին վարվում նաև Հայաստանից իրենց զավթած մյուս շրջաններում. օրինակ՝ Ղարաքիլիսայի շրջանի բոլոր գյուղերը անխտիր կերպով ենթարկվում են անասելի թալանի, կողոպուտի և ավերման։ Շրջանի բոլոր գյուղերից «...քշվել տարվել են խոշոր և մանր եղջյուրավոր անասունները, շատ գյուղերում չեն թողել նույնիսկ հավ և սագ»[3]։ Միայն

[1] ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 244, գ. 10, թ. 9—10։
[2] ՀԿԿ կենտկոմին կից Մարքս-Լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 20, գ. 81, թ. 1։
[3] ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 244, գ. 10, թ. 13—16։

Ղարաքիլիսայի շրջանի 26 գյուղերում թուրքական օկուպանտները այրել են 526 տուն, գյուղացիներից գրավել են 125 725 մանր և խոշոր եղջյուրավոր անասուններ, ոչնչացրել 6358 դութան և չուխ, 6030 ֆուրգոն և սայլ, 5686 փեթակ։

Թուրքական օկուպանտները ժողովրդից բռնագրավել են 26 906 փութ պանիր, 527 927 փութ ալյուր, ցորեն և գարի, 462 243 փութ խոտ և դարման, 412 461 փութ կարտոֆիլ և 220 353 փութ այլ մթերքներ։

Բացի այդ, թուրքական օկուպանտները կողոպտել են 75 խանութ, 43 արհեստանոց, 6 կոոպերատիվ, որոնց վնասը կազմել է 463 310 ռուբլի։ Թուրքական օկուպանտները խաղաղ բնակչությունից խլել են 101 336 741 ռուբլի կանխիկ թղթադրամ, 16 201 ռ. քանկարժեք իրեր, 396 626 ռ. տնային իրեր և հագուստեղեն, 3 648 506 ռ. հացահատիկ, 5 979 096 ռ. խոտ և դարման, 3 283 144 ռ. կարտոֆիլ, 2 400 ռ. ծառապտուղ, հարկադիր աշխատանքի է քշվել 23 348 սայլ և մարդ, քանդվել է 25 դպրոց, 25 եկեղեցի և այլն[1]։

Թուրքական զորքերը այդպիսի կողոպուտի են ենթարկում նաև Ջալալ-Օղլու (Ստեփանավան), Ալավերդու և մյուս օկուպացված շրջանները։ Նրանք կողոպտում են և Թուրքիա ուղարկում «...նույնիսկ դռները, պատուհանները, տանիքի թիթեղը, կողպեքներն ու բանալիները և տների զանազան դյուրաշարժ մասեր»[2]։

Թուրքական զավթիչների հետ միասին Հայաստանի աշխատավորությանը կողոպտում են նաև գերմանական զավթիչները, որոնք Վրաստանի հետ օկուպացրել էին նաև Հայաստանի հյուսիսային մասերը։ Օրինակ, գերմանական օկուպանտների կողոպուտը միայն Վորոնցովկա (Կալինինո) գյուղում կազմել է 19 135 ռ.[3]։ Նրանք կողոպտել են նաև Հյուսիսային Հայաստանում իրենց զավթած մյուս գյուղերը, կողոպտել և իրենց երկիրն են փոխադրել Վրաստանի աշխատավորության ունեցվածքը՝ շաքար, թեյ, կաշի, մոմ և այլն։

Թուրքական զավթիչները Հայաստանի աշխատավորությանը կողոպտելուց բացի, մասսայաբար բնաջնջում էին նրանց։ «Արդեն օկուպացիայի առաջին օրերին Բազրիխան և Սվանվերդի գյուղերում հավաքվել էր շրջակա գյուղերի բնակչությունը, այստեղ դրանք բոլորն էլ կոտորվել են և կրակի են տրվել առանց հասակի և սեռի խտրության։ Դրանից հետո ամբողջ գավառից թուրքական իշխանությունը սկսեց հավաքել երիտասարդներին, դեղեցիկ կանանց ու երեխաներին և քշել Թուրքիա»[1]։

Թուրքական զավթիչները այդպես անողոքաբար են վարվել Հայաստանի իրենց գավթած մյուս շրջանների աշխատավորության նկատմամբ։ Միայն Ղարաքիլիսայի շրջանի Ղշլաղ գյուղում սպանել են 200 մարդ, որոնց թվում կային կանայք և երեխաներ։ Համամլի գյուղում սպանել են 250 մարդ, Պարնի գյուղում՝ 150 մարդ, Բզովդալ գյուղում՝ 200-ից ավելի մարդ։ Նույնը կարելի է ասել շրջանի մյուս գյուղերի մասին՝ Նալբանդ, Դարբազ, Հաջիղարա և այլն[2]։

Միայն Ղարաքիլիսայում թուրքական զորքերը ոչնչացրել են 2000 մարդ։ Այսպիսով, Ղարաքիլիսայում և նրա շրջանի գյուղերում, միասին վերցրած, ոչնչացվել է 7000 մարդ։

Թուրքական զորամասերը գազանաբար են վերաբերվում հատկապես հայ և ռուս զինվորների նկատմամբ և մասսայաբար ոչնչացնում են նրանց։ Օրինակ, այն պահին, երբ Բաթումիի կոնֆերանսի աշխատանքները ավարտվում են, և նախապատրաստվում է հաշտության ու «բարեկամության» պայմանագիրը, «թուրքական հրամանատարության կողմից գնդակահարվում են ռուսական կամավորական ջոկատից մի խումբ սպաներ...»[3]։

Բացի այդ, Բաթումիի «հաշտության» պայմանագիրը ստորագրելուց հետո, թուրքական հրամանատարության կարգադրությամբ, փաշան «...հավաքելով 32 սպա, շատ զինվորներ, 18 օրիորդ և մոտ 600 երեխա, գնացել է Մանես կայարանը, որտեղ բոլորին նստեցրել է վագոններում և թուրք սաքյարների ուղեկցությամբ ուղարկել դեպի Սադախլո կայարանը, որտեղ նրանք գլխովին կոտորվել են»[4]։

Հայ ժողովրդի համար ստեղծված այդ ահեղ վտանգի օրերին Սովետական իշխանությունը հանդես է գալիս գերմանա-թուրքական զավթիչների դեմ՝ Հայաստանի աշխատավորության շահերի

[1] ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 244, գ. 10, թ. 13—16։
[2] Նույն տեղը։
[3] Նույն տեղը։

[1] ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 244, գ. 10, թ. 13—16։
[2] Նույն տեղը։
[3] Նույն տեղը, գ. 53ա, թ. 17։
[4] Նույն տեղը, գ. 609, թ. 20—21։

պաշտպանության դիրքերում։ Սովետական կառավարությունը 1918 թվականի ապրիլի 19-ին դերմանա-թուրքական զավթիչների՝ Հայաստանի տերիտորիան ներխուժելուց հետո գերմանական կառավարությանն ուղղած իր բողոքի նոտայում պահանջում է անհապաղ վերջ տալ թուրքական զորքերի կողմից Հայաստանի աշխատավորության նկատմամբ կատարվող բռնություններին և կոտորածներին։

«Թուրքական բանակը,— ասվում է այդ նոտայում,— շարժվում է դեպի Բաքու, Կարս և Արդահան, ավերելով երկիրը և ոչնչացնելով գյուղական բնակչությունը։ Հայերի հետագա ճակատագրի համար պատասխանատվությունը ընկնում է Գերմանիայի վրա... Այդ պատճառով էլ Սովետները հավատացած են, որ Ձեր կողմից ձեռք կառնվեն անհրաժեշտ և միայն Ձեզանից կախված միջոցները ներգործելու թուրքական իշխանությունների վրա, նպատակ ունենալով կանխել խաղաղ բնակչության ոչնչացումը»[1]։

Սովետական կառավարությունը միաժամանակ Գերմանիայի Մոսկվայի դեսպան Միրբախի միջոցով լուրջ նախազգուշացնում է գերմանա-թուրքական բլոկին, նշելով՝ «...այլապես ռուսական կառավարությունը հարկադրված կլինի իր կողմից անհրաժեշտ միջոցներ ձեռք առնել»[2]։

Սակայն Սովետական Ռուսաստանը այդ ժամանակ շրջապատված լինելով իմպերիալիստական գիշատիչ պետություններով և երկրի ներսում նրանց շահերը պաշտպանող հակահեղափոխական ուժերով, հնարավորություն չունենալով կանխելու գերմանա-թուրքական իմպերիալիստների արշավանքը Հայաստանի և սովետական Բաքվի վրա։ Սովետական կառավարությունը մինչև անգամ համաձայնվում է Բաքվի նավթի հանույթի մի մասը տրամադրել Գերմանիային, եթե վերջինս կանխի թուրքական իմպերիալիստների արշավանքը Բաքվի վրա։ «Իհարկե, մենք կհամաձայնվենք»[3],— նշել է Վ. Ի. Լենինը այդ մասին։

Սակայն գերմանա-թուրքական բլոկը օգտվելով Սովետական Ռուսաստանի համար ստեղծված տնտեսական ու ռազմական արտակարգ ծանր դրությունից, հարձակվում է Հայաստանի և Վրաստանի վրա և շարժվում դեպի սովետական Բաքու, նպատակ ունենալով զավթել Բաքուն, օգտագործել նրա հարուստ նավթային

[1] ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 244, գ. 10, թ. 13—16։
[2] Նույն տեղը, գ. 78, թ. 68։
[3] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 27, էջ 669։

ռեսուրսները և միաժամանակ այն բազա դարձնել Սովետական Ռուսաստանի վրա հարձակվելու համար։

Հայաստանը, որը առաջինը ենթարկվեց թուրքական հրոսակախմբերի ասպատակություններին, նրա աշխատավորությունը, հակառակ դաշնակների թուրքասիրական բաղաքականության, կոմունիստական կազմակերպությունների կոչով, ռուսական բանակի զորամասերի մնացորդների հետ միասին ազատագրական պայքարի է ելնում գերմանա-թուրքական օկուպանտների դեմ։

«Ձինվորնե՛ր, Հայաստանի Կոմունիստական կուսակցությունը,— նշված է Կոմպարտիայի կոչերից մեկում,— կանչում է ձեզ դեպի հեղափոխական սոցիալիստական կռիվ։ Հնչում է արդեն վերջին կռվի ահազանգը»[1]։

Հայ ժողովրդի ազատագրական պայքարը գերմանա-թուրքական իմպերիալիստների մեծաթիվ ուժերի դեմ կազմակերպելու և ղեկավարելու գործում խոշոր դեր են կատարում նաև ռուսական Կովկասյան ռազմաճակատի հայ և ռուս զինվորներն ու սպաները։

«Մենք, կոմունիստներս,— ասվում էր Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների կողմից ժողովրդին և զորքին ուղղված կոչերից մեկում,— աշխատավոր զասակարգերի անդավաճան բարեկամներս, որ ճակատի ամրացման հոգսերով ենք տարված... ժողովրդական մասսաներին կոչ ենք անում գունդագունդ արշավել դեպի ճակատ և հետ մղել ավազակախմբերը»[2]։

Այնուհետև կոմունիստական կազմակերպությունները մի առանձին կոչով դիմում են զորքին՝ գերմանա-թուրքական զավթիչների դեմ ազատագրական պայքարի դրոշ բարձրացնելու համար. «Հայաստանի ինքնորոշման համար ռազմի դաշտ նետված զինվորները բնավ չպիտի մոռանան, որ նրանք անխնա կռիվ են մղում սուլթանիզմի դեմ։ Սուլթանական ռեժիմն է այն զազրելի վամպիրը, որ դարերով ծծել է Տաճկաստանի բոլոր ժողովուրդների հյութերը և կրոնական ու ազգային ֆանատիզմով նրանց թշնամացրել իրարու։ Սուլթանիզմը պետք է ջախջախել ընդմիշտ»։ Այնուհետև շարունակվում է. «Կովողներ, եթե կամենում են հաղթել, պետք է լավ ճանաչեն իրենց մահացու թշնամուն և վրիժառու սուրը խրեն նրա կրծքի մեջ։ Սուլթանիզմի դեմ անպարտելի շարքերով արշավանք պիտի սկսեն Տաճկաստանի և Հայաստանի բոլոր կոմունիստները»[3]։

[1] «Կարմիր դրոշակ», 1918 թ., № 9։
[2] «Կարմիր օրեր», 1918 թ., № 12։
[3] Նույն տեղը։

«Այս կարմիր նշանաբանով ջախջախիչ հարվածներ կարելի է հասցնել Տաճկական բռնապետությանը»[1]։

Հայաստանի կոմունիստական կազմակերպությունները, երկրի աշխատավորությանը կոչ անելով սուլթանական բռնապետության դեմ անհաշտ պայքար մղելու, միաժամանակ առաջ են քաշում հայ և թուրք ժողովուրդների բարեկամության հարցը, հայտարարելով, որ «սուլթանիզմը ջախջախելով, ազատություն պետք է տանեան Տաճկաստանի շահագործվող դասակարգերը»[2]։

Կոմունիստական կազմակերպությունների հայրենասիրական այդ կոչը վերջանում է հետևյալ խոսքերով. «Անխնա, կատաղի կռիվ թուրքական կառավարության դեմ և եղբայրություն թուրք մասսաների հետ— այս ճանապարհով միայն Հայաստանի ժողովուրդները կազատագրվեն ամեն մի բռնությունից...»[3]։

Ներքին ու արտաքին հակահեղափոխության դեմ մղվող այդ հերոսական պայքարում Անդրկովկասի ժողովուրդների ավանգարդում բնթանում էր Բաքվի ռևոլյուցիոն պրոլետարիատը՝ Բաքվի Կոմունայի գլխավորությամբ։ Բաքվի Կոմունան, արտահայտելով Անդրկովկասի ժողովուրդների ցանկությունները, պայքարում էր երկրամասում սովետական կարգեր հաստատելու և օտար նվաճողներին դուրս վռնդելու համար։ Ամբողջ Անդրկովկասի ժողովուրդը «...մի քանի ամիս է, ինչ սպասում է Բաքվի զորքերին՝ որպես փրկարարների, և մեզ կդիմավորի գրկաբաց»[4],—գրում է Ստ. Շահումյանը 1918 թ. հունիսի 11-ին։

Չնայած թուրքական գլխավոր հրամանատարությունը Մերձավոր Արևելքից իր զինված ուժերի մի զգալի մասը շտապ կերպով տեղափոխում էր Անդրկովկասի ռազմաճակատ՝ Անդրկովկասի, մասնավորապես սովետական Բաքվի գրավումը արագացնելու համար, սակայն գերմանա-թուրքական հրոսակախմբերը հանդիպում են Անդրկովկասի ժողովուրդների, մասնավորապես Հայաստանի աշխատավորության և Բաքվի ռևոլյուցիոն պրոլետարիատի համառ դիմադրությանը։

Անդրկովկասի ժողովուրդների կողմից գերմանա-թուրքական զավթիչների դեմ մղվող այդ հերոսական պայքարի ժամանակ Սովետական իշխանությունը կազմակերպում է օգնություն։ Ազգու-

[1] «Կարմիր օրեր», 1918 թ., № 23։
[2] Նույն տեղը։
[3] Նույն տեղը, № 12։
[4] Ստ. Շահումյան, Հոդվածներ և հատներ, էջ 377։

թյունների ժողովրդական կոմիսարների նախագահությամբ, Սովետական Ռուսաստանի և Ուկրաինայի հայաբնակ քաղաքներում ստեղծվում են կամավորական ջոկատներ, որոնք հանդերձավորվում և սպառազինվում են բոլշևիկյան կազմակերպությունների կողմից և ուղարկվում Անդրկովկաս։ Այդ մասին Ազգությունների ժողովրդական կոմիսարիատի № 325 դեկրետում նշված է հետևյալը.

«Սույնով հայտնվում է ի գիտություն ռևոլյուցիոն կոմիտեների, շտաբների ու սովետների և սովետական մյուս հիմնարկների, որ հայկական ռևոլյուցիոն կազմակերպություններն իրավունք ունեն ազատ կերպով կազմավորել հայկական կամավորական ջոկատներ և նրանց ֆինանսավորման համար հարկ վերցնել հայկական բուրժուազիայից։

Սովետական նշված հիմնարկները պարտավոր են արգելք չհարուցել դեպի Հայաստան այդ ջոկատների առաջխաղացմանը, որոնք կոչված են պաշտպանելու իրենց հայրենիքը գերմանա-թուրքական բռնակալներից»[1]։

Այսպիսով, Սովետական կառավարության կարգադրությամբ և սովետական տեղական օրգանների ջանքերով բազմաթիվ կամավորական ջոկատներ են ստեղծվում և ուղարկվում Անդրկովկասի ռազմաճակատ՝ գերմանա-թուրքական զավթիչների դեմ։

«Կարմիր օրեր» թերթը «Հայաստանի Կարմիր բատալիոնը» վերնագիրը կրող հոդվածում Սովետական Ռուսաստանից Հայաստան ուղարկված կամավորական ջոկատների մասին հետևյալն է գրում.

«Թիֆլիս եկավ հայկական կարմիր բատալիոնը, որը կմեկնի շուտով Ֆրոնտ։ Նրանց մեջ տիրում է մեծ ոգևորություն պաշտպանելու Հայաստանը Թուրքիայի բռնապետական ոտնձգությունից և միացնելու ազատ Հայաստանը ֆեդերատիվ կապերով ազատ Ռուսաստանի հետ»[2]։

Այդ կամավորական ջոկատները ամբողջովին սպառազինել, հանդերձավորել և ֆինանսավորել են Օդեսայի բոլշևիկյան կազմակերպությունները։ Հայկական կամավորական ջոկատների հետ միասին Հայաստան են գալիս նաև մեծ թվով ռուս կամավորներ։

[1] ՀՍՍՌ ԿՊՊԱ, Հայկական գործերի կոմիսարիատի Սարատովի բաժանմունքի ֆոնդ, ց. 1, գ. 6, թ. 1։
[2] «Կարմիր օրեր», 1918 թ., № 14։

Բացի Օդեսայից, այդպիսի կամավորական ջոկատներ գալիս են նաև Ուկրաինայի մյուս քաղաքներից։ «Խարկովից գալիս են դեպի Ֆրոնտ մեկնելու 400 հոգի հայ կամավորներ, որոնցից 200-ին զինել և հագցրել են միայն քաղաքի բոլշևիկները։ Հայերի հետ գալիս են նաև շատ ռուս կամավորներ»[1]։

Այսպիսի կամավորական ջոկատներ Հայաստան են գալիս նաև Ղրիմից, Հյուսիսային Կովկասի զանազան վայրերից, նույնիսկ հեռավոր Սիբիրից։ «Տեղական բոլշևիկները հայտարարել են, որ թյուրքահայերը փոխանակ Ռուսաստանում զորահավաքի ենթարկվելու, անհրաժեշտ է, որ մեկնեն թյուրքական ճակատ պաշտպանելու իրենց ազատագրությունը։ Նույնպիսի վերաբերմունք ցույց են տվել նաև Ղրիմի բոլշևիկները, որոնց ձեռքին է այսօր իշխանությունը»[2]։

«Այս փաստերը,— այնուհետև շարունակում է «Կարմիր օրեր» բոլշևիկյան թերթը,— գալիս են սրտապնդելու Հայաստանի պրոլետարիատին ու չքավոր գյուղացիությանը, որ նրանք իրենց օրհասական կռվում մենակ չեն ու չեն մնալու»[3]։

Ռուսաստանի զանազան մասերից և Ուկրաինայից եկած հայկական և ռուսական վերոհիշյալ կամավորական ջոկատները հանդիսացել են Կարմիր Բանակի առանձին հատվածներ, որոնք 1918 թվականին կռվել են գերմանական օկուպանտների դեմ։ Կարմիր Բանակի հրամանատարությունը կամավորների անվան տակ որոշ զորամասեր է ուղարկում Հայաստան, թուրքական զավթիչների դեմ պայքարելու և նրանց ագրեսիվ պլանները ձախողելու համար։ Այդ մասին Բաքվի Սովետում Անդրկովկասի քաղաքական դրությունը քննելու ժամանակ արձանագրվում է հետևյալը.

«Թիֆլիս եկած ջոկատը, որը կռվել է գերմանացիների դեմ Օդեսայում, եկել է այստեղ հայրենիքը պաշտպանելու ընդդեմ թյուրքերի։ Այդ հանդիսացել է սովետական զորամաս, բայց նա պետք է քողարկվեր այլ լոզունգներով, որպեսզի չկրկնի։ Ռամիշվիլու մինիստրությունը այդ մասին իմանալուց անմիջապես հետո, միջոցներ է ձեռնարկում այդ զորամասը զինաթափելու համար։ Զինաթափումից հետո այդ զորամասը շարժվում է Ղարաքիլիսայի ուղղությամբ և դրանից հետո մենք տեղեկություն ենք ստանում, որ

[1] «Կարմիր օրեր», 1918 թ., № 10։
[2] Նույն տեղը, № 6։
[3] Նույն տեղը։

նրանք այնտեղ նորից սպառազինվել են, իրենց շուրջը համախմբելով հայերին»[1]։ Այնուհետև շարունակվում է. «Այժմ մենք կարող ենք ենթադրել, որ մինչև 30 հազար զինված հայ գյուղացիներ մենք ունենք մեր կողմում, նրանցից 20 հազարը ներկայացնում է կազմակերպված կորիզը, բացի դրանից գյուղացիները ունեն սեփական զենքեր, որոնք պետք է մարտնչեն մինչև արյան վերջին կաթիլը»[2]։

Հայաստանի վրա հարձակվող թուրքական զորքերի դեմ մղվող մարտերում խոշոր նշանակություն են ունեցել Ղարաքիլիսայի և Սարդարաբադի ժողովրդական ճակատամարտերը։ «Սարդարաբադի ժողովրդական ճակատամարտի ժամանակ հայ ժողովուրդը հերոսական հաղթանակ է տանում Շենքի փաշայի 30 000-անոց բանակի դեմ և լուրջ կորուստներ պատճառում նրան»[3]։ Այդ ճակատամարտի ընթացքում «Երևանի ազգաբնակչությունը զոհարերում է ամեն ինչ։ Ամբողջ քաղաքը հայց է թխում զորքի համար»[4]։ Ճակատամարտի հետևանքով ձախողվում են թուրքական հրամանատարության պլանները, որոնց համաձայն թուրքական զորքերը պետք է գրավեին Երևանն ու Էջմիածինը, փակեին Մարքարայի կամուրջը և հաշվեհարդար տեսնեին Սուրմալուի զավառի հայ աշխատավորության հետ։ Թուրքական զավթիչների դեմ մղվող պայքարում հայ ժողովուրդը այդպիսի խոշոր հաղթանակ է տանում նաև Ղարաքիլիսայի ժողովրդական ճակատամարտի ժամանակ (1918 թ. մայիսի 25—28), թուրքական բանակին պատճառելով հսկայական նյութական և մարդկային կորուստներ։ Անգամ «Մշակ» թերթը, բարձր գնահատելով Ղարաքիլիսայի ժողովրդական ճակատամարտի խոշոր նշանակությունը, գրում է՝ «Ղարաքիլիսայի և նրա շրջակա գյուղացիները իմանալով, որ օսմանցիները Համամլուից կամենում են գրոհ տալ դեպի Ղարաքիլիսա, բոլորը մի մարդու նման ոտքի են կանգնում և որոշում են մեռնել, անձնատուր չլինել։ Փոքրաթիվ հայ զինվորները, միացած տեղացիների հետ, ամեն միջոց ձեռք են առնում թշնամու առաջը կտրելու։ Զորամասերի մեջ մտնում են նույնիսկ ծերերը, հասակավոր մարդիկ ու պատանիները»[5]։

[1] „Известия Совета рабочих, красноармейских, матросских и крестьянских депутатов Бакинского района", 1918 г., № 112.
[2] Նույն տեղը։
[3] ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 200, գ. 132, թ. 490—491։
[4] «Մշակ», 1918 թ., № 97։
[5] Նույն տեղը, № 104։

Այնուհետև շարունակում է. «Տրամադրություններն այնքան բարձր են լինում, որ մարտիկները երգով են գնում դեպի կռվի դաշտը... Թուրքերը ունենում են թնդանոթներ և 10 000-ից ավելի ուժ, հայերի ուժը հազիվ հասնում է 5600-ի»[1]:

Թուրքական զորքերի դեմ մղվող այդ անհավասար հերոսական մարտերի ժամանակ օգնության են գալիս նաև Դիլիջանի ու Ղազախի շրջանի աշխատավորները: «Դիլիջանում զորքերն ու ժողովուրդը պատրաստակամություն են հայտնում կռվել և պաշտպանել իրենց իրավունքները: Ղազախում ծեր զինվորները ու գյուղացիները անդամ զորամաս են կազմում և պատրաստվում են կռվելու»[2]:

Թուրքական օկուպանտների դեմ մղվող այդ հերոսական մարտերին հայ ժողովրդի հետ միասին ակտիվ կերպով մասնակցում են նաև «...ռուսական կամավորական ջոկատը»[3] և ռուսական բանակի Կովկասյան ռազմաճակատի 4-րդ գունդը, որը մինչ այդ Պարսկաստանի հյուսիսային մասերում թուրքական զորքերի դեմ մղվող մարտերում բազմիցս փայլուն հաղթանակներ էր տարել:

Այսպիսով, Հայաստանի փրկության համար դերմանա-թուրքական զավթիչների դեմ մղվող այդ հերոսական և օրհասական կռիվների ժամանակ Հայաստանի աշխատավորության հետ միասին մարտնչում են նաև ռուս զինվորները, սպաներն ու բանվորները:

Թուրքական զորքերի դեմ մղվող այդ հերոսական մարտերի ընթացքում հայերի և ռուսների սերտ համագործակցության մասին վառ օրինակ կարող է հանդիսանալ Ալեքսանդրապոլի դեպոյի մեքենավար Վինոգրադովի սխրագործությունը: Թուրքական հրամանատարությունը 1918 թ. մայիսի 15-ին Ալեքսանդրապոլը գրավելուց հետո կարգադրում է մեքենավար Վինոգրադովին՝ թուրքական զորքերին Ալեքսանդրապոլից տեղափոխել Երևան, նախապատրաստելով հարձակումը Երևանի վրա, սակայն Վինոգրադովը վճռականորեն մերժում է այդ կարգադրությունը: Միայն թուրքական հրամանատարության սպառնալիքի տակ նա համաձայնվում է թուրքական զորքերին տեղափոխել Երևան: Սակայն նախօրոք մտածում է զոհել իր անձը, խորտակել գնացքը և այդ ճանապարհով կանխել թուրքական զորքերի առաջխաղացումը դեպի Երևան: Մեքենավար Վինոգրադովը և իր ընկերները Ալեքսանդրապոլից դեպի Երևան տանող գծի վրա, Ալեքսանդրապոլից 8 կիլոմետր հեռավորության վրա, խորտակում են երկու գնացք թուրքական զորքերով[4]: Այդ ժամանակ հերոսաբար զոհվում է նաև ինքը՝ մեքենավար Վինոգրադովը: «Ոչ ոք չի ազատվել խորտակումից, ինքը Վինոգրադովը նույնպես մեռել է»[2],—գրում է «Մշակ» թերթը:

Հայաստանի աշխատավորության մղած այդ հերոսական մարտերի մասին անգամ հարկադրված է եղել խոստովանել դերմանա-թուրքական բանակի հրամանատարությունը: Այսպես, օրինակ, թուրքական բանակի Կովկասյան ռազմաճակատի դյխավոր հրամանատար Վեհիբ-փաշան Բաթումիի «խաղաղության և բարեկամության» կոնֆերանսի ժամանակ Ղարաբլիխայի և Սարդարապատի ժողովրդական ճակատամարտերի մասին խոստովանել է, որ «...հայ զինվորները կռվել են հերոսաբար»[3]:

Այնուհետև Վեհիբ-փաշան հայտարարել է, թե՝ «թուրքերի կորուստները ավելի խոշոր են եղել»[4]: Ղարաքլիխայի կռիվների ժամանակ թուրքական բանակը կորցրել է ավելի քան 1500 զինվոր ու սպա:

Այսպիսով, միայն հայկական ուժերը բավական էին ոչ միայն կանխելու թուրքական հրոսակախմբերի մուտքը Հայաստան, այլ նաև ջախջախելու և ետ շպրտելու նրանց: Սակայն հայ ժողովրդի այդ հերոսական, ազատագրական պայքարը վերջանում է անհաջողությամբ: Գերմանա-թուրքական օկուպանտներին հաջողվում է օկուպացնել Անդրկովկասը, Սեյմում նստած բուրժուա-նացիոնալիստական պարտիաների դավաճանության, թուրքասիրական քաղաքականության հետևանքով:

Ստ. Շահումյանը 1918 թ. մայիսի 29-ին «Սեյմի քաղաքականության և Անդրկովկասի դրության մասին» ճառում դատապարտելով Սեյմի բուրժուա-նացիոնալիստական պարտիաների, ներառյալ նաև դաշնակների դավաճանական քաղաքականությունը, նշել է. «Այն կրիտիկական դրությունը, որի մեջ դրվել են հայ մասսաները, դրդում է հայ գյուղացիներին զենքը ձեռքին դուրս գալ ու

[1] «Մշակ», 1918 թ., № 104:
[2] Նույն տեղը, № 97:
[3] А л. Ставровский, Закавказье после Октября, М.—Л., 1925, стр. 59.

[1] «Մշակ», 1918 թ., № 104:
[2] Նույն տեղը:
[3] Նույն տեղը, № 103:
[4] Նույն տեղը:

տապալել իրենց անամոթ ղեկավարներին՝ դաշնակցականներին, որոնք խայտառակ կերպով դավաճանել են նրանց»[1]։

Այնուհետև շարունակում է. «Նրանց ձեռքին (դաշնակների— Խ. Բ.) կար մոտ 30 000 հայ ճակատային զինվոր։ Այդ ուժով հրաշքներ կարելի էր գործել։ Ես էլ չեմ խոսում զինված գյուղացիության հսկայական մասսաների մասին, որը մենակ կարող էր հաշիվ տեսնել թե թուրքերի և թե Անդրկովկասի բոլոր կոնտրռևոլյուցիոն ուժերի հետ։ Եթե հայ գյուղացիների գլուխ անցած լիներին ոչ թե Չխենկելիից ու Ժորդանիայից ոչնչով չտարբերվող դավաճաններ, այլ իսկական ռևոլյուցիոներներ, ապա ժողովուրդը նման խայտառակ վիճակի չէր հասնի»[2]։

Թուրքական հրոսակախմբերի այդ հաջողությունների գործում զգալի դեր են խաղացել նաև Վրաստանում գտնվող գերմանական օկուպացիոն զորքերը, որոնք օկուպացրել էին նաև Հայաստանի հյուսիսային շրջանները։

Երբ թուրքական զորքերը գրավում են Ալեքսանդրապոլը և համառ մարտերով շարժվում դեպի Ղարաքիլիսա, նույն ժամանակամիջոցում, «հունիսի 18—19-ին գերմանական զորքերը մարտեր են մղել տեղական բնակչության հետ... և հասել են Քոլագերան՝ Թիֆլիսի երկաթուղի, որով թուրքերն անցել են Ղազախ։ Քոլագերանում կանգնած են զրահապատ գնացքներ՝ գերմանական զրոշակներով։ Գերմանական սպաները նկել են Դսեղ գյուղը...»[3]։

Ղարաքիլիսայի ժողովրդական ճակատամարտի ժամանակ գերմանական օկուպացիոն կորպուսի առանձին ջոկատներ Վրաստանից Սադախլո կայարանով շարժվում են դեպի Ղարաքիլիսա՝ թուրքական զորքերին ծգնության, որպեսզի վերջիններս արագացնեն Ղարաքիլիսայի գրավումը և ապահով կերպով երկաթուղով շարժվեն դեպի Բաքու։ Այսպես, 1918 թ. մայիսի 28-ին Թիֆլիսից Ղարաքիլիսա է գալիս գերմանական կորպուսի մի սպա՝ 12 զինվորով, իսկ գերմանական զինվորների 40 հոգուց բաղկացած մի այլ ջոկատ, մի այլ սպայի գլխավորությամբ, այցելում է Սանահին կայարանը, որպեսզի ապահովի թուրքական զորքերի անվտանգ առաջխաղացումը երկաթուղով դեպի սովետական Բաքու։

Սարդարաբադի և Ղարաքիլիսայի ժողովրդական ճակատամարտից հետո թուրքական կառավարությունը Հայաստանի նկատ-

[1] Ա. Շահումյան, Հոդվածներ և ճառեր, էջ 363։
[2] Նույն տեղը։
[3] ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 57, գ. 382, թ. 10։

մամբ նախօրոք մշակված ռազմա-սարատեգիական պլանները վերանայում և փոփոխում է։ Թուրքական իմպերիալիստները հարձակվելով Հայաստանի վրա, ձգտում էին իրականացնել իրենց պանիսլամական պլանները։ Թուրքական նվաճողների պանիսլամական պլանների մասին գերմանական բանակի գլխավոր շտաբի պետ, գեներալ Լյուդենդորֆը իր հուշերում գրում է.

«Թուրքերը փետրվարի վերջում սկսեցին իրենց արշավանքը Հայաստանի վրա... Սակայն էնվերը և թուրքական կառավարությունը ավելի շատ մտածում էին իրենց պանիսլամական պլանների մասին Կովկասում, քան թե Անգլիայի դեմ պատերազմելու մասին»[1]։

Սակայն Ղարաքիլիսայի և, մասնավորապես, Սարդարաբադի ճակատամարտերից հետո, երբ թուրքական զորքերը ջախջախվում և սկսում են նահանջել դեպի Ալեքսանդրապոլ, թուրքական կառավարությունը հաշվի է առնում այն հանգամանքը, որ ռազմական գործողությունների հետագա ընթացքը Հայաստանում կարող է լուրջ դժվարություններ ստեղծել գերմանա-թուրքական հրամանատարության պլանների կենսագործման համար, և կձախողվի Բաքվի ժամանակին գրավումն ու վառելիքի ձեռք բերումը։ Գերմանական բանակը Արևմտյան ռազմաճակատում և թուրքական բանակը Մերձավոր Արևելքում Պաղեստինի և Միջագետքի ռազմաճակատներում հսկայական կորուստներ էին կրել և չէին կարող նոր ռազմական ուժեր փոխադրել Հայաստան։

«Օգոստոսի 8-ը,— գրում է Լյուդենդորֆը,— ամենաս օրն էր գերմանական բանակի համար, համաշխարհային պատերազմի պատմության մեջ»[2]։

Թուրքական բանակի համար այդպիսի դժվարություններ են ստեղծվում նաև Մերձավոր Արևելքում։ Վրաստանի գերմանական օկուպացիոն զորքերի գլխավոր հրամանատար ֆոն Կրեսը այդ մասին հետևյալն է հայտարարել. «Թուրքերը այժմ այնքան են մտահոգված անգլիական ռազմաճակատով, որ չեն կարող որևէ ռազմական ուժ կենտրոնացնել Հայաստանում. իսկ նրանք լավ գիտեին, որ հայերի վրա հարձակվելու դեպքում ոչ թե որևէ ուժ, այլև շատ և շատ ուժեր են պետք հայկական ճակատի համար»[3]։

[1] Э. Людендорф, Мои воспоминания о войне 1914—1918 гг., т. II, М., 1924, էջ 189, 337։
[2] Նույն տեղը։
[3] ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 200, գ. 67, թ. 33։

Այսպիսի պայմաններում Հայաստանը գրավելու հարցում Թուրքական կառավարության կազմում առաջանում են լուրջ տարաձայնություններ: Կառավարության անդամների մի մասը պահանջում է կենսագործել հայերին բնաջնջելու պլանը, գրավել ամբողջ Հայաստանը, հաշվեհարդար տեսնել հայերի նկատմամբ, որից հետո արշավել դեպի Բաքու՝ իրենց պանիսլամական պլանները կենսագործելու համար: Կառավարության անդամների մյուս մասը պահանջում է Սարգարաբադի և Ղարաքիլիսայի ճակատամարտերից հետո ժամանակավորապես հետաձգել Հայաստանի մյուս շրջանների գրավումը, հաշվի առնելով, որ դրա համար լրացուցիչ զինված ուժեր են հարկավոր, Հայաստանին տալ ինքնավարություն, դրանով ապահովելով Թուրքական բանակի թիկունքը, անարգել կերպով արշավել Բաքվի վրա, Բաքուն գրավելուց հետո միայն կազմակերպել Հայաստանի մյուս մասերի գրավումը և հայերի բնաջնջումը: Այդ մասին Թուրքական Արևելյան բանակի հրամանատար գեներալ-լեյտենանտ Վեհիբ-փաշան հետևյալն է հայտարարել. «Մենք հայերին պետք է տանենք մեր հետևից մինչև այն ժամանակ, քանի որ մեզ համար զինվորներ են հարկավոր ռազմաճակատի համար, իսկ հետո քրդերի օգնությամբ կոտրենք նրանց շնչառուկը լինել այն մեջտեղում, որտեղ նրանք նստած են»[1]:

Թուրքիայի զինված ուժերի գլխավոր հրամանատար, միաժամանակ Թուրքիայի դիկտատոր Էնվեր փաշան (1881—1922) 1918 թ. հունիսի 13-ին Կ. Պոլսի կոնֆերանսի ժամանակ դաշնակների կառավարության պատվիրակությանը այդ մասին հայտարարում է հետևյալը. «Տաճիկ մինիստրները երկու շաբաթ մտածում էին՝ ստեղծե՞լ արդյոք Հայաստան, թե՞ ոչ և ի վերջո որոշեցին ստեղծել, որովհետև այդպես ավելի ձեռնտու էր թե՛ հայերի և թե՛ թուրքերի համար»[2]:

Հայ ժողովրդի դահիճ Էնվեր փաշան մի այլ առիթով Կ. Պոլսի կոնֆերանսի դաշնակների պատվիրակության ղեկավար Ալ. Թոսիայանին հայտարարում է, թե՝ «Ես լուծեցի դժվարին խնդիր մը, ստեղծեցի Հայաստանը, զոհացում տալու համար հայերու ազգային պահանջին»[3]:

Ահա այսպիսի նպատակով է, որ օսմանյան կառավարությունը

[1] ՀՍՍՌ ԿԳԳԱ, ֆ. 200, գ. 535, թ. 503:
[2] «Ձանգ», 1918 թ., № 58 (74):
[3] Նույն տեղը:

Բաթումիի կոնֆերանսում համաձայնվում է ստեղծել «անկախ Հայաստան», որը փաստորեն դառնում է Օսմանյան կայսրության դավառներից մեկը, մինչդեռ հայ ժողովուրդը, որը իր հայրենիքի տերն էր, հակառակ դաշնակների թուրքասիրական քաղաքականության, Հայաստանի լեռներում և ձորերում արյուն էր թափում գերմանա-թուրքական զավթիչների դեմ մղվող անհավասար մարտերում, միաժամանակ թշնամուն պատճառելով նյութական և մարդկային հսկայական կորուստներ:

Այդ մասին բազմիցս հարկադրաբար խոստովանել է թե՛ թուրքական բանակի, թե՛ գերմանական զոլված բանակի հրամանատարությունը: Այսպես, օրինակ, գերմանական բանակի գեներալ Լիման ֆոն Սանդերսը, որը 1913—1918 թթ. եղել է գերմանական ռազմական միսիայի պետը Թուրքիայում և միաժամանակ ղեկավարել է Թուրքական բանակի ռազմական գործողությունները, հայտարարել է, թե Թուրքական բանակի պարտությունը Պաղեստինի ռազմաճակատում բացատրվում է նրանով, որ թուրքական հրամանատարությունը իր հիմնական ուժերը Մերձավոր Արևելքից տեղափոխեց Անդրկովկաս՝ Հայաստանի և Ադրբեջանի ռազմաճակատները:

Այսպիսով, Թուրքական հրամանատարության ավանտյուրան Հայաստանի վրայով դեպի պրոլետարական Բաքուն, պատճառ է դառնում Մերձավոր Արևելքում Թուրքական բանակի պարտության: Գերմանական բանակի գլխավոր շտաբի պետ, գեներալ Լյուդենդորֆը Արևմտյան ռազմաճակատում գերմանական բանակների պարտությունը 1918 թ. ամռանը և աշնանը բացատրում է նրանով, որ Թուրքական բանակը չկարողացավ ժամանակին գրավել Բաքուն. «Արևմտյան ռազմաճակատում գերմանական բանակի պարտության գլխավոր պատճառը վառելիքի պակասությունն էր, որովհետև Թուրքերը ժամանակին չկարողացան գրավել Բաքուն»[1]:

Այսպիսով, հայ ժողովուրդը, որը մի քանի ամիս շարունակ մարտնչում էր գերմանա-թուրքական զորքերը դեմ, ձախողեց Բաքուն շատ կարճ ժամանակամիջոցում գրավելու և նավթային հարուստ ռեսուրսներն օգտագործելու նրանց պլանները:

Կայզերական Գերմանիայի զինված ուժերի գլխավոր հրամանատար, ֆելդմարշալ Պաուլ ֆոն Հինդենբուրգը (1847—1934 թթ.) իր զայրույթը հայտնելով հայ ժողովրդի կողմից գերմանա-թուր-

[1] Э. Людендорф, Мои воспоминания о войне 1914—1918 гг., т. II, М., 1924, стр. 189.

քական զավթիչների դեմ մղված հերոսական մարտերի ամբիվ, իր հուշերում գրում է. Կովկասյան ռազմաճակատում «...ռուսական ուժերը խարուսիկ էին, զորքերի մի մասը միանգամայն անկանոն վիճակում, դրա համար էլ թուրքերի արշավանքը հանդիպում է հայկական բանդիտական գնդերի դիմադրությանը, որն անհամեմատ ավելի դժվար էր վերացնել»[1]։

Այսպիսի պայմաններում, երբ Հայաստանի աշխատավորությունը Արարատյան դաշտավայրում և Լոռվա լեռներում ու ձորերում իր ազատության ու անկախության համար հերոսաբար մարտնչում էր թուրքական ու գերմանական զավթիչների դեմ, դաշնակների պարտիայի ղեկավարները, վրացական մենշևիկների և մուսավաթականների ղեկավարների հետ միասին, Անդրկովկասյան կոմիսարիատում (այնուհետև՝ Սեյմ) հետևողականորեն շարունակում էին «...իրենց պրովոկացիոն, հակառևոլյուցիոն տակտիկան»[2]։ Իսկ դաշնակների, մուսավաթականների և մենշևիկների պատվիրակությունները սկզբում Տրապիզոնի (1918 թ. մարտի 12-ից մինչև ապրիլի 14-ը), այնուհետև Բաթումիի կոնֆերանսներում (մայիսի 11-ից հունիսի 4-ը) բանակցություններ էին կազմակերպում գերմանա-թուրքական պատվիրակությունների հետ, որտեղ բարեկամական և գովասանական ճառեր էին փոխանակում, միաժամանակ խոսում Անդրկովկասը գերմանա-թուրքական իմպերիալիստական բլոկին ենթարկելու պայմանների մասին, որպեսզի գերմանա-թուրքական իմպերիալիստների սվինների օգնությամբ ճնշեն բանվորա-գյուղացիական ռևոլյուցիոն շարժումները երկրամասում, տապալեն Սովետական իշխանությունը Բաքվում և ամրապնդեն իրենց տիրապետությունը։

Այսպիսով, Անդրկովկասի Սեյմը «...թուրքական զորքերի օգնությամբ գնաց բոլշևիկների դեմ»[3]։ Բաքվում լույս տեսնող բոլշևիկյան «Նարաթ» թերթը ևս, մերկացնելով գերմանա-թուրքական իմպերիալիստների և Անդրկովկասի բուրժուա-նացիոնալիստական պարտիաների հետադիմական բլոկի հակաժողովրդական գործունեությունը, գրում է. «Այն բանից հետո, երբ մեզ անջատեցին Ռուսաստանի բանվոր դասակարգից, Անդրկովկասը դառնում է բոլոր իմպերիալիստական տերությունների զավթողական օբյեկտ. վրացական մենշևիկները մի կողմից, Ադրբեջանի բեգերը և խաները մյուս կողմից, հայկական բուրժուազիայի շահերը արտահայտող դաշնակները երրորդ կողմից նպաստավոր հող են ստեղծում այդ զավթողական քաղաքականության համար»[1]։

Թուրքական պատվիրակությունն օգտվելով Անդրկովկասի Սեյմի հակաժողովրդական և հակասովետական քաղաքականությունից, Բաթումիի «խաղաղության և բարեկամության» կոնֆերանսում պահանջում է Նախիջևանի գավառը (բացի Օրդուբադից և նրան կից մի աննշան շերտից), Շարուր-Դարալագյազի գավառի կեսը, Երևանի գավառի կեսը (Երևան քաղաքը մնում է Ադրբեջանին), ամբողջ Սուրմալուի գավառը, գրեթե ամբողջ Էջմիածին գավառը Էջմիածին քաղաքով, Ալեքսանդրապոլի գավառի մեծ մասը Ալեքսանդրապոլ քաղաքով և Ախալքալաքի ու Ախալցխայի ամբողջ գավառները։ Միաժամանակ թուրքական պատվիրակությունը պահանջում է թույլ տալ իր զորքերը անարգել կերպով փոխադրել Կովկասի բոլոր երկաթուղիներով[2]։

«Սուլթանի ոճրագործ կառավարությունը,— գրում է «Կարմիր օրեր» թերթը,— թև առած այն բանից, որ Անդրկովկասի հակահեղափոխությունը գերադասում է տաճկական տիրապետությունը բանվորա-գյուղացիական հեղափոխությունից, օրավուր ավելի հանդուգն և լկիրշ է դառնում բանակցությունների ընթացքում»[3]։

Բաթումիի կոնֆերանսի աշխատանքները ավարտվելու նախօրյակին, մայիսի 26—28-ին, գերմանա-թուրքական պատվիրակությանը հաջողվում է քայքայել բուրժուա-նացիոնալիստական պարտիաների բլոկ հանդիսացող Սեյմը, որից հետո գերմանա-թուրքական բլոկի պատվիրակության կողմից ստեղծվում են առանձին բուրժուա-նացիոնալիստական կառավարություններ։

Սեյմը լուծարքի ենթարկելու, Հայաստանում, Վրաստանում և Ադրբեջանում բուրժուա-նացիոնալիստական կառավարություններ ստեղծելու մասին Սեյմը ընդունում է հետևյալ որոշումը. «Նկատի ունենալով, որ հաշտության ու պատերազմի հարցի նկատմամբ երևան եկան արմատական տարաձայնություններ... ուստի անհնարին է հանդես բերել մի հեղինակավոր իշխանություն, որպեսզի խոսե Անդրկովկասի և նրա անկախության անունից, Սեյմը վկայում է, որ Անդրկովկասը իրապես կազմալուծված է և հրա-

[1] „Воспоминания Гинденбурга", Петроград, 1922, стр. 104.
[2] „Кавказский рабочий", 10 января 1918 г.
[3] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 27, էջ 460։

[1] „К XXX годовщине злодейского убийства 26 Бакинских комиссаров агентами английского империализма", Баку, стр. 274.
[2] «Մշակ», 1918 թ., № 98։
[3] «Կարմիր օրեր», 1918 թ., № 14։

ժարվում է լիազորությունից»[1], որից հետո գերմանա-թուրքական բլոկին հաջողվում է «հաշտության և բարեկամության» պայմանագիր ստորագրել Անդրկովկասի նորաստեղծ բուրժուա-նացիոնալիստական կառավարությունների հետ՝ Բաթումիի կոնֆերանսում, 1918 թ. հունիսին։

Բաթումիի «բարեկամության» պայմանագրի ստորագրմանը սուլթանական Թուրքիայի կողմից մասնակցել են արդարադատության մինիստր և պետական խորհրդի նախագահ Խալիլ-բեյը, Կովկասյան ռազմաճակատի թուրքական զորքերի գլխավոր հրամանատար, գեներալ-լեյտենանտ Վեհիբ-փաշան և այլ անձինք։

Դաշնակների կողմից մասնակցել են Ալ. Խատիսյանը (պատվիրակության ղեկավար), Ռ. Քաջազնունին (պատվիրակության անդամ), Միքայել Բաբաջանյանը և այլ անձինք։

Բաթումիի պայմանագրի 1-ին հոդվածում նշված է, որ «Օսմանյան կայսերական կառավարության և Հայկական հանրապետության կառավարության միջև հաստատվում են հաշտություն ու մշտական բարեկամություն»[2]։

Պայմանագրի 2-րդ հոդվածը վերաբերում է երկու «բարեկամ» պետությունների պետական սահմաններին, որի համաձայն դաշնակցական Հայաստանից մի շարք գավառներ անցնում են «բարեկամ» Օսմանյան կայսրությանը, որից հետո Հայաստանին մնում է ընդամենը 9000 քառ. կմ տարածություն՝ 6 կմ երկաթուղով և 324 285 բնակիչով[3]։

Պայմանագրի 4-րդ հոդվածը վերաբերում է թուրքական կառավարության կողմից ցույց տրվելիք օգնությանը՝ Հայաստանի ներսում «կարգ ու կանոն» պաշտպանելու համար, որտեղ նշված է. «Օսմանյան կայսերական կառավարությունը պարտավորվում է զենքի ուժով օգնություն ցույց տալ Հայկական հանրապետության կառավարությանը այն դեպքում, եթե վերջինս այդ օգնությունը կխնդրի նրանից՝ երկրում կարգն ու հանգստությունն ապահովելու համար»[4]։

Այսպիսով, Բաթումիի պայմանագրի 4-րդ հոդվածով դաշնակները Թուրքիայի հետ համաձայնության են գալիս միացյալ ուժերով Հայաստանում բանվորա-գյուղացիական ռևոլյուցիոն շարժումները ճնշելու համար, եթե դաշնակների կառավարությունը ի վիճակի չլիներ սեփական ուժերով կատարել այդ։

Պայմանագրի 5-րդ հոդվածում նշված է. «Հայկական հանրապետության կառավարությունը պարտավորվում է գործուն կերպով հակազդել, որպեսզի ոչ մի բանդա չկազմավորվի և չլինվի իր տերիտորիայի սահմաններում, ինչպես և՝ զինաթափել և ցրել բոլոր բանդաները, որոնք կփորձեն թաքնվել այնտեղ»[1]։

Պայմանագրի 5-րդ կետը վերաբերում է հայկական զինվորական այն ջոկատներին, գլխավորապես հայկական հարվածող բրիգադային, որը դատապարտում է դաշնակների դավաճանական և թուրքասիրական քաղաքականությունը։

Գեներալ-մայոր Անդրանիկը դատապարտում է Բաթումիի այս ստորացուցիչ պայմանագիրը և հայտարարում. «Վեց հարյուր տարվան ստրկության շղթան դարձյալ ձեր վիզն ու ոտքը կանցնենք ձեր ձեռքով։ Չեմ կրնար այս պայմաններուն հանդուրժել, մոռանալով մեր երեսուն տարվան զոհերը և մեկ միլիոն նահատակները»[2]։

Պայմանագրի 11-րդ հոդվածում դաշնակցական կառավարությունը պարտավորություն է վերցնում բոլոր ջանքերը գործադրել հայկական զինված ուժերը Բաքվից դուրս բերելու և Բաքվի գրավումը թուրքերի կողմից արագացնելու համար։ Այդ մասին Բաթումիի «բարեկամության» պայմանագրում նշված է հետևյալը. «Հայկական հանրապետության կառավարությունը պարտավորվում է գործադրել բոլոր ջանքերը, որպեսզի սույն պայմանագրի ստորագրումից հետո Բաքու քաղաքից անհապաղ էվակուացվեն այնտեղ գտնվող բոլոր հայկական զինվորական ուժերը»[3]։

Այսպիսով, դաշնակների հակառևոլյուցիոն պարտիան պատասխանատու պարտավորություն է ստանձնում սուլթանական Թուրքիայի առաջ՝ «թուրքական զորքերին աջակցություն ցույց տալ Բաքուն բոլշևիկներից «մաքրելու» համար։ Մինչդեռ թուրքական հրամանատարությունը ձգտում էր «նախ և առաջ հայկական զորամասերը դուրս բերել Բաքվից և զինաթափել, որպեսզի հնշտ կերպով հաշվեհարդար կատարեր նրանց և Անդրկովկասի մյուս մասերի հայերի հետ»[4]։

---

1 «Մշակ», 1918 թ., № 97։
2 ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 200, գ. 11, թ. 99—100։
3 Տե՛ս նույն տեղը, գ. 30, թ. 13։
4 Նույն տեղը, գ. 11, թ. 99—100։

1 ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 200, գ. 11, թ. 99—100։
2 Գ ե ն ե ր ա լ Ա ն դ ր ա ն ի կ, Հայկական առանձին հարվածող զորամաս, Պոսթոն, 1921, էջ 236։
3 ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 200, գ. 11, թ. 96—98։
4 «Կոմունիստ», շաբաթաթերթ, 1918 թ., № 3, էջ 14։

Բաթումիի «բարեկամական» պայմանագրի վերջին և 14-րդ կետը վերաբերում է պայմանագրի վերջնական վավերացման ժամկետին, որտեղ նշված է. «Սույն պայմանագիրը կվավերացվի և վավերացված օրինակների փոխանակումը կկատարվի Կոնստանդնուպոլսում, մեկ ամսվա ընթացքում կամ ավելի վաղ, եթե դա հնարավոր կլինի։ Այն ուժի մեջ կմտնի այդ փոխանակման օրից»[1]։

Այսպիսին էր Բաթումիի պայմանագրի կողոպտիչ բնույթը, որը ոչ միայն հակասում էր հայ ժողովրդի անմիջական շահերին, այլ նաև Սովետական Ռուսաստանի շահերին։

Բաթումիի պայմանագրով «ծովից-ծով» առասպելական Հայաստանի փոխարեն ստեղծվում էր Թզուկ մի Հայաստան, որը փաստորեն հանդիսանում էր սուլթանական Թուրքիայի մի փոքրիկ գավառը, իսկ դաշնակների կառավարության ղեկավարները դառնում էին Թալիաթի, Էնվերի և Ջեմալի հյուծ սպասավորները։

Բաթումիի պայմանագրից հետո դաշնակների և Թուրքիայի բարեկամությունն ու համագործակցությունն ավելի է ամրապնդվում։ Դաշնակցության պատվիրակության ղեկավար Ալ. Խատիսյանը Թիֆլիսում, Ազգային խորհրդի նիստում հայտարարել է. «...Թուրքերը զարդացած և ճենթլմեն մարդիկ են և Թուրքիո հայերը չեն կրցած անոնց հետ վարվելակերպ ունենալ»[2]։

Այսպիսով, պ. Խատիսյանն ու նրա համախոհները Թուրք փաշաներին դուր գալու համար արդարացնում են նրանց կողմից կատարված այն սոսկալի ոճիրները, որոնք գործադրվել են հայ ժողովրդի նկատմամբ։

Բաթումիի այդ կողոպտիչ պայմանագիրը ստորագրվելուց անմիջապես հետո դաշնակցության պատվիրակության ղեկավար Ալ. Խատիսյանը, իր կառավարության անունից շնորհակալություն հայտնելով Թուրքական պատվիրակությանը, հայտարարում է. «Այս փառավոր օրը հանդիսանում է նշանավոր տարեթիվ հայ ժողովրդի պատմության մեջ»[3]։ Իսկ Թուրքական պատվիրակության անդամ Վեհիբ-փաշան իր պատասխան ճառում ասում է՝ «Հայկական պետությունը մենք համարում ենք մեր «երեխան»»[4]։

Մայիսի 28-ին, Հայաստանը գերմանա-թուրքական բլոկի կողմից «անկախ» ճանաչվելուց հետո, դաշնակների կառավարությունը դեռ Երևան չտեղափոխված, Թիֆլիսից հեռագրում է Կ. Պոլիս և ողջունում սուլթանին, այդ առթիվ նշելով. «Ձերդ գերազանցություն. Անդրկովկասի ռեսպուբլիկան քայքայվելուց հետո, Կովկասի հայկական ազգային խորհուրդը մայիսի 28-ի իր նիստում որոշեց Հայաստանը հայտարարել անկախ պետություն... Հայաստանի ռեսպուբլիկայի կառավարությունը պատիվ ունի այդ մասին հաղորդելու Ձերդ գերազանցությանը, ընդունեք մեր խորին հարգանքը։

Հայկական ազգային խորհրդի նախագահ Ա. Ահարոնյան։

Հայկական ռեսպուբլիկայի նախագահ Ռ. Քաջազնունի։

Արտաքին գործերի մինիստր Ալ. Խատիսյան»[1]։

Դաշնակների նորաստեղծ կառավարությունը այսպիսի բռավանդակությամբ ողջույնի հեռագիր է ուղարկում նաև գերմանական և բուլղարական կառավարություններին։ Այսպիսի պայմաններում էլ դաշնակների կառավարությունը Թուրքական բանակի զինվորների պաշտպանությամբ Թիֆլիսից տեղափոխվում է Երևան։

Գերմանական զինված ուժերի գլխավոր շտաբի պետ, գեներալ Է. Լյուդենդորֆը Բաթումիում ստորագրված պայմանագրերի մասին հետևյալն է հայտարարում. «Ես խանդավառությամբ վերաբերվեցի Թուրքական այդ ձեռնարկումների նկատմամբ, քանի որ նրանք համապատասխանում են պատերազմի զարգացման շահերին»[2]։

Այսպիսով, Բաթումիի պայմանագրով ստեղծված «անկախ Հայաստանը» այն դերեղմանն էր, որ հայ խոշոր բուրժուազիան պատրաստում էր հայ աշխատավոր ժողովրդի համար։

Բաթումիի «բարեկամության» պայմանագիրը ավելի ծանր ու ստորացուցիչ է եղել Վրաստանի, Հայաստանի և Ադրբեջանի աշխատավորության համար, քան թե Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը Ռուսաստանի համար։

Բաթումիի «բարեկամության» պայմանագիրը ստորագրելուց հետո Թուրքական հրամանատարությունը սկսում է մեծ թվով զորքեր կենտրոնացնել Երևանի շրջապատում և խրամատներ պատրաստել՝ հետագայում Երևանի վրա գրոհելու համար։

Հայկական դիվիզիայի գլխավոր շտաբը դաշնակների կառավարության արտաքին գործերի մինիստրին ուղարկած խիստ գաղտնի գրության մեջ այդ մասին նշում է հետևյալը. «Նորագա-

[1] ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 200, գ. 11, թ. 99—100։
[2] Նույն տեղը, գ. 74, թ. 37։
[3] Նույն տեղը, թ. 40—41։
[4] «Լրաբեր», 1918 թ., № 1։

[1] ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 200, գ. 96, թ. 1—10։
[2] «Կոմունիստ», շաբաթաթերթ, 1918 թ., № 2, էջ 9։

վիճի սահմանագլխում թուրքերը շարունակում են խրամատներ փորել և պատերի մեջ պատրաստել հրակնատ. խնդրում եմ առաջարկել թուրքական հրամանատարությանը, որպեսզի դադարեցնեն թուրքերի նման գործողությունները»[1]։

Բաթումիի կոնֆերանսում, նույն օրը՝ հունիսի 4-ին, Օսմանյան կայսրության պատվիրակության հետ այդպիսի խայտառակ պայմանագիր են ստորագրում նաև Վրաստանի մենշևիկյան կառավարության պարագլուխները։ Այդ պայմանագրի 1-ին հոդվածի համաձայն «Օսմանյան կայսրության կառավարության և վրացական ռեսպուբլիկայի միջև ստեղծվում է կայուն խաղաղություն և հավերժական բարեկամություն»[2]։

Բաթումիում ստորագրված լրացուցիչ պայմանագրի 3-րդ հոդվածի համաձայն, Թուրքիային իրավունք է վերապահվում Վրաստանի գլխավոր ստրատեգիական երկաթուղիներով կատարել բոլոր տեսակի ռազմական փոխադրումներ։

Թուրքական կառավարությունը Բաթումիի պայմանագիրը ստորագրելուց անմիջապես հետո Վրաստանի երկաթուղիներով և խճուղային ճանապարհներով իր հորդաները շարժում է դեպի սովետական Բաքու։

Այս բոլորից հետո հայ ժողովրդի դահիճ էնվեր փաշան այցելում է Ալեքսանդրապոլ, ապա նաև Գանձակ, դեպի Բաքու արշավող թուրքական հրոսակախմբերին առաջնորդելու համար։ Դաշնակների ղեկավարները մեծ նախապատրաստություններ են տեսնում էնվեր փաշային դիմավորելու և հաճոյանալու համար։ Այդ մասին դաշնակների պատվիրակությունը՝ Ալ. Խատիսյանի գլխավորությամբ, շտապ կարգով հեռագրում է Թիֆլիս՝ Ազգային խորհրդի նախագահ Ահարոնյանին, որտեղ նշված է. «Սիրելի Ավետիս... մի քանի օրից հետո էնվեր փաշան գալիս է Ալեքսանդրապոլ, այնտեղից գնալու է Գանձակ, իսկ հետո Բաթում։ Լավ կլինի, որ դիմավորեք Ալեքսանդրապոլում և արժանավայել վերաբերմունք ցույց տաք»[3]։

Դաշնակները վրացական մենշևիկների հետ միասին կենսագործելով Բաթումիում ստորագրված «բարեկամության» պայմանագրով ստանձնած պարտավորությունները, Հայաստանի և Վրաստանի երկաթուղիները և խճուղային ճանապարհները տրամադրում են գերմանա-թուրքական հորդաներին՝ դեպի սովետական Բաքու շարժվելու համար։ Բացի դրանից, Հայաստանի տերիտորիայի վրայով դեպի Բաքու շարժվող թուրքական զորքերի մատակարարումը պետք է կատարվեր Հայաստանի աշխատավորության կողմից, թուրքական հրամանատարության կողմից նշանակված «սակագների» համաձայն։

Վերոհիշյալ պայմանագրի 5-րդ հոդվածում այդ մասին նշված է. «Հայկական հանրապետության տերիտորիայի խճուղիներով անցնող թուրքական զորքերի համար անհրաժեշտ քանակությամբ անցնող թուրքական զորքերի համար անհրաժեշտ քանակությամբ պարենամթերքը և անասնակերը ձեռք կբերվեն տեղում, տեղական հայկական ադմինիստրացիայի միջոցով, երկու կողմերի կոմիսարների հաստատած գներով»[1]։

Սույն պայմանագրի 6-րդ կետը վերաբերում է Հայաստանի տերիտորիայի վրայով թուրքական զորքերը դեպի սովետական Բաքու ազատ ու ապահով անցնելուն. «Մինչև կոմիսարների նշանակումը թուրքական զորքերի տեղափոխությունները կկատարվեն Հայկական հանրապետության տերիտորիայի խճուղիներով, և նրանց ճանապարհի պահակությունը կդրվի Հայկական հանրապետության վրա»[2]։

Առանձին կետ է ընդունվում Բաթումիի դաշնակցական և թուրքական պատվիրակությունների կողմից «թուրքական զորքերը Դիլիջանի վրայով դեպի Ղազախ անցնելու համար»[3]։

Բացի այդ, դաշնակների «կառավարության» պատվիրակությունը 1918 թ. հունիսի 5-ին թուրքական պատվիրակության հետ կնքած մի առանձին պայմանագրով պարտավորվում է թուրքական զորամասերի օգտագործման համար տրամադրել «անկախ» Հայաստանի բոլոր շոգեքարշներն ու վագոնները։ Այդ պայմանագրի համաձայն, թուրքական հրամանատարությանն են հանձնվել՝ երեք շոգեքարշ, 35 ցիստեռն, 8 պլատֆորմ, 1 սանիտարական վագոն, ապրանքատար վագոններ և այլն[4]։ Թուրքական զորքերի՝ Անդրկովկասի և Հայաստանի սահմաններից հեռանալու ժամանակ, որը տեղի ունեցավ 1918 թ. աշնանը, թուրքական հրամանատարները

[1] ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 200, գ. 37, թ. 61։

[2] Проф. Ю. В. Ключников и Сабанин, Международная политика новейшего времени в договорах, нотах и декларациях, часть II, М., 1926, стр. 437.

[3] ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 200, գ. 11, թ. 55։

[1] ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 200, գ. 79, թ. 56։

[2] Նույն տեղը։

[3] Նույն տեղը, գ. 57, թ. 582։

[4] Նույն տեղը, գ. 78, թ. 14։

«Հայաստանի երկաթուղային ամբողջ շարժական դույքը՝ վագոնները, շոգեքարշները չեն վերադարձնում, այլ փոխադրում են Թուրքիա»[1]։ Իսկ այն, ինչ հնարավոր չէր փոխադրել Թուրքիա, գլխավոր հրամանատարության կարգադրությամբ այրում և ոչնչացնում են թուրքական զորամասերը։ «Ալեքսանդրապոլում՝ բերդի պահեստում և երկաթուղու դեպոյում սկսվում են հրդեհները»[2]։

Թուրքական հրամանատարությունը Հայաստանի օկուպացված շրջաններից կողոպտում և Թուրքիա է տեղափոխում նաև կենսամթերքները։ Միայն Սարիղամիշի շրջանից 1919 թ. հունվարի 8—18-ը կողոպտել և տարել են 12 893 փութ հացահատիկ և այլ մթերքներ, իսկ Կարսի մարզից՝ 234 տոննա հաց[3]։

Դաշնակների կառավարության պատվիրակությունը 1918 թ. հունիսի 4-ին Օսմանյան կայսրության պատվիրակության հետ կնքում է մի լրացուցիչ պայմանագիր, որը վերաբերում է «անկախ» Հայաստանի զինված ուժերի թվական կազմին, նրա զինված միջոցներին և Հայաստանի տերիտորիայի վրայով դեպի Բաքու շարժվող թուրքական զորքերի համար ճանապարհների անխափան կերպով փոխադրելու մասին։ Այսպես, վերոհիշյալ պայմանագրի առաջին հոդվածի համաձայն՝ «Հայկական հանրապետության կառավարությունն անհապաղ ձեռնամուխ կլինի իր զորքերի զորացրմանը։ Այդ զորքերի քանակը, ինչպես և այն ռազմական օկրուգները, որոնց մեջ դրանք կլինեն, կորոշվեն՝ Օսմանյան կայսերական կառավարության հետ համաձայնեցնելով, ընդհանուր պատերազմի ամբողջ ժամանակաշրջանի համար»[4]։

Վերոհիշյալ պայմանագրի 3-րդ հոդվածի համաձայն՝ «Հայաստանի ռեսպուբլիկայի կառավարությունը իր համաձայնությունն է տալիս այն մասին, որպեսզի Օսմանյան կայսրության բանակի բոլոր տեսակի զորամասերը և նրանց համար անհրաժեշտ ճանապարհները և ռազմական միջոցները փոխադրվեն Հայկական ռեսպուբլիկայի տերիտորիայի վրայով»[5]։

Սույն պայմանագրի 3-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն «Հայկական հանրապետության կառավարությունը պարտավորվում է ցրել ամեն մի ուժ, որ նպատակ կունենա խանգարել հիշյալ փոխադրումներին։

[1] ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 200, գ. 26, թ. 121—122։
[2] Նույն տեղը, գ. 568, թ. 74։
[3] Նույն տեղը, գ. 109, թ. 451։
[4] Նույն տեղը, գ. 74, թ. 27—30։
[5] Նույն տեղը։

Եթե նա ինքը լի վիճակի չլինի այդ անելու, ապա օսմանյան զորքերը կմիջամտեն այդ խոչընդոտների վերացման համար՝ գործելով Հայաստանի կառավարության համաձայնությամբ»[1]։

Վերոհիշյալ պայմանագիրը պարզ ու որոշակի կերպով ցույց է տալիս, որ դաշնակների կառավարությունը բլոկ է կազմել թուրքական իմպերիալիստների հետ՝ ընդդեմ Բաքվի ռևոլյուցիոն պրոլետարիատի և Հայաստանի աշխատավորության։

Միանգամայն իրավացի կերպով «Կոմունիստ» շաբաթաթերթը այդ մասին գրել է. «Դաշնակցականները, դաշնակցելով գերմանատաճկական գիշատիչների հետ, սպառնում են կարմիր Բաքվին»[2]։

Այսպիսով՝ «Գերմանա-թուրքական իմպերիալիզմի գործակալ «Անկախ Հայաստանի» կառավարությունը ոչ մի միջոցի առաջ կանգ չի առնում, որպեսզի կարողանա հայկական ջոկատները դուրս բերել Բաքվից..., որպեսզի հեշտացնի Կարմիր Բաքվի գրավումը և Բաքվի պրոլետարիատի ջախջախումը»[3]։

Այս բոլորից հետո դաշնակների կառավարությունը հեռագրում է Բաքու՝ «Հայոց ազգային խորհրդին», թե «Թուրքերը Ղարաքիլիսայի խճուղիներով շարժվում են դեպի Բաքու, Թուրքիայի հետ կնքված պայմանագրի համաձայն, մոտ օրերս կսկսվի զորքերի փոխադրումը դեպի Բաքու և Ջուլֆա նաև երկաթուղիներով»[4]։

Դաշնակների «կառավարությունը» գերմանա-թուրքական խմբավորման նկատմամբ իր ստանձնած «բարեկամական» պարտավորությունները արագորեն կատարելու համար է՛լ ավելի է ուժեղացնում իր թշնամական գործունեությունը սովետական Բաքվի նկատմամբ։ Բոլոր միջոցները գործադրում է, որպեսզի կազմալուծի Բաքվի Կոմունայի զինված ուժերը և այդպիսով արագացնի սովետական Բաքվի գրավումը գերմանա-թուրքական զորքերի կողմից։

Բաթումիի «բարեկամական» պայմանագիրը ստորագրվելուց անմիջապես հետո դաշնակների պատվիրակությունը Ալ. Խատիսյանի գլխավորությամբ թուրքական պատվիրակությանը ներկայացրած զեկուցագրում 1918 թ. հունիսի 4-ին հայտնում է հետևյալը. «...համարձակվում եմ հավաստիացնել Ձեզ, Ձերդ գերազանցություն, որ այն ամենը, ինչ կախված կլինի Ազգային խորհրդից (Բաքվի հայկական ազգային խորհրդի մասին է—Խ. Բ.), կկա-

[1] ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 200, գ. 74, թ. 27—30։
[2] «Կոմունիստ», շաբաթաթերթ, 1918 թ., № 2։
[3] ՀՌԿՊԱ (Մոսկվա), ֆ. 1318, ց. 1, գ. 619, թ. 59։
[4] „Бакинский рабочий", 1918 г., № 108.

տարվի։ Ընդունենք, Ձերդ գերազանցություն, իմ բարձր հարգանքի արտահայտությունը»[1]։ Դրանից հետո դաշնակների կառավարությունը կազմում է մի հատուկ հանձնաժողով, որը միայն պետք է ղեկավարեր հայկական զինված ուժերը Բաքվից դուրս բերելու գործով։ Այդ հանձնաժողովի անելիքների մասին դաշնակների կառավարությունը շտապ կարգով հետևյալն է հայտնում թուրքական հրամանատարությանը. «Հայկական հանձնաժողովը պետք է խնդրի կորպուսի հրամանատար գեներալ Նազարբեկովին, որպեսզի գրավոր հրաման ուղարկի Բաքվի հայկական զինված ուժերի պետին, թուրքական հրամանատարության միջոցով»[2] հայկական զինված ուժերը Բաքվից դուրս բերելու համար։

Դաշնակների կառավարությունը գեներալ Նազարբեկովի հրամանը Բաքվի հայոց ազգային խորհրդին հասցնելու համար, իր պատվիրակության երկու անդամներին՝ Մ. Արղումանյանին և Մ. Հարությունյանին, թուրքական բանակի կապիտան Գուսամեդինի ուղեկցությամբ ուղարկում է Ադրբեջան՝ դաշնակների կառավարության հրամանը Բաքվի հայոց ազգային խորհրդին հասցնելու, նրա միջոցով հայկական զինված ուժերը Բաքվից դուրս բերելու և Բաքվի գրավումը գերմանա-թուրքական զորքերի կողմից արագացնելու համար։

Դեպի սովետական Բաքու ուղևորվող դաշնակների պատվիրակությունը, կատարելով գերմանա-թուրքական բլոկի շահերից բխող դաշնակների կառավարության կարգադրությունը, 1918 թ. հուլիսի 25-ին գրավոր զեկուցում է ներկայացնում դաշնակների կառավարությանը, նշելով՝ «Հուլիսի 12-ին հասանք Քյուրդամիր, որտեղից բոլշևիկները նահանջել էին... իմացանք, որ այդ ճակատամարտում է գործում Համազասպի օտրյադը։ Նամակը ուղարկեցինք մի գերի ռուսի ձեռքով»[3]։ Թուրքական բանակի համար այդ ծառայությունը կատարելու առթիվ Նուրի փաշան Գանձակում դաշնակցության պարտիայի անդամ Ս. Տեր-Իսրայելյանին պարգևատրում է մեդալներով»[4]։

Այսպիսով, դաշնակները մենշևիկների, մուսավաթականների հետ բլոկ կազմած, օգնում են գերմանա-թուրքական զորքերին՝ Բաքուն գրավելու համար։

1 ՀՍՍՌ ԿՊԿԱ, ֆ. 200, գ. 79, թ. 68։
2 Նույն տեղը։
3 Նույն տեղը, թ. 65—66։
4 ՀՌԿՊԱ, ֆ. 1318, ց. 1, գ. 619, թ. 64։

Բաքվի Հայոց ազգային խորհուրդը կատարելով դաշնակների կառավարության գրավոր այդ կարգադրությունը, բանակցությունների մեջ է մտնում թուրքական հրամանատարության հետ՝ քաղաքը թուրքական զորքերին հանձնելու համար։

Հակառակ Բաքվի Հայոց ազգային խորհրդի և խմբապետ Համազասպի կողմից սովետական Բաքվի նկատմամբ վարվող այդ դավաճանական քաղաքականությանը, Բաքվի հայկական զորամասերը և հայ աշխատավորությունը չենթարկվեցին դաշնակների պրովոկացիային, ընդհակառակն, համախմբվեցին Բաքվի Կոմունայի շուրջը և շարունակեցին մնալ իրենց դիրքերում՝ «Հերոսաբար մարտնչելով հայ ժողովրդի դարավոր թշնամու՝ թուրքիայի դեմ»[1]։

Գերմանա-թուրքական զորքերի ամեն մի հաջողություն սովետական զինված ուժերի դեմ մղվող մարտերի ժամանակ, համակրանք էր առաջացնում գերմանա-թուրքական բլոկի գործակալների մենշևիկների, դաշնակների և մուսավաթականների մեջ։ Այդ մասին դաշնակների կառավարության Թիֆլիսի միսիայի պետ Ջամալյանը հետևյալն է հաղորդում Երևան՝ իր կառավարությանը. «Երեկ խալիլ փաշան նոր էր վերադարձել ռազմաճակատից, ուր նա գնացել էր ռազմական գործողությունները ղեկավարելու համար, այցելության եկավ ինձ։ Տեսակցությունը տևեց 1 3/4 ժամ։ Ընդհանրապես խոսում էինք Բաքվի վերջին ռազմական գործողությունների շուրջը»[2]։

Դաշնակները միաժամանակ Բաքվի Կոմունային թիկունքից հարվածելու համար բանակցություններ են վարում Պարսկաստանում գտնվող անգլիական էքսպեդիցիոն զորքերի հրամանատարության հետ՝ անգլիական զինված ուժերը Բաքու տեղափոխելու և Բաքվի Կոմունան տապալելու համար, որը դավաճանական մի նոր քայլ էր Անդրկովկասի աշխատավորության և հատկապես Բաքվի ռևոլյուցիոն պրոլետարիատի նկատմամբ։

Դաշնակների կառավարությունը բարձր գնահատելով Բաքվի ազգային խորհրդի կատարած աշխատանքները անգլիացիներին Բաքու հրավիրելու համար, 1919 թ. գրում է. «Բաքվի Հայոց ազգային խորհրդի ջանքերով և աջակցությամբ Բաքու և Անդրկովկաս են մտել առաջին անգամ անգլիական զորքերը»[3]։

1 ՀՌԿՊԱ (Մոսկվա), ֆ. 1318, ց. 1, գ. 619, թ. 64։
2 ՀՍՍՌ ԿՊԿԱ, ֆ. 200, գ. 67, թ. 41։
3 «Կոմունիստ», 1920 թ., № 96։

Այսպիսով, Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայից հետո դաշնակները, Անդրկովկասի մյուս բուրժուա-նացիոնալիստական պարտիաների հետ միասին, մի կողմից համագործակցում են գերմանա-թուրքական բլոկին, մյուս կողմից էլ անգլո-ամերիկյան իմպերիալիստական բլոկին, որպեսզի նրանց օգնությամբ ճնշեն բանվորա-գյուղացիական ռևոլյուցիոն շարժումները Անդրկովկասում և տապալեն Բաքվի սովետական իշխանությունը։

Այսպես է ստեղծվում Անդրկովկասի բուրժուա-նացիոնալիստական կառավարությունների և գերմանա-թուրքական բլոկի սերտ համագործակցությունը Բաթումիի «բարեկամական» պայմանագրով։ Այդ ժամանակ թուրքական կառավարության ղեկավարները բազմիցս հայտարարել էին այն մասին, թե «ներկա կացության պայմաններում կայսերական հրամանով որոշված է հայ ցեղը ամբողջովին բնաջնջել»[1]։

1918 թ. օգոստոսի 1-ին տեղի է ունենում դաշնակների պառլամենտի բացումը, որն իր առաջին իսկ նիստում հաստատում է Բաթումիի պայմանագիրը և ողջունում այն, նշելով. «Այսօր առաջին անգամ Հայոց ազգային խորհրդի պատգամավորները ճանաչվեցին իբրև ներկայացուցիչներ անկախ Հայաստանի և ստորադրեցին հունիսի 4-ի դաշինքը»[2]։

Պայմանագրի հաստատման առթիվ տեղի է ունենում զորահանդես, որտեղ դաշնակցության կառավարությունը «...գերման, ռաճիկ և ավստրիացի զինվորական ներկայացուցիչների և այլոց հետ ընդունեց զորահանդեսը»[3]։

Դաշնակների կառավարությունը դրանից երկու օր հետո, 1918 թ. օգոստոսի 3-ին, «դաշնակցություն» պարտիայի գլխավոր օրգան «Ջանգ» թերթում հրապարակում է իր դեկլարացիան Բաթումիի «բարեկամության» պայմանագրի մասին, որտեղ պահանջվում է սրբությամբ կատարել Բաթումիի պայմանագրով ստանձնած պարտավորությունները և է՛լ ավելի ամրապնդել բարեկամական հարաբերությունները սուլթանի կառավարության հետ։ «Ամրացնել Օսմանյան կայսրության հետ հաշտությունը և բարի դրացիական հարաբերություններ հաստատել նրա հետ»[4],—ասված է դեկլարացիայում։ Ապա՝ «խստիվ կատարել այն բոլոր պարտավո-

[1] «Կոմունիստ», 1920 թ., № 96։
[2] «Ջանգ», 1918 թ., № 42 (58)։
[3] Նույն տեղը։
[4] Նույն տեղը, № 43։

րությունները, որ մենք հանձն ենք առել Օսմանյան կայսրության հանդեպ»[1]։

Բաթումիի «բարեկամական» պայմանագրի վերաբերյալ դեկլարացիան հրապարակելուց երկու օր հետո «Ջանգ» թերթը հատուկ խմբագրական հոդվածում Բաթումիի պայմանագրի մասին գրում է. «Այդ բարեկամության դաշինքով սկիզբ է դրվում մի նոր, ավելի երջանիկ փոխադարձ հարաբերությունների շրջանի... թե՛ Հայաստանի հանրապետության և թե՛ Օսմանյան կայսրության մեջ»[2]։ Այնուհետև՝ «Այդ բարեկամությունից Թուրքիան շահելու է ոչ պակաս, եթե ոչ ավելի քան Հայաստանը»[3]։

Դաշնակների և սուլթանական Թուրքիայի այդ բարեկամական հարաբերությունների մասին Կ. Պոլսի «Իգդամ» թերթը գրում է. «Կհաստատվի այսօր Օսմանյան կառավարության և դինակիցների բարյացակամությամբ Հայկական կառավարություն մը»[4]։

Այսպես է ստեղծվում դաշնակների և սուլթանական Թուրքիայի բարեկամությունը, մի բարեկամություն, որն ուղղված էր հայ ժողովրդի կենսական շահերի և Սովետական Ռուսաստանի դեմ։ Դրանից հետո դաշնակների օրգան «Ջանգ» թերթը գրում է. «Հետու չէ այն օրը, երբ Ռուսաստանը վերջնականապես մաքրված կլինի բոլշևիկներից»[5]։

Հակասովետական այդպիսի քաղաքականություն են վարում նաև վրացական մենշևիկներն ու Ադրբեջանի մուսավաթականները։ Մենշևիկյան կառավարության ներկայացուցիչները Կ. Պոլսում եղած ժամանակ թուրքական կառավարության ղեկավար Թալիաթ փաշային հայտնում են հետևյալը. «...Թուրքիայի հետ միշտ բարեկամ ենք եղել և բարեկամ պիտի մնանք»[6]։

Բաթումիի պայմանագրի համաձայն, մեկ ամիս հետո Կ. Պոլսում պետք է տեղի ունենար գերմանական խմբավորման և Անդրկովկասի բուրժուա-նացիոնալիստական կառավարությունների համատեղ կոնֆերանսը։ Կ. Պոլսի կոնֆերանսի աշխատանքներին մասնակցելու համար դաշնակների կառավարությունը կազմում է 7 հոգուց բաղկացած մի պատվիրակություն, դաշնակցական պարտիայի գլխավոր շեֆերից մեկի՝ Ավետիս Ահարոնյանի գլխավորությամբ։ Պատվիրակության կազմի մեջ մտնում են՝ Ալ. Խատիսյանը,

[1] «Ջանգ», 1918 թ., № 43։
[2] Նույն տեղը, № 46։
[3] Նույն տեղը։
[4] Նույն տեղը, № 42։
[5] Նույն տեղը, № 78։
[6] Նույն տեղը, № 42։

Միքայել Բաբաջանյանը, գեներալ Կորգանովը, Գ. Խատիսյանը, Բունիաթյանը և Հակոբ Քոչարյանը (վերջինս որպես պատվիրակության քարտուղար)։ Դաշնակցական կառավարության պատվիրակությունը 1918 թ. հունիսի 13-ին ուղևորվում է Կ. Պոլիս, ուր հասնում է հունիսի 20-ին։

Դաշնակցության պատվիրակությունը, մինչև Կ. Պոլսի կոնֆերանսի բացումը, մի շարք հանդիպումներ է ունենում թուրքական ղեկավարների՝ սուլթանի, Թալիաթի, Էնվերի և մյուսների հետ և ստորաքարշություններ է անում նրանց առջև։ Հունիսի 21-ին դաշնակցության պատվիրակության անդամներն ընդունվում են մեծ վեզիր Թալիաթ փաշայի կողմից։ Ընդունելությունը տևում է ավելի քան 40 րոպե, որի ժամանակ Ավետիս Ահարոնյանը դաշնակցության կառավարության և պարտիայի անունից հետևյալ ճառն է արտասանում. «Ձեզ կվստահեցնեմ, որ Թուրքիո հայերու վիճակները մեզ երբեք չեն շահագրգռել։ Մենք եկանք միայն խորհրդակցելու համար Կովկասյան հայերու հանրապետության մասին և որոշելու համար մեր սահմանները ու դիրքը, մեր զորավոր դրացին և պաշտպան եղող Օսմանյան պետության հետ, որու բարեկամական հակումները մենք տեսանք Բաթումում տեղի ունեցած բանակցությունների ժամանակ»[1]։

Այնուհետև ավելացնում է. «Նախ և առաջ մենք կուզենք համաձայնության գալ մեր զորեղ դրացի Օսմանյան պետության հետ, որուն սահմանակից ենք, որմե շատ օգնություններ կսպասենք...»[2]։

Հայ ժողովրդի դահիճ Թալիաթ փաշան, Ա. Ահարոնյանի այդ ստորաքարշ ճառը լսելուց հետո, պատասխանում է՝ «նրան վստահեցնելով, որ կայսերական կառավարությունը ամբողջապես բաժանում է հայ ժողովրդի զգացումները, հույսերը, ինչպես նաև երիտասարդ հանրապետությունը կարող է ապահով լինել, որ Օսմանյան կայսրությունը ամեն կերպ կաջակցի և անհրաժեշտ կանի, որպեսզի այդ ուժեղ և աշխատասեր ժողովուրդը կարողանա իրագործել իր ծրագրերը»[3]։

Ի՞նչ աջակցության մասին էր խոսում Թալիաթը, պարզ է, այն աջակցության, որ խոստացել էին Բաթումիի «բարեկամության» պայմանագրի 4-րդ հոդվածով՝ Հայաստանում «կարգ ու կանոն» պաշտպանելու համար։

[1] ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 200, գ. 13, թ. 21։
[2] Նույն տեղը։
[3] Նույն տեղը, գ. 13, թ. 1։

Դաշնակցության պատվիրակությունը հունիսի 22-ին ընդունվում է հայ ժողովրդի մյուս դահիճ, Թուրքիայի ռազմական մինիստր Էնվեր փաշայի կողմից։ Ալ. Ահարոնյանը Էնվերի մոտ արտասանած ճառում միաժամանակ ազերսում է, որ «Թուրքիան հանձն առնի ապահովել դաշնակիցների միջոցով (խոսքը վերաբերում է Թուրքիայի դաշնակիցներին—Խ. Բ.), որպեսզի Ռուսաստանը չխառնվի մեր անկախության դեմ»[1]։

Դաշնակների պատվիրակության անդամներն իրենց բարեքաջության մեջ այնքան են հեռու գնում, որ մինչև անգամ առաջարկում են Բաթումիի «բարեկամության» պայմանագրով ստեղծված «անկախ» և «ազատ» Հայաստանը միացնել Օսմանյան կայսրությանը՝ որպես նրա ավտոնոմ մարզ։ «Թուրքիայի սահմանները ապահովելու համար Ռուսաստանի կողմից,—հայտարարում է Ալ. Խատիսյանը Էնվեր փաշայի մոտ,—պիտի Թուրքիայի հետ կապվի և նրա մեջ մտնի ֆեդերատիվ կապերով ամբողջ ավտոնոմ Հայաստանը»[2]։

Էնվեր փաշան դաշնակների պատվիրակության կողմից առաջադրված այդ հարցադրմանը հետևյալ կերպ է պատասխանում. «Ես Ձեր կողմից սպասում էի դրան։ Ձեզ ճշմարտություն ասած լինելու համար, պետք է ասեմ, որ Դուք ձեր հույսը դրել էիք Ռուսաստանի վրա, կամ ավելի ևս՝ Անգլիայի վրա։ Թուրքիան այժմ Ձեզ անկախություն տվեց, և այն տվեց ձեր դրության մասին երկար մտածելուց հետո։ Իմ ստորագրությունը դա, և նա երբեք չի ջնջվի։ Դուք ոչ միայն կարող եք մեզ հետ լավ դրացիներ լինել, այլ նաև՝ մեր դաշնակիցները»[3]։

Այնուհետև պատվիրակությունը այցելում է Թուրքիայի արտաքին գործերի մինիստր Նեսիբ-բեյին, ծովային մինիստր Ջեմալ-փաշային և արդարադատության մինիստր Խալիլ-բեյին, որի հետ Բաթումիի կոնֆերանսի ժամանակ բանկետներում զովասանական ճառեր էին փոխանակել և որին հանձնված էր Կ. Պոլսի կոնֆերանսի աշխատանքների ղեկավարման գործը։

Պատվիրակության գլխավոր անդամները՝ պարոն Ալ. Խատիսյանը և պարոն Ալ. Ահարոնյանը այցելում են սուլթանին և գահաժառանգին՝ առողջություն մաղթելու և նրանց «...բայրամը շնորհա-

[1] ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 200, գ. 23, թ. 75։
[2] Նույն տեղը, թ. 79։
[3] Նույն տեղը, գ. 13, թ. 3։

վորելու համար։ Ընդունելությունը եղավ շատ սիրալիր»[1],—գրում է պատվիրակության քարտուղար Հակոբ Քոչարյանը պատվիրակության օրագրությում, որը մինչև այժմ պահվում է ՀՍՍՌ Կենտրոնական Պետական պատմական արխիվում։ Հանդիպման ժամանակ սուլթանը հայտարարում է՝ «Հայաստանի անկախությունը բանկ է ինձ համար, ես Հայաստանի կառավարությունը համարում եմ իմ հարազատ զավակը»[2]։

Սուլթանի փարիսեցիական այդ հայտարարությունից հետո պատվիրակության գլխավոր անդամներն իրենց ճառերում, դաշնակների կառավարության անունից, խորին երախտագիտական շնորհակալություն են հայտնում սուլթանին «ազատ» և «անկախ» Հայաստան ստեղծելու համար, ասելով, թե՝ «...եթե չլիներ սուլթանը, չէր լինի նաև ազատ ու անկախ Հայաստանը»[3]։

Այսպիսին է եղել դաշնակցության կառավարության պատվիրակության գործունեությունը Կ. Պոլսի կոնֆերանսի շրջանում։

Կ. Պոլսի կոնֆերանսում նույնպիսի ստորաքարշություն են հանդես բերում Վրաստանի մենշևիկյան կառավարության և Ադրբեջանի մուսավաթականների ներկայացուցիչները։

Վերոհիշյալ փաստերը ակնբախորեն վկայում են, որ հայ խոշոր բուրժուազիայի շահերը հետևողականորեն արտահայտող դաշնակների պարտիան, որը կարողացել էր գերմանա-թուրքական իմպերիալիստների սվիններով ճնշել դեմոկրատական շարժումները երկրում և անցնել իշխանության գլուխ, ժողովրդի նկատմամբ վարում էր դավաճանական քաղաքականություն։ Դրա ցայտուն ապացույցներից մեկն էլ կարող է հանդիսանալ այս փաստը, որ Բաքվի «բարեկամական», բայց հայ ժողովրդի համար փաստորեն կեղեքիչ պայմանագիրը ստորագրելուց հետո սուլթանական Թուրքիայի և դաշնակների կառավարության միջև ստեղծվում է ռազմա-քաղաքական սերտ դաշինք, որն ավելի է ամրապնդվում Կ. Պոլսի կոնֆերանսի շրջանում եղած բանակցությունների ժամանակ։ Վերոհիշյալ ռազմա-քաղաքական դաշինքը ուղղված էր ոչ միայն հայ ժողովրդի, այլ նաև Բաքվի Կոմունայի և Սովետական Ռուսաստանի դեմ։

Դաշնակների հակասովետական քաղաքականությունը երևում է նաև նրանց ամբողջ դիվանագիտական բանակցությունների ընթացքից։

[1] ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 200, ց. 23, թ. 24։
[2] «Ձանգ», 1918 թ., № 59/75։
[3] «Վրաթեր», 1934 թ. փետրվարի 20։

Այդ մասին Թիֆլիսում դաշնակների կառավարության միսիայի պետ Ջամալյանը հետևյալն է հաղորդում Երևան՝ իր կառավարությանը. «Երեկ մահմեդական «Կուրբան բայրամ» տոնի առթիվ այցելության էի գնացել Արդով-Քերիմ փաշային։ Խոսակցության միջոցին փաշան նորից խոսք բերեց հայ-թուրքական դաշնակցության ու մինչև իսկ դինակցության մասին»[1]։ Այնուհետև նույն նամակում նա շարունակում է. «Դրանից մի քանի օր առաջ նույն կարծիքն էր հայտնել նաև Խալիլ փաշան, ասելով. «Եթե վաղը ես կարիք ունենամ և ձեռքս մեկնեմ դեպի Ձեզ, հուսով եմ, որ Դուք կբռնեք իմ ձեռքը»»[2]։ Ջամալյանը իր նամակը վերջացնում է հետևյալ խոսքերով. «...իմ կարծիքն է, որ պետք է ընդունել թուրքերի առաջարկը»[3]։

1918 թ. օգոստոսի 9-ին իր կառավարությանն ուղարկած մի այլ նամակում Ջամալյանը մանրամասն շարադրում է Սովետական Ռուսաստանի դեմ ռազմական բլոկ ստեղծելու մասին Թուրքական կովկասյան բանակի գլխավոր հրամանատար Խալիլ փաշայի հետ ունեցած իր զրույցի բովանդակությունը։ Նա գրում է. «Այսօր այցելության գնացի Խալիլ փաշային, նոր հյուրանոցում, սովորական ողջույնի խոսքերից հետո, ունեցանք բավական լուրջ խոսակցություն, որի բովանդակությունը շտապում եմ հաղորդել Ձեզ։ Ես մի պարզ մարդ եմ, ասում է փաշան, խոսում եմ այն, ինչ որ մտածում և կատարում եմ, եթե ես մի բան չեմ կարող կատարել, երբեք չեմ խոստանում։ Հայերի հետ ես չգիտեմ, թե ինչպես մեր հարաբերություններն այլ ընթացք առան և ինչից սկսվեց, ով է մեղավորը. ես ինձ համար այդ հարցը չէի պարզել։ Ես գիտեմ, որ Արամը և յուր ընկերները լսել անգամ չեն ուզում Սովետական Ռուսաստանի մասին»[4]։

Այսպիսի բանակցություններից հետո, դաշնակցության կառավարության հրավերով, գերմանա-թուրքական զորքերի գլխավոր հրամանատարները, որպես բարեկամության նշան, այցելում են Երևան։ 1918 թ. հուլիսի 30-ին Ալեքսանդրապոլից Երևան է այցելում Վրաստանում գերմանական դինված ուժերի գլխավոր հրամանատար, գեներալ ֆոն Կրեսը։ Նույն երեկոյան նրա պատվին կազմակերպվում է ճոխ բանկետ[5]։

[1] ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 200, գ. 67, թ. 145։
[2] Նույն տեղը։
[3] Նույն տեղը։
[4] Նույն տեղը, թ. 22։
[5] «Ձանգ», 1918 թ., № 43 (59)։

Ծեն կրեսից հետո, 1918 թ. սեպտեմբերի 11-ին, դաշնակցության կառավարության հրավերով Երևան է այցելում հայ ժողովրդի և Բաքվի պրոլետարիատի դահիճ Խալիլ փաշան։ Դաշնակների կառավարությունը մեծ նախապատրաստական աշխատանք է տանում Խալիլ փաշային արժանավայել դիմավորելու համար։ Ջամալյանը Խալիլ փաշայի Երևան այցելելու առթիվ շտապ կարգով հետևյալ բովանդակությամբ հեռագիր է ուղարկում Երևան. «Արամը (խոսքը դաշնակների կառավարության ներքին գործերի մինիստր Արամ փաշայի մասին է—Խ. Բ.), որին Խալիլը շատ է գովում, հարկավոր է նրան ընդառաջ դուրս գա և մինչև պաշտոնական խոսակցությունների սկսելը նրա հետ մասնավորապես խոսի։ Շատ լավ կլիներ, եթե պ. Արամը ի վիճակի լիներ յուր տանը ընդունել փաշային։ Ես կարծում եմ մինչև անգամ, որ լավ կլինի, որպեսզի Արամը հեռագրի Ալեքսանդրապոլ Խալիլին, թե ուզում է գնալ նրան այնտեղ ողջունել և նրան ուղեկցել Երևան»[1]։

Ջամալյանը այնուհետև ավելացնում է, որ «Երևանը ընդունելության օրը զարդարված լինի, որ կայարանում պատվո պահակ կանգնի»[2]։

Դաշնակների կառավարությունը Խալիլ փաշային ընդունում է օվացիաներով, նրա պատվին բանկետ կազմակերպելով և բարեկամական ճառեր փոխանակելով։ Որպես «բարեկամության» նշան, դաշնակների բանակից մի շարք սպաներ պարգևատրվում են թուրքական ռազմական մեդալներով, որի համար դաշնակների կառավարությունը իր խորին շնորհակալությունն է հայտնում թուրքական բանակի շտաբի ղեկավարներին և հատկապես Խալիլ փաշային։

Դաշնակների կառավարության ղեկավարները նման ստորաքարշություն են անում Օսմանյան կայսրության նաև մյուս փաշաների ու քաղաքական գործիչների առջև, ամեն կերպ ձգտելով ցույց տալ, որ իրենք իսկապես Օսմանյան կայսրության գործակալներ են։

Այսպիսով, այն ժամանակ, երբ ավելի քան մեկ միլիոն հայ աշխատավորություն բնաջնջվեց Օսմանյան կայսրության գեներալների՝ վեհիբների, նուրիների և Խալիլների «ողորմածությամբ», «Երևանի հայկական կառավարությունը թուրքական փաշայի հանդիսավոր ընդունելություն է կազմակերպում, երբ նա գալիս է Երևան։ Թուրքական գեներալների և հայկական բուրժուազիայի այդ բաղաքականության հետևանքով տուժում են նախ և առաջ և ամենից շատ հայերի աղքատ դասակարգերը»[1]։

Այն պահին, երբ դաշնակների կառավարության դեկավարները Երևանի հյուրանոցներում բանկետներ էին կազմակերպում թուրքական փաշաների պատվին և բաժակաճառեր փոխանակում նրանց հետ, թուրքական զորքերը Հայաստանից իրենց զավթած շրջաններում կողոպտում էին աշխատավորությանը՝ անասելի բռնություններ ենթարկելով նրանց։ Օրինակ, 1918 թ. օգոստոսի 12-ին, երբ Խալիլ փաշան գտնվում էր Երևանում, երբ նրան դիմավորում էին ծաղիկներով և օվացիաներով, «թուրքական սպաները, ասկարներով նորից գրավում են Խաչիկ գյուղը և պահանջում են 400 հրացան և ցորենի ու այլ մթերքների բերքի 1/7 մասը»[2]։ Թուրքական զորքերը այդպես կողոպտում են նաև մյուս շրջաններն ու գյուղերը։ «Թուրքական ջոկատի պետ Սուլեյմանովի հրամանով Արեշ գյուղի բնակիչներից պահանջվում է 800 հրացան. գյուղացիները փորձում են համոզել, որ գյուղում այդքան հրացան չկա, բայց Սուլեյմանովը նրանց խոսքերին չի հավատում, գյուղը ռմբակոծում է, գյուղացիների մի մասը փախչում են, իսկ մյուս մասը բնաջնջվում»[3]։

Այսպիսով, «թուրքական հրամանատարությունը շտապ կարգով շարունակում է ուժեղացնել օկուպացված շրջաններից գենքի, ռազմամթերքի, կենսամթերքների պաշարների, երկաթուղու, հիվանդանոցների, պետական հիմնարկությունների, հիվանդանոցների տեխնիկական սարքավորումների կողոպուտը և փոխադրումը Թուրքիա»[4]։

Թուրքական զորքերի գազանություններն մասին Ալեքսանդրապոլից հաղորդում են հետևյալը. «Քաղաքից և շրջապատից արտաքսվել են ավելի քան 18 000 երիտասարդներ»[4]։

Այսպիսի պայմաններում թուրքերի կողմից օկուպացված շրջաններում աշխատավորության կողմից պայքար է սկսվում թուրքական օկուպանտների դեմ։ Ապստամբած գյուղացիները հարձակվում են թուրքական պահակախմբերի վրա, կողոպտում ռազմական և պարենավորման պահեստները, քանդում երկաթուղագծերը,

[1] ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 200, գ. 57, թ. 21։
[2] Նույն տեղը։

[1] ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 1318, ց. 1, գ. 619, թ. 4։
[2] ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 200, գ. 73, թ. 28։
[3] Նույն տեղը, գ. 53ա, թ. 35։
[4] Նույն տեղը, գ. 568, թ. 74։

սպանում պահակներին, ոչնչացնում առանձին գինված ջոկատներ և խանգարում թուրքական զորքերի առաջխաղացումը դեպի Ջուլֆա։ Այսպես, Ղամարլուի շրջանի գյուղացիները շրջապատում և ոչնչացնում են թուրքական զորքերի ամբողջ հեծյալ հարյուրյակը։ Այդ առթիվ թուրքական բանակի Կովկասյան 1-ին կորպուսի շտաբը № 90 գրությամբ հետևյալն է հայտնում դաշնակների կառավարությանը և պահանջում վերջ տալ այդ «աննորմալ» գործողություններին. «Սարդարաբադի և Ալեքսանդրապոլի միջև գտնվող գյուղերի որոշ բնակիչներ հունիսի 28, 29-ին ապստամբել են և հարձակվել մեր պահեստների պահակների վրա, սպանել նրանց և կողոպտել պահեստները։ Քանի որ այն հայ բնակիչները, որոնք գտնվում են Հայկական հանրապետության հետ կնքված հաշտության պայմանագրի համաձայն Օսմանյան կայսրությանը պատկանող Ջուլֆայի երկաթուղագծի շրջանում, չեն ցանկանում հանձնել իրենց զենքը և այն գործադրում են օսմանյան զինվորների դեմ... և քանի որ բանդիտները Բաշ-Ապարան—Էջմիածնի շրջանում, հարմար առիթի սպասելով, հուլիսի 3-ին և 4-ին կատարել են հանցագործություն, ուստի գաղթականների վերադարձի հարցը չի կարող քննարկվել մեր Հանձնաժողովի կողմից»[1]։

1918 թ. հունիսի 25-ին թուրքական հրամանատարությունը մի այլ գրությամբ դիմում է դաշնակների կառավարությանը, ուր ասված է. «Երևանի հարավային մասում հայերի կողմից հարձակում է կատարված մեր զորքերի վրա. կան բավականին թվով սպանված և վիրավոր զինվորներ և սպաներ»[2]։ Բացի այդ, թուրքական հրամանատարությունը 1918 թ. հուլիսի 4-ին դիմում է դաշնակների կառավարությանը, իր բողոքը հայտնելով Հայաստանի մի շարք շրջանների աշխատավորական մասսաներից և զինվորական առանձին ջոկատներից, որոնք հարձակումներ են գործում թուրքական զինվորական միավորումների վրա, նրանց հասցնելով նյութական ու մարդկային լուրջ վնասներ. «...Ուլուխանլուի, Ղամարլուի, Նախիջևանի և Ջուլֆայի շրջանները, որոնք Բաթումիի պայմանագրով պետք է անցնեն Թուրքիային, սակայն զորքերը ոչ միայն էվակուացիայի չեն ենթարկված, այլ մինչև անգամ մեր այն զորամասերը, որոնք փորձում են մտնել այդ շրջանները, գրոհի են ենթարկվում հայ ազգաբնակչության և զինվորների կողմից... Մեր զորքերը մինչև անգամ ունեն զգալի կորուստներ։ Ներկա մոմենտում հայկական զինվորների և բանդաների շնորհիվ հնարավոր չէ օգտվել Սարդարաբադ—Ջուլֆա երկաթուղագծից»[1]։

Բացի դրանից, Բաթումիի պայմանագրի համաձայն, Հայաստանի և Թուրքիայի պետական սահմանները որոշող թուրքական կոմիսիայի ղեկավարը գեներալ-մայոր Տեր-Ակոպովի միջոցով բազմիցս դիմում է Հայկական առանձին կորպուսի հրամանատար, գեներալ Նազարբեկովին, մատնացույց անելով այն մասին, «որ հաշտության պայմանագրով Օսմանյան կայսրությանը անցած տերիտորիաներում հայկական զինված բանդաները վտանգավոր գործողություններ են ծավալում»[2] օսմանյան իշխանությունների և զորքի դեմ։

Վերոհիշյալ փաստերը վկայում են այն մասին, որ հայ ժողովուրդը, հակառակ դաշնակների թուրքասիրական քաղաքականության, անհաշտ պայքար է մղում թուրքական օկուպանտների դեմ՝ երկրից նրանց դուրս վռնդելու համար։ Սակայն դաշնակների կառավարությունը բոլոր միջոցները գործում է այդ պայքարը վիժեցնելու համար, հավատարիմ մնալով Բաթումիի «բարեկամական» պայմանագրի ոգուն։ Այսպես, դաշնակների Կ. Պոլսի կոնֆերանսի պատվիրակության ղեկավար Ահարոնյանը 1918 թ. սեպտեմբերի 6-ին Կ. Պոլսից իր կառավարությանը գրում է, թե՝ «հայ ժողովուրդը բնավ պիտի չմոռանա, որ Օսմանյան կառավարությունը... հղացավ անկախ Հայաստան մը ստեղծելու միտքը և դայն ճանաչեց։ Հայկական կառավարությունը իր բոլոր կարելին պիտի ընե պահելու և ամրապնդելու երկու երկրների բարեկամական հարաբերությունները»[3]։

Օսմանյան կառավարության բողոքի համաձայն Ահարոնյանը պահանջում է իր կառավարությունից՝ «...խիստ միջոցներ ձեռք առնել առաջացած ապստամբություններին վերջ տալու համար»[4]։

Ալ. Խատիսյանը և Ավ. Ահարոնյանը Կ. Պոլսից դաշնակների կառավարությանն ուղղած իրենց մի այլ գրությունում նշում են, որ «Անդրանիկի և իր հետևորդների կողմից Օսմանյան կառավարությանը նեղություն պատճառելու առթիվ, Օսմանյան կառավարությունը բողոք հայտնեց։ Խնդրում է այդ առթիվ քննություն նշա-

[1] ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 200, գ. 79, թ. 69։
[2] Նույն տեղը, գ. 20, թ. 74։

[1] ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 200, գ. 11, թ. 195։
[2] Նույն տեղը, գ. 14, թ. 98։
[3] Նույն տեղը, գ. 35, թ. 34։
[4] Նույն տեղը, թ. 17։

նակել, և եթե այդ կարգի դեպքեր պատահում են, խիստ միջոցներ պետք է ձեռք առնել և նրանց վերջ տալ»[1]։

Այս բոլորից հետո դաշնակների և թուրքական հրամանատարության սերտ համագործակցությունը շարունակում է զարգանալ։ Դաշնակների կառավարությունը թուրքական հրոսակախմբերի արշավանքի և կողոպուտի հետևանքով գտնվելով տնտեսական ու ֆինանսական կատաստրոֆիկ վիճակում, կախման մեջ է ընկնում թուրքական հրամանատարությունից, օգնություն աղերսելով նրանից։ Դաշնակների ռազմական մինիստր Հախվերդովը 1918 թ. նոյեմբերի 19-ին շտաբ գրությամբ դիմում է արտաքին գործերի մինիստրին, թուրքական հրամանատարությունից նավթ և բենզին խնդրելու համար։ Գրության մեջ նշված է հետևյալը. «Նկատի ունենալով նավթի և բենզինի ծայրահեղ պակասը, խնդրում եմ բանակցությունների մեջ մտնել Օսմանյան կայսրության ներկայացուցչի հետ, Հայաստանի ռազմական գերատեսչության Ղարաքիլիսայի վրայով տեղափոխվող նավթից և բենզինից 100 փութ նավթ և 100 փութ բենզին ստանալու վերաբերյալ»[2]։

Վերոհիշյալ փաստը վկայում է այն մասին, որ դաշնակների անփառունակ միրապետության որոշ շրջանում Հայաստանը ոչ միայն քաղաքական տեսակետից, այլ նաև տնտեսապես ամբողջովին կախված էր Օսմանյան Թուրքիայից, իսկ հետո Անտանտից։

Դաշնակների և գերմանա-թուրքական բլոկի սերտ համագործակցության մասին դաշնակցության կառավարության միսիայի պետ Ջամալյանը 1918 թ. օգոստոսի 9-ին Թիֆլիսից իր կառավարությանն ուղարկած մի պաշտոնական փաստաթղթում նշում է. «Ընթրիքը վերջանալու վրա էր, երբ գեներալ ֆոն Կրեսը վեր կացավ յուր տեղից և եկավ նստեց մոտս և ասաց հետևյալը. «Ես խալիլ փաշայի հետ խոսել եմ այն մասին, որ նա պետք է զորքերի մի մասը Անդրկովկասից տանի Միջագետք։ Սակայն նա երկյուղ է կրում, թե զորքերը հետ քաշելու դեպքում հայերը նրա թիկունքից կհարվածեն։ Դրա դեմ ես ասացի, որ ես համոզված եմ, որ հայերը այդպիսի բան չեն անի»[3]։

Գերմանական օկուպացիոն զորքերի հրամանատար գեներալ ֆոն Կրեսի այդպիսի հարցադրմանը դաշնակցության միսիայի պետ

[1] ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 200, գ. 35, թ. 17։
[2] Նույն տեղը, գ. 37, թ. 67։
[3] Նույն տեղը, գ. 67, թ. 19։

Ջամալյանը հետևյալ կերպ է պատասխանում. «Խալիլ փաշայի երկյուղը միանգամայն զուրկ է հիմունքից, մեր կառավարության տրամադրությունը և մտահոգությունը Ձեզ հայտնի են, ինձ թվում է, որ Դուք ազատ կերպով կարող եք մեր լոյալությունը այս խնդրում երաշխավորել»[1]։

Դաշնակների կառավարությունը գերմանա-թուրքական բլոկի հետ սերտ համագործակցելու հետ միաժամանակ, իր համաձայնությունն է տալիս գերմանական օկուպացիոն զորքերի հրամանատարությանը՝ գերմանական զորքերի մի մասը Հայաստան տեղափոխելու համար։ 1918 թվականի հոկտեմբերի 26-ին Ջամալյանը Թիֆլիսից հետևյալ գաղտնի գրությունն է ուղարկում դաշնակների արտաքին գործերի մինիստրին. «Մասնավոր աղբյուրից տեղեկացա հետևյալը. այս քանի օրս գեներալ ֆոն Կրեսը պետք է դիմի ինձ, հայտարարելու, թե՝ արդյոք Հայաստանի կառավարությունը նպատակահարմար չի համարի խնդրելու, որ գերմանացիք Անդրկովկասի ապահովության համար մնան այստեղ և չգնան, ինչպես հրամայվում է նրանց։ Եթե մենք այսպիսի առաջարկություն աներ, այդ դեպքում գեներալը իր պատասխանատվությամբ կպահի զորքերը»[2]։

Ահա այսպիսին է եղել գերմանա-թուրքական իմպերիալիստների, դաշնակների և Անդրկովկասի մյուս բուրժուա-նացիոնալիստական պարտիաների սերտ բլոկը, որն ուղղված է եղել Անդրկովկասի ժողովուրդների և Սովետական Ռուսաստանի դեմ։ Այս անփառունակ բլոկի գոյությունը տևել է մինչև 1918 թվականը՝ մինչև Գերմանիայի ու Օսմանյան կայսրության պարտությունը առաջին համաշխարհային պատերազմում, որից հետո Մուդրոսի զինադադարով նրանք իրենց զորքերը դուրս են բերում Անդրկովկասից՝ այդ թվում նաև Հայաստանից։

* * *

Երբ գերմանա-թուրքական ագրեսորները Անդրկովկասի բուրժուա-նացիոնալիստական պարտիաների դավաճանության հետևանքով միակողմանիորեն խախտում են իրենց ստորագրած Բրեստ-Լիտովսկի հաշտության պայմանագիրը և ներխուժում Անդրկովկաս այն օկուպացնելու և ռևոլյուցիոն շարժումները ճնշելու համար, Սովետական իշխանությունը դրա առաջին իսկ օրվանից բո-

[1] ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 200, գ. 37, թ. 67։
[2] Նույն տեղը, գ. 67, թ. 19։

ղոքի մի շարք նոտաներ է ուղարկում Գերմանիայի և Թուրքիայի կառավարություններին, պահանջելով պաշտպանել Բրեստի հաշտության պայմանագիրը և իրենց զորքերը ետ տանել Անդրկովկասից, վերջինս համարելով Սովետական Ռուսաստանի մի անբաժանելի մասը, միաժամանակ նշում է. «Հաշտության պայմանագրով պատերազմական գործողությունները Ռուսաստանի և Թուրքիայի միջև դադարեցվեցին, սակայն հաշտության պայմանագիրը ստորագրելուց անմիջապես հետո Թուրքիայի կողմից ռազմական գործողությունները վերսկսվեցին և շարունակվում են մինչև այժմ։ Թուրքական կանոնավոր զորքերը, ավազակային բանդաների հետ միասին, գրավել են Սովետական ռեսպուբլիկայի տերիտորիան, ավերում ու կողոպտում են ննջարկում քաղաքներն ու գյուղերը։ Քրիստոնեական ազգաբնակչությանը գնդակահարում կամ բոլոր տեսակի հնարավոր բռնությունների են ենթարկում, չբացառելով նաև կանանց և երեխաներին»[1]։

Սովետական կառավարությունը հայտարարում է, որ «...Ռուսաստանից անջատված օկրուգների ազգաբնակչության նկատմամբ այդպիսի բռնությունների գործադրումը համարում է պայմանագրի 4-րդ հոդվածի էական խախտում»[2] (Բրեստի պայմանագրի մասին է —խ. Բ.)։

Սովետական կառավարությունը միաժամանակ նշում է, որ «...Կարսի, Արդահանի և Բաթումի օկրուգների ազգաբնակչությանը իրավունք կվերապահվի իրենց օկրուգներում ստեղծել նոր կարգեր»[3]։

Սովետական կառավարությունը իր բողոքն է հայտնում Սովետական Ռուսաստանի անբաժանելի մաս հանդիսացող Բաթումը թուրքական ագրեսորների կողմից ապօրինի զավթելու համար, նշելով՝ «Վերջապես այս տարվա հուլիս ամսին թուրքական բանակը արշավեց Բաքվի վրա։ Սովետական զինված ուժերը հակառակորդի գերազանց ուժերին հերոսական դիմադրություն ցույց տալուց հետո, նրանք կարողացան իրենց համար ուղի հարթել դեպի քաղաք՝ Սովետական ռեսպուբլիկայի կարևորագույն քաղաքներից մեկը»[4]։

Երբ բացվում է Բաթումիի կոնֆերանսը, որտեղ Սեյմում ներ-

[1] „Документы внешней политики СССР", т. I, М., 1957, стр. 491.
[2] Նույն տեղը։
[3] Նույն տեղը։
[4] Նույն տեղը։

կայացուցիչ Ակակի Խոմերիկին է ուղարկում Անդրկովկասի ժողովուրդների բախտը, Սովետական կառավարությունը վճռականորեն հանդես է գալիս գերմանա-թուրքական բլոկի և Անդրկովկասի բուրժուա-նացիոնալիստական պարտիաների ռազմա-քաղաքական գործարքի դեմ։

Կոնֆերանսն սկսվելուց անմիջապես հետո, Սովետական կառավարության հանձնարարությամբ, արտաքին գործերի կոմիսար Գ. Չիչերինը Մոսկվայի ռադիոկայանով հայտնում է Բաթումիի կոնֆերանսին մասնակցող պետությունների պատվիրակություններին և միաժամանակ պահանջում, թե՝ «...ՌՍՖՍՌ կառավարության լիազորված ներկայացուցիչներին ևս պետք է մասնակից դարձնել Բաթումիի կոնֆերանսին..., հակառակ դեպքում ՌՍՖՍՌ-ի կառավարությունը հարկ չի համարի ճանաչել առանց իր մասնակցության կնքված այդ պայմանագիրը...»[1]։

Սովետական կառավարությունը իր այդ նոտայում միաժամանակ անօրինական է համարում գերմանա-թուրքական իմպերիալիստների սվինների օգնությամբ ստեղծված Անդրկովկասի մարիոնետային կառավարությունները։

Այսպիսին է եղել Սովետական կառավարության դիրքը Բաթումիի կոնֆերանսում տեղի ունեցող բանակցությունների նկատմամբ, որոնք արմատապես հակասում էին ոչ միայն Անդրկովկասի ժողովուրդների շահերին, այլ նաև Սովետական Ռուսաստանի շահերին։

Վ. Ի. Լենինը 1918 թ. հունիսի 21-ին Սոկոլնիկի ակումբում տեղի ունեցած միտինգում միջազգային դրության մասին արտասանած իր նշանավոր ճառում Անդրկովկասի վերաբերյալ հետևյալն է ասել.

«...Մենք լավ տեսանք, թե ինչ էր տեղի ունենում և տեղի է ունենում Կովկասում, որտեղ կովկասյան մենշևիկները դաշինք են կնքել թուրքական իմպերիալիզմի հետ»[2], ընդդեմ Անդրկովկասի ժողովուրդների և Սովետական Ռուսաստանի։

Բաքվի Սովետը ևս, Ստ. Շահումյանի գլխավորությամբ, Սովետական Ռուսաստանի օրինակով դատապարտում էր մենշևիկների, դաշնակների և մուսավաթականների դավաճանական գործունեությունը. «Բաթումում վճռվում է ոչ միայն Անդրկովկասի բախտը, այլև ամբողջ Կովկասի բախտը, մի դավաճանության հաջող-

[1] А л. Ставровский, Закавказье после Октября, М.—Л., 1925, стр. 105—106.
[2] Վ. Ի. Լ ե ն ի ն, Երկեր, հ. 27, էջ 562։

դում է մյուս դավաճանությունը... այդ մասին թող հիշեն ժողովրդի դավաճանները, Օսմանյան իմպերիալիստական կառավարության լակեյները։ Հատուցման ժամը կարող է լինել ոչ շատ հեռու»[1]։

Անդրկովկասի բուրժուա-նացիոնալիստական պարտիաների դավաճանական գործունեությունը մերկացնելով, Բաքվի Սովետը միաժամանակ դիմում է երկրամասի բանվորներին ու գյուղացիներին՝ հակաժողովրդական կառավարությունները տապալելու և իշխանությունը իրենց ձեռքը վերցնելու կոչով։

Բաքվի Սովետի կոչերից մեկում այդ մասին նշված է հետևյալը.

«Գյուղացի եղբայրնե՛ր—մուսուլմաննե՛ր, հայե՛ր, վրացինե՛ր, ռուսնե՛ր.

Ամբողջ Անդրկովկասի բանվորնե՛ր. մենք կոչով դիմում ենք ձեզ, քանի ուշ չէ, ապստամբություն բարձրացնել ձեզ ճնշողների և ձեր դավաճանների դեմ—ընդդեմ բեկերի և խաների, ընդդեմ նրանց լակեյ մենշևիկների, ընդդեմ դաշնակցականների, որոնք հայ գյուղացու համար ստեղծված «կրիտիկական րոպեին... ժողովրդին կանգնեցրեցին կործանման եղրին»[2]։

Այսպիսով, հակառակ Սովետական կառավարության բազմաթիվ նախազգուշացումներին ու բողոքներին, գերմանա-թուրքական ագրեսորները օկուպացնում են Անդրկովկասը, այդ թվում և սովետական Բաքուն՝ բնաջնջելով խաղաղ ազգաբնակչությանը։

Օսմանյան կառավարությունը իր այդ միակողմանի գործողություններով ցույց տվեց, որ Բրեստ-Լիտովսկի հաշտության պայմանագիրը այլևս գոյություն չունի, որ Օսմանյան կառավարությունը փաստորեն պատերազմական դրության մեջ է գտնվում Սովետական Ռուսաստանի հետ։ Այդ պատճառով Սովետական կառավարությունը կտրուկ կերպով առաջ է քաշում թուրքական օկուպանտներին Բաքվից և Անդրկովկասի մյուս մասերից դուրս վռնդելու հարցը, հայտարարելով, որ «...թուրքերը ինքնակամ կերպով չեն հեռանա այնտեղից։ Պետք է նրանց դուրս քշել ուժով և դիվանագիտորեն բողոքել...»[3]։

Սովետական կառավարության հանձնարարությամբ, ՌՍՖՍՌ-ի արտաքին գործերի կոմիսար Գ. Չիչերինը 1918 թ. սեպտեմբերի 21-ին, Բեռլինում, սովետական դեսպանի միջոցով դիմում է գերմանական կառավարությանը հետևյալ պահանջով՝ «Բացի Բրեստի գծի խախտումից, մեզ հասցրած վնասների մի նոր հարց ևս կա։ Վերջապես այժմ պաշտոնապես հայտարարելիս ենք, որ չենք ընդունում Կարսի, Արդահանի և Բաթումիի ձայնտվությունը»[1]։

Դրանից մեկ օր հետո, 1918 թ. սեպտեմբերի 22-ին, Սովետական կառավարությունը Բեռլինում սովետական դեսպան Իոֆֆեի միջոցով դիմում է Թուրքիայի մեծ վեզիր Մեհմեդ Թալիաթ փաշային, որն այդ ժամանակ պաշտոնական գործով գտնվում էր Բեռլինում, նշելով, որ «Բրեստից հետո Թուրքիայի բոլոր վարմունքը՝ այն հանրապետությունների անկախության ընդունելը, որ մենք չենք ընդունել, նրանց հետ վարած բանակցությունները, նոր սահմաններ հաստատելը, ռուսական տերիտորիան անցնելը, կռիվները ռուսական զորքերի հետ, որ այս ամենը ծայրեհծայր կազուս բելլի* է..., որ Ռուսիան այլևս չի կարող հանդուրժել Բաքվի գրավմանը..., որ Բաքվի գրավումը հեղաշրջել է ռուս ժողովրդի տրամադրությունը»[2]։

Վ. Ի. Լենինը և Յա. Մ. Սվերդլովը 1918 թվականի հոկտեմբերի 7-ին Բեռլինում գտնվող ՌՍՖՍՌ-ի լիազոր ներկայացուցչին հանդորդում են հետևյալը. «Թուրքական արձանագրության ստորագրումը մենք չենք համաձայնվի, մինչև որ Բաքուն մեր իշխանությունները չհանձնվի...»[3]։ Միաժամանակ ավելացնում են, որ «...բոլոր հիմքերը կան կասկածելու Անտանտի հետ գաղտնի համաձայնության մասին Բաքուն նրա ձեռքն հանձնելու վերաբերյալ»[4]։

Վ. Ի. Լենինի և Յա. Մ. Սվերդլովի այդ կանխատեսումը՝ Թուրքիայի կողմից Բաքուն և Անդրկովկասը Անտանտի իմպերիալիստներին հանձնելու մասին՝ շատ կարճ ժամանակից հետո իրականացավ։ Թուրքական կառավարությունը 1918 թ. հոկտեմբերի 30-ին Մուդրոսում Անտանտի պետությունների հետ ստորագրեց զինադադար, որի 11-րդ հոդվածի համաձայն, Անտանտի պետություններին իրավունք է վերապահվում օկուպացնել Բաքուն, Բաթումը և Անդրկովկասի մյուս մասերը։

---

[1] „Бакинский рабочий", 1918 г., № 98.

[2] „Документы внешней политики СССР", т. I, стр. 343.

[3] «Կոմունիստ», շաբաթաթերթ, 1918 թ., № 9, էջ 13։

[1] «Կոմունիստ», շաբաթաթերթ, 1918 թ., № 9, էջ 13։

* Կազուս բելլի՝ լատիներեն այս խոսքերը բառացի նշանակում են՝ առիթ պատերազմ սկսելու համար։

[2] Նույն տեղը։

[3] „Документы внешней политики СССР", т. I, стр. 513.

[4] Նույն տեղը։

Սովետական կառավարության բազմաթիվ բողոքներից հետո միայն Թուրքական կառավարության ղեկավարները Թալեաթ փաշայի գլխավորությամբ հարկադրված են լինում Բեռլինի սովետական դեսպանի միջոցով Սովետական կառավարությանը ուղարկել հետևյալ պատասխանը. «Թուրքիան ոչ մի մտադրություն չունի խառնվելու մեր կովկասյան գործերին, մտադիր չէ Թուրքիայի տերիտորիան ընդարձակել Կովկասի հաշվին և անհապաղ կհեռացնի իր զորքերը»[1]։

Այսպիսի պայմաններում Սովետական կառավարությունը ոչ միայն հետևողական պայքար է ծավալում գերմանա-թուրքական օկուպանտներին Անդրկովկասից և Հայաստանից դուրս վռնդելու համար, այլև հսկայական նյութական և ֆինանսական օգնություն է ցույց տալիս այն տասնյակ հազարավոր հայ աշխատավորներին, որոնք գերմանա-թուրքական արշավանքի պատճառով հարկադրաբար գաղթել էին Հայաստանից և Անդրկովկասի մյուս մասերից՝ բնակություն հաստատել Սովետական Ռուսաստանի զանազան նահանգներում ու քաղաքներում։

1918 թ. հուլիսի 29-ին «Հայ գաղթականներին օգնելու համար հատուկ բժշկա-սանիտարական մի խումբ ուղարկվեց Հյուսիսային Կովկաս և Մերձ-Վոլգիա։ Հաշտարխանի Սովդեպին կից կազմվել է գաղթականական բաժանմունք»[2]։

Վ. Տերյանը, որն այդ ժամանակ աշխատում էր Ազգությունների գործերի կոմիսարիատում, 1918 թ. ամռանը Աստրախանից հետևյալ բովանդակությամբ հեռագիր է ուղարկում Մոսկվա. «...Մի քանի վայրերում խորհուրդներին կից արդեն կազմված են բյուրոներ՝ հայ գաղթականներին օգնելու համար։ Տեղից հայկական կոմիսարիատն ուղարկում է 2 վագոն գգեստեղեն և այլ իրեր հայ գաղթականների համար»[3]։

«Ժողովրդական կոմիսարների խորհուրդը հայկական կոմիսարիատի տրամադրության տակ է դրել 6 194 788 ռուբլի՝ հայ գաղթականներին օգնելու համար։ Գաղթականների օգնության գործը կազմակերպելու նպատակով Հյուսիսային Կովկաս է ուղարկվում կոմիսիա ընկ. Վահան Տերյանի ղեկավարությամբ»[4]։

Այնուհետև հայկական ազգային կոմիսարիատի պահանջով

1 «Կոմունիստ», շաբաթաթերթ, 1918 թ., № 9, էջ 14։
2 Նույն տեղը, № 4, էջ 13։
3 Նույն տեղը, № 16, էջ 5։
4 Նույն տեղը, № 2, էջ 12։

Համառուսական Կենտգործկոմը բաց է թողնում 50 փութ դեղորայք, այն ուղարկելով Աստրախան՝ Հայկական գործերի կոմիսարիատի բաժանմունքի տրամադրության տակ՝ հայ գաղթականներին օգնելու համար[1]։

Սովետական կառավարությունը միայն 1919 թվականի գարնանը հայկական որբանոցների համար բաց է թողել 4 000 000 ռուբլի, իսկ հայ ուսանողներին օգնելու, ինչպես նաև հարյուր մահճակալից բաղկացած հիվանդանոցի համար՝ 1 650 000 ռուբլի։ Հայ գաղթականների երեխաների Մոսկվայում սովորելու գործը կազմակերպելու համար հատկացվել է մեկ միլիոն ռուբլի։ 1919 թվականին, տասն ամսվա ընթացքում հայ գաղթականների համար բաց է թողնվել ավելի քան 20 000 արշին մանուֆակտուրային կտորեղեն՝ 30 000 ձեռք պատրաստի հագուստ, տասը միլիոն ռուբլու հագուստեղեն ու դեղորայք[2]։

Երիտասարդ Սովետական իշխանությունը մեծ հոգատարություն է ցուցաբերում Մոսկվայում և Սովետական Ռուսաստանի զանազան մասերում ապաստան գտած տասնյակ հազարավոր հայ աշխատավորության կրթության և կուլտուրայի գործը մայրենի լեզվով կազմակերպելու համար։ Ազգությունների կոմիսարիատը 1919 թվականի փետրվարի 13-ին հատուկ որոշում է ընդունում Լազարյան ճեմարանի ամբողջ շարժական և անշարժ գույքը Հայկական գործերի կոմիսարիատին հանձնելու մասին։

«Բոլոր շարժական և անշարժ գույքը, միևնույն ժամանակ բոլոր կապիտալները,—նշված է վերոհիշյալ որոշման մեջ,—որոնք պատկանում էին նախկին Լազարյան ինստիտուտին, մնում են, պատկանում են Մոսկվայի հայկական ինստիտուտին և դրվում են Հայկական գործերի կոմիսարիատի տրամադրության տակ. այն է՝

1. Ինստիտուտին կից հայկական թանգարանը.
2. Հիմնական գրադարանը.
3. Միաժամանակ պետք է հրատարակվեն Հայաստանի պատմության, գրականության և հայոց լեզվին վերաբերող նյութեր[3]։

ՀԿԳԿ-ն 1918 թ. նոյեմբերի 13-ին պաշտոնական որոշում է ընդունում Բրեստ-Լիտովսկի կողոպտիչ պայմանագիրը ոչնչացնելու մասին, որտեղ ասված է. 1) Ռուսաստանի, Լիտվայի, Էստոնիայի, Լեհաստանի, Ուկրաինայի, Ֆինլանդիայի, Ղրիմի և Կովկասի

1 Տե՛ս ՀՌԿՊԱ, ֆ. 1235, ց. 94, գ. 137, թ. 2։
2 «Փրկեն Նացիոնալիստաս», 1919 թ., № 34 (42)։
3 Տե՛ս ՀՌԿՊԱ (Մոսկվա), ֆ. 1318, ց. 1, գ. 1, թ. 101։

աշխատավորությունը գերմանական ռևոլյուցիայի շնորհիվ ազատագրվեց կողոպտիչ պայմանագրի ճնշումից, որը թելադրված էր գերմանական ռազմամոլների կողմից, այժմ իրենք պետք է վճռեն իրենց բախտը[1]։

Այսպիսին է եղել Սովետական իշխանության բազմակողմանի օգնությունը հայ ժողովրդին՝ գերմանա-թուրքական զավթիչների դեմ մղվող պայքարի շրջանում։

Գերմանա-թուրքական իմպերիալիստական բլոկի գաղութային ռեժիմը Հայաստանի և Անդրկովկասի մյուս մասերում տևում է մինչև 1918 թ. աշունը, մինչև գերմանական խմբավորման պարտությունը, որից հետո նրանք իրենց օկուպացիոն զորամասերը դուրս են բերում Ադրբեջանից, Վրաստանից և Հայաստանից։

Ինչպես Վրաստանի, Ադրբեջանի, այնպես էլ Հայաստանի աշխատավորությունը, հակառակ բուրժուա-նացիոնալիստական կառավարությունների ցանկությունների, ողջունում են գերմանա-թուրքական զորքերի հեռացումը երկրամասից։ Հայաստանի աշխատավորությունը նշում է՝ «Էնվեր և Թալիաթ փաշաների պաշտոնական Տաճկաստանը հեռանում է Կովկասից։ Տաճկական իմպերիալիզմի համն էլ տեսանք։ Դա ասիական նվաճումն է և կողոպուտը»[2]։

Գերմանա-թուրքական բլոկը Անդրկովկասից և Հայաստանից հեռանալուց հետո, հակառևոլյուցիոն կառավարությունները հաշվի առնելով, որ սեփական ուժերով չեն կարող ճնշել բանվորա-գյուղացիական ռևոլյուցիոն շարժումները և պահպանել իրենց հակաժողովրդական կառավարությունները, դիմում են անգլո-ամերիկյան իմպերիալիզմի օգնությանը։

Բաքվում լույս տեսնող բոլշևիկյան «Նարաթ» թերթը այդ մասին գրում է. «Գերմանա-թյուրքական հորդաները հարկադրված են թողնելու Անդրկովկասը. նրանց անմիջապես փոխարինող հանդիսացան դաշնակիցների իմպերիալիստական զորքերը Անգլիայի հրամանատարության գլխավորությամբ։ Նորից հանդես եկան Դենգեյկորին, Մերեթելին, Ժորդանիան, որոնք գովասանական ճառեր էին արտասանում... Թե Անգլիան հանդիսանում է ազատության օրրանը... ԱՄՆ-ը ամենադեմոկրատական երկիրն է աշխարհում»[3]։

[1] „Документы внешней политики СССР", т. I, М., 1957, стр. 565.
[2] «Նարաթ», 1918 թ., № 8։
[3] „К XXX годовщине злодейского убийства 26 Бакинских комиссаров агентами английского империализма", Баку, 1948, стр. 271—275.



Բրիտանական զորքերի մուտքը Բաքու 1-ին գեցդր 11-ին։ Բաքվի կոմունարների դեմ իրենց վարձկան բանակներով։

Գերմանա-թուրքական խմբավորման օկուպացիոն զորքերը Անդրկովկասից հեռանալուց հետո անգլո-ամերիկյան օրիենտացիա է ընդունում նաև դաշնակիների հակաժողովրդական կառավարությունը, որը 1918 թ. նոյեմբերի 30-ին ընդունում է հետևյալ որոշումը. «Համաշխարհային պատերազմը վերջանալուց հետո, համաձայնության պետությունների ամենամեծ մտահոգությունն է դարձել բոլշևիկյան շարժումը Ռուսաստանում ճնշելու խնդիրը։ Հարկավոր է այդ շարժումը ճնշել երկու պատճառով՝ նախ որպեսզի դրանով կանխվի համաշխարհային սոցիալիստական հեղափոխությունը և ապա, որպեսզի բոլշևիկների տիրապետությունը խախտած համաձայնության պետությանց շահերը Ռուսաստանում ապահովվին»[1]։

Այսպիսով, գերմանա-թուրքական բլոկի օկուպացիոն զորքերի՝ Անդրկովկասից և Հայաստանից հեռանալուց հետո մենշևիկների, դաշնակիների և մուսավաթականների օգնությամբ Անդրկովկասում և Հայաստանում իրենց գաղութային, ոստիկանական ռեժիմն են հաստատում արդեն Սովետական Ռուսաստանի մի շարք շրջանները գրաված ԱՄՆ-ի և Անտանտի իմպերիալիստները։

Անդրկովկասի բուրժուա-նացիոնալիստական կառավարությունները երկրամասում բանվորների և գյուղացիության շարժումները ճնշելու համար դիմում էին արևմտյան իմպերիալիստական երկրների, հատկապես ԱՄՆ-ի և Անտանտի իմպերիալիստների օգնությանը։

Մենշևիկյան Վրաստանի կառավարության նախագահ Ն. Ժորդանիան ստորագրարշավին և ցինիկաբար Անտանտի զինված ուժերի գլխավոր հրամանատար, գեներալ Միլնի առաջ հայտարարում է. «Վրաստանի կառավարության անունից ողջունում եմ ձեզ, հարգելի գեներալ, բարի եք եկել մեր երկիրը։ Վրաստանի կառավարությունը հուսով է, որ ձեր կարծիքը Վրաստանի մասին հիմնված կլինի իրական փաստերի վրա և ոչ թե լուրերի... մենք հասկանում ենք բրիտանական ազգի ձգտումներն ու ցանկությունները, կրկին բարի եք եկել մեր երկիրը, հարգելի գեներալ»[2]։

Իսկ դաշնակների վարձու կառավարության ղեկավարները անգլիական ռազմական իշխանություններին հայտարարում են, թե՝ «Անգլիայի շահը պահանջում է, որ Հնդկաստանը պաշտպանելու

---

1 ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 200, ց. 67, թ. 139։

2 ՀԿՊ կենտկոմին կից Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 33, ց. 820, թ. 1։

համար բոլշևիկների դեմ ճակատամարտ տալ ոչ թե Հնդկաչինի բարձունքներում, այլ Արարատյան դաշտում»[1]։

Ամերիկա-անգլիական իմպերիալիստների նկատմամբ նույն դիրքն են բռնում նաև մուսավաթականները։

Այդպես ստեղծվում է ԱՄՆ-ի, Անտանտի իմպերիալիստների և Անդրկովկասի բուրժուա-նացիոնալիստական կառավարությունների կոնտրռևոլյուցիոն բլոկը, որն ուղղված էր Անդրկովկասի եղբայրական ժողովուրդների և Սովետական Ռուսաստանի կենսական շահերի դեմ։

Դաշնակների կառավարության կենտրոնական օրգան «Հառաջ» բուլվարային թերթը 1919 թ. նոյեմբերի 8-ի առաջնորդողում գրում է. «Վրացաստ բոլշևիկյան հեղաշրջման երկրորդ տարին և մեր վերաբերմունքը այսօր էլ մնում է նույնը՝ թշնամական նրա նկատմամբ»։

Այսպիսի պայմաններում ԱՄՆ-ի և Անտանտի պետությունների անունից բրիտանական զորքերի գլխավոր հրամանատար գեներալ Միլնը 1919 թ. հատուկ հրամանով դիմում է Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի աշխատավորությանը, կոպուկ կերպով պահանջելով՝ «խոնարհարար կատարել ինչպես իրենց կառավարությունների, նույնպես և դաշնակիցների ռազմական իշխանությունների բոլոր տեսակի կարգադրություններն ու հրամանները, հակառակ դեպքում... կհանձնվեն ռազմական դատարանին և կպատժվեն մահվան պատիժով»[2]։

Հայաստանի Կոմունիստական պարտիան մերկացնելով ԱՄՆ-ի և Անտանտի իմպերիալիստական այդ վայրագ քաղաքականությունը, նշում է. «Գերմանացիները և թյուրքերը թողին Կովկասը, այդ «բարբարոսներին» փոխարինեցին ամերիկո-անգլո-ֆրանսիական «դեմոկրատները»։ Այդ փոփոխությունից ոչինչ չզգացին աշխատավոր մասսաները։ Անտանտի իմպերիալիզմը պակաս գիշատիչ չէր, քան գերմանականը»[3]։

ԱՄՆ-ի և Անտանտի իմպերիալիստները, դաշնակների, մենշևիկների և մուսավաթականների ակտիվ աջակցությամբ, իրենց դաղութային տիրապետությունը Անդրկովկասում հաստատելուց

[1] «Հառաջ», 1919 թ., № 39։

[2] ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 67/199, գ. 12, թ. 173։

[3] Մաթքսիմ-լենինիզմի ինստիտուտի հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 33, գ. 820, թ. 6։

անմիջապես հետո սկսում են սիստեմատիկ ու պլանավորված կերպով կողոպտել երկրի հարստությունը։

«Մենք մտաղիր ենք Բաքվից նավթ, մազութ, բենզին և կեռոսին արտահանել... մենք ցանկանում ենք օգտվել տեղիս պղնձահանքերից, բամբակից, Հյուսիսային Կովկասի հացից, Վրաստանի մարգանեցից, բայց բոլորովին էլ չզարմանալ այդ առթիվ, քանի որ հայերը, վրացիները և ադրբեջանցիները (նկատի ունենալով բուրժուա-նացիոնալիստական կառավարություններին— Խ. Բ.) խնդրում են մեզ և առաջարկում են գալ և տիրել»[1]։ Այսպես են հայտարարել ԱՄՆ-ի, Անգլիայի օկուպացիոն իշխանությունները։ Անգլիական ռազմական իշխանությունները միայն 1918 թ. վերջում Ալավերդուց բռնագրավել և Անգլիա են ուղարկել «տասներկու հազար (12 000) փութ կարմիր պղինձ»[2]։

Ամերիկյան օկուպացիոն իշխանությունները 1919 թ. բռնագրավում և ԱՄՆ են ուղարկում 36 000 հատ կաշի, հայտարարելով, որ «...այդ ապրանքները պետք է ուղարկվեն Ամերիկա, ամերիկյան կառավարության տրամադրության տակ»[3]։

Ամերիկյան օկուպացիոն իշխանությունները երկու տարվա ընթացքում՝ 1919—1920 թթ., Հայաստանի աշխատավորությունից կողոպտել և ԱՄՆ են տեղափոխել մոտավորապես 20 000 գորգ[4]։

Ալեքսանդրապոլի պահեստներից մեկի պետը իր զեկուցագրում ԱՄՆ-ի օկուպացիոն իշխանությունների կատարած կողոպուտների մասին գրում է. «Մեր պահեստը առանց մեր գիտության բռնի կերպով դատարկել է ամերիկյան կոմիտեն և ես որոշ զեկուցում չեմ կարող տալ մնացածի և տարածի վերաբերյալ»[5]։

ԱՄՆ-ի և Անտանտի գաղութարարները 1919—1920 թթ. իրենց գործակալների՝ դաշնակների աջակցությամբ Հայաստանից կողոպտել և տարել են, ոչ լրիվ տվյալներով՝ «160 000 փութ բամբակ, 11 000 խոշոր եղջյուրավոր անասուններ, 150 000 մորթի»[6], պղինձ, սպիրտ, գորգեր և այլն։

Ամերիկա-անգլիական գաղութարարների կեղեքիչ քաղաքա-

[1] «Հառաջ», 1919 թ., № 9։

[2] ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 200, գ. 109, թ. 251։

[3] Նույն տեղը, գ. 210, թ. 18։

[4] Նույն տեղը, ֆ. 209, գ. 5, թ. 4։

[5] «Լենինյան ուղի», Ժուռնալ, 1931, № 7—8, էջ 111։

[6] ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 209, գ. 5, թ. 2։

կանության և դաշնակների ավանտյուրիստական գործունեության հետևանքով երկրի էկոնոմիկան փլուզվում է, իսկ հայ ժողովուրդը կանգնում անդունդի եզրին: Արդյունաբերության համախառն արտադրանքը 1919 թ., համեմատած նախապատերազմյան դրության հետ, կազմել է ընդամենը 8 տոկոս, գյուղատնտեսական մթերքների արտադրանքը՝ ընդամենը 19 տոկոս, ցանքատարածությունը կրճատվել է ավելի քան 4 անգամ, խոշոր եղջյուրավոր անասունների թիվը պակասել է 75 տոկոսով, ոչխարներինը՝ 77 տոկոսով, այծերինը՝ 71,7 տոկոսով և այլն:

Տնտեսության փլուզման հետևանքով խոշոր չափով ընկնում է դրամի կուրսը: 1919 թ. աշնանը ռուսական 10 ռուբլիանոց ոսկին արժեր 9000 ռ., իսկ մեկ տարի հետո՝ 1920 թ. աշնանը՝ 20 000 ռուբլի:

Դաշնակների կառավարությունը միայն 1920 թվականին, 11 ամսվա ընթացքում բաց է թողել 11 միլիարդ ռուբլու արժեքազրկված չեկեր, որը հավասար էր նախապատերազմյան 353 000 ռուբլուն:

Այսպիսի պայմաններում արագորեն բարձրանում են խիստ սակավաթիվ ապրանքների, հատկապես կենսամթերքների գները: Դաշնակների գլխավոր օրգան «Հառաջ» թերթը 1920 թ. նոյեմբերի 9-ին գրում է. «Այսօր աղի փութը 30 000 ռ., փայտինը 25 000 ռ., գետնախնձորը 8000 ռուբլով է վաճառվել»: Երկու օր հետո, 1920 թ. նոյեմբերի 11-ին աղի փութը վաճառվել է 35 000 ռուբլի, նույն թափով բարձրացել են նաև մյուս կենսամթերքների գները:

«Բանվորները շաբաթ օրերը աշխատում են 16 ժամ, իսկ մյուս օրերը 12 ժամ»[1]: Իսկ քեմալականների արշավանքի ժամանակ, եղած սակավաթիվ ձեռնարկություններում աշխատանքը դրեթե դադարեցվում է:

«Սովը և համաճարակները մոլեգնում են ամբողջ Հայաստանում, ամեն օր սովից մեռնում են երկու հազար մարդ»[2]: Հաղորդում են, որ «Սուրմալուի գավառում ուտում են դիակներ»[3]:

Ամերիկա-անգլիական գաղութարարների և նրանց գործակալ դաշնակների տիրապետության ժամանակ, միայն 1919 թ. առաջին կիսամյակում, ոչ լրիվ տվյալներով, սովից և համաճարակից բնաջնջվել է 180 000 մարդ, իսկ երկու և կես տարվա ընթացքում

[1] «Ժողք», 1918 թ., № 2:
[2] ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 200, գ. 132, թ. 469—470:
[3] Նույն տեղը:

բնաջնջվել է 489 000 մարդ[1], որը կազմում է դաշնակցության տիրապետության ժամանակվա Հայաստանի ազգաբնակչության ավելի քան 1/3 մասը:

Հայ ժողովրդի համար է՛լ ավելի ծանր դրություն է ստեղծվում հատկապես 1920 թ. քեմալականների արշավանքի ժամանակ:

Հայաստանի բանվորները և գյուղացիները ռուսական պրոլետարիատի ռևոլյուցիոն պայքարի հարուստ փորձի հիման վրա, Սոտարիատի ռևոլյուցիոն պայքարի հարուստ փորձի հիման վրա, Սովետական Միության Կոմունիստական պարտիայի առաջավոր ջոկատներից մեկի՝ Հայաստանի Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ, 1920 թվականի նոյեմբերի 29-ին ապստամբության դրոշ են բարձրացնում ամերիկա-անգլիական իմպերիալիզմի և քեմալական Թուրքիայի վարձկան դաշնակցության արյունոտ ռեժիմի դեմ:

Այդ հերոսական պայքարում հայ ժողովրդին հաջողվում է ռուս մեծ ժողովրդի եղբայրական ու անշահախնդիր օգնությամբ տապալել դաշնակների դաժան տիրապետությունը և Հայաստանը դարձնել Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկա, որով նոր դարագլուխ է բացվում հայ բազմաչարչար ժողովրդի պատմության մեջ:

Չնայած ռուս մեծ ժողովրդի եղբայրական օգնությամբ ձեռք բերված այդ հաջողությանը, Հայաստանը դռնվում էր չափազանց ծանր տնտեսական դրության մեջ: «Միայն դաղթականների և որբերի թիվը հասնում էր մոտավորապես 300 հազար մարդու»[2]:

Սովետական իշխանությունը բոլոր միջոցները գործադրում է հայ ժողովրդին ծանր վիճակից փրկելու համար: 1920 թ. վերջին նա շտապ օգնության կարգով Հայաստան է ուղարկում.

1) 500 000 ռուբլի՝ ոսկով,
100 000 ռուբլի՝ արծաթ,
945 000 ռուբլի՝ թղթադրամ,
ընդամենը՝ 2 545 000 ռուբլի:
2. Վառելիք՝
1 066 000 փութ մազութ,

[1] «Պրավդա», 1935 թ. նոյեմբերի 29:
[2] ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 102, թ. 78:

95 000 փութ նավթ,
12 000 փութ բենզին,
5 000 փութ մեքենայի յուղ,
ընդամենը՝ 1 172 000 փութ։

3. Մանուֆակտուրային ապրանքներ՝ 1500 արշին.
Շինել, բյուզ, գլխարկ, 18 600 կոմպլեկտ։ 36 000 ձեռք սպիտակեղեն։ Արդուզարդի ապրանքներ՝ 1 000 000 ռուբլու։

4. Հացահատիկ և այլուր՝ 326 000 փութ,
5. Շաքար՝ 5000 փութ,
6. Ձուկ՝ 50 000 փութ,
7. Անասուններ, գլխավորապես ձիեր՝ 1500 գլուխ,
8. Ինքնաթիռներ՝ 10 հատ,
9. Ավտոմեքենաներ՝ 10 հատ,
10. Տպագրական մեքենաներ՝ 6 հատ,
11. Գյուղգործիքներ՝ 173 հատ,
12. Մանգաղ և դերանդի՝ 10 000 հատ,
13. Զանազան դեղորայք՝ 12 վագոն,
14. Թուղթ՝ 100 000 փութ,
15. Բրինձ՝ 7 վագոն և այլն[1]։

Սովետական Ռուսաստանի կողմից հայ ժողովրդին ցույց տրվող նյութական այս օգնությունը շարունակվում է սիստեմատիկաբար։

Հայաստանի Կոմունիստական պարտիայի Կենտկոմի օրգան «Կոմունիստ» թերթը 1920 թ. դեկտեմբերի № 6-ում այդ մասին գրում է. «Ռուսաստանից արդեն իսկ ուղարկված է մեզ անմիջական կարիքների համար մի քանի վագոն մանուֆակտուրա, Ադրբեջանից ապահովում է մեծ քանակությամբ նավթ, ցորեն, իսկ փոքրինչ հետո՝ նաև աղ։ Բոլոր այդ մթերքները կարող են գործադրվել թե՛ անմիջական սպառման և թե՛ վայրուտային ապրանքների ներքին ու արտաքին փոխանակության համար»։

Հայաստանի բազմաչարչար աշխատավորությանը չափազանց մեծ օգնություն էր նաև այն, որ Հայաստանի Կոմունիստական պարտիան և կառավարությունը 1920 թ. դեկտեմբերի 6-ին որո-

[1] Տե՛ս ՀԿՊ կենտկոմին կից Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, գ. 9, թ. 1։

շում են ընդունում և «անհապաղ ի շիք հայտարարում Հայաստանի բոլոր պետական պարտքերը Անտանտին (մասնավորապես Ամերիկային), պարտքեր, որ դաշնակցական կառավարությունը ուզում էր քամել Հայաստանի բանվորներից և գյուղացիներից»[1]։

Սովետական կառավարությունը 1921 թ. առաջին կեսին, Զանգեզուրի՝ դաշնակների բանդաներից ազատագրվելուց անմիջապես հետո, հսկայական օգնություն է ցույց տալիս նաև Զանգեզուրի աշխատավորությանը։ «Սովետական կառավարությունը շտապ կարգով Զանգեզուր է ուղարկում 10 վագոն ալյուր, 3 վագոն դարի, 1 վագոն ցորեն, 3 վագոն աղ, 3 վագոն նավթ»[2]։

Զանգեզուրի ամբողջ աշխատավորությունը, որը 2 1/2 տարի տնքում էր դաշնակների բանդաների լծի տակ, Սովետական իշխանության այդ անշահախնդիր օգնության առթիվ իր երախտագիտությունը հայտնելով, նշում է. «Կոմունիստական պարտիան և Սովետական իշխանությունը Զանգեզուրը ուղղակի փրկել են ոչ միայն դաշնակների ծանր լծից, այլև անպայման ծանր կորստից»[3]։ Սովետական կառավարության հանձնարարությամբ ՌՍՖՍՌ-ի Պարենժողկոմատը 1921 թ. հոկտեմբերի 1-ին Հայաստանի Ժողկոմխորհի նախագահ Ալ. Մյասնիկյանին հայտնում է հետևյալը. «Հայաստանի համար բաց է թողնված մեկ միլիոն փութ հաց, պետք է այն փոխադրվի Պոլտավայի նահանգից՝ մինչև հոկտեմբերի 20-ը»[4]։

Թե Սովետական կառավարությունը ինչպիսի հոգատարություն է ցուցաբերում հայ ժողովրդին այդ ծանր կացությունից դուրս բերելու համար, որը ստեղծվել էր դաշնակների ու նրանց ամերիկա-անգլիական և թուրքական տերերի կողմից, երևում է արխիվային հետևյալ փաստաթղթից.

«Մոսկվայից

Միայն Երևան լիտ. «Ա», Խարկով Պարենժողկոմին, պատճեն՝ Երևան, Մյասնիկովին։ Չնայած մեր բազմիցս խնդրանքներին՝ Հայաստանին շտապ կարգով հաց ուղարկելու անհրաժեշտության մասին, հացի բեռնումն ընթանում է դանդաղ։ Խնդրում եմ բացառիկ

[1] «Կոմունիստ», 1920 թ., № 2։
[2] ՀԿՊ կենտկոմին կից Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, գ. 74, թ. 5։
[3] Նույն տեղը։
[4] ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 102, գ. 53, թ. 1։

շատ կարգով առաջին հերթին ուղարկել անդրկովկասյան հանրապետություններին։ Հայաստանին ուղարկել 100 000 փութ հաց։

Նշելով հիշյալ փոխադրման հատուկ շտապ լինելը, խնդրում եմ յուրաքանչյուր հինգ օրը մեկ անգամ իրազեկ դարձնել մեզ այդ մասին։

Պարենի բաշխման կոմիսար։ 17/11—1921 թ.»[1]։

Սովետական իշխանության անշահախնդիր օգնությունը հայ ժողովրդի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների նկատմամբ շարունակվում է նաև հետագա տարիներին։ Սովետական կառավարությունը 1922 թվականին Անդրկովկասին բաց է թողել հացամթերք, հետևյալ չափով՝

Վրաստանին 350 000 փութ հաց։

Հայաստանին 650 000 փութ հաց։

Նախիջևանին 190 000 փութ հաց[2]։

Սովետական Ադրբեջանի աշխատավորությունը 1922 թ. ամռանը, որպես եղբայրական օգնություն, 25 000 փութ սերմացու է ուղարկում Զանգեզուրի աշխատավորությանը[3]։

Սովետական կառավարությունը հսկայական գումարներ է բաց թողնում Հայաստանի քայքայված արդյունաբերությունը և գյուղատնտեսությունը արագորեն վերականգնելու համար։

Միայն 1922 թ. «Սովետական կառավարությունը Հայաստանին բաց է թողել 640 000 ռուբլի ոսկով՝ բամբակագործությունը վերականգնելու համար»[4]։

Ռուս մեծ ժողովրդի օգնությամբ, բոլշևիկների պարտիայի ղեկավարությամբ ֆիզիկական բնաջնջումից ոչ միայն փրկվում է հայ ժողովուրդը, այլև շատ կարճ ժամանակամիջոցում Հայաստանը դառնում է ՍՍՌՄ առաջավոր հանրապետություններից մեկը։

* * *

Դաշնակների բուրժուա-նացիոնալիստական պարտիայի թուրքասիրական քաղաքականությունը, որը հակասում էր հայ ժողովրդի կենսական շահերին, անփոփոխ կերպով շարունակվում է նաև Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց հետո՝ մինչև այժմ։

[1] ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 102, գ. 71, թ. 30։

[2] Նույն տեղը, գ. 270, թ. 3։

[3] Նույն տեղը, գ. 283, թ. 3։

[4] Г. К. Орджоникидзе, Избр. статьи и речи, Москва, 1939, стр. 163.

Դեռ մինչև Հայաստանում սովետական կարգերի հաստատումը 1920 թ. նոյեմբերի 20-ին դաշնակներն իրենց գլխավոր օրգան «Հառաջ» թերթում գրում են. «Եթե հայ ժողովուրդը կամենում է ապրել և ապահովել պետական ու ֆիզիկական գոյությունը հարատևորեն, նա պետք է վարի ոչ թե ռուսական, այլ թուրքական օրիենտացիա»։

Հայաստանը 1920 թ. նոյեմբերի 29-ին սովետական հռչակվելուց հետո դաշնակների տապալված կառավարության ղեկավարները մեծ ջանքեր են գործադրում արևմտյան տերությունների և Թուրքիայի օգնությամբ վերականգնելու իրենց անփառունակ կառավարությունը։ Նրանք 1920 թ. դեկտեմբերի 2-ին Թուրքիայի հետ ստորագրում են Ալեքսանդրապոլի խայտառակ պայմանագիրը, չնայած որ դրա համար ոչ մի լիազորություն չունեին։ Ալեքսանդրապոլի պայմանագիրը փաստորեն հանդիսանում էր Բաթումիի «բարեկամության» պայմանագրի հետագա շարունակությունը դաշնակների և Թուրքիայի ռազմա-քաղաքական գործարքը նորից ամրապնդելու գործում՝ ընդդեմ հայ ժողովրդի կենսական շահերի և Սովետական իշխանության։

Ալեքսանդրապոլի պայմանագրի 5-րդ հոդվածում նշված է. «Թուրքիայի ազգային մեծ ժողովի կառավարությունը Հայաստանին խոստանում է դինվորական օգնություն ներքին ու արտաքին վտանգի դեպքում... երբ Հայաստանի հանրապետությունը խնդրի այդ օգնությունը»[1]։

Պայմանագրի 13-րդ հոդվածի համաձայն՝ «թուրքական կառավարությանը իրավունք է վերապահվում ռազմական գործողություններ ձեռնարկելու Հայաստանի տերիտորիայի վրա»[2]։

Այստեղից բնականաբար հարց է առաջանում. թուրքական զորքերը Հայաստանի տերիտորիայի վրա դաշնակների համաձայնությամբ ո՞ւմ դեմ պետք է սկսեին ռազմական գործողությունները, որ նախատեսվում էր այդ ստորագրյալ պայմանագրի 13-րդ հոդվածով։

Այսպիսով, ինչպես Բաթումիի «բարեկամական» պայմանագրով, այնպես էլ Ալեքսանդրապոլի պայմանագրով սերտ ռազմա-քաղաքական գործարք է կնքվում Թուրքիայի և դաշնակների միջև՝ ընդդեմ հայ ժողովրդի կենսական շահերի և Սովետական Ռուսաստանի։

[1] ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 200, գ. 58, թ. 100—101։

[2] Նույն տեղը։

Ալեքսանդրապոլի խայտառակ պայմանագրով փաստորեն վերականգնվում է «Տաճկաստանի քաղաքական այն պրոտեկտորատը», որ ծնունդ էր տվել 1918 թվականի «անկախ Հայաստանին»[1]։ Պարոն Ալ. Խատիսյանը էլ ավելի հեռու է գնում, հայտարարելով, թե՝ «Անկախ Հայաստանը փաստորեն պետք է հանդիսանա տաճկական մի վիլայեթը»[2]։

Դաշնակների և Թուրքիայի ռազմա-քաղաքական գործարքը նոանդուն կերպով հանդես է գալիս 1921 թվականի փետրվարյան ավանտյուրայի ժամանակ, որը նյութական և մարդկային խոշոր վնասներ է պատճառում առանց այն էլ հյուծված հայ ժողովրդին։

Հայտնի է, որ իշխանազուրկ և ժողովրդի մեջ հեղինակություն չունեցող դաշնակցությունը չէր կարող փետրվարյան ավանտյուրա ձեռնարկել, եթե բազմակողմանի օգնություն չստանար անգլո-ամերիկյան իմպերիալիստների և Թուրքիայի ռեակցիոն շրջաններից։

Փետրվարյան ավանտյուրան սկսվելուց անմիջապես հետո Բեհաեդդին-բեյը Թուրքական կառավարության անունից 1921 թ. փետրվարի 24-ին հետևյալն է հայտնում դաշնակներին. «Մեր կառավարությունը ճանաչում է Հայաստանի փրկության կոմիտեին, որպես միակ ազգային իշխանությունը Հայաստանում»[3]։

Ս. Վրացյանը Բեհաեդդին-բեյի ուղարկած այդ «բարեկամական» հեռագրի առթիվ 1921 թվականի մարտի 15-ին ուղարկում է հետևյալ պատասխանը. «...Իմ կառավարությունը Տաճկաստանի և Հայաստանի միջազգային նորմալ և բարեկամական հարաբերություններ սկսելու համար բազա է համարում այն պայմանները, որոնք ձևակերպված են անցյալ տարվա դեկտեմբերի 2-ին Ալեքսանդրապոլում կնքված հայ-տաճկական դաշնագրի մեջ և հետագայում ստեղծված իրական պայմանները»[4]։

Ելնելով այդ սերտ հարաբերություններից և Ալեքսանդրապոլի «բարեկամության» պայմանագրից, այսպես կոչված Հասարակության փրկության, բայց փաստորեն հասարակության դավաճանու-

1 Խորհրդային Հայաստանի 5 տարին (1920—1925 թթ.), 1926, էջ 3։

2 Նույն տեղը, էջ 2։

3 Շ ա հ ն, Ալեքսանդրապոլի դաշնագիրը, փետր. 18-ի տպաւտամբությունը, 1934, Մարսել, էջ 3։

4 Նույն տեղը։

թյան կոմիտեն, Ս. Վրացյանի գլխավորությամբ, փետրվարյան ավանտյուրայի ժամանակ շտապ կերպով դիմում է Թուրքական կառավարությանը, դինված օգնություն խնդրելով նրանից՝ Հայաստանի բանվորների և գյուղացիների revolutionին շարժումները արյան մեջ խեղդելու համար։

Թուրքական կառավարությանն ուղարկված դիմումի մեջ նըշված է հետևյալը. «...Հայաստանի կառավարությունը խնդրում է Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարությանը, հանուն երկու ազգերի փոխադարձ շահերի, ըստ կարելույն շուտ...

1. Տալ որոշ պայմանով հայ բանակին (այսինքն՝ դաշնակ ավանտյուրիստներին—Խ. Բ.) ռազմամթերք, առաջին հերթին ռուսական երեք գծանի հրացանի կամ տաճկական մաուզերի փամփուշտներ։

2. Հաղորդել մեզ, թե արդյոք ազգային մեծ ժողովի կառավարությունը հնարավոր է գտնում հասցնել Հայաստանին դինվորական օժանդակություն և եթե կարող է, ինչ չափով, ինչ եղանակով և ինչ ժամանակամիջոցում»[1]։

Այնուհետև շարունակում է՝ «Սույն դիմումը անելով, Հայաստանի կառավարությունը հիմնվում է այն բարեկամական հարաբերությունների վրա, որոնք հիմք են դրված Ալեքսանդրապոլի դաշնագրից սկսած»[2]։

Այդ դիմումը Թուրքական կառավարությանն ուղարկելու օրը՝ 1921 թ. մարտի 18-ին, Ս. Վրացյանը խմբապետ Նժդեհին գրում է հետևյալը. «Սիրելի Նժդեհ, ես արդեն գրել եմ մեր կացության մասին, մի ամիս է ինչ որ կռվում ենք... կանգնած ենք ծանր հարաբերությունների առաջ։ Դրությունը կարելի է փրկել միայն Բայազետից և Դարալագյազից գործող ուժերով։ Այդ մասին քանիցս գրել ու խնդրել ենք քեզ։ Նորից շեշտում եմ անհրաժեշտություն Ձեր կողմից արագ և վճռական գործողությունների, որոնք կարող են փրկել Հայաստանը (այսինքն՝ դաշնակներին—Խ. Բ.) կատաստրոֆից պետք է շտապես երևան»[3]։

Այնուհետև շարունակում է՝ «Ես չեմ ուզում զուշակություններ

1 ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. Սովետական կառավարության Արտաքին գործերի ժողկոմի, գ. 22, թ. 85։

2 Նույն տեղը։

3 «Կարմիր աստղ», 1921 թ., № 90։

Ս. Վրացյանի գրած այս նամակը 3 օր հետո՝ 1921 թ. մարտի 18-ին Ախտայի շրջանում ընկնում է Կարմիր Բանակի զորամասերի ձեռքը։

անել։ Կարող է պատահել փորձության շատ ծանր օրեր հասնեն Երևանի համար, բայց ինչ էլ որ լինի Երևանի ճակատագիրը, մենք կռիվը շարունակելու ենք մինչև վերջը։ Մտել ենք բանակցություններ մեջ օգնության մասին նաև տաճիկ հրամանատարության հետ։ Հաշվի առ այս բոլոր հանգամանքները, լարիր բոլոր ուժերդ...»[1]։

Այսպես է ստեղծվում դաշնակների և Թուրքիայի ռազմա-քաղաքական գործարքը 1921 թ. փետրվարյան ավանտյուրայի շրջանում։ Դաշնակների «Ազատ Հայաստան» բուլվարային թերթը 1921 թ. մարտի 15-ին դաշնակների և Թուրքիայի գործարքի մասին գրում է. «Իրերի պատմական բերումով Անդրկովկասի ժողովուրդների քաղաքական ազատության իրական պաշտպանը կարող է դառնալ միայն Տաճկաստանը»[2]։

Դաշնակների թուրքասիրական քաղաքականությունը եռանդուն կերպով շարունակվում է փետրվարյան ավանտյուրայի խայտառակ ձախողումից և դաշնակներին երկրից դուրս վռնդելուց հետո։ Նրանք բոլոր ջանքերը գործադրում են ԱՄՆ-ի, Անգլիայի իմպերիալիստների և թուրքական ղեկավար շրջանների հետ միասին մի ընդհանուր բլոկ ստեղծելու Սովետական Ռուսաստանի և նրա անբաժանելի մասը կազմող Սովետական Հայաստանի դեմ։

Այդ հակասովետական բլոկի ստեղծման մասին Թեհրանում Սովետական Հայաստանի ներկայացուցիչ Ե. Երզնկյանը 1922 թ. Սովետական Հայաստանի արտաքին գործերի կոմիսար Ասքանազ Մռավյանին հետևյալն է գրում. «Այստեղ տեղական հասարակայնությունը միանգամայն հաստատ հավատացած է, որ Հայաստանի և Տաճկաստանի միջև պատերազմն անխուսափելի է, որ տաճիկները դաշն են կնքել ֆրանսիացիների հետ և այժմ բանակցում են Անգլիայի ու հույների հետ և այնուհետև հարձակվելն ու մաքրեն Կովկասը մեծամասնականներից»[3]։ Այնուհետև շարունակում է. «Նոր եկած Կարաբեքիր կոնսուլի վերաբերմունքը շատ բան է ասում այդ մասին։ Նա շատ սերտ բարեկամական կապ է պահպանում անգլիական, ֆրանսիական և ամերիկյան կոնսուլների հետ, նույնպես և Մելիք-Թանգյան եպիսկոպոսի և դաշնակների հետ։ Հաճախ

[1] «Կարմիր աստղ», 1921 թ., № 90։

[2] Շահան, Ալեքսանդրապոլի դաշնագիրը, փետրվարի 18-ի ապստամբությունը, էջ 84։

[3] ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 40, գ. 49, թ. 40—43։

նրա մոտ է լինում նախկին դաշնակների մինիստր Բաբալյանը և ուրիշ դաշնակներ, կառավարության անդամներից և խմբապետներից»[1]։

Ե. Երզնկյանը Ա. Մռավյանին գրած նամակներում մանրամասն նկարագրում է սովետական դեսպանության ձեռք առած միջոցառումները՝ դաշնակների կողմից դեպի Սովետական Հայաստան կատարվող թշնամական գործողություններն անհապաղ վերացնելու համար։

«Ռուսաստանի կոնսուլի կողմից,— գրում է Երզնկյանը Ա. Մռավյանին,— առաջարկված է այստեղի նահանգապետին Ատրպատականի շրջանից դաշնակցության կառավարության անդամներին, խմբապետներին և հայդուկային խմբեր կազմող անձանց, թվով 26 հոգու, որոնք այստեղ հակասովետական ագիտացիա են մղում և պատրաստություն են տեսնում Սովետական Ռուսաստանի դեմ, հեռացնել։ Գլխավոր շարիքը Մելիք-Թանգյանի այստեղ լինելն է»[2]։

Այսպիսով, հայ ժողովրդից դատապարտված և երկրից դուրս վռնդված դաշնակները չեն հրաժարվում իրենց ձախողված պլաններից։ Նրանք ձգտում են ամերիկա-անգլիական և թուրքական իմպերիալիստների հետ միասին տապալել սովետական կարգերը և վերականգնել իրենց արյունոտ ռեժիմը, որպիսին գոյություն ուներ 1918—1920 թվականներին։

Դաշնակների գլխավոր շեֆերից մեկը՝ Ալ. Խատիսյանը 1933 թ. փետրվարի 15-ին «Последние новости»-ում իրենց նպատակների մասին հետևյալն է գրում. «Թուրքիո շահերու տեսակետեն պետք է ստեղծվի Կովկասյան համագործակցություն (խոսքը դաշնակների, մենշևիկների և մուսավաթականների ընդհանուր բլոկի մասին է— Խ. Բ.), որը կարողանա թումբ հանդիսանա Ռուսաստանի դեմ»։

Այնուհետև շարունակում է. «Անհրաժեշտ է բոլոր միջոցները սպառել, որպեսզի Թուրքիան վերադառնա 1918 թվականի իր վրած քաղաքականությանը»։

Սա ցույց է տալիս, որ դաշնակցությունը ցանկանում էր Թուրքիայի հետ նորից ռազմա-քաղաքական գործարք կնքել, ինչպես այդ տեղի ունեցավ 1918 թ. Բաքումի «բարեկամության», ապա նաև Կ. Պոլսի կոնֆերանսի ժամանակ։

[1] ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 40, գ. 49, թ. 40—43։

[2] Նույն տեղը։

Թուրքական իմպերիալիստների միջոցով Հայաստանում սովետական կարգերը տապալելու և իրենց արյունոտ ռեժիմը վերականգնելու մասին բազմիցս առաջարկություններ է արել դաշնակների մյուս պարագլուխը՝ Ս. Վրացյանը. «Բոլշևիկների դեմ կռվելու համար մենք պետք է ունենանք հարևան Թուրքիայի բարեկամությունը, նույնիսկ աջակցությունը»[1],—հայտարարել է նա։

Դաշնակների թուրքասիրական քաղաքականությունը է՛լ ավելի ուժեղանում է 2-րդ համաշխարհային պատերազմից հետո, հատկապես, երբ անգլո-ամերիկյան իմպերիալիստների զավթողական քաղաքականության հետևանքով առաջանում է մերձավոր արևելյան ճգնաժամը։ Այդ ժամանակ դաշնակներն իրենց «Ազդարար» թերթում գրում են, որ «...լայն պրոպագանդա կմղվի Մերձավոր Արևելքում երիտասարդության մեջ՝ նախապատրաստվել օտար բանակներու մեջ մտնելու, Սովետական Հայաստանի վրա հարձակվելու համար»[2]։

Պարզ է, որ օտար բանակների մասին շաղակրատելով, դաշնակներն առաջին հերթին նկատի ունեն թուրքական բանակը։

Դաշնակների հակասովետական և թուրքասիրական քաղաքականությունը դրսևորվում է հատկապես նրանց պարտիայի 16-րդ ընդհանուր ժողովում, որը կայանում է Կահիրեում՝ 1955 թ. ապրիլի 22-ից մինչև մայիսի 22-ը։ Այստեղ նրանք որոշում են ընդունում, որ արևմտյան տերությունների և Թուրքիայի զորքերը Հայաստանի վրա արշավելու դեպքում իրենք ևս մասնակցեն արշավանքին։ Ժողովի որոշման մեջ ասված է. «Աշխատել, որպեսզի պատերազմի պարագային, կարելության սահմաններուն մեջ դնպի Հայաստան արշավող ուժերուն մեջ... խմբվին նաև հայ մասնագետներ, որպեսզի արևմտյան տերությունների և թուրքական զորքերի հետ միասին արշավեն Հայաստանի վրա»[3], «...որպեսզի ոչ միայն Հայաստանի քաղաքներն ու գյուղերն ավերվեն, Հայաստանի ժողովուրդը ենթարկվի նոր ջարդի, այլ նաև չնչվեն Հայաստանն ու անոր ինքնուրույն ազգային պետականությունը»[4]։

Դաշնակների վերոհիշյալ համագումարը միաժամանակ գործնական մի շարք միջոցառումներ է նշում, արևմտյան տերությունների և թուրքական զորքերի հետ միասին Սովետական Հայաստանի վրա հարձակվելու մասին։ «Օրըստօրե կմոտենա վճռական պահը,—նշված է վերոհիշյալ ժողովի բանաձևում,—և մինչև սեպտեմբեր պետք է պատրաստ ըլլան ցանկերը, այն դաշնակներուն անուններու, որոնք Թուրք Թոփչիի և ամերիկացի սամուելի ծրագիրներու հիման վրա պիտի օգտագործվեն Հայաստանի դեմ»[1]։

Սովետական Հայաստանի վրա խաչակրաց արշավանք սկսելու համար, մոլի դաշնակ Հայկ Աճեմյանը Թեհրանից, 1956 թ. հուլիսի 14-ին, Սիմոն Վրացյանին (այդ ժամանակ Բեյրութի ճեմարանի տնօրեն—Խ. Բ.) ուղարկած նամակում գրում է. «Միջին Արևելքի երկրներեն՝ Թուրքիան, Եգիպտոսեն և Լիբանանեն մարտիկները ժամանել են, արշավախումբը առաջին առիթով պատրաստվում է գործի անցնել»[2]։

Նույն ժամանակամիջոցում խմբապետ Դրոյի եռանդուն նախաձեռնությամբ Մերձավոր Արևելքի երկրներում դաշնակցական թափթփուկներից ստեղծվում են առանձին կազմակերպություններ և «ղինվորական կոմիտեներ», որոնք սերտ կապ են ստեղծում այդ երկրներում գործող ամերիկյան լրտեսական և հետախուզական կազմակերպությունների հետ։ Դաշնակցական այդ կազմակերպությունները ֆինանսավորվում և հրահանգավորվում են ամերիկյան կազմակերպությունների կողմից, որոնք «...կը դործադրեն անոնց (ամերիկյան կազմակերպությունների—Խ. Բ.) լրտեսական, տեռորիստական ու խափանդատական հրահանգները»[3]։

1955 թ. տեղի է ունենում ԱՄՆ-ի ներկայացուցիչների պալատի ութսունիններորդ կոնգրեսի երկրորդ նստաշրջանը, որտեղ քննության է առնվում դաշնակների պարտիայի մի քանի պարագլուխների ներկայացրած պաշտոնական զեկուցագիրը՝ Հայաստանում սովետական կարգերի հաստատման մասին։ Այդ զեկուցագրում պատմական փաստերը կեղծելուց բացի, դաշնակները չեն մոռանում հիշատակել այն սերտ ռազմա-քաղաքական գործարքի մասին, որ ստեղծվել էր դաշնակների և սուլթանական Թուրքիայի միջև 1918 թվականին և որը դեռ շարունակվում է։

Ըստ պարոն դաշնակների, ստացվում է, որ հայ ժողովուրդը, որը ավելի քան 400 տարի անդում էր սուլթանական Թուրքիայի դաժան լծի տակ, իր անկախությունը ստացել է նրա կողմից՝ Բաթումիի խայտառակ պայմանագրով։

---

1 «Լրաբեր», 1958 թ. մարտի 2։
2 Նույն տեղը։
3 Նույն տեղը, № 106։
4 Նույն տեղը։

1 «Լրաբեր», 1958 թ., № 106։
2 Նույն տեղը։
3 Նույն տեղը։

Գեներալ Անդրանիկն անգամ, որ քաղաքականությունից հեռու կանգնած անձնավորություն է եղել, կարողացել է ճիշտ հասկանալ, որ դաշնակների թուրքասիրական քաղաքականությունը կործանիչ քաղաքականություն է հայ ժողովրդի համար։ Այդ մասին նա գրում է. «Ես կը կանխատեսեի, թե բոլոր այն աթոռները, զոր գրաված էին Երևանի դեկավարները, խարխուլ էին, քանի Ռուսաստանը իր վերջին խոսքը չէր ըսած»[1]։

Այսպիսին է եղել դաշնակների պարտիայի թուրքասիրական քաղաքականությունը ինչպես նրանց անփառունակ տիրապետության ժամանակ, այնպես էլ Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց և նրանց դուրս վռնդվելուց հետո։

Հակառակ դաշնակների ավանտյուրիստական քաղաքականության, սփյուռքի ամբողջ հայ աշխատավորությունը դատապարտում է դաշնակների թուրքասիրական և հակասովետական քաղաքականությունը։ Սփյուռքահայ աշխատավորությունը իր ջերմ հայրենասիրությունն է ցուցաբերում Սովետական Հայաստանի նկատմամբ, հրճվում նրա տնտեսական ու կուլտուրական նվաճումներով։

«Սովետական իշխանության տապալման նրանց 37 տարվա «պահանջը» իրենցից կախված չէ, ինչքան էլ հասարակ լուն իրեն փիղ պատկերացնի»[2],—գրում է «Նոր կյանք» կոմունիստական թերթը դաշնակների ավանտյուրիստական պլանների մասին։

Այսպիսին է եղել դաշնակների անցած ուղին, որը մեծ դժբախտություն է բերել մեր ժողովրդին։ Այս մասին ավելի մանրամասն կարելի է տեղեկանալ սույն ժողովածուում բերված արխիվային բազմաթիվ փաստաթղթերից։

Ստ. Շահումյանը 1918 թ. մայիսին արտասանած իր ճառերից մեկում բնութագրելով դաշնակների քաղաքական վարքագիծը, ասել է.

«Անդրկովկասի ամբողջ բանվորության ու գյուղացիության առաջ նրանք (դաշնակները—Խ. Բ.) հայտարարված են ժողովրդի թշնամիներ»[3]։

---

[1] Գ ե ն ե ր ա լ Ա ն դ ր ա ն ի կ, Հայկական առանձին հարվածող զորամաս, Պոսթոն, 1921, էջ 245։

[2] «Նոր կյանք», 1952 թ. դեկտեմբերի 21։

[3] Ս տ. Շ ա հ ու մ յ ա ն, Հոդվածներ և ճառեր, Հայպետհրատ, 1953, էջ 366։

ПРИЛОЖЕНИЕ
ՀԱՎԵԼՎԱԾ

№ 1

СОЛДАТСКАЯ ЖИЗНЬ

РЕЗОЛЮЦИЯ

Мы—грузины, армяне, осетины и имеритины—солдаты хамаданского гарнизона, собравшись на митинг 8 декабря 1917 года в количестве 300 человек и обсудили телеграмму генерала Пржевальского о формировании национальных полков и разделения национальностей. Мы не хотим отделяться от русских. Мы хотим быть вместе с русскими, как жили раньше, поэтому мы не подчиняемся приказу генерала Пржевальского и не признаем буржуазный Закавказский комиссариат, который отделяет нас от свободной России. Мы признаем только власть Совета Народных Комиссаров и советов рабочих, солдатских и крестьянских депутатов.

Просим всех товарищей грузин, армян, имеритин и осетин присоединиться к нашему постановлению.

Да здравствует единая свободная Россия!

Да здравствует единение, равенство и братство с русскими!

Да здравствует рабоче-крестьянское правительство в лице Совета Народных Комиссаров!

Председатель Жеманашвили

„Кавказский рабочий", 21 января 1918 года, № 15.

№ 1

ՋԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՅԱՆՔ

ԲԱՆԱՁԵՎ

Մենք՝ վրացիներս, հայերս, օսեթներս և իմերեթներս, Համադանի կայազորի զինվորներս, 1917 թ. դեկտեմբերի 8-ին 300 հոգով հավաքվելով միտինգի ու քննարկեցինք գեներալ Պրժևալսկու հեռագիրը ազգային գնդերի ձևավորման և ազգությունների բաժանման մասին: Մենք չենք ուզում բաժանվել ռուսներից: Մենք ուզում ենք լինել ռուսների հետ միասին, ինչպես ապրել ենք առաջ: Դրա համար էլ մենք չենք ենթարկվում գեներալ Պրժևալսկու հրամանին և չենք ճանաչում բուրժուական Անդրկովկասյան կոմիսարիատը, որը բաժանում է մեզ ազատ Ռուսաստանից: Մենք ճանաչում ենք միայն ժողովրդական Կոմիսարների Սովետի և բանվորների, զինվորների ու գյուղացիների Սովետների իշխանությունը:

Խնդրում ենք վրացի, հայ, իմերեթ և օսեթ ընկերներին՝ միանալ մեր որոշմանը:

Կեցցե՛ միասնական ազատ Ռուսաստանը:

Կեցցե՛ միասնությունը, հավասարությունը և եղբայրությունը ռուսների հետ:

Կեցցե՛ բանվորա-գյուղացիական կառավարությունը՝ հանձին ժողովրդական Կոմիսարների Սովետի:

Նախագահ՝ ԺԵՄԱՇՎԻԼԻ

«Կավկազսկի ռաբոչի», 1918 թ. հունվարի 21, № 15:

№ 2

ПРОТОКОЛ 4-ГО ЗАСЕДАНИЯ КОМИССИИ О МИРЕ ПРИ ЗАКАВКАЗСКОМ СЕЙМЕ

15 февраля 1918 г.

Заседание посвящено выработке условий, которыми должна руководствоваться делегация в переговорах о мире.

По обсуждении, принимаются следующие положения:

1. При создавшихся условиях Закавказский Сейм считает себя правомочным заключить мир с Турцией.

2. Закавказский Сейм, вступая в мирные переговоры с Турцией, ставит своей задачей заключить с нею окончательный мир.

3. В основание заключаемого мирного договора должно лечь восстановление государственных границ России и Турции, существовавших к моменту объявления войны в 1914 году...

ЦГИА Арм. ССР, ф. 68/200, д. 7, л. 43.

№ 2

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ՍԵՅՄԻՆ ԿԻՑ ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 4-ՐԴ ՆԻՍՏԻ

1918 թ. փետրվարի 15

Նիստը նվիրված է այն պայմանների մշակմանը, որոնցով պատվիրակությունը պետք է դեկավարվի հաշտության բանակցություններում:

Քննարկումից հետո ընդունվում են հետևյալ դրույթները.

1. Անդրկովկասյան Սեյմը, ստեղծված պայմաններում, իրեն իրավասու է համարում հաշտություն կնքել Թուրքիայի հետ:

2. Անդրկովկասյան Սեյմը, հաշտության բանակցությունների մեջ մտնելով Թուրքիայի հետ, իր առջև խնդիր է դնում նրա հետ կնքել վերջնական հաշտություն:

3. Կնքվելիք հաշտության պայմանների հիմքում պետք է ընկնի Ռուսաստանի և Թուրքիայի այն պետական սահմանների վերականգնումը, որոնք գոյություն ունեին 1914 թվականին, պատերազմը հայտարարելու մոմենտին...

ՀՍՍՌ ԿԳՊԱ, ֆ. 68/200, գ. 7, թ. 43:

№ 3

СОЛДАТСКАЯ ЖИЗНЬ

В 22 КАВКАЗ. СТРЕЛК. ПОЛК

Мы солдаты 9-й роты Кавк. стрелкового полка, обсудив прошлое и текущий момент, клеймим позором всех лжесоциалистов Закавказского Комиссариата, плетущихся в хвосте у буржуазии. Им нет места у власти. А вам, народные комиссары, шлем самый горячий привет и благодарность, как стойким борцам за свободу всего народа. Мы с вами! Если потребуется вооруженная сила для борьбы с черной бандэй, перекрасившейся в красный цвет, по вашему зову мы все как один человек выйдем на баррикады, победить или умереть.

Долой Закавказский Комиссариат!
Долой кровожадную свору!
Да здравствует власть народных комиссаров!
Да здравствует рабоче-крестьянское правительство!

За председателя 9-ой роты:
секретарь

„Кавказский рабочий", № 18, 25 января 1918 г.

№ 3

ՉԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՅԱՆՔ

ԿՈՎԿԱՍՅԱՆ 22-ՐԴ ՀՐԱՁԳԱՅԻՆ ԳՆԴԻՆ

Ապրիլի 11(24)-ի ժամը 8-ի մոտ Հարավային ճակատի ամրություններից սկսեցին լուրեր ստացվել, որ Բեղլու-Ահմադի ջոկատի զորքերը ինչպես խմբերով, այնպես էլ ամբողջ զորասյուներով հեռանում են Աղ-Բաբայի, Գարամ-Վարդանի դիրքերից, և որ այդ զորքերի առաջավոր զորամասերը արդեն մոտենում են ամրություններին գծին, դրա հետ միասին տեղեկություններ ստացվեցին, որ առջևում լսվում են հրետանաձգություն և հրացանաձգություն:

Շուտով բերդի շտաբ եկավ Բեղլու-Ահմադի ջոկատի շտաբի պետ, գլխավոր շտաբի փոխգնդապետ Սկլյարևիչը: Վերջինիս ասելով Բեղլու-Ահմադի ջոկատի վիճակն այսպիսին էր.

Հաշտության առաջարկին թուրքերի պատասխանը շտաբում ստացվեց միայն ապրիլի 11-ի առավոտյան, ընդ որում թուրքական զորքերի Հրամանատարի նամակի թարգմանությունը շտաբում կատարվել էր, ինչպես երեում էր, սխալ, քանի որ պարզ չէր, թե որ գծի վրա պետք է հետ քաշվեին մեր զորքերը և որտեղ պետք է կանգ առնեին թուրքերը...

Սակայն Բեղլու-Ահմադի զորքերի Հրամանատարը, կարծելով, որ ջոկատի զորամասերը պետք է հեռանան բերդից այն կողմ, կարգադրություն արեց, որ ջոկատը հետ քաշվի Վեզինքոյ—Մաղրա գծի վրա:

Նշված առաջխազացումը կատարվում է անկարգ ձևով և հակառակորդի ճնշման տակ, որը (հակառակորդը) ամբողջ ռազմաճակատով կրակ է բացել նահանջող զորամասերի վրա:

Ժամը 9-ի մոտ բերդի Պարետին Այեքսանդրապոլից ուղիղ հեռախոսագծով կանչեց Հայկական Առանձին կորպուսի շտաբի պետ գեներալ-մայոր Վիշինսկին:

Բերդի պարետը, կորպուսի շտաբի պետին բացատրելով իրադրությունը, նշեց բերդի դրության լրջությունը, որը (բերդը) թուրքերը կարող էին գրավել մի հարվածով, խնդրեց կորպուսի հրամանատարի թույլտվությունը՝ Բեղլու-Ահմադի ջոկատի կազմից բերդում թողնել հետևակի մի գունդ և լեռնային մի մարտկոց:

Գեներալ-մայորը կորպուսի Հրամանատարի անունից բերդի պարետին տվեց հետևյալ ցուցումները. 1) անհրաժեշտ է բանակցությունների միջոցով սահմանել այն գիծը, որի վրա պետք է կանգ առնեն թուրքական զորքերը, ընդ որում բանակցություննե-

րը վարելու համար բերդի պարետի տրամադրության տակ դրվեց գնդապետ Մորելը և 2) թույլ չտալ թուրքերի կողմից բերդը հարձակմամբ գրավելը, որի համար, եթե անհրաժեշտ լինի, հակառակորդի հարձակումը կանգնեցնել կրակով։

Ժամը 10-ի մոտ բերդի Պարետը, բոլոր զորամասերի հրամանատարներին և բերդի վարչությունների պետերին ծանոթացնելով իրադրությանը, հրաման տվեց թուրքերի վրա կրակ բացել, եթե նրանք կփորձեն մոտենալ ամրություններին՝ հրանոթի կրակոցի հեռավորության վրա։ Ժամը 10-ի մոտ «Մուխա» ամրությունը (Սարիղամիշի խճուղու մոտ) առաջինը կրակ բացեց թուրքական զորքերի վրա, որոնք լրիվ մարտական կարգով հարձակվում էին Սարիղամիշի խճուղու և երկաթուղու միջև ընկած տեղամասի վրա։ Այնուհետև կրակ բացեցին բերդի Հարավային ճակատի նաև մյուս ամրությունները։ Քանի որ հակառակորդը հարձակվում էր և՛ Չալադաուրի լեռնաշղթայի կողմից, և՛ Կարս-չայի կիրճի երկու կողմերով, Պրոխլադնոյե գյուղից, ապա այստեղ ևս ամրություններից հրետանային կրակ բացվեց։

Անհրաժեշտ է նշել, որ ապրիլի 11-ի առավոտյան բերդից Չալադաուրի լեռնաշղթայի կողմը և դեպի Պրոխլադնոյե գյուղը ուղարկված պատվամենտյորները չընդունվեցին հակառակորդի կողմից։

Այսպիսով, մինչև ժամը 11-ը կրակ բացվեց համարյա բոլոր հրանոթներից, լռում էր միայն Հյուսիս-արևելյան ճակատի հրետանին։

Թուրքերը դադարեցրին հարձակումը և հրետանային կրակ բացեցին ինչպես հարավային, այնպես էլ արևմտյան ամրությունների վրա։ Հակառակորդն ուներ միայն լեռնային հրետանի, որի արկերը կորուստ չէին պատճառում բերդի պաշտպաններին։

Հրետանային մարտը շարունակվեց մինչև աղջամուղջ, իսկ առաջավոր դիրքերում, որոնք գրավել էին Հայկական երկրորդ գնդի զորամասերը, գնում էր նաև հրացանային փոխհրաձգություն։ Երեկոյան մոտ հիշյալ գնդի զորամասերը նշված լեռը սվինամարտով մաքրեցին թուրքերից...

Մագրա գյուղի մոտ, որին մոտեցավ Հայկական 8-րդ գնդի դումարտակը, ամբողջ ցերեկը նույնպես մարտ էր տեղի ունենում ինչպես քրդական հրոսակախմբերի, այնպես էլ թուրքական կանոնավոր հեռևակի հետ։

Այդ ընթացքում զինադադարի վերաբերյալ բանակցությունները գնում էին հետևյալ ձևով.

Ժամը 11-ի մոտ բերդից Սարիղամիշի խճուղով դուրս եկավ պատվիրակությունը՝ գնդապետ Մորելի գլխավորությամբ, որի համար կարգադրություն արվեց մեր հրետանուն՝ չգնդակոծել Սարիղամիշի խճուղին։ Քյազիմ-բեյի հետ պատվիրակության հանդիպումը տեղի ունեցավ միայն ժամը 13—14-ի մոտ, Վլադիկարսում։ Հապաղման պատճառն այն էր, որ մեր հրետանու արկերը պայթում էին խճուղուն մոտիկ, որի հետևանքով թուրքերը սիրտ չէին անում առաջ գալ։

Կարսի ուղղության վրա թուրքական զորքերի խմբի հրամանատար, գնդապետ Քյազիմ-բեյը հայտնեց գնդապետ Մորելին, որ, թուրքական զորքերի հրամանատար Վեհիբ-փաշայից իր ստացած ցուցումների համաձայն, թուրքական զորքերը պետք է մոտենային բերդային ամրություններին՝ 2 կիլոմետրի վրա, և որ տվյալ ժամանակամիջոցում, քանի որ բերդը, ըստ երևույթին, թշնամացած, հրետանային կրակ է բացել, ինքը հրաման է տվել զորքերին՝ կանգ առնել որտեղ հասել են և դադարեցնել կրակը։ Իսկ դեմարկացիոն գծի հարցի մասին Քյազիմ-բեյը կարծում էր, որ այդ հարցը կարող է լուծվել միայն այն բանից հետո, երբ կպարզվի Կարսի բերդի և մարզի էվակուացման կարգը։

Քանի որ գնդապետ Մորելին լիազորություններ չէին տրված սահմանելու բերդի, առավել ևս մարզի էվակուացման ժամկետն ու կարգը, ապա նա հնարավոր էլ չհամարեց շարունակել բանակցությունները։ Մեր պատվիրակությունը գնդապետ Մորելի հետ վերադարձավ բերդի շուրջ ժամը 18-ի մոտ։ Վերոհիշյալ բանակցությունների մասին գրավոր արձանագրություն չկազմվեց։ Բանակցությունների մասին գնդապետ Մորելի ս./թ. ապրիլի 12/21-ի № 2 զեկույցը կցվում է սույնին (հավելված №3)։

Ժամը 19-ի մոտ ուղիղ հեռախոսագծով Առանձին Հայկական կորպուսի շտաբի պետի միջոցով բերդի պարետին տրվեցին հետևյալ ցուցումները. 1) անհրաժեշտ է թույլ տալ թուրքական զորքերին՝ մոտենալ մինչև բերդային ամրություններից 2 կիլոմետր տարածության վրա, ընդ որում՝ պատվամենտյորների միջոցով ձեռք բերել թուրքերի համաձայնությունը՝ բերդի Հյուսիս-արևմտյան ճակատը (Ալեքսանդրապոլ տանող խճուղին ու երկաթուղին) թողնելու բաց. 2) թուրքերի հետ սահմանել բերդի էվակուացման ըստ հնարավորին երկար ժամկետ՝ պարտադիր պայման դնելով, որ

այդ հարցի լուծման ժամանակ իմացվեն և հաշվի առնվեն Անդրկովկասյան Կառավարության ցուցումները և 3) Բեղլու-Ահմադի ջոկատի զորամասերին հրաման է տրված ապրիլի 11-ի լույս 12-ի գիշերը հեռանալ Վեղին-Քոյ—Մաղրա դիծը և հենց այդտեղ էլ դիրք գրավել։

Ստացված ցուցումների հիման վրա բանակցությունները շարունակելու համար, ժամը 20-ի մոտ բերդից նորից դուրս եկավ գնդապետ Մորելի դեկավարությամբ պատվիրակությունը։

Նշված ժամանակաընթացքում քաղաքն այրվում էր շատ տեղերից, Կարսի հեծյալ գնդի հարյուրյակները չէին կարողանում դադարեցնել ոչ հրկիզումները, ոչ սկսված կողոպուտները։ Կայարանում տիրում էր խուճապը։ Ստիպված էինք լինում զենքի դիմել՝ գնացքները դասալիքներից մաքրելու համար։ Բանակցությունների համար գնացած գնդապետ Մորելը Քյազիմ-բեյին իր շտաբի հետ գտավ ոչ թե Վլադիկարսում, այլ Բեղլու-Ահմադում։

Քյազիմ-բեյը Վեհիբ-փաշայի անունից մեր պատվիրակությանը ներկայացրեց ռազմական գործողությունները դադարեցնելու հետևյալ պայմանները.

1. Կարս-չայի ձախափնյա ամրությունները հանձնել Թուրքական զորքերին մինչև ապրիլի 12 (25)-ի ժամը 12-ը, իսկ մյուս ամրությունները՝ մինչև նույն օրվա երեկոն։

2. Անդրկովկասյան կառավարության՝ Կարսի բերդի մնացած զորքերը՝ ապրիլի 12/25-ի ընթացքում, և

3. Մեր զորքերի հետքաշումը Արփաչայից այն կողմ՝ բերդից նրանց դուրս գալուց հետո երեք օրվա ընթացքում։

Իսկ ինչ վերաբերում է բերդի գույքի էվակուացման ժամկետին ու կարգին, ապա այդ առթիվ Քյազիմ-բեյն ապասում էր ցուցումների՝ Բարձրագույն Թուրքական Հրամանատարությունից։

Գույքի պահպանության համար Քյազիմ-բեյը հնարավոր էր համարում բերդում թողնել ռուսական ջոկատը, ընդ որում բերդում բոլոր մնացողներին երաշխավորվում էր անձի անվտանգություն ու գույքի անձեռնմխելիություն՝ անկախ մնացողների ազգությունից։

Գնդապետ Մորելը հայտնեց Քյազիմ-բեյին, որ անհրաժեշտ է քաղաքի և բերդի մաքրումը երկարաձգել մինչև երկու օր՝ Կարսում կուտակված բազմաքանակ գաղթականների էվակուացումը վերջացնելու համար, մասնավորապես՝ երկարաձգել Կարս-չայի ձախափնյա ամրությունների մաքրման ժամկետը մինչև ապ-

րիլի 12/25-ի երեկոն, իսկ մյուս ամրություններինը՝ մինչև ապրիլի 13/26-ը, որովհետև վերոհիշյալ ժամկետը բավական չէր համապատասխան կարգադրություններ տալու և դրանք կատարելու համար։ Քյազիմ-բեյը խոստացավ այդ հարցի առթիվ հարցում անել Բանակի Հրամանատարին, նախազգուշացնելով, որ եթե մինչև ապրիլի 12/25-ի լուսաբացը մենք պատասխան չտանք և չտրագրվեն Քյազիմ-բեյի առաջարկած պայմանները, ապա Թուրքական զորքերը կշարունակեն հարձակումը։

Գնդապետ Մորելը հետագա ցուցումներ ստանալու համար վերադարձավ Կարս, ուր և ժամանեց ապրիլի 12-ի ժամը 2-ի մոտ, ընդ որում, բանակցությունների մասին արձանագրություն այս անգամ էլ չկազմվեց։

Համարյա այդ նույն ժամանակ բերդի Պարետը կորպուսի Պարետից ստացավ հետևյալ հեռագիրը. «Հաղորդում եմ ձեզ Գլխավոր հրամանատարից հենց նոր ստացված հեռագիրը։ Քանի որ հնարավոր է, որ Կարսը լիակատար շրջապատման ենթարկվի և քանի որ բոլորովին պարզված չեն այն պայմանները, որ ստիպված կլինենինք ընդունել Կարսի էվակուացման նկատմամբ, որի հարցը լուծված է կառավարության կողմից, ուստի կատեգորիկ կերպով հրամայում եմ Ձեզ իրավունք վերապահել բերդի Պարետին՝ զորքերը Կարսից հետ քաշել դեպի Ալեքսանդրապոլ, վերջինիս ճանապարհը գրավել և ամրապնդել 12256 դիրքը։

Ապրիլի 11-ի ժամը 23 անց 55 րոպե։ Լեբեդինսկի։

Կարսի կայազորի զորքերի հետքաշման անհրաժեշտության ու ժամկետի հարցի լուծումն ամբողջովին թողնում եմ Ձեր հայեցողությանը։

Ապրիլի 12, 1—30 րոպե. 829—Նազարբեկով»։

Այս հեռագրի հիման վրա, ինչպես և հաշվի առնելով ընդհանուր իրադրությունը և բերդի զորքերի տրամադրությունը, բերդի Պարետը, որոշելով ընդունել բերդի հանձնման վերաբերյալ Քյազիմ-բեյի առաջարկած պայմանները, միաժամանակ հանձնարարեց գնդապետ Մորելին՝ մի անգամ ևս փորձ անել երկարաձգելու Կարս-չայի ձախափնյա ամրությունների հանձնումը մինչև ապրիլի 12/25-ի երեկոն, իսկ մյուսներինը՝ մինչև ապրիլի 13/26-ը։

Գնդապետ Մորելը բերդից դուրս եկավ պատվիրակության անդամների հետ...

Շարադրվածի վերջում Մաղրա կայարանից սկսեցին ստացվել տագնապալից լուրեր, որ Թուրքերը մարտ են մղում Մաղրա գյուղի

շրջանում և որ նրանց հարձակվող զորամասերը երևացել են արդեն կայարանի մոտակայքում...

Միաժամանակ Կարսից ավտոմեքենայով Բեղլու-Ահմադ ուղարկվեց մի սպա՝ հանձնարարություն ունենալով՝ մեր պատվիրակության միջոցով հայտնել Մազրայի իրադարձությունների մասին, որպեսզի Քյազիմ-բեյը կարգադրություն անի՝ ռազմական գործողություններն այստեղ դադարեցնելու մասին։

Ժամը 8-ի մոտ բերդի շտաբում հավաքվեցին զորամասերի հրամանատարներն ու վարչությունների պետերը, որոնց բերդի Պարետը բացատրեց իրադրությունը և բերդը մաքրելու մասին տվեց հետևյալ կարգադրությունները.

1) Բերդի գույքի էվակուացման համար Կարսում բերդի շտաբի Պարետի հետ միասին մնում է և բերդային վարչությունը։

2) Շարային զորամասերը ամրությունները մաքրելուց հետո կդրվեն գեներալ Արեշևի տրամադրության տակ։

3) Կարս-չայի ձախափնյա ամրությունները գրաված զորամասերը պատրաստ լինեն էվակուացման՝ մինչև ապրիլի 12/25-ի ժամը 12-ը, իսկ մյուս զորամասերը՝ մինչև նույն օրվա երեկոն։

4) Ամրությունների մաքրմանը ձեռնարկել հատուկ հրամանով։

5) Վագոնեն ու առաջավոր ջոկատները անհապաղ ետ դարձնել իրենց զորամասերը։

6) Բերդի գույքի պահպանության համար թողնել 2-րդ Հունական գնդի զորամասերը (վաշտը և հարյուրյակը)։

Սպասվում էր նույն նպատակի համար փոխգնդապետ Եֆրեմովի հրամանատարությամբ ռուսական կամավորական ջոկատի ժամանումը, որի մասին, բերդի Պարետի խնդրանքով, կարգադրություն էր արել գեներալ Արեշևը։ Հիշյալ ջոկատը, սակայն, այնպես էլ չժամանեց Կարս, որովհետև, Մազրայի մոտ զրազված լինելով մարտով, կարող էր բերդ մտնել միայն ապրիլի 12-ի ուշ երեկոյան, երբ նրա ներկայությունը, թուրքական զորքերի ժամանման կապակցությամբ, արդեն ավելորդ կլիներ։

Ժամը 9-ի մոտ Բեղլու-Ահմադից վերադարձավ այն սպան, որ ուղարկվել էր Մազրայի մոտ մարտական գործողությունները դադարեցնելու մասին բանակցություններ վարելու համար։ Այդ սպան բերդի պարետին բերեց ռազմական կոմիսար Արզումանովի գրությունը, որի մեջ հայտնվում էր, որ Կարս-չայ գետի ձախափնյա ամրությունների էվակուացման ժամկետ է սահմանված մինչև ապրիլի 12/25-ի ժամը 12-ը, իսկ մյուս ամրությունների մաքրման մասին բանակցությունները դեռ շարունակվում են։ Մինչ այդ գրության ստացումը հեռախոսավարները ինքնագլուխ կերպով թողել էին բերդի հեռախոսային ցանցը, ընդ որում կենտրոնական կայանն ամբողջովին շարքից դուրս էր եկել։

Կարս-չայի ձախափնյա ամրությունների անհապաղ մաքրելու մասին բերդի պարետի հրամանը, հատուկ նշանակված սպաների միջոցով, տրվեց համապատասխան զորամասին։

Այդ ընթացքում, առավոտյան ժամը 10-ի մոտ Բեղլու-Ահմադից վերադարձան գնդապետ Մորելն ու ռազմական կոմիսար Արզումանովը՝ մեր պատվիրակության անդամների հետ և բերեցին բերդի մաքրման հետևյալ պայմանները. 1) Կարս-չայի ձախափնյա ամրությունները պետք է մաքրվեն մինչև ապրիլի 12/25-ի ժամը 12-ը, իսկ մյուսները՝ մինչև ապրիլի 13/26-ի ժամը 17-ը, 2) բերդի գույքի էվակուացումը պետք է կատարվի Թուրքական և Անդրկովկասյան կառավարությունների փոխադարձ համաձայնության հիման վրա։

Քյազիմ-բեյը հրաժարվեց գրավոր շարադրել նշված պայմանները։

Մինչև ժամը 14/15-ը բոլոր ամրությունները մաքրվեցին զորքերից։

Համարյա այդ նույն ժամանակ զորքերն ինքնագլուխ կերպով թողեցին նաև բերդի մյուս ամրությունները։

Բերդից հեռացող զորամասերը անկարգ կերպով շարժվեցին դեպի Ալեքսանդրապոլ։

Բերդի Պարետի տրամադրության տակ մնացին միայն Հունական գնդի վաշտն ու հարյուրյակը։ Այդ զորամասերից պահակներ կանգնեցվեցին կենտրոնական վառոդանոցի մոտ, պիրոկսիլինի պահեստների մոտ, ինտենդանտական խանութների մոտ և հատուկ վախտի մոտ, որտեղ հավաքված էր ռազմագերիների մի մասը։

Արդեն ժամը 16-ին մոտ էր, բայց թուրքական զորքերը չէին ժամանում գրավելու ամրությունները։ Փրկություն կլիներ, եթե քրդական հրոսակախմբերը չներխուժեին քաղաքի բերդը Ջալալ-գաուրի լեռնաշղթայի և Պրոխլադնոյե գյուղի կողմից։

Ժամը 17-ի մոտ ռազմական կոմիսար Արզումանովը Հունական գնդի երեք սպաների հետ մեկնեց Բեղլու-Ահմադ այն նպատակով, որ հայտնի ամրությունները մեր կողմից թողնելու մասին, խնդրի կապ հաստատելու համար բերդ գործուղել մի թուրքական

ապա և արագացնել թուրքական կանոնավոր զորքերի ժամանումը Կարս։ Վերջինը անհրաժեշտ էր իբրև պաշտպանություն քրդերից։ Ժամը 20-ի մոտ Արզումանովը վերադարձավ Գլխավոր Շտաբի կապիտան Թալիաթ-բեյի հետ միասին, իսկ մոտ մի ժամից հետո Կարս ժամանեց 11-րդ հետևակային դիվիզիայի նգերական գումարտակը, որը և տեղավորվեց բերդաձորի հյուսիսային մասում գտնվող զորանոցում։ Համարյա նույն ժամանակ թուրքական զորքերը դրավեցին ձախափնյա ամրությունների մի մասը։ Այդ ընթացքում քաղաքից հայ բնակչությունը հեռանում էր համարյա ամբողջությամբ, մնում էր միայն մալականների, էստոնացիների, ռուսների և հույների մի քանի ընտանիք։ Իսկ կայարանի մոտ կուտակվել էր ահագին ժողովուրդ, որ ցանկանում էր օգտվել գնացքներից։

Հրդեհները քաղաքում և կայարանի շրջանում ուժեղացան։ Կայարանի մոտակայքում այրվում էին ինտենդանտական խանութը և հրետանային պաշարների պլատֆորմը։ Ամենուրեք վխտում էին կողոպտիչներն ու հրձիգները։ Կարսի բերդային զնդի հարյուրյակները՝ զնդի հրամանատար փոխգնդապետ Բեկ-Փիրումովի գլխավորությամբ, որոնց վրա էր դրված քաղաքում ու կայարանում կարգի պահպանությունը, ի վիճակի չէին կատարելու առաջադրված խնդիրը։ Կայարանում հրացանաձգություն էր գնում, որովհետև դասալիքներն ու գաղթականները փորձում էին կռվով վերցնել վագոնները։

Ապրիլի 12/25-ի ժամը 21-ի մոտ բերդի Պարետը Առանձին Հայկական (№ 518) կորպուսի Պետից ստացավ հեռագիր, որով Անդրկովկասյան կառավարության կողմից կարգադրություն էր արվում այն մասին, որ մեր զորքերը թողնեն Կարսի մարզը մինչև Արփա-չայ գետը, և այն մասին, որ կառավարությունը հարց է հարուցել Թուրքիայի առաջ մեկամսյա ժամկետ տալու Կարսի ամբողջ գույքի էվակուացման համար։ Այդ հեռագիրն ստացվելուց հետո Կարսի հեռագրային կապը Ալեքսանդրապոլի հետ շուտով ընդհատվեց և այլևս չվերականգնվեց։

Ընդհանուր առմամբ ապրիլի 12-ի լույս 13-ի գիշերը բերդում հանգիստ անցավ։

Մինչև ապրիլի 13-ի լուսաբացը շարունակվում էր գաղթականների և քաղաքից ու բերդից հեռացողների տեղավորումը վագոններում։ Ժամը 6-ի մոտ գնացքն արդեն բեռնված, պատրաստ էր մեկնելու։ Այդ ժամանակ կայարանի և գնացքի վրա կրակ բացին թուրքական ոչ մեծ զորամասեր, որոնք երկաթուղուն էին մոտեցել արևելյան կողմից։ Հրացանային կրակի տակ գնացքը շարժվեց դեպի Մաղրա կայարանը, ուր և հասավ՝ կորցնելով մի քանի մարդ՝ սպանված ու վիրավոր։ Կարսի կայարանի ճանապարհներում մնաց միայն երեք բեռնված վագոն և մեկ-երկու ցիստեռն։

Այդպիսով, մինչև ապրիլի 13/26-ի առավոտյան ժամը յոթը ողջ Կարսի բերդն ու քաղաքը փաստորեն անցան թուրքական զորքերի ձեռքը։

Ժամը 9-ի մոտ քաղաք ժամանեց 11-րդ թուրքական հետևակային դիվիզիայի Պետ գնդապետ Ջավիդ-բեյը, որ նշանակված էր բերդի պետի պաշտոնակատար, իսկ ժամը 12-ի մոտ բերդ եկավ թուրքական զորքերի խմբի հրամանատար գնդապետ Քյազիմ-բեյը (36-րդ դիվիզիայի պետ)։ Բերդի Պարետի տանը կայացավ խորհրդակցություն, որին ներկա էին՝ բերդի Պարետ գեներալ-մայոր Դևեր, գնդապետ Մորելը, ռազմական կոմիսար Արզումանովը և ուրիշներ, բերդի Շտաբի Պետ կապիտան Ժիդկոն, թուրքական կողմից՝ Քյազիմ-բեյը, շտաբի մի քանի սպաների և թարգմանչի հետ։ Խոսակցությունը տարվում էր ֆրանսերեն լեզվով։ Իբրև թարգմանիչ ծառայում էր գնդապետ Մորելը։ Այդ խորհրդակցության ժամանակ էլ Քյազիմ-բեյը ներկայացրեց Վեհիբ-փաշայի հեռագիրը (թուրքերեն), որի մեջ նշվում էր, որ Թուրքական կառավարությունը չի թույլատրում Կարսից հանել ոչ գույքը, ոչ էլ փոխադրամիջոցները։ Նշված հեռագրի պատճենը չտրվեց բերդի Պարետին՝ չնայած վերջինիս կողմից բազմիցս արված խընդրանքներին։ Առաջարկելով սպաներին ըստ ցանկության մնալ Թուրքիայում կամ թե Թուրքական կառավարության հաշվին Ռուսաստան մեկնել Ստամբուլի կամ Տրապիզոնի վրայով, Քյազիմ-բեյը նշեց, որ իրեն լավ հայտնի են այն հալածանքները, որոնց ենթարկվում են սպաները Ռուսաստանում։ Իսկ Ալեքսանդրապոլի վրայով Անդրկովկասի սահմանները մեկնել ցանկացողներին բոլորին Քյազիմ-բեյը Թուրքական Կառավարության անունից երաշխավորեց անձի և գույքի անվտանգություն՝ անկախ ազգությունից։

Իսկ այն աստիճանավորների ու հիմնարկների վերաբերյալ, որոնք բերդի Պարետի կողմից Կարսում էին թողնվել բերդի գույքի էվակուացման համար, Քյազիմ-բեյը խոստացավ նրանց թողնել բոլոր սահմանված սպառազինությունը և փոխադրամիջոցները, ինչպես՝ ձիերը, կառքերը և ավտոմեքենաները։

Վեհիբ-փաշայի վերոհիշյալ կարգադրության պատճառով, որ

արգելում էր բերդի գույքի էվակուացումը, Պարետի և բերդային վարչության աստիճանավորների հետագա մնալը Կարսում դառնում էր ավելորդ, դրա համար բերդի Պարետը, հնարավորություն չունենալով ցուցումներ ստանալու վերևից, որոշում է մոտակա օրը երթով մեկնել Ալեքսանդրապոլ։

Ի միջի այլոց, Կարսում մնացած սպաներից և զինվորներից ոչ ոք չցանկացավ Ռուսաստան մեկնել Ստամբուլի կամ Տրապիզոնի վրայով և միայն Հունական գնդի երկու սպա ու քառասուն զինվոր ցանկություն հայտնեցին վերադառնալու իրենց հայրենիքը, Օլթի—Արդահանի և Կաղզվանի շրջանները։

Իր որոշման մասին բերդի Պարետը կապիտան Թալիաթ-բեյի միջոցով տեղեկացրեց Քյազիմ-բեյին։

Ապրիլի 14/27-ի երեկոյան գեներալ-մայոր Դեևի մոտ ժամանեց Ջավիդ-բեյը և հայտնեց թուրքական հրամանատարության հետևյալ կարգադրությունը. 1) Կարսում մնացած բոլոր սպաների ու զինվորների համար հատկացվելու են առանձին տներ, որտեղ և նրանք կմնան հսկողության տակ, 2) Ամբողջ սպառազինությունը պետք է հանձնվի, միայն սպաներին թույլատրվում է իրենց մոտ պահել թուր ու ատրճանակ։

Ապրիլի 15/28-ին բերդի պարետը Ջավիդ-բեյից ստացավ ծանուցում, որ 1) բոլոր ռուս, հույն և հայ զինվորներն ու սպաները պետք է ապրիլի 17/30-ին թողնեն Կարսը և խճուղիով մեկնեն Ալեքսանդրապոլ (Գյումրի), 2) ավտոմեքենաները պետք է թուրքերին հանձնվեն Կարսում, բացի մեկից, որը կմնա բերդի Պարետի տրամադրության տակ, 3) հեծնելու ձիերը, կառքերն ու սայլերը թույլատրվում է օգտագործել միայն մինչև սահմանը, որտեղ դրանք էլ կվերցվեն։ Հետագա բանակցությունների միջոցով հաջողվեց բոլոր սպաների ու աստիճանավորների համար պահել հեծնելու ձիեր (ընդամենը 193), որոնք թույլատրվում էր անցկացնել սահմանը, իսկ զինվորներին թույլատրվում էր իրենց մոտ պահել ընդամենը 130 հրացան փամփուշտներով։

Ջավիդ-բեյի համաձայնությամբ կազմված մարշրուտով բերդի Պարետը զորասյան հետ ապրիլի 17/30-ի ժամը 11½-ին դուրս եկավ Կարսից դեպի Ալեքսանդրապոլ և շարժվեց Պրոխլադնոյե գյուղի խճուղիով։ Զորասյան կազմում կար մոտ 1100 մարդ և մոտ 400 ձի, որոնցից 150-ը՝ հեծնելու։ Զորասյան մեջ սպաներն ու աստիճանավորները կազմում էին մոտ 190 հոգի, զինվորները՝ մինչև 500, ապա՝ գաղթականները, հույները և էստոնացիները,

սպաների ու աստիճանավորների ընտանիքները, զորասյան մեջ հայերը կազմում էին մինչև 50 հոգի։

Առաջին գիշերումը եղավ Ռոմանովո գյուղում, երկրորդը՝ Օդինցովո գյուղում։ Նշված երկու կետերն էլ բնակիչները թողել էին։ Զորասյանն ուղեկցում էր 11-րդ թուրքական դիվիզիայի եզերական գումարտակի մի վաշտ։ Ճանապարհին առանձին դեպքեր չպատահեցին։ Ճանապարհին խճուղու մոտ նկատվեց գաղթական հայերի, այդ թվում մի քանի կնոջ, մոտ 10 դիակ։ Տեղեկություններ կային, որ Մաղրա գյուղի մոտ եղել են մի քանի հարյուր հայերի դիակներ, բայց քանի որ զորասյունը շարժվում էր նշված կետից հեռու, ուստի այդ տեղեկությունները չստուգվեցին։ Զորասյունը Օդինցովո մտավ ապրիլի 19-ին (մայիսի 1-ին), 5-րդ հետևակային դիվիզիայի մի գումարտակի ուղեկցությամբ, ընդ որում նշված դիվիզիայի շտաբում (Կզըլ-Ջախչախ գյուղում) բերդի Պարետը որոշեց սահմանը (Արփա-չայ գետը) անցնելու պայմանները։ Զորասյունը, չհասած հինդ վերստ մինչև Արփա-չայի երկաթուղային կամուրջը, պետք է կանգ առնի, այստեղ հետ են վերցվում բոլոր սայլերը և ավելորդ ձիերը (183 հեծնելու ձիերից բացի եղածները), ապա հեծյալները խճուղիով մեկնում են Ալեքսանդրապոլ, իսկ մյուսներն սպասում են մինչև Ալեքսանդրապոլից գնացք ժամանի։ Ապրիլի 20-ի (մայիսի 2-ի) ընթացքում զորասյան ամբողջ կազմը և նրա բեռները գնացքներով փոխադրվեցին Ալեքսանդրապոլ։ Թուրքական բանակի սպաներին ու զինվորներին արված հարցումներից պարզվեց, որ Կարսի բերդի դեմ գործելիս են եղել 5-րդ, 9-րդ և 36-րդ դիվիզիաները, գնդի կազմը՝ 1000—1200 սվին, յուրաքանչյուր գնդում՝ 4 լեռնային թնդանոթ և 12 գնդացիր։ Նշված զորքերի կազմում եղել են մի քանի կանոնավոր հեծյալ գնդեր, որոնցից մեկը՝ Կուսովի (օսեթ) հրամանատարությամբ։ Բացի դրանից, թուրքերին օգնելիս են եղել քրդերի հեծյալ ու հետիոտն հրոսակախմբերը, ընդհանուր թվով՝ 3—4 հազար հոգի։ Թուրք սպաներն ու զինվորները քրդերին վերաբերվում էին խիստ թշնամաբար և ասում էին, որ բոլոր քրդերին հարկավոր է մորթել...

Առանձին Հայկական կորպուսի հրամանատարի կարգադրությամբ Ալեքսանդրապոլում թողնվեցին Կարսի բերդի հրետանու, սակրավորների վաշտի և բերդի հեռագրատան բոլոր աստիճանավորները, ինչպես և 2-րդ Հունական հետևակային գնդի զորամասերը։ Իսկ բերդի Պարետը բերդի շտաբի, ինժեներական ու ինտենդանտական վարչությունների հետ ապրիլի 22-ին առանձին էշե-

լոնով մեկնեց Թիֆլիս, ուր ժամանեց մայիսի 6-ին (նոր տոմարով)...

Թիֆլիսում բերդի պարեսը, Կովկասյան ռազմաճակատի գլխավոր հրամանատարից ստացած ցուցումների համաձայն, ձեռնամուխ եղավ Կարսի բերդի հիմնարկների ու զործերի լիկվիդացմանը։

Հավելված՝ 1) Ամբողջ բերդի համար տրված № 1 հրամանը, 2) Թուրքական զորքերի հրամանատարի նամակի պատճենը, 3) Գնդապետ Մորելի № 2 զեկույցը, 4) Թուրքական իշխանություններին հետ եղած նամակագրության թարգմանությունը։

Բերդի պարեսի պաշտոնակատար՝
Գլխավոր շտաբի գնդապետ-մայոր՝
ստորագրություն (Դեև)

Շտաբի պետի փոխարեն
Գլխավոր շտաբի կապիտան՝
ստորագրություն (Ֆալիլեև)

Իսկականի հետ ճիշտ է՝
Վրաստանում Հայաստանի Լիմկ ներկ.
քարտուղար (ստորագրություն)

ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 45, գ. 42, թ. 27—37։

№ 16

ПЕРЕВОД ПИСЬМА ПРЕДСЕДАТЕЛЯ ГЕРМАНСКОЙ ДЕЛЕГАЦИИ НА ИМЯ ПРЕДСЕДАТЕЛЯ ЗАКАВКАЗСКОЙ ДЕЛЕГАЦИИ

От 19 мая 1918 года, № 172

Батумские переговоры не подвигаются вперед и сношения, имевшие место между оттоманскими и закавказскими представителями, не имели до сих пор успеха (или не пришли к концу). Так как, однако, в интересах всех сторон достигнуть как можно скорее результата, то я имею честь предложить Вам, г. министр, мои добрые услуги в качестве посредника. Я прошу Вас не отказать мне в сообщении официальным порядком,

готова ли Закавказская делегация принять мое предложение, и я пользуюсь этим случаем, чтобы возобновить, г. министр, уверение в моем высоком уважении.

подп. Х. Ф. Лоссов
Верно: (подпись)

ЦГИА Арм. ССР, ф. 200, оп. 1, д. 11, л. 22.

№ 16

ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԴԱՀԻՆ ՈՒՂՂՎԱԾ՝ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԴԱՀԻ ՆԱՄԱԿԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1918 թ. մայիսի 19-ի, № 172

Բաթումի բանակցություններն առաջ չեն շարժվում, և օսմանյան ու անդրկովկասյան ներկայացուցիչների միջև եղած հարաբերությունները մինչև այժմ հաջողություն չեն ունեցել (կամ չեն վերջացել)։ Քանի որ, սակայն, երկու կողմերի շահերն էլ պահանջում են արդյունքի հասնել որքան կարելի է շուտ, ապա ես պատիվ ունեմ առաջարկելու Ձեզ, պ. մինիստր, իմ, իբրև միջնորդի, բարի ծառայությունները։ Ես խնդրում եմ Ձեզ չմերժել ինձ հայտնելու պաշտոնական կարգով՝ պատրա՞ստ է արդյոք Անդրկովկասյան պատվիրակությունը ընդունելու իմ առաջարկությունը, և ես օգտվում եմ այս առիթից՝ վերականգնելու, պ. մինիստր, իմ բարձր հարգանքի հավաստիքը։

Ստորագր. Ֆ. Լոսով
Ճիշտ է (ստորագրություն)

ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 11, թ. 22։

№ 17

СООБЩЕНИЕ О ГРАНИЦАХ МЕЖДУ ОТТОМАНСКОЙ ИМПЕРИЕЙ И ЗАКАВКАЗСКОЙ РЕСПУБЛИКОЙ, УСТАНОВЛЕННЫХ НА БАТУМСКОЙ КОНФЕРЕНЦИИ

Эривань, Командиру корпуса

13 часов 30 мин. адъютант Андраника передал по телефону полученное им из Карса письмо ген. Корганова, которое передаю дословно: «Дежурный генерал штаба Закавказской армии, член военной линии при Закавказской армии, член военной миссии при Закавказской делегации по ведению мирных переговоров 2-го июня 1918 года, № 17, гор. Карс.

Командиру Армянского корпуса

Сего числа в 13 часов дня мною получено из Батуми по телефону от Закавказской мирной делегации уведомление о заключении мирного договора и приказание для передачи Вашему превосходительству: 1. Границы между Османской империей и Закавказской Республикой устанавливаются: Восточная граница Ахалкалакского уезда, далее—прямая линия до станции Агбулаг, далее—прямая линия до вершины горы Алагез, далее—прямая линия до местечка Вагаршапат, причем местечко Вагаршапат остается в пределах территории республики, далее—прямая линия, идущая параллельно железной дороге таким образом, что железная дорога остается в пределах Оттоманской Империи, далее—река Арпа, далее —река Аракс. Подробности границ будут определены дополнительно на месте. 2. На время всеобщей войны Оттоманское Правительство имеет право пользоваться для военных перевозок всякого рода железнодорожной сетью Закавказской республики, а также шоссейными и иными грунтовыми дорогами. 3. Оттоманским правительством разрешается вернуться на свои места всем беженцам, с отходящей к Оттоманской империи территории Закавказской республики. 4. Устанавливается обмен военнопленных. 5. Закавказская республика имеет право содержать в мирное время определенное количество войсковых частей, при чем расположение этих частей и национальный состав их будут определены в ближайшие дни.

Во исполнение Вашему превосходительству надлежит: 1. Немедленно отдать приказ о прекращении всеми частями, находящимися в Вашем подчинении, военных действий против императорской Оттоманской армии. 2. Войска вверенного корпуса ни в коем случае не должны переходить указанных в пункте первом границ. 3. При всяком передвижении оттоманских частей по району вверенного Вам корпуса, согласно пункту второму, части вверенного Вам корпуса ни в коем случае не имеют права начинать против них враждебных действий. Надлежит иметь ввиду, что в ближайшее время возможно передвижение оттоманских частей через Дилижан в Казах. 4. Во избежание всяких последствий необходимо поставить армянское население района через лиц, пользующихся влиянием, в известность о действиях вверенного Вам корпуса, во избежание всякого рода враждебных действий против войсковых Оттоманских частей... 5. Указанные распоряжения немедленно должны быть переданы в Эривань. 6. Для разрешения всякого рода вопросов, вытекающих из мирного договора об условиях, как мною указано в пунктах 1-4, Вам надлежит войти в возможно кратчайший срок в надлежащую связь с Командующим группой в Карсе, с его превосходительством, генералом Вегиб-пашой через Караклис. Я испрашиваю разрешение об отъезде в Батум, куда и намерен выехать 3-го июня.

Член военной миссии при делегации
Закавказского Правительства
Генерал-майор Корганов

Во исполнение указанного в пункте шестом полагал бы необходимым немедленно образовать в Эривани комиссию, которая по соглашению с Вегиб-пашой выработает подробные условия безотлагательного отвода как наших, так и турецких войсковых частей за установленную границу. 13 часов 45 м., №839.

Вышинский

ЦГИА Арм. ССР, ф. 57, д. 582, л. 15.

№ 17

ՀԱՂՈՐԴՈՒՄ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԲԱԹՈՒՄԻ ԿՈՆՖԵՐԵՆՑԻԱՅՈՒՄ ՈՐՈՇՎԱԾ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան, կարպուախ հրամանատարին

Ժամը 13 անց 30 րոպեին Անդրանիկի թիկնապահը հեռախոսով հաղորդեց Կարսից գեն. Կորգանովից հենց նոր իր ստացած նամակը, որը ես բառացի վերահաղորդում եմ. «Անդրկովկասյան բանակի շտաբի հերթապահ գեներալ, Անդրկովկասյան բանակին կից ռազմական գծի անդամ, հաշտության բանակցությունների Անդրկովկասյան պատվիրակությանը կից ռազմական միսիայի անդամ. 1918 թ. հունիսի 2, № 17, քաղ. Կարս։

Հայկական կորպուսի հրամանատարին

Այսօր ցերեկվա ժամը 13-ին ես հեռախոսով Բաթումից, Անդրկովկասյան հաշտության պատվիրակությունից ստացա ծանուցում՝ հաշտության պայմանագիր կնքվելու մասին և հրաման՝ Ձերդ գերազանցությանը հաղորդելու համար. 1. Օսմանյան կայսրության և Անդրկովկասյան հանրապետության միջև սահմաններ որոշվում են. Ախալքալաքի գավառի արևելյան սահմանը, այնուհետև՝ ուղիղ գիծը մինչև Աղբուլաղ կայարանը, այնուհետև՝ ուղիղ գիծը մինչև Ալագյազ սարի գագաթը, այնուհետև՝ ուղիղ գիծը մինչև Վաղարշապատ ավանը, ընդ որում, Վաղարշապատ ավանը մնում է հանրապետության տերիտորիայի սահմաններում, այնուհետև՝ երկաթուղուն զուգահեռ գիծը, ընդ որում, երկաթուղին մնում է Օսմանյան կայսրության սահմաններում, այնուհետև՝ Արփա գետը, այնուհետև՝ Արաքս գետը։ Սահմանների մանրամասնությունները կորոշվեն լրացուցիչ կարգով, տեղում։ 2. Ընդհանուր պատերազմի ժամանակամիջոցում Օսմանյան կառավարությունն իրավունք ունի ռազմական փոխադրումների համար օգտվել Անդրկովկասյան հանրապետության ամեն տեսակի երկաթուղային ցանցից, ինչպես նաև խճուղիներից և այլ ցամաքային ճանապարհներից։ 3. Օսմանյան կառավարությունը Անդրկովկասյան հանրապետության՝ Օսմանյան կայսրությանն անցած տերիտորիաներից բոլոր գաղթականներին թույլատրում է վերադառնալ իրենց տեղերը։ 4. Սահմանվում է ռազմագերիների փոխանակություն։ 5. Անդրկովկասյան հանրա-

պետությունն իրավունք ունի խաղաղ ժամանակ պահել որոշակի քանակով զորամասեր, ընդ որում, այդ զորամասերի տեղակայումը և ազգային կազմը կորոշվեն առաջիկա օրերին։

Ձերդ գերազանցության կողմից իրագործման ենթակա են. 1. Անհապաղ հրաման տալ Ձեզ ենթարկվող բոլոր զորամասերին՝ դադարեցնելու ռազմական գործողություններն ընդդեմ կայսերքական օսմանյան բանակի։ 2. Ձեր իրավասությանը հանձնված կորպուսի զորքերը ոչ մի դեպքում չպետք է անցնեն առաջին կետում նշված սահմանները։ 3. Ձեր իրավասությանը հանձնված կորպուսի շրջանով օսմանյան զորամասերի ամեն տեսակի տեղափոխության դեպքում՝ երկրորդ կետի համաձայն, Ձեր իրավասությանը հանձնված կորպուսի զորամասերը ոչ մի դեպքում իրավունք չունեն նրանց դեմ սկսել թշնամական գործողություններ։ Հարկ է նկատի ունենալ, որ հենց մոտակա ժամանակ հնարավոր է օսմանյան զորամասերի տեղափոխությունը Ղազախ՝ Դիլիջանի վրայով։ 4. Զանազան հետևանքներից խուսափելու համար, անհրաժեշտ է ազդեցիկ անձնավորությունների միջոցով տեղյակ պահել շրջանի հայ բնակչությանը Ձեր իրավասությանը հանձնված կորպուսի գործողությունների մասին, որպեսզի ոչ մի թշնամական գործողություն չլինի ընդդեմ օսմանյան զորամասերի... 5. Նշված կարգադրությունները պետք է անհապաղ հաղորդվեն Երևան։ 6. Հաշտության պայմանագրից բխող ամեն տեսակի հարցեր լուծելու համար ինչպես իմ կողմից նշված է 1—4 կետերում, Դուք պետք է բան հնարավորին կարճ ժամկետում պատշաճ կապի մեջ մտնեք Կարսի զորախմբի հրամանատարի հետ, նորին գերազանցության Վեհիբ-փաշայի հետ՝ Ղարաքիլիսայի վրայով։ Ես թույլտվություն կխնդրեմ Բաթում գնալու համար, ուր մտադիր եմ մեկնել հունիսի 3-ին։

Անդրկովկասյան կառավարության պատվիրակությանը կից Ռազմական միսիայի անդամ գեներալ-մայոր Կորգանով

Ի կատարումն վեցերորդ կետում նշվածի, ես անհրաժեշտ կհամարեի Երևանում անհապաղ կազմել մի Հանձնաժողով, որը Վեհիբ-փաշայի համաձայնությամբ մանրամասն պայմաններ կմշակեր՝ ինչպես մեր, այնպես էլ թուրքական զորամասերը որոշված սահմանից ետ քաշելու համար։ Ժամը 13 անց 45 րոպե, № 839։

Վիշինսկի

ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 57, գ. 582, թ. 15։

ОБРАЩЕНИЕ ДЕЛЕГАЦИИ АРМЯНСКОГО НАЦИОНАЛЬНОГО СОВЕТА К ПРЕДСЕДАТЕЛЮ ОТТОМАНСКОЙ ДЕЛЕГАЦИИ

Батум, 30 мая 1918 г.

Господин председатель!

Нотой от 26 мая под №310 Ваше Высокопревосходительство соблаговолило требовать от Председателя Закавказской республики дать ему в 72 часовой срок ответ на условия мира и дружбы, предложенные Вами. Вследствие расчленения означенной Республики на независимые части, эти требования, по устному объяснению Вашего Высокопревосходительства должны считаться обращенными к каждой из этих частей в отдельности, причем срок для ответа был продлен на 24 часа.

Делегация Армении, наделенная полномочиями Армянского Национального Совета, объявившего себя органом верховной власти, настоящим имеет честь сообщить Вашему Высокопревосходительству, что она принимает проект договора мира и дружбы, предложенный Вами и ввиду согласия, данного устно Высокопревосходительством, она готова на этой основе начать переговоры для немедленного установления окончательного полного соглашения.

Благоволите принять, Господин председатель, уверения нашего глубокого уважения.

Председатель Делегации

ЦГИА Арм. ССР, ф. 68(200), д. 79, л. 2.

ՀԱՅԿԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՄԸ ՕՍՄԱՆՅԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻՆ

Բաթում, 1918 թ. մայիսի 30

Պարոն նախագահ.

Ձերդ Բարձր գերազանցությունը մայիսի 26-ի № 310 նոտայով բարեհաճել է պահանջել Անդրկովկասյան Հանրապետության նախագահից՝ 72-ժամյա ժամկետում պատասխան տալ հաշտության ու բարեկամության Ձեր առաջարկած պայմանների մասին։ Քանի որ հիշյալ հանրապետությունը բաժանվել է անկախ մասերի, այդ պահանջները, ըստ Ձերդ Բարձր գերազանցության բանավոր բացատրության, պետք է համարվեն ուղղված այդ մասերից յուրաքանչյուրին առանձին, ընդ որում, պատասխանի ժամկետը երկարաձգվել է 24 ժամով։

Հայաստանի պատվիրակությունը, օժտված լիազորություններով Հայկական Ազգային Խորհրդի, որը իրեն գերագույն իշխանության օրգան է հայտարարել, սույնով պատիվ ունի հայտնելու Ձերդ Բարձր գերազանցությանը, որ նա ընդունում է հաշտության ու բարեկամության Ձեր առաջարկած նախագիծը և, նկատի ունենալով Ձերդ Բարձր գերազանցության տված բանավոր համաձայնությունը, նա պատրաստ է այդ հիման վրա բանակցություններ սկսել՝ անհապաղ վերջնական լիակատար հաշտություն կնքելու համար։

Բարեհաճեցեք ընդունել, Պարոն նախագահ, մեր խորին հարգանաց հավաստիքները։

Պատվիրակության նախագահ

ՀՍՄՌ ԿՊՊԱ, ֆ. 68(200), գ. 79, թ. 2։

№ 19

ОБРАЩЕНИЕ МИРНОЙ ДЕЛЕГАЦИИ АРМЕНИЙ К ПРЕДСЕДАТЕЛЮ ОТТОМАНСКОЙ ДЕЛЕГАЦИИ ОТНОСИТЕЛЬНО ОБМЕНА ДИПЛОМАТИЧЕСКИМИ ПРЕДСТАВИТЕЛЯМИ

Батум, 3 июня 1918 г.

Ваше Превосходительство!

Мирная Делегация Армении, в связи с заключением договора о мире и дружбе между Оттоманской империей и Арменией, имеет честь предложить следующее:

До ратификации упомянутого договора, необходимо, с целью восстановления дружественных отношений между Оттоманской империей и Арменией, а также предупреждения случайных недоразумений, отправить в Эривань одного дипломатического представителя и одного военного атташе со стороны Оттоманской империи и получить разрешение Оттоманского правительства иметь при штабе Его Превосходительства Вегиб-паши одного военного атташе и в Константинополе—дипломатического представителя армянского правительства.

Председатель Делегации:
Члены:

ЦГИА Арм. ССР, ф. 68(200), д. 79, л. 5.

№ 19

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՄԸ ՕՍՄԱՆՅԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԴԱՀԻՆ՝ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐ ՓՈԽԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Բաթում, 1918 թ. հունիսի 3

Ձերդ Գերազանցություն.

Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը, Օսմանյան կայսրության և Հայաստանի միջև հաշտության ու բարեկամության պայմանագիր կնքվելու կապակցությամբ, պատիվ ունի առաջարկելու հետևյալը.

Մինչև հիշյալ պայմանագրի վավերացումը, Օսմանյան կայսրության և Հայաստանի միջև բարեկամական հարաբերությունները վերականգնելու, ինչպես նաև պատահական թյուրիմացությունները կանխելու նպատակով, անհրաժեշտ է Երևան ուղարկել մի դիվանագիտական ներկայացուցիչ և մի ռազմական կցորդ՝ Օսմանյան կայսրության կողմից, և ստանալ Օսմանյան կառավարության թույլտվությունը՝ ունենալու նորին Գերազանցության Վեհիր-փաշայի շտաբին կից մի ռազմական կցորդ և Կոստանդնուպոլսում մի դիվանագիտական ներկայացուցիչ՝ Հայկական կառավարության կողմից։

Պատվիրակության նախագահ.
Անդամներ.

ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 68(200), գ. 79, թ. 5։

№ 20

ОБРАЩЕНИЕ МИРНОЙ ДЕЛЕГАЦИИ АРМЕНИИ К ГЛАВНОКОМАНДУЮЩЕМУ ТУРЕЦКОЙ АРМИЕЙ НА КАВКАЗСКОМ ФРОНТЕ ВЕГИБ-ПАШЕ О ВЫПОЛНЕНИИ ОБЯЗАТЕЛЬСТВ, ВЗЯТЫХ ПО БАТУМСКОМУ ДОГОВОРУ.

Батум, 3 июня 1918 г

Господин Главнокомандующий!

Мирная Делегация Армении, в результате личных переговоров, имеет честь просить Ваше Превосходительство подтвердить и дать необходимые распоряжения о следующем:

1) Вследствие подписания договора о мире и дружбе между Оттоманской империей и Арменией, оттоманские войска должны покинуть территорию Армении в двухнедельный срок, начиная с сегодняшнего дня. Армянские войска должны вступить в Армению в тот же срок.

2) Разрешается армянским военным частям, находящимся в Нахичевани и Джульфе, а также частям, прибывающим

из Персии в Джульфу, проехать в Эривань со своим оружием и припасами по железной дороге, причем оттоманские власти окажут в этом содействие, представив в их распоряжение или целые поезда, прибывшие из Джульфы или простые вагоны к этим поездам.

3) За все время всеобщей войны оттоманским войскам представлялся беспрепятственный проход по армянским шоссейным дорогам. Такое же право беспрепятственного проезда по оттоманским железным и шоссейным дорогам представляется армянским войскам.

В обоих случаях начальники частей предупредят своевременно соответствующие власти о предстоящем проходе войск, чтобы могли быть даны необходимые распоряжения для беспрепятственного проезда.

4) Правительство Армении имеет право держать под оружием за все время всеобщей войны одну единственную дивизию; места, где должны стоять части этой дивизии во время всеобщей войны, будут установлены нижеупомянутой комиссией.

5) Обмен турецких и армянских военнопленных временно совершится на основе конвенции, уже заключенной между Вашим Правительством и Военной миссией Закавказской делегации, копию которой просим прислать нам.

Дальнейшие условия обмена военнопленных должны быть определены нижеупомянутой комиссией.

6) В целях составления обстоятельного проекта для реализации вышеуказанного, будет организована в городе Эривани специальная Комиссия в составе турецких и армянских офицеров, в равном количестве, согласно указаниям Вашего Превосходительства генерала Назарбекова.

Председатель Делегации:
Члены:

ЦГИА Арм. ССР, ф. 68(200), д. 79, л. 3.

№ 20

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՄԸ ԿՈՎԿԱՍՅԱՆ ՌԱԶՄԱՃԱԿԱՏԻ ԳԼԽԱՎՈՐ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ ՎԵՀԻԲ-ՓԱՇԱՅԻՆ՝ ԲԱԹՈՒՄԻ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՍՏԱՆՁՆԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Բաթում, 1918 թ. հունվարի 3

Պարոն Գլխավոր հրամանատար.

Հայաստանի հաշտության պատվիրակությունը, նկատի առնելով անձնական բանակցությունները, պատիվ ունի խնդրելու Ձերդ գերազանցությանը, որ նա հավատա և անհրաժեշտ կարգադրություններ անի հետևյալի մասին.

1) Ըստ Օսմանյան կայսրության և Հայաստանի միջև կնքված հաշտության և բարեկամության պայմանագրի, օսմանյան զորքերը երկու շաբաթվա ընթացքում պետք է թողնեն Հայաստանի տերիտորիան՝ այսօրվանից սկսած։ Հայկական զորքերը պետք է մրցանեն Հայաստան այդ նույն ժամանակամիջոցում։

2) Նախիջևանում և Ջուլֆայում գտնվող, ինչպես նաև Պարսկաստանից Ջուլֆա եկող հայկական զորամասերին թույլատրվում է երկաթուղով անցնել Երևան իրենց զենքերով և զինամթերքով, ընդ որում օսմանյան իշխանությունները դրանում ցույց կտան աջակցություն՝ նրանց տրամադրության տակ դնելով կա՛մ Ջուլֆայից եկող ամբողջ գնացքներ, կա՛մ այդ գնացքներում հատուկ վագոններ։

3) Ընդհանուր պատերազմի ամբողջ ժամանակաշրջանում օսմանյան զորքերին իրավունք է տրվում անարգել անցնելու հայկական խճուղիներով։ Այդպիսի անարգել անցման իրավունք էլ տրվում է հայկական զորքերին՝ օսմանյան երկաթուղիների և խճուղիների վրա։

Երկու դեպքում էլ զորամասերի պետերը ժամանակին կնախազգուշացնեն համապատասխան իշխանություններին՝ զորքերի առաջիկա անցման մասին, որպեսզի կարելի լինի տալ անարգել անցման համար անհրաժեշտ կարգադրությունները։

4) Հայաստանի կառավարությունը իրավունք ունի ընդհանուր պատերազմի ամբողջ ժամանակամիջոցում զենքի տակ պահել միայն մեկ դիվիզիա։ Այն վայրերը, որտեղ կտեղավորվեն այս դիվիզիայի զորամասերը ընդհանուր պատերազմի ամբողջ ժամանակամիջոցում, կորոշվեն ներքոհիշյալ հանձնաժողովի կողմից։

5) Թուրք և հայ ռազմագերիների փոխանակությունը ժամանակավորապես կկատարվի Զերդ գերազանցության և Անդրկովկասյան պատվիրակության ռազմական միսիայի միջև արդեն կնքված կոնվենցիայի հիման վրա, որի պատճենը խնդրում ենք ուղարկել մեզ: Ռազմագերիների փոխանակության հետագա պայմանները պետք է որոշվեն ներքոհիշյալ հանձնաժողովի կողմից:

6) Վերոհիշյալներն իրագործելու համար մանրամասն նախապիծ մշակելու նպատակով Երևան քաղաքում կկազմվի հատուկ Հանձնաժողով՝ հայ և թուրք ապաններից, հավասար չափով, քան Զերդ Գերազանցության և գեներալ Նազարբեկովի ցուցումների:

Պատվիրակության նախագահ.
Անդամներ.

ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 68(200), գ. 79, թ. 3:

№ 21

ОБРАЩЕНИЕ МИРНОЙ ДЕЛЕГАЦИИ АРМЕНИИ К ПРЕДСЕДАТЕЛЮ ОТТОМАНСКОЙ ДЕЛЕГАЦИИ О ПРЕКРАЩЕНИИ ДИПЛОМАТИЧЕСКИХ ОТНОШЕНИЙ СО ВСЕМИ СТРАНАМИ, НАХОДЯЩИМИСЯ В СОСТОЯНИИ ВОЙНЫ ПРОТИВ ОТТОМАНСКОЙ ИМПЕРИИ

Батум, 3 июня 1918 г.

Господин председатель!

Мирная делегация Армении, вследствие личных переговоров с Вашим Превосходительством и в связи с заключением договора о мире и дружбе между Оттоманской империей и Арменией, имеет честь подтвердить следующее:

Правительство Республики Армении обязывает не иметь во все время всеобщей войны никаких дипломатических отношений с государствами, находящимися в состоянии войны против Оттоманской империи.

Председатель Делегации:
Члены:

ЦГИА Арм. ССР, ф. 68(200), д. 79, л. 6.

№ 21

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՄԸ ՕՍՄԱՆՅԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻՆ՝ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՎԻՃԱԿՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՈԼՈՐ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԵՏ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԽԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Բաթում, 1918 թ. հունիսի 3

Պարոն նախագահ.

Հայաստանի Հաշտության պատվիրակությունը, Զերդ Գերազանցության հետ անձնական բանակցությունների հիման վրա և Օսմանյան կայսրության ու Հայաստանի միջև հաշտության և բարեհամության պայմանագրի կնքման կապակցությամբ պատիվ ունի հավաստիացնելու հետևյալը.

Հայաստանի Հանրապետության կառավարությունը պարտավորվում է ընդհանուր պատերազմի ամբողջ ժամանակամիջոցում ոչ մի դիվանագիտական հարաբերություն չունենալ Օսմանյան կայսրության հետ պատերազմական վիճակում գտնվող պետությունների հետ:

Պատվիրակության նախագահ.
Անդամներ.

ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 68(200), գ. 79, թ. 6:

№ 22

ЕГО ПРЕВОСХОДИТЕЛЬСТВУ ГЕНЕРАЛУ-ЛЕЙТЕНАНТУ ВЕГИБ-ПАШЕ— ГЛАВНОКОМАНДУЮЩЕМУ ОТТОМАНСКИМИ ВОЙСКАМИ НА КАВКАЗСКОМ ФРОНТЕ

Мирная делегация Армении
№ 9

3-го июня 1918 г.,
Батум

Господин Главнокомандующий!

Имею честь просить Ваше превосходительство, чтобы Вы соизволили разрешить господам Микаелу Бабаджанову, Александру Хатисову, а также лицам, назначенным Армянским национальным Собранием, число которых не превышает десяти, въезд на территории, перешедшие к Турции, чтобы

поставить в известность местное армянское население о заключении мирного договора между Турцией и Арменией и объяснить необходимость детального и честного исполнения этого договора, а также сообщить, что между Оттоманской империей и Арменией установлены дружественные отношения.

Армянское Национальное Собрание и лично мы ручаемся Вашему Превосходительству за честность и благонамеренность лиц, которым будет доверено упомянутое поручение.

Председатель Делегации:
Члены:

ЦГИА Арм. ССР, ф. 68/200, д. 11, л. 71.

№ 22

ԿՈՎԿԱՍՅԱՆ ՌԱՋՄԱՃԱԿԱՏԻ ՕՍՄԱՆՅԱՆ ՋՈՐՔԵՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ, ՆՈՐԻՆ ԴԵՐԱԶԱՆՑՈՒԹՅՈՒՆ ԳՆԵՐԱԼ-ԼԵՅՏԵՆԱՆՏ ՎԵՀԻԲ-ՓԱՇԱՅԻՆ

Հայաստանի հաշտության պատվիրակություն
№ 9

1918 թ. հունիսի 3,
Բաթում

Պարոն Գլխավոր հրամանատար.

Պատիվ ունեմ Ձերդ Գերազանցությանը խնդրելու, որ Դուք բարեհաճեք թույլ տալ պարոն Միքայել Բարաջանովին, ևս քսանդեր Խատիսովին, ինչպես նաև Հայկական Ազգային Խորհրդի կողմից նշանակված անձնավորություններին, որոնց թիվը տասից չի անցնում, անցնելու Թուրքիային անցած տերիտորիաները՝ տեղական հայ ժողովրդին տեղեկացնելու, որ Թուրքիայի և Հայաստանի միջև կնքված է հաշտության պայմանագիր, և նրան բացատրելու այդ պայմանագրի մանրամասն և ուղղամիտ կատարման անհրաժեշտությունը, ինչպես նաև հաղորդելու, որ Օսմանյան կայսրության և Հայաստանի միջև հաստատվել են բարեկամական հարաբերություններ: Հայկական Ազգային Խորհուրդը և անձամբ մենք երաշխավորում ենք Ձերդ Գերազանցությանը այն մարդկանց աղնվության և ուղղամտության վերաբերյալ, որոնց նշված հանձնարարությունը կվստահվի:

Պատվիրակության նախագահ.
Անդամներ.

ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 68(200), գ. 11, թ. 71:

№ 23

ОБРАЩЕНИЕ ДЕЛЕГАЦИИ АРМЕНИИ К ГЕНЕРАЛУ ВЕГИБ-ПАШЕ О ВЫВОДЕ АРМЯНСКИХ ВОЙСК ИЗ БАКУ

№ 8.

Батум, 3-го июня 1918 г

Господин Главнокомандующий!

В целях вывода армянских отрядов из Баку и предохранения промышленных районов от возможных бедствий, в чем заинтересованы и мусульмане и армяне, и чтобы наконец окончательно и полностью решить этот вопрос, имею честь просить Ваше Превосходительство, прежде чем посылать турецкие войска в Баку, соизволить оказать нам поддержку, разрешая свободно и беспрепятственно послать в Баку специальную комиссию правительства Армении с тем, чтобы эта комиссия приняла меры для скорого и успешного вывода армянских отрядов из Баку и оказала помощь армянам, желающим переехать в Армению.

Примите, господин Главнокомандующий, заверения моего глубокого уважения.

Председатель делегации Армении

ЦГИА Арм. ССР, ф. 68 (200), д. 11, л. 75.

№ 23

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՄԸ ԳՆԵՐԱԼ ՎԵՀԻԲ-ՓԱՇԱՅԻՆ՝ ՀԱՅԿԱԿԱՆ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԸ ԲԱՔՎԻՑ ԴՈՒՐՍ ԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

№ 8

Բաթում, 1918 թ. հունիսի 3

Պարոն Գլխավոր հրամանատար.

Բաքվից հայկական զորամասերը դուրս բերելու և քաղաքի արդյունաբերական մասերը հնարավոր պատահարներից զերծ պահելու նպատակով, որի մեջ շահագրգռված են թե՛ մուսուլմանները, թե՛ հայերը և վերջապես այդ հարցի վերջնական ու կատարյալ

չուծման համար, պատիվ ունեմ Ձերդ Գերազանցությանը խնդրել, որ նախքան Բաքու Թուրքական զորքեր ուղարկելը բարեհաճի իր աջակցությունը մեզ բնձեռել, Թույլ տալով Հայաստանի կառավարության հատուկ հանձնաժողովին աղատորեն և ապահով ճանապարհ դնելու մինչև Բաքու, որպեսզի միջոցներ ձեռք առնի և արագորեն հաջողացնի հայկական զորամասերի դուրս բերումը այդ քաղաքից, ինչպես նաև օգնի այն հայերին, որոնք ցանկանում են Հայաստան գալ:

Ընդունեք, պարոն Գլխավոր հրամանատար, խորին հարգանացս հավաստիքը:

Հայաստանի պատվիրակության նախագահ

ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 68(200), ց. 11, թ. 75:

№ 24

ДОГОВОР О МИРЕ И ДРУЖБЕ МЕЖДУ ИМПЕРАТОРСКИМ ОТТОМАНСКИМ ПРАВИТЕЛЬСТВОМ И РЕСПУБЛИКОЙ АРМЕНИИ

Батум, 4 июня 1918 г.

Императорское Оттоманское правительство с одной стороны и правительство Республики Армении, объявившей себя независимой, с другой стороны, взаимно согласившись достигнуть установления отношений дружбы и доброго соседства между обеими сторонами в области политической, юридической, экономической и интеллектуальной, назначили своими уполномоченными следующих лиц:

Оттоманская империя:

Его превосходительство Халил-бея, депутата, министра юстиции и председателя Государственного Совета первым делегатом и

Его превосходительство генерал-лейтенанта Вегиб-Махмед-пашу, главнокомандующего оттоманскими войсками на Кавказском фронте, военным делегатом.

Армянская республика:

Господина Ал. Хатисова, председателем делегации.

Господина Рубена Качазнуни, делегатом.

Господина Микаела Пападжанова, делегатом.

Ознакомившись с полномочием обеих сторон и найдя их в надлежащей форме, эти лица согласились относительно следующих положений:

Статья I

Между Императорским Оттоманским правительством и правительством Армянской Республики устанавливаются мир и постоянная дружба.

Статья II

Пограничная линия, имеющая нижеуказанное направление, отделяет Оттоманскую Империю от Республики Грузии, Республики Армении и Республики Азербайджана.

Граница начинается в том пункте, где река Чорох впадает в Черное море и сливается со старой границей, существовавшей между Оттоманской империей и Россией до войны 1877 г. Она проходит Шавнабад и, проходя по линии вершин, достигает гор Халхама и Мепискара (по границе 1856 года), а затем поворачивает к югу, проходит по вершине горы Пирсагад, в двух километрах к югу от Абастумана и, поворачивая к северо-востоку, достигает вершины Кархул-дага, направляясь отсюда сначала на пять километров к северо-востоку и затем к юго-востоку она доходит до местности Гуркел, переходит через реку Куру в двух километрах к югу от Ацхури и, проходя по линии вершин гор Каябаши, Ортатапи, достигает Табицкурского озера, непосредственно на юге от Молитского монастыря. Далее она переходит это озеро таким образом, что остается на Оттоманской территории часть озера, находящаяся на юге по прямой линии, непосредственно проходящей с юга Молитского монастыря к пункту, расположенному на расстоянии полутора километров на юго-восток от северной оконечности озера и доходит до горы Тавкотели. Затем она опускается к югу и проходит по вершинам гор Шавнабад. Ка-

По вопросу о дипломатических отношениях с Европой (Францией и Англией) я вчера имел очень серьезную беседу с Халилом. Он детально рассказал мне историю возникновения идеи самостоятельности Армении за эти три недели в Константинополе и о той отчаянной борьбе, после которой эта идея победила. Исходя из этого острого положения, он находил пока необходимым оставить в силе наше письмо об обещании не иметь во время войны дипломатических сношений с враждебными Турции государствами, указав, что предыдущие отношения Грузии и Армении с Турцией неодинаковы,— и прибавил, что фактически Англия и Франция не будут иметь представителей в Грузии в виду ее отношения к Германии. Папазян и Качазнуни, обсудив вопрос, нашли нужным согласиться с создавшимся положением. Сейчас договор пишется, вечером подписываем, завтра выедем. Грузины подписывают тоже сегодня...

ЦГИА Арм. ССР, ф. 200, д. 11, л. 79.

№ 30

ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ Ա. Ի. ԽԱՏԻՍՈՎԻ ՆԱՄԱԿԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ա. ԱՀԱՐՈՆՅԱՆԻՆ

Թանկագին Ավետիս: Վերջնականապես պարզվեց, որ Հայաստանի, Թուրքիայի և Ադրբեջանի միջև «վերաբաժանման» հարցը

լուծվելու է ոչ թե այստեղ, այլ Թիֆլիսում։ Ըստ պայմանագրի Թուրքիան մացրել է մի ընդհանուր սահման իր և 3 պետությունների միջև, իսկ այդ պետություններն իրար միջև պետք է սահմանագծվեն Թիֆլիսում...

Եվրոպայի (Անգլիայի ու Ֆրանսիայի) հետ դիվանագիտական հարաբերությունների հարցի մասին ես երեկ շատ լուրջ զրույց ունեցա Խալիլի հետ։ Նա հանգամանորեն պատմեց ինձ Կոստանդնուպոլսում այս երեք շաբաթում Հայաստանի անկախության գաղափարի առաջացման պատմությունը և այն կատաղի պայքարի մասին, որից հետո այդ գաղափարը հաղթանակել է։ Ելնելով այդ սուր վիճակից՝ նա գեռևս անհրաժեշտ էր համարում ուժի մեջ թողնել՝ պատերազմի ժամանակ Թուրքիայի թշնամի պետությունների հետ դիվանագիտական հարաբերությունների մեջ չմտնելու խոստման մասին մեր նամակը՝ մատնանշելով, որ Թուրքիայի հետ Վրաստանի ու Հայաստանի նախորդ հարաբերությունները միատեսակ չեն,— և ավելացրեց, որ փաստորեն Անգլիան ու Ֆրանսիան Վրաստանում ներկայացուցիչներ չեն ունենա՝ հաշվի առնելով նրա վերաբերմունքը Գերմանիայի նկատմամբ։ Փափազյանն ու Քաջազնունին, հարցը քննարկելով, հարկավոր գտան համաձայնել ստեղծված վիճակին։ Այժմ պայմանագիրը գրվում է, երեկոյան կստորագրենք, վաղը կմեկնենք։ Վրացիները ևս այսօր են ստորագրում...

ՀՍՍՌ ԿԳԳԱ, ֆ. 68/200, գ. 11, թ. 79։

№ 31

О ПЕРЕДАЧЕ ЖЕЛЕЗНОДОРОЖНОГО СОСТАВА В РАСПОРЯЖЕНИЕ ОТТОМАНСКОЙ АРМИИ

Постановлениями смешанной Комиссии Отдельного Армянского Корпуса и Турецкой Армии от 19 и 20 июня и последующей перепиской по актам 25 июня, 6 июля, 9, 10 и 13 августа передать во временное пользование на время войны туркам железнодорожный состав из трех паровозов за номерами 9602 и 4340, два классных вагона, 35 цистерн нефтяных, вагонов товарных крытых 4, платформ 8, служебных 2 и санитарных 1.

Весь этот состав передан под расписки турецких комендантов. Кроме этого турецкими властями между Эриванью и Джульфой захвачены и отправлены в Александрополь поезда полковника Эрна и инженера Маркова, первый состоящий из одного паровоза и 17 вагонов, второй из 1 паровоза и 14 вагонов.

ЦГИА Арм. ССР, ф. 68(200), д. 78, л. 14а.

№ 31

ՕՍՄԱՆՅԱՆ ԲԱՆԱԿԻ ՏՆՕՐԻՆՈՒԹՅԱՆԸ ՄԵԿ ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ԿԱԶՄ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայկական Առանձին կորպուսի և Թուրքական բանակի խառը հանձնաժողովի հունիսի 19-ի ու 20-ի որոշումներով և հետագա նամակագրությամբ հունիսի 25-ի, հուլիսի 6-ի, օգոստոսի 9-ի, 10-ի և 13-ի ակտերով պատերազմի ժամանակ թուրքերի ժամանակավոր օգտագործմանը հանձնել մի երկաթուղային կազմ՝ բաղկացած երեք շոգեքարշերից՝ 9602 և 4340 համարներով, երկու կարգային վագոնից, 35 նավթի ցիստեռնից, 4 ծածկած ապրանքատար վագոններից, 8 պլատֆորմից, 2 ծառայողական և 1 սանիտարական վագոնից։

Այդ ամբողջ կազմը հանձնվում է թուրքական պարետների ստորագրությամբ։ Դրանցից բացի, թուրքական իշխանությունները Երևանի և Ջուլֆայի միջև զավթել և Ալեքսանդրապոլ են ուղարկել գնդապետ Էռնի և ինժեներ Մարկովի գնացքները, առաջինը՝ բաղկացած 1 շոգեքարշից և 17 վագոնից, երկրորդը՝ 1 շոգեքարշից և 14 վագոնից։

ՀՍՍՌ ԿԳԳԱ, ֆ. 68(200), գ. 78, թ. 14ա։

№ 32

СВОДКА О ДЕЙСТВИЯХ НЕМЕЦКИХ ВОЙСК В СЕВЕРНОЙ АРМЕНИИ

«Числа 18—19 июня немецкие войска вели бой с местным населением... и дошли до Колагеран, Тифлисской железной дороги, через которую проходили турки в Казах. В Колагеране стоят бронированные поезда с немецкими флагами. Немецкие офицеры прибыли в село Дсех...»

ЦГИА Арм. ССР, ф. 57, д. 582, л. 10.

№ 32

ԱՄՓՈՓԱԳԻՐ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՋՈՐՔԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Հունիսի 18—19-ին գերմանական զորքերը մարտեր են մղել տեղական բնակչության հետ... և հասել են Քոլագիրան՝ Թիֆլիսի երկաթուղի, որով թուրքերն անցել են Ղազախ։ Քոլագիրանում կանգնած են զրահապատ գնացքներ՝ գերմանական դրոշակներով։ Գերմանական սպաները եկել են Դսեղ գյուղը...»։

ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 57, գ. 582, թ. 10։

№ 33

ОБРАЩЕНИЕ ТУРЕЦКОГО КОМАНДОВАНИЯ К АРМЯНСКОМУ НАЦИОНАЛЬНОМУ СОВЕТУ О ВЫВОДЕ АРМЯНСКИХ ВОЙСК ИЗ БАКУ

Батум, 3 июля 1918 г.

Мы констатировали, что господин Арзуманов и его компаньон, командированные с капитаном Гусамеддин-бейем для эвакуации из Баку армянских войск и перевозки их на территорию Армянской Республики, согласно параграфа II-го договора, не имея возможности доехать до Баку, вернулись в Тифлис...

Я прошу Вас предпринять все возможные меры, чтобы обеспечить отделение названных войск от большевиков, согласно содержанию мирного договора, и срочно принять соответствующие радикальные меры для отвода армянских войск внутрь Армении.

Примите выражение моего глубокого уважения.

Эссад

Командующий группой Восточных Армий и Командующий 3-ей Армией,
генерал-лейтенант.

ЦГИА Арм. ССР, ф. 68(200), д. 79, л. 61.

№ 33

ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀՐԱՄԱՆԱՏԱՐՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՄԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻՆ՝ ԲԱՔՎԻՑ ՀԱՅԿԱԿԱՆ ՋՈՐՔԵՐԸ ԴՈՒՐՍ ԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Բաթում, 1918 թ. հուլիսի 3

Մենք արձանագրեցինք, որ պարոն Արզումանովը և նրա կոմպանիոնը, որոնք կապիտան Գուսամեդդին-բեյի հետ գործուղվել էին, պայմանագրի 2-րդ պարագրաֆի համաձայն, հայկական զորքերը Բաքվից էվակուացնելու և Հայկական Հանրապետության տերիտորիան տեղափոխելու համար, հնարավորություն չունենալով հասնել Բաքու, վերադարձել են Թիֆլիս...

Ես Ձեզ խնդրում եմ ձեռք առնել բոլոր հնարավոր միջոցները՝ ապահովելու համար հիշյալ զորքերի անջատումը բոլշևիկներից՝ համաձայն հաշտության պայմանագրի բովանդակության, և շուտափույթ ձեռք առնել համապատասխան ռազմական միջոցներ՝ հայկական զորքերը ևս քաշելու Հայաստան։

Ընդունեցեք իմ խորին հարգանքի արտահայտությունը։

Էսսադ

Արևելյան բանակների խմբի հրամանատար և 3-րդ բանակի հրամանատար,
գեներալ-լեյտենանտ

ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 68(200), գ. 79, թ. 61։

№ 34

ЕГО ПРЕВОСХОДИТЕЛЬСТВУ ГЕНЕРАЛУ ТЕР-АКОПОВУ, ПРЕДСЕДАТЕЛЮ АРМЯНСКОЙ КОМИССИИ ПО ПОВОДУ ВОССТАНИЯ АРМЯН В ТЫЛУ ТУРЕЦКОЙ АРМИИ

Некоторые жители селений, находящихся между Сардарабад—Александрополем, восстали 28, 29 июня и напали на караулы наших складов, убили караульных и ограбили склады; так как жители-армяне, находящиеся в районе линии железной дороги Джульфы, которая принадлежит Оттоманской Империи, согласно мирному договору, заключенному с Армянской Республикой, не хотят сдавать свое оружие и применяют оружие против оттоманских солдат... и так как бандиты совершили преступление 3 и 4 июня, вопрос о возвращении беженцев не может быть обсужден нашей Комиссией.

Вам было сообщено отношением от 1-го июля за № 90, что этот вопрос может быть разрешен только Делегацией в Константинополе.

ЦГИА Арм. ССР, ф. 68(200), д. 79, л. 67.

№ 34

ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀՐԱՄԱՆԱՏԱՐՈՒԹՅԱՆ ԲՈՂՈՔԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԴԱՀ ՆՈՐԻՆ ԳԵՐԱՁԱՆՅՈՒԹՅՈՒՆ ԴԵՆԵՐԱԼ ՏԵՐ-ԱԿՈՊՈՎԻՆ՝ ԹՈՒՐՔԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ԹԻԿՈՒՆՔՈՒՄ ՀԱՅԵՐԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԹԻՎ

Սարդարաբադի և Ալեքսանդրապոլի միջև գտնվող գյուղերի որոշ բնակիչներ հունիսի 28, 29-ին ապստամբել են և հարձակվել մեր պահեստների պահակների վրա, սպանել են նրանց և կողոպտել պահեստները: Քանի որ այն հայ բնակիչները, որոնք գտնվում են Հայկական հանրապետության հետ կնքված հաշտության պայմանագրի համաձայն Օսմանյան կայսրությանը պատկանող Ջուլֆայի երկաթուղագծի շրջանում, չեն ցանկանում հանձնել իրենց զենքը և այն գործադրում են օսմանյան զինվորների դեմ... և քանի որ բանդիտները հուլիսի 3-ին և 4-ին կատարել են հանցագործություն,— ուստի գաղթականների վերադարձի հարցը չի կարող քննարկվել մեր Հանձնաժողովի կողմից:

Հուլիսի 1-ի № 90 գրությամբ Ձեզ հայտնվել է, որ այդ հարցը կարող է լուծել միայն Կոստանդնուպոլսում գտնվող Պատվիրակությունը:

ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 68(200), գ. 79, թ. 67:

№ 35

ОБРАЩЕНИЕ ОТТОМАНСКОГО КОМАНДОВАНИЯ К АРМЯНСКОМУ НАЦИОНАЛЬНОМУ СОВЕТУ О ВЫВОДЕ АРМЯНСКИХ ВОЙСК ИЗ БАКУ

Батум, 4 июля 1918 г

Армянское Правительство, договором, заключенным в Батуме, обязалось препятствовать своим воздействием военным операциям армян, которые присоединяются к большевикам и находятся в Баку и в его окрестностях.

Хотя армянская делегация с этой целью была сопровождаема капитаном Гуссамедином-эффенди, командированным в Елисаветполь, однако эта делегация не смогла доехать до Баку из-за присутствия большевистских войск в окрестностях Кюрдамира.

Мы слышали, что эта делегация отправилась через Северный Кавказ; но присутствие в Каябаши и в Кюрдамире среди большевистских войск, действующих против наших войск и мусульманского населения армян, в виде регулярных

войск, заставляет сомневаться в достижении этой делегацией своей цели.

Я прошу Вас поэтому командировать в Баку или в окрестности Кюрдамира новую делегацию, чтобы условия договора были бы соблюдены. Если это невозможно, то для этой цели можно разослать циркуляры. Оттоманская армия гарантирует передачу по назначению этих циркуляров, составленных Армянским правительством.

Примите, Милостивый Государь, выражение моего глубокого уважения.

Эссад
Главнокомандующий группой Восточных Армий и Командующий 3-ей Армией, генерал-лейтенант

ЦГИА Арм. ССР, ф. 68(200), д. 79, л. 62.

№ 35

ՕՍՄԱՆՅԱՆ ՀՐԱՄԱՆԱՏԱՐՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՄԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻՆ՝ ՀԱՅԿԱԿԱՆ ԶՈՐՔԵՐԸ ԲԱՔՎԻՑ ԴՈՒՐՍ ԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Բաքում, 1918 թ. հուլիսի 4

Հայկական կառավարությունը, Բաթումում կնքված պայմանագրով, պարտավորվել է իր ազդեցությամբ արգելք հարուցել այն հայերի ռազմական գործողություններին, որոնք միացել են բոլշևիկներին և գտնվում են Բաքվում ու նրա արվարձաններում:

Ջնայած այդ նպատակով հայկական պատվիրակությանն ուղեկցել է կապիտան Գուսամեդդին-էֆենդին, որ գործուղվել էր ելիզավետպոլ, բայց այդ պատվիրակությունը չի կարողացել հասնել Բաքու, որովհետև Քյուրդամիրի շրջակայքում եղել են բոլշևիկյան զորքեր:

Մենք լսել ենք, որ այդ պատվիրակությունն ուղևորվել է Հյուսիսային Կովկասով, բայց այն հանգամանքը, որ Ղայաբաշիում և Քյուրդամիրում մեր զորքերի և մուսուլմանական բնակչության դեմ գործող բոլշևիկյան զորքերի մեջ կան հայեր՝ կանոնավոր

զորքերի ձևով, ստիպում է կասկածել այդ պատվիրակության՝ իր նպատակին հասած լինելու մեջ:

Այդ պատճառով ես Ձեզ խնդրում եմ նոր պատվիրակություն գործուղել Բաքու կամ Քյուրդամիրի շրջակայքը՝ պայմանագրի պայմանները կատարելու համար: Եթե դա հնարավոր չէ, ապա այդ նպատակով կարելի է ուղարկել շրջաբերականներ: Օսմանյան բանակը երաշխավորում է Հայկական կառավարության կազմած այդ շրջաբերականների հանձնումը ըստ նշանակման:

Ընդունեցեք, ողորմած տեր, իմ խորին հարգանքի արտահայտությունը:

Էսսադ
Արևելյան բանակի խմբի գլխավոր հրամանատար և 3-րդ բանակի հրամանատար, գեներալ-լեյտենանտ

ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 68(200), գ. 79, թ. 62:

№ 36

ОТВЕТ АРМЯНСКОЙ ДЕЛЕГАЦИИ ПРЕДСЕДАТЕЛЮ ОТТОМАНСКОЙ ДЕЛЕГАЦИИ О ВЫВОДЕ ВОЙСК ИЗ БАКУ

Батум, 4-го июля 1918 г.

Ваше Превосходительство!

В ответ на Ваше сообщение от 3-го с. м. относительно событий в Баку и в некоторых селениях Республики Азербайджана, почитаю долгом уведомить Вас, что хотя Армянский Национальный Совет, вследствие закрытия железной дороги и телеграфа, больше не имеет связи с Баку и с другими местностями Азербайджана, тем не менее, на основании мирного договора... озабочено мыслью принять все зависящие от него меры для урегулирования этого вопроса.

С этой целью Армянский Национальный Совет командировал в Баку с мусульманами Михаила Арзуманова и Мартироса Арутюнянца, но, к сожалению, эта командировка

кончилась безуспешно, так как армянским делегатам не удалось пробиться в Баку через Кюрдамир.

Армянский Национальный Совет перед нашим отъездом из Тифлиса решил послать делегатов в Баку через Владикавказ, что думаю уже исполнено.

По приезде в Тифлис я донесу Ваши сообщения Армянскому Национальному Совету, и смею Вас уверить, Ваше Превосходительство, что все, что будет зависеть от Национального Совета, будет исполнено.

Примите, Ваше Превосходительство, выражение моего высокого уважения.

Председатель Делегации

ЦГИА Арм. ССР, ф. 68(200), д. 79, л. 63.

№ 36

ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԸ ՕՍՄԱՆՅԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԴԱՀԻՆ՝ ՀԱՅԿԱԿԱՆ ԶՈՐՔԵՐԸ ԲԱՔՎԻՑ ԴՈՒՐՍ ԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Բաքու, 1918 թ. հուլիսի 4

Զերդ գերազանցություն.

Ի պատասխան ամսույս 3-ի Ձեր հաղորդման՝ Բաքվում և Ադրբեջանի հանրապետության մի քանի գյուղերում եղած իրադարձությունների մասին, պարտք եմ համարում տեղեկացնել Ձեզ, որ չնայած Հայկական Ազգային Խորհուրդը, երկաթուղին և հեռագրատունը փակ լինելու պատճառով, այլևս հաղորդակցություն չունի Բաքվի և Ադրբեջանի այլ վայրերի հետ, այնուամենայնիվ, հաշտության պայմանագրի հիման վրա... մտահոգված է այդ հարցի կարգավորման համար իրենից կախված բոլոր միջոցների ձեռնարկումով։

Այդ նպատակով Հայկական Ազգային Խորհուրդը մուսուլմանների հետ Բաքու է գործուղել Միքայել Արզումանովին և Մարտիրոս Հարությունյանցին, բայց, դժբախտաբար, այդ գործուղումը անհաջողությամբ է վերջացել, որովհետև հայկական պատվիրակներին չի հաջողվել Քյուրդամիրի վրայով անցնել Բաքու։

Հայկական Ազգային Խորհուրդը Թիֆլիսից մեր մեկնումից առաջ որոշել է պատվիրակներ Բաքու ուղարկել վլադիկավկազի վրայով, որ, կարծում եմ, արդեն կատարված է։

Թիֆլիս գնալուց հետո ես Ձեր հաղորդումները կհասցնեմ Հայկական Ազգային Խորհրդին և համարձակվում եմ հավատացնել Ձեզ, Ձերդ գերազանցություն, որ այն ամենը, ինչ կախված կլինի Ազգային Խորհրդից, կկատարվի։

Ընդունեցեք, Ձերդ գերազանցություն, իմ բարձր հարգանքի արտահայտությունը։

Պատվիրակության նախագահ

ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 68(200), գ. 79, թ. 63։

№ 37

ДОКЛАД О НАСИЛИЯХ, УЧИНЕННЫХ ТУРЕЦКИМИ ВОЙСКАМИ НАД ВОЕННОПЛЕННЫМИ АРМЯНАМИ-ВОИНАМИ И МИРНЫМ НАСЕЛЕНИЕМ

Для ознакомления с событиями, последовавшими вслед за Каракилиским боем, были допрошены очевидцы этих событий, возвратившиеся с фронта и бежавшие из турецкого плена воины. Были командированы также особые уполномоченные для сбора сведений по тем районам, по которым отступали отколовшиеся от своих частей воины, застигнутые отрядами турецкой конницы.

Показания означенных лиц и обзор доставленных сведений раскрывают картину бесшабашного глумления, насилий, зверств, учиненных турками над армянскими воинами и армянским населением.

В Караклисе, спустя два дня по взятии села, т. е. 30 мая, очевидно по отданному секретному приказу, началось поголовное избиение военнопленных армян и мирных жителей. Началось избиение в 4 часа дня. Сигналом к нему явилась усиленная стрельба и залпы: пленных армян, связанных друг с другом веревками, уводили партиями в ближайший лес. Десятками и сотнями расстреливали офицеров и солдат. Одно-

временно и в самом селе шла поголовная резня местных жителей армян. Многие семьи вырезаны совершенно. Мужчин в селе почти не осталось. Женщины подвергались изнасилованию ежедневно; изнасилования эти продолжаются по показаниям и по сие время. За два-три дня все село вымерло. Так длилось 4 дня, т. е. по 2-ое июня включительно, когда был отдан приказ турецким властям прекратить резню; и это было очевидной насмешкой, ибо убивать было некого, разве лишь уцелевших женщин и детей. Уцелели лишь те, кои лежали в лечебных заведениях и врачебный персонал этих заведений. Но и они влачили полуголодное существование, ибо продукты отпускались в очень ограниченном количестве. Оставшиеся в живых дети и женщины были обречены на голодную смерть, ибо скотина была отобрана и посевы потравлены, имущество же все разграблено. Такова картина кровавой расправы с армянами в Караклисе.

После отступления отряд воинов-армян в количестве около 2 тысяч чел., среди коих были полковники—Осипянц, Владимиров, Корганов, полковник Кобылевский и др., прибыл на станцию Санаин. Ввиду того, что дороги к Тифлису и Эривани были закрыты турками, командиры решают распустить отряд, представив каждому самостоятельно решать свою судьбу. Отряд разбивается на группы: одна группа во главе с полковником Коргановым направляется на Дилижан по горам; другая, во главе с полковником Осипянцем и подполковником Кобылевским держит путь по направлению к селу Шулаверы; третья группа во главе с полковником Владимировым направляется в село Алаверди. Судьба первой группы в точности неизвестна; вторая группа была вся перебита турецким отрядом конницы в селе Чанахчи при следующих обстоятельствах.

Отряд под командой полковника Кобылевского, командира Отдельной конно-горной батареи, в количестве 150 чел. прибыл в ненастную погоду в село Чанахчи.

Село в ожидании турок было эвакуировано и оставались только старики. Пока местные жители-армяне убеждали воинов уйти в лес, т. к. ожидались турки, со стороны Ахкерпы

(село) появился отряд турецких сувари, в количестве 105 человек.

Отряд вел с собой человек 30 армян-воинов, плененных в Ахкерпы.

Кобылевский устроил совещание для разрешения вопроса о сдаче или сопротивлении.

Принимая во внимание, что мир уже заключен, что сопротивление поведет, правда, к истреблению всего появившегося отряда сувари, но вызовет со стороны новых отрядов репрессии по отношению к местному населению, Кобылевский настоял на сдаче оружия, тем более, что прибывший представитель турецкого отряда офицер сказал, что все сдавшиеся будут тотчас же отосланы в Тифлис.

Отряд сдался и по обезоружении все пленные были загнаны в конюшню в имении Лорис-Меликова, мерою в длину 3 саж. и в ширину 5—6 арш.

К вечеру турки потребовали, чтобы пленные разбились на группы по городам для отсылки их. Армяне заявили, что все хотят в Тифлис.

Их оставили в покое, но поздно ночью в конюшню явились турки и частью выводя, частью же на месте начали холодным оружием истреблять пленников. Таким образом все пленные были перебиты.

У некоторых турки сняли новое обмундирование и оделись сами, уходя в два часа ночи, они подожгли конюшню.

После их ухода, жители села Чанахчи потушили огонь и открыли двери. В живых остались два раненных солдата, переживших эти ужасы...

Третья группа с полковником Владимировым скрывалась в селе Алаверди, не решаясь куда-либо двинуться. На пятый день пребывания их там в Алаверди прибыл турецкий паша с офицерами и аскерами. Паша обещал никого не трогать и всех отрезанных от Тифлиса беспрепятственно пропустить туда. Полковник Владимиров обратился от имени солдат, офицеров, женщин и детей содействовать беспрепятственному проезду их в Тифлис. Получив обещание паши, полков. Владимиров с людьми возвратился на ст. Санаин; узнав это многие скрывающиеся офицеры и солдаты присоединились к полков-

нику Владимирову и просили провезти их в Тифлис. Паша предварительно произвел у всех обыск, отобрав деньги, золотые и серебряные вещи и пр. На следующий день, собрав 32 офицера, много солдат, 18 барышень и около 600 детей, отправился на ст. Манес, где посадил всех в вагоны и отправил в сопровождении турецких аскеров по направлению ст. Садахло, где все поголовно были перебиты.

Недалеко от ст. Ашага-Сараль, уполномоченный информационного бюро Дарбинян обнаружил старый засохший колодец глубиной около 5 саж., где было найдено 36-40 трупов. Служащие на ст. грузины рассказывали с какой жестокостью перебивали турки, в особенности офицеров, без различия национальности. Предварительно обобрав и сняв одежду, турки изрубили трупы на куски и бросили всю массу человеческого тела в колодец.

Таковы картины безнаказанных насилий и зверств турецких войск над беззащитным населением и военнопленными воинами, в большинстве случаев добровольно и с доверием предававших свою жизнь на попечение турецких военных властей, а последние вместо охраны предавали огню и мечу жизнь и имущество ни в чем неповинных и беззащитных военнопленных армян и мирных жителей.

Начальник информационного бюро
Штабс-капитан (подпись)

ДОПОЛНИТЕЛЬНО: По сведениям, главный герой Ванахчинских событий, кавалерист, (сувари) офицер, фамилия которого не установлена, в чине юзбаши (капитан), состоит в отряде Зини-бея и в настоящее время находится в Елисаветпольской губернии, на бакинском фронте. На представленной карточке отмечен крестиком.

Начальник бюро
Штабс-капитан (подпись)

ЦГИА Арм. ССР, ф 68(200), д. 609, лл. 20–21.

№ 37

ՋԵԿՈՒՅՈՒՄ ՌԱԶՄԱԳԵՐԻ ՀԱՅ ԶԻՆՎՈՐՆԵՐԻ ԵՎ ԽԱՂԱՂ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՋՈՐՔԵՐԻ ԳՈՐԾԱԴՐԱԾ ԲՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղարաքիլիսայի մարտից անմիջապես հետո եղած իրադարձությունների հետ ծանոթանալու համար հարցաքննվել են այդ իրադարձությունների ականատեսները՝ ռազմաճակատից վերադարձած և թուրքական գերությունից փախած զինվորները։ Բացի այդ, հատուկ լիազորներ են ուղարկվել՝ տեղեկություններ հավաքելու այն շրջաններում, որտեղով նահանջել ու թուրքական հեծելազորի կողմից բռնվել էին իրենց զորամասերից անջատված զինվորները։

Նշված անձանց ցուցմունքները և ձեռք բերված տեղեկությունների քննումը բացահայտում են հայ բնակչության նկատմամբ թուրքերի կատարած անզուսպ ծաղրուծանակի, բռնությունների, գազանությունների պատկերը։

Ղարաքիլիսայում, գյուղը վերցնելուց երկու օր անց, այսինքն՝ մայիսի 30-ին, ակներևաբար՝ գաղտնի հրամանով, սկսվել է ռազմագերի հայերի և խաղաղ բնակչության ընդհանուր կոտորած։ Կոտորածն սկսվել է ցերեկվա ժամը 4-ին։ Դրան ազդանշան են ծառայել ուժեղացված հրաձգությունը և համազարկերը. գերի հայերին, պարանով իրար կապված, խմբերով տարել են մոտակա անտառը։ Տպանյակներով և հարյուրներով գնդակահարել են սպաներին ու զինվորներին։ Միաժամանակ հենց գյուղում ևս սարքվել է տեղի հայ բնակիչների սպանդ։ Շատ բնտանիքներ կոտորվել են ղվախվին։ Գյուղում աղամարդ համարյա չի մնացել։ Կանայք բռնաբարության են ենթարկվել ամեն օր, այդ բռնաբարությունները, ըստ ցուցմունքների, շարունակվում են և մինչև հիմա։ Երկու-երեք օրում ամբողջ գյուղը բնաջնջվել է։ Այսպես շարունակվել է 4 օր, այսինքն՝ մինչև հունիսի 2-ը ներառյալ, երբ թուրքական իշխանություններին հրաման է տրվել դադարեցնելու կոտորածը. և դա եղել է բացահայտ ծաղր, որովհետև սպանելու համար մարդ էլ չէր մնացել, բացի ողջ մնացած կանանցից ու երեխաներից։ Ողջ են մնացել միայն բուժհիմնարկներում պահածները և այդ հիմնարկների բուժանձնակազմը։ Բայց նրանք էլ քարշ են տվել իրենց գոյությունը կիսաքաղց վիճակում, քանի որ մթերքները բաց են

թողնվել խիստ սահմանափակ քանակով։ Ողջ մնացած երեխաներն ու կանայք դատապարտված են եղել սովամահության, որովհետև անասունները հավաքված են եղել, ցանքերը՝ փշացված, իսկ գույքն՝ ամբողջությամբ կողոպտված։ Այսպիսին է Ղարաքիլիսայում հայերի հետ կատարված հաշվեհարդարի պատկերը։

Նահանջից հետո հայ զինվորների մի ջոկատ, թվով մոտ 2000 հոգի, որոնց մեջ են եղել գնդապետներ Հովսեփյանցը, Վլադիմիրովը, Կորգանովը, փոխգնդապետ Կորիլևսկին և ուրիշներ, եկել են Սանահին կայարանը։ Քանի որ Թիֆլիսի և Երևանի ճանապարհները փակված են եղել թուրքերի կողմից, ...հրամանատարները որոշում են արձակել ջոկատը՝ թողնելով, որ յուրաքանչյուրն ինքնուրույն որոշի իր վիճակը։ Ջոկատը բաժանվում է երեք խմբի, մի խումբը գնդապետ Կորգանովի գլխավորությամբ ուղղություն է վերցնում լեռներով դեպի Դիլիջան, մյուսը գնդապետ Հովսեփյանցի և փոխգնդապետ Կորիլևսկու գլխավորությամբ ճանապարհ է բռնում Շուլավեր գյուղի ուղղությամբ, երրորդ խումբը, գնդապետ Վլադիմիրովի գլխավորությամբ, ուղղվում է դեպի Ալավերդի գյուղը։ Առաջին խմբի վիճակը ճշտորեն հայտնի չէ, երկրորդ խումբն ամբողջովին ջարդվել է թուրքական հեծելազորի մի ջոկատի կողմից Ջանախչի գյուղում, հետևյալ հանգամանքներում։

Առանձին հեծյալ-լեռնային մարտկոցի հրամանատար, փոխգնդապետ Կորիլևսկու գլխավորած ջոկատը, թվով 150 հոգի, անձրևոտ եղանակին հասել է Ջանախչի գյուղը։

Քանի որ սպասվում էին թուրքերը, գյուղը էվակուացվել էր և մնացել էին միայն ծերունիները։ Մինչ տեղի հայ բնակիչները համոզում էին զինվորներին հեռանալ անտառ, որովհետև սպասվում էին թուրքերը, Աղբյուրփիի (գյուղ) կողմից երևացել է թուրք սուվարիների մի ջոկատ՝ թվով 105 հոգի։

Ջոկատն իր հետ տանում էր 30 հայ զինվորների՝ գերված Աղբյուրփիում։

Կորիլևսկին խորհրդակցություն է գումարել՝ լուծելու համար հանձնվելու կամ դիմադրելու հարցը։

Ուշադրության առնելով, որ հաշտությունն արդեն կնքվել է, որ դիմադրությունը կհատցնի, ճիշտ է, սուվարիների երևացած ամբողջ ջոկատի բնաջնջմանը, բայց կառաջացնի նոր ջոկատների կողմից ռեպրեսիաներ տեղական բնակչության նկատմամբ, Կորիլևսկին պնդում էր զենքը հանձնելու վրա, մանավանդ որ թուրքական ջոկատի ժամանած ներկայացուցիչը... համոզում էր, որ բոլոր հանձնվողները իսկույն ևեթ ուղարկվելու են Թիֆլիս։

Ջոկատը հանձնվել է, և զինաթափվելուց հետո բոլոր գերիները քշվել են 3 սաժ. երկարությամբ և 5—6 արշ. լայնությամբ մի գոմ՝ Լոռիս-Մելիքովի կալվածքում։

Երեկոյան դեմ թուրքերը պահանջել են, որ գերիները խմբերի բաժանվեն ըստ ցանկացած քաղաքների՝ նրանց ուղարկելու համար։ Հայերը հայտարարել են, որ իրենք բոլորը ցանկանում են մեկնել Թիֆլիս։

Նրանց հանգիստ են թողել, բայց ուշ գիշերով գոմ են եկել թուրքերը և մասամբ դուրս տանելով, մասամբ էլ հենց տեղում սկսել են սառը զենքով կոտորել գերիներին։ Այդ ձևով բոլոր գերիները կոտորվել են։

Ոմանցից թուրքերը հանել են նոր զգեստները և իրենք հագել, հետո գիշերվա ժամը երկուսին, գոմը հրկիզելով, նրանք հեռացել են։

Նրանց հեռանալուց հետո, Ջանախչի գյուղի բնակիչները հանդցրել են կրակը և բացել դռները։ Ողջ էին մնացել այդ բոլոր սարսափներն ապրած երկու վիրավոր զինվոր...

Երրորդ խումբը գնդապետ Վլադիմիրովի հետ թաքնված է եղել Ալավերդի գյուղում՝ սիրտ չանելով որևէ կողմի վրա շարժվել։ Նրանց այդտեղ գտնվելու հինգերորդ օրը Ալավերդի է եկել մի թուրք փաշա սպաների ու ասկյարների հետ։ Փաշան խոստացել է ոչ մեկին չդիպչել և թույլ տալ, որ բոլոր Թիֆլիսից կտրվածները անարգել մեկնեն այնտեղ։ Գնդապետ Վլադիմիրովը զինվորների, սպաների, կանանց ու երեխաների անունից դիմել է՝ խնդրելով ազատել, որ իրենք անարգել մեկնեն Թիֆլիս։ Ստանալով փաշայի խոստումը՝ Վլադիմիրովը մարդկանց հետ վերադարձել է Սանահին կայարանը։ Իմանալով այդ՝ թաքնված շատ սպաներ ու զինվորներ միացել են և խնդրել Վլադիմիրովին՝ իրենց էլ տանել Թիֆլիս։ Փաշան նախապես խուզարկել է բոլորին՝ վերցնելով փողերը, ոսկի ու արծաթե իրերը և այլն։ Հաջորդ օրը, հավաքելով 32 սպա, շատ զինվորներ, 18 օրիորդ և մոտ 600 երեխա, գնացել է Մանես կայարանը, որտեղ բոլորին նստեցրել է վագոններում և թուրք ասկյարների ուղեկցությամբ ուղարկել դեպի Սադախլո կայարանը, որտեղ բոլորը գլխովին կոտորվել են։

Աշաղա-Սարալ կայարանից ոչ հեռու ինֆորմացիոն բյուրոյի լիազոր Դարբինյանը նկատել է մոտ 5 սաժ. խորությամբ մի հին

ցամաքած ջրհոր, որտեղ գտնվել է 30—40 դիակ: Կայարանում ծառայող վրացիները պատմել են, թե ինչպիսի դաժանությամբ էին կոտորում թուրքերը, մանավանդ սպաներին՝ առանց ազգի խտրության: Նախապես հանելով ու վերցնելով դիակներից հագուստները՝ թուրքերը կոտոր-կոտոր են արել դիակները և մարդկային մարմրնի այդ ամբողջ մասսան նետել ջրհորի մեջ:

Այսպիսին են այն անպատիժ բռնությունների ու գազանությունների պատկերները, որ կատարել են թուրքական զորքերը անպաշտպան բնակչության ու ռազմագերի զինվորների նկատմամբ, որոնք մեծ մասամբ կամավոր կերպով և վստահությամբ իրենց կյանքը հանձնել են թուրքական ռազմական իշխանությունների հոգածողությանը, իսկ վերջիններս պահպանելու փոխարեն հրի ու սրի են մատնել բոլորովին անմեղ ու անպաշտպան ռազմագերի հայերի ու խաղաղ բնակչության կյանքն ու գույքը:

Ինֆորմացիան բյուրոյի պետ
Շտաբս-կապիտան (ստորագրություն)

Լրացուցիչ կարգով. Ըստ տեղեկությունների, Չանախչի գյուղի իրադարձությունների գլխավոր հերոսը՝ հեծյալ (սուվարի), սպա, որի ազգանունը չի պարզված, յուզբաշու (կապիտան) աստիճանով, ծառայում է Զինի-բեյի ջոկատում և ներկայումս գտնվում է Ելիզավետպոլի նահանգում, Բաքվի ֆրոնտում: Ներկայացվող լուսանկարի վրա նշված է խաչով:

Բյուրոյի պետ
Շտաբս-կապիտան (ստորագրություն)

ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 68(200), գ. 609, թ. 20—21:

№ 38

СООБЩЕНИЕ О ПРИЕЗДЕ ДАШНАКСКОГО ПРАВИТЕЛЬСТВА ИЗ ТИФЛИСА В ЕРЕВАН

Передаю отрывок радиограммы, которая послана была из Тифлиса в Баку *кавычки пропуск*. Делегация республики вернулась Тифлис *точка* Национальный Совет поручил Качазуни составить кабинет Национальный Совет постановил вместе с правительством немедленно по открытии железной дороги

Тифлис-Караклис выехать Эривань *точка* сегодня турецкий офицер выезжает в Ашаги-Сераль—Садахло—Караклис для принятия мер по открытию дороги Агаронян *кавычки точка*.

Верно: Старший адъютант

ЦГИА Арм. ССР, ф. 57, д. 582, л. 13.

№ 38

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ՝ ԹԻՖԼԻՍԻՑ ԵՐԵՎԱՆ ՏԵՂԱՓՈԽՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաղորդում եմ մի հատված Թիֆլիսից Բաքու ուղարկված ռադիոգրից. «Հանրապետության պատվիրակությունը վերադարձել է Թիֆլիսից: Ազգային խորհուրդը հանձնարարել է Քաջազնունուն կազմել կաբինետ: Ազգային խորհուրդը որոշել է կառավարության հետ միասին, Թիֆլիս—Ղարաքիլիսա երկաթուղին բացվելուն պես, անհապաղ մեկնել Երևան: Այսօր մի թուրք սպա մեկնում է Աշտարակ—Սարալ—Սադախլո—Ղարաքիլիսա, որպեսզի միջոցներ ձեռնարկվեն երկաթուղին բացելու համար: Ահարոնյան»:

Ճիշտ է. Ավագ թիկնապահ

ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 57, գ. 582, թ. 13:

№ 39

ЖУРНАЛ № 3 СОЕДИНЕННОГО ЗАСЕДАНИЯ СМЕШАННОЙ КОМИССИИ ОТДЕЛЬНОГО АРМЯНСКОГО КОРПУСА И ЭРИВАНСКОГО НАЦИОНАЛЬНОГО СОВЕТА И КОМИССИИ ТУРЕЦКОЙ АРМИИ ОТ 5 ИЮЛЯ 1918 ГОДА

Председательствовал Командир 1-го Кавказского Корпуса Кязим Карабекир-бей.

Присутствовали члены комиссии:

Генерал-майор Тер-Акопов.
Полковник Кишмишев.

Ген. шт. подполк. Векилов.
Мкртич Мусинянц.
Юрий Тамамшев.
Доктор Меликянц.
Капитан Халил-бей.
Поручик Салай-Эддин.

Был прочитан 2-ой параграф мирного договора, заключенного между Оттоманским правительством и Армянской Республикой от 11 июня 1918 года, и согласно этому параграфу и другому, гласящему о границах договора, заключенного в Батуме Оттоманской Империей с Армянской Республикой, который был объявлен в приказе Командующего Оттоманской армией от 6 июня за №2338, причем последний был сообщен Оттоманской Комиссией Армянской Комиссии, с указанием, что в приказе переданы границы, принятые Батумским договором, часть границы Оттоманской Империи и Армянской Республики между селениями Арпа и Ханвали была установлена на русской карте в масштабе 1/200 000. Как оказалось, § 2 мирного договора от 4-го июня 1918 года, полученный Армянской Комиссией из Тифлиса, не совпадает с § 2 мирного договора от 11 июня, имеющегося у Оттоманской Комиссии по вопросу о границах, а потому упомянутую границу считать демаркационной линией до выяснения этого параграфа.

Граница идет от села Арпа, остающегося на территории Оттоманской Империи, к северо-западу по руслу реки Эльпин-чай, оставляя деревни Чиву, Нижнее Чанахчи и Кашха (Турция) и далее на 500 метров южнее селения Гортун (Верхние Чанахчи) до вершины Дачна, оставляя селения Карахач-Кадылу (Турция) и села Армык и Агбулаг (Армения). Далее линия идет до вершины Дачна на северо-запад, оставляя в 2-х километрах к югу села Шагаблу, Нижний Карабаглар (Чиманкенд) и Ташлу (Турция), а села Эранос, Дахназ, Верхний Карабаглар и Котуз—Армении, далее по условной линии, оставляя села Япма, Чатма, Джанатлу (Армения), а села Агмляр, Шутулкенд, Двин Верхний и Нижний Агбаш (Турция). Вышеозначенная граница проходит по естественным рубежам, как-то: водоразделы, вершины гор, ущелья и т. д. Далее линия идет севернее селения Тазакенд и, приближаясь на 5 километров к железной дороге, оставляет села Тазакенд (Турция), и Норакавит (Армения), Калалы (Армения) и Хача-Парах (Турция), проходя точно через середину между этими деревнями. Далее линия продолжается на 500 метров севернее села Каракишляг и, делая окружность радиусом в 500 метров, далее идет к западу от дер. Каракишляг от точки пересечения означенной окружности с параллельной линией, отстоящей на 6 километров от железной дороги, параллельно железной дороге на расстоянии 6 километров; далее линия, загибая на северо-запад, оставляет села Нижнее Айланлу (Турция) и Али-Беклю (Армения) и пересекает шоссе Эчмиадзин—Сардарабад на расстоянии 6 километров от железной дороги; от точки пересечения этого шоссе линия идет до вершины горы Алагез по прямой линии, однако проходя у сел Керпалу и Кюра-кянлу на расстоянии 500 метров на запад, оставляет эти селения на территории Армении. Граница доходит до вершины Алагеза проходя на 500 метров севернее села Кюра-кянлу, продолжая прямую линию от точки пересечения шоссейной дороги Эчмиадзин-Сардарабад до Алагеза. Вследствие этого деревни Аджакали, Хзнаус и Агавнатун остаются Армении, а село Уджан—Турции, Байрам-Али отходит Армении, а село Койтул—Турции.

Граница устанавливается лишь до вершины Алагеза ввиду того, что севернее ее она временно занята турецкими войсками и будет установлена вследствие окончательного решения о границах мирными делегациями в Константинополе.
ПРИМЕЧАНИЕ: означенное расстояние в 500 метров исчисляется от последнего жилого дома, построенного до заключения мирного договора, находящегося на краю села со стороны демаркационной линии. Настоящая граница установлена впредь до окончательного решения вопроса о границах Особой Комиссией, согл. § 2 Мирн. договора.

Полковник Авни-бей отсутствовал:
Председатель Армянской Комиссии
Генерал-майор; Члены.
С подлинным верно:
Делопроизводитель (подпись).

ЦГИА Арм. ССР, ф. 68(200), д. 79, л. 64.

№ 39

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3
ՀԱՅԿԱԿԱՆ ԱՌԱՆՁԻՆ ԿՈՐՊՈՒՍԻ ՈՒ ԵՐԵՎԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԽԱՌՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԵՎ ԹՈՒՐՔԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 1918 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 5–Ի ՄԻԱՑՅԱԼ ՆԻՍՏԻ

Նախագահում էր Կովկասյան Առաջին Կորպուսի հրամանատար Քյազիմ Կարաբեքիր-բեյը։

Մասնակցում էին հանձնաժողովի անդամներ՝

Գեներալ-մայոր Տեր-Ակոպովը,
Գնդապետ Քիշմիշևը,
Գլխ. շտաբի փոխգնդապետ Վեքիլովը,
Մկրտիչ Մուսինյանցը,
Յուրի Թամամշևը,
Բժիշկ Մելիքյանցը,
Կապիտան Խալիլ-բեյը,
Պորուչիկ Սալահ-Էդդինը։

Ընթերցվեց Օսմանյան կառավարության և Հայկական հանրապետության միջև 1918 թվականի հունիսի 11-ի կնքված հաշտության պայմանագրի 2-րդ պարագրաֆը, և համաձայն այդ պարագրաֆի ու Հայկական հանրապետության հետ Օսմանյան կայսրության բաժումում կնքած պայմանագրի՝ սահմաններին վերաբերող պարագրաֆի, որը հայտարարվել է Օսմանյան բանակի հրամանատարի հունիսի 6-ի № 2338 հրամանով, ընդ որում վերջինս Օսմանյան հանձնաժողովի կողմից հայտնվել է Հայկական հանձնաժողովին՝ նշելով, որ հրամանի մեջ տրված են բաժումի պայմանագրով ընդունված սահմանները, Օսմանյան կայսրության և Հայկական հանրապետության սահմանի մի մասը՝ Արփա և Խանչալի գյուղերի միջև, որոշված է եղել 1 : 200 000 մասշտաբի ռուսական քարտեզի վրա։ Ինչպես պարզվեց, 1918 թվականի հունիսի 4-ի հաշտության պայմանագրի § 2-ը, որը ստացել է Հայկական հանձնաժողովը Թիֆլիսից, չի համընկնում սահմանների հարցի մասին Օսմանյան հանձնաժողովի մոտ եղած հունիսի 11-ի հաշտության պայմանագրի § 2-ի հետ, դրա համար էլ հիշյալ սահմանը համարել դեմարկացիոն գիծ՝ մինչև այդ պարագրաֆի պարզաբանումը։

Սահմանն անցնում է Արփա գյուղից, որ մնում է Օսմանյան կայսրության տերիտորիայում, դեպի հյուսիս-արևմուտք՝ էլփին-Չայի հունով, Ջիվա, Ներքին Չանախչի և Կաշխա գյուղերը թողնելով Թուրքիային և ապա Գորտուն (Վերին Չանախչի) գյուղից 500 մետր հարավ, մինչև Դաշնայի լեռնագագաթը՝ թողնելով Կարախաչ-Կաղիլու գյուղը Թուրքիային, իսկ Արմիկ և Աղբուլաղ գյուղերը՝ Հայաստանին։ Այնուհետև սահմանագիծը գնում է Դաշնայի լեռնագագաթից հյուսիս-արևմուտք, 2 կիլոմետր հարավ՝ Շահաբլու, Ներքին Ղարաբաղլար (Ջիմանքենդ) և Տաշլու գյուղերը թողնելով Թուրքիային, իսկ Երանոս, Դախնաղ, Վերին Ղարաբաղլար և Կոտուզ գյուղերը՝ Հայաստանին, այնուհետև պայմանական գծով՝ Յափմա, Չաթմա, Չաննաթլու գյուղերը թողնելով Հայաստանին, իսկ Աղդամլար, Շուիթլքենդ, Վերին Դվին և Ներքին Աղբաշ գյուղերը՝ Թուրքիային։ Վերը նշված սահմանը անցնում է բնական բնագծերով, ինչպես՝ ջրբաժաններ, լեռնագագաթներ, կիրճեր և այլն։ Այնուհետև գիծը գնում է Թազաքենդ գյուղից հյուսիս և, 5 կիլոմետրը մոտենալով երկաթուղուն, Թազաքենդ գյուղը թողնում է Թուրքիային, Նորագավիթ գյուղը, Քալալի գյուղը՝ Հայաստանին և Խաչա-Փարախ գյուղը՝ Թուրքիային, անցնելով այդ գյուղերի արանքով՝ ճիշտ մեջտեղով։ Այնուհետև գիծը շարունակվում է Ղարաղշլաղ գյուղից 500 մետր դեպի հյուսիս, և կատարելով 500 մետր շառավղով շրջագիծ, այնուհետև գնում է Ղարաղշլաղ գյուղից դեպի արևմուտք՝ նշված շրջագծի երկաթուղագծից 6 կիլոմետր հեռու մնացող զուգահեռ գծի հատման կետից՝ երկաթուղուն զուգահեռ՝ 6 կիլոմետր տարածության վրա, այնուհետև գիծը, ծռվելով դեպի հյուսիս-արևմուտք, Ներքին-Այլանլու գյուղը թողնում է Թուրքիային, Ալի-Բեքլու գյուղը՝ Հայաստանին և կտրում է Էջմիածին—Սարդարաբադ խճուղին՝ երկաթուղուց 6 կիլոմետր հեռավորության վրա։ Այդ խճուղու հատման կետից գիծը ուղիղ գնում է մինչև Ալագյազ լեռան գագաթը, բայց անցնելով Քյորփալու և Քյուրա-քյանլու գյուղերի մոտից 500 մետր հեռավորությամբ դեպի արևմուտք, այդ գյուղերը թողնում է Հայաստանի տերիտորիայում։ Սահմանը հասնում է մինչև Ալագյազի գագաթը, անցնելով Քյուրա-քյանլու գյուղից 500 մետր դեպի հյուսիս, շարունակվելով ուղիղ գծով Էջմիածին—Սարդարաբադ խճուղու հատման կետից մինչև Ալագյազ։ Դրա հետևանքով Աջաքալի, Խղնաուղ և Աղավնատուն գյուղերը մնում են Հայաստանին, իսկ Ուջան գյուղը՝ Թուրքիային, Բայրամ-Ալին անցնում է Հայաստանին, իսկ Քոյթուլ գյուղը՝ Թուրքիային։

Սահմանը որոշվում է միայն մինչև Ալագյազ՝ նկատի ունենալով այն, որ հյուսիսային կողմից այն ժամանակավորապես գրավված է թուրքական զորքերի կողմից, և կորոշվի հաշտության պատվիրակությունների կողմից սահմանների հարցի վերջնական լուծումով՝ Կոստանդնուպոլսում։

Ծանոթություն.— Նշված 500 մետր տարածությունը հաշվվում է դեմարկացիոն գծի կողմից գյուղի ծայրին մինչև հաշտության պայմանագիրը կատարված վերջին բնակելի տնից։ Ներկա սահմանը որոշված է մինչև հատուկ հանձնաժողովի կողմից սահմանների հարցի վերջնական լուծումը՝ համաձայն հաշտ. պայմանագրի § 2-ի։

Գնդապետ Ամեր-բեյը բացակայում էր.
Հայկական հանձնաժողովի նախագահ
Գեներալ-մայոր. Ազգամներ։
Իսկականի հետ հիշտ է.
գործերի կառավարիչ (ստորագրություն)

ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 68(200), գ. 79, թ. 64։

№ 40

ЖУРНАЛ № 4
СОЕДИНЕННОГО ЗАСЕДАНИЯ СМЕШАННОЙ КОМИССИИ ОТДЕЛЬНОГО АРМЯНСКОГО КОРПУСА, ЭРИВАНСКОГО НАЦИОНАЛЬНОГО СОВЕТА И КОМИССИИ ТУРЕЦКОЙ АРМИИ ОТ 6 ИЮЛЯ 1918 ГОДА

Председательствовал командир 1-го Кавказского Корпуса Кязим Карабекир-бей. Присутствовали члены комиссий: генерал-майор Тер-Акопов, капитан Халил-бей, поручик Салай-эддин, полковник Кишмишев, Генер. Штаба подполковник Векилов, Мкртыч Мусинянц, Юрий Тамамшев и доктор Ованим Меликянц.

1) Армянской комиссией был представлен французский текст мирного договора, заключенного Оттоманской Империей и армянской Республикой в Батуме 4 июня 1918 года, полученный Армянской комиссией из Тифлиса.

В виду несоответствия § 2 названного договора с тем же

параграфом турецкого текста мирного договора от 11 июня 1918 года, представленного Оттоманской комиссией, решено выяснить, который из них считать правильным, и до выяснения этого вопроса границу, принятую в журнале № 3, соединенного заседания от 5 июля считать за демаркационную линию.

2) § 5 французского текста дополнительного договора между Оттоманской Империей и Армянской Республикой от 4 июня 1918 года, полученного из Тифлиса и § 13 турецкого текста дополнительного договора, полученного Оттоманской комиссией от Оттоманского командования 16 июня 1918 г., гласят о том, что конвенция, заключенная Оттоманским Правительством и правительством Закавказской Республики по вопросу о военнопленных, обязательна для договаривающихся сторон. Копия конвенции по вопросу о военнопленных Оттоманской Комиссией не получена, последнее же предложение § 2 французского текста конвенции, полученное Армянской Комиссией из Тифлиса от 15 мая, гласит, что русские военнопленные будут возвращены.

Основываясь на этом, Армянская Комиссия вновь возбуждает вопрос о возвращении русских военнопленных, Оттоманская Комиссия заявляет, что по этому вопросу она запросит Командующего армией.

3) Оттоманская Комиссия предложила на основании § 11 дополнительного договора от 11 июня 1918 г., находящегося у Турецкой Комиссии, и того же § договора от 4 июня 1918 г., находящегося у Армянской Комиссии, немедленно эвакуировать из Баку армянские силы. Армянская Комиссия заявила, что в Баку предположено сформировать один запасной полк; т. к. уже с ноября 1917 г. нет связи с гор. Баку, то не известно, сформирован ли таковой. Во исполнение означенного пункта договора армянским правительством из Тифлиса были посланы в Баку через Елисаветполь два представителя, но, вследствие закрытия дорог и по предложению его высокопревосходительства Нури-паши, они вернулись в Тифлис, имея намерение направиться в гор. Баку через Владикавказ.

Армянская Комиссия будет просить командира корпуса—генерала Назарбекова—послать письменный приказ по возбуж-

денному вопросу начальнику армянских сил в Баку через посредство турецкого командования.

4) На вопрос Оттоманской Комиссии—находятся ли на Каспийском море армянские вооруженные морские силы, Армянская Комиссия известила, что вследствие прерванной связи с г. Баку в течение восьми месяцев, она определенного ответа по сему вопросу дать не может. Что же касается торгового флота, то таковой считался до указанного перерыва сообщений принадлежащим обществам и частным лицам.

5) В заседании от 22 июня (§ 2 протокола №2) Оттоманская Комиссия предложила во исполнение § 2 Дополнительного договора выселить указанных в сем параграфе лиц из пределов Армянской республики; Оттоманская комиссия вновь просит дать ответ по этому вопросу. Армянская комиссия заявила, что она вновь будет просить его превосходительство командира корпуса генерала Назарбекова о выполнении этого параграфа договора.

6) Оттоманская Комиссия заявила, что русские и украинцы, находящиеся в пределах Армянской республики и желающие проехать в Тифлис и Поти для направления на родину, могут выехать из пределов Армянской Республики при условии временного невозвращения обратно на территорию Армянской республики и могут ехать до Караклиса по железной дороге, а оттуда до Санаина или до Казаха колесной, причем по их пути, в районах расположения Оттоманских войск, последними будет оказано возможное содействие. Для предоставления перевозочных средств лицам, предполагающим выехать из пределов Армянской республики, армянское правительство заблаговременно извещает Оттоманского представителя в г. Эривани о количестве этих лиц, причем желательно, чтобы эшелоны состояли из небольшого количества путников. Турецкий представитель в Казахе будет беспрепятственно пропускать всех лиц, снабженных удостоверениями от штаба корпуса или уполномоченного на то ген. Назарбековым лица. Лицам других национальностей, находящимся в пределах Армянской республики и желающим выехать оттуда, также разрешается проехать в гор. Тифлис на тех же условиях. Проезд же в Тифлис и обратно, впредь до проведения в

жизнь правил консульской конвенции, разрешает Оттоманский представитель в Эривани.

7) До назначения консулов и дипломатических агентов, решено назначить по 1-2 представителя, офицеров или гражданских лиц, со стороны Оттоманского правительства в Эривани и Армянской республике, в Александрополе—для урегулирования вопроса эмиграции и сношений с правительством, при котором они находятся по поручению своих правительств.

8) Армянская Комиссия сообщит о количестве дрезин и насосов, находящихся на станции Эривань, после чего, по обоюдному соглашению, часть таковых будет передана Оттоманскому Правительству.

9) Оттоманская Комиссия заявила, что из 9 офицеров и 33 солдат, раненных и находящихся в Караклисе, 2 офицера и 21 солдат оказались армянами, остальные же—русскими. Один из армянских офицеров, как тифозно больной, остался в Караклисе, а остальные—1 офицер и 21 солдат 5 июля прибыли поездом в Александрополь. Указанные лица вместе с 4 сестрами 6 июля уехали в город Эривань.

С подлинным верно:
Делопроизводитель (подпись).

ЦГИА Арм. ССР. ф. 68(200), д. 79, л. 65—66.

№ 40

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 4 ԱՌԱՆՁԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՐՊՈՒՍԻ ՈՒ ԵՐԵՎԱՆԻ ԱՋԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԽԱՌՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԵՎ ԹՈՒՐՔԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 1918 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 6-Ի ՄԻԱՑՅԱԼ ՆԻՍՏԻ

Նախագահում էր Կովկասյան 1-ին կորպուսի հրամանատար Քյազիմ Կարաբեքիր-բեյը։ Ներկա էին Հանձնաժողովի անդամներ գեներալ-մայոր Տեր-Ակոպովը, կապիտան Խալիլ-բեյը, պորուչիկ Սալահ-էդդինը, գնդապետ Քիշմիշևը, գլխավոր շտաբի փոխգնդապետ Վեքիլովը, Մկրտիչ Մուսինյանցը, Յուրի Թամամշևը և բժիշկ Հովակիմ Մելիքյանցը։

1) Հայկական հանձնաժողովի կողմից ներկայացվեց 1918 թվականի հունիսի 4-ին Բաքումում Օսմանյան կայսրության և Հայկական հանրապետության միջև կնքված հաշտության պայմանագրի ֆրանսերեն տեքստը, որը Թիֆլիսից ստացել է Հայկական հանձնաժողովը։

Նկատի առնելով հիշյալ պայմանագրի § 2-ի չհամապատասխանելը Օսմանյան հանձնաժողովի ներկայացրած 1918 թվականի հունիսի 11-ի հաշտության պայմանագրի թուրքական տեքստի նույն պարագրաֆին, որոշված է պարզել, թե նրանցից որը պետք է ճիշտ համարել, և մինչև այդ հարցը պարզելը հուլիսի 5-ի միացյալ նիստի № 3 արձանագրությունում ընդունված սահմանը համարել դեմարկացիոն գիծ։

2) Օսմանյան կայսրության և Հայկական հանրապետության միջև 1918 թվականի հունիսի 4-ին կնքված լրացուցիչ պայմանագրի՝ Թիֆլիսից ստացված ֆրանսերեն տեքստի § 5-ը և Օսմանյան հրամանատարությունից 1918 թվականի հունիսի 16-ին Օսմանյան հանձնաժողովի ստացած պայմանագրի թուրքերեն տեքստի § 13-ը ասում են այն մասին, որ ռազմագերիների հարցի մասին Օսմանյան կառավարության և Անդրկովկասյան հանրապետության կնքած կոնվենցիան պարտադիր է պայմանավորվող կողմերի համար։ Ռազմագերիների հարցի մասին կոնվենցիայի պատճենը Օսմանյան հանձնաժողովի կողմից չի ստացված, իսկ մայիսի 15-ին Թիֆլիսից Հայկական հանձնաժողովի ստացած կոնվենցիայի ֆրանսերեն տեքստի § 2-ն էլ ասում է, որ ռուսական ռազմագերիները կվերադարձվեն։

Հենվելով դրա վրա, Հայկական հանձնաժողովը նորից հարց է հարուցում ռուսական ռազմագերիներին վերադարձնելու մասին։ Օսմանյան հանձնաժողովը հայտարարում է, որ այդ հարցի կապակցությամբ ինքը հարցում կանի Բանակի հրամանատարին։

3) Թուրքական հանձնաժողովի մոտ գտնվող 1918 թվականի հունիսի 11-ի լրացուցիչ պայմանագրի § 11-ի և Հայկական հանձնաժողովի մոտ գտնվող 1918 թ. հունիսի 4-ի պայմանագրի այդ նույն պարագրաֆի հիման վրա Օսմանյան հանձնաժողովը առաջարկեց հայկական ուժերը անհապաղ էվակուացնել Բաքվից։ Հայկական հանձնաժողովը հայտարարեց, որ Բաքվում ենթադրվում էր կազմել մեկ պահեստային գունդ։ Քանի որ 1917 թ. նոյեմբերից արդեն կապ չկա Բաքու քաղաքի հետ, ապա հայտնի չէ՝ կազմվա՞ծ

է արդյոք այդպիսին։ Պայմանագրի նշված կետը կատարելու համար Հայկական կառավարությունը Թիֆլիսից ելիզավետպոլով Բաքու է ուղարկել երկու ներկայացուցիչ, բայց ճանապարհները փակ լինելու հետևանքով և նորին Բարձր գերազանցության Նուրի-փաշայի առաջարկով նրանք վերադարձել են Թիֆլիս, մտադրություն ունենալով Բաքու ուղևորվել վլադիկավկազի վրայով։

Հայկական հանձնաժողովը կխնդրի կորպուսի հրամանատարին՝ գեներալ Նազարբեկովին՝ հարուցված հարցի մասին գրավոր հրաման ուղարկելու Բաքվի հայկական ուժերի պետին՝ թուրքական հրամանատարության միջոցով։

4) Օսմանյան հանձնաժողովի այն հարցի առթիվ, թե Կասպից ծովի վրա գտնվո՞ւմ են արդյոք հայկական ծովային դինված ուժեր, Հայկական հանձնաժողովը տեղեկացրեց, որ ութ ամսվա ընթացքում քաղաքի հետ կապի ընդհատման հետևանքով ինքը այդ հարցին որոշակի պատասխան տալ չի կարող։ Իսկ ինչ վերաբերում է առևտրական նավատորմին, ապա այդպիսին մինչև նշված հաղորդակցությունների ընդհատումը համարվել է ընկերությունների և մասնավոր անձանց սեփականություն։

5) Հունիսի 22-ի նիստին (№ 2 արձանագրության § 2) Օսմանյան հանձնաժողովը, ի լրումն լրացուցիչ պայմանագրի § 2-ի, առաջարկեց այդ պարագրաֆում նշված անձանց արտաքսել Հայկական հանրապետության սահմաններից։ Օսմանյան հանձնաժողովը նորից է խնդրում պատասխան տալ այդ հարցի առթիվ։ Հայկական հանձնաժողովը հայտարարեց, որ նա նորից կխնդրի նորին գերազանցություն կորպուսի հրամանատար գեներալ Նազարբեկովին՝ պայմանագրի այդ պարագրաֆի կատարման մասին։

6) Օսմանյան հանձնաժողովը հայտարարեց, որ Հայկական հանրապետության սահմաններում գտնվող ռուսներն ու ուկրաինացիները, որոնք ցանկանում են անցնել Թիֆլիս և Փոթի՝ հայրենիք ուղևորվելու համար, կարող են դուրս գալ Հայկական հանրապետության սահմաններից՝ ժամանակավորապես Հայկական հանրապետության տերիտորիան ետ չվերադառնալու պայմանով և կարող են մինչև Ղարաքիլիսա գնալ երկաթուղով, իսկ այնտեղից մինչև Սանահին կամ մինչև Ղազախ՝ կառքով, ընդ որում նրանց ճանապարհին, Օսմանյան զորքերի տեղադրման շրջաններում, վերջիններիս կողմից ցույց կտրվի հնարավոր աջակցություն։ Հայկական հանրապետության սահմաններից դուրս գնալ ցանկացող անձնավորություններին փոխադրական միջոցներ տրամադրելու համար Հայկա-

կան կառավարությունը նախօրոք տեղյակ է պահում Երևանում օսմանյան ներկայացուցչին այդ անձնավորությունների թվի մասին, ընդ որում ցանկալի է, որ էշելոնները կազմված լինեն ճանապարհվողների ոչ մեծ թվից։ Ղազախում թուրքական ներկայացուցիչը անարգել բաց կթողնի կորպուսի շտաբի կամ դրա համար գեներալ Նազարբեկովի լիազորած անձի կողմից վկայական ունեցողներին։ Հայկական հանրապետության պահմաններում գտնվող և այնտեղից դուրս գալ ցանկացող այլազգի անձնավորություններին նույնպես թույլատրվում է անցնել Թիֆլիս՝ նույն պայմաններով։ Իսկ երթևեկությունը Թիֆլիս և ետ, մինչև հյուպատոսական կոնվենցիայի կանոնների կենսագործումը, թույլ է տալիս Երևանում օսմանյան ներկայացուցիչը։

7) Մինչև հյուպատոսների և դիվանագիտական գործակալների նշանակումը որոշված է նշանակել 1—2-ական ներկայացուցիչ՝ սպաներ կամ քաղաքացիական անձնավորություններ՝ Օսմանյան կառավարության կողմից՝ Երևանում և Հայկական հանրապետության կողմից՝ Ալեքսանդրապոլում՝ էմիգրացիայի հարցը կարգավորելու և այն կառավարության հետ հարաբերություններ վարելու համար, որի մոտ նրանք գտնվում են՝ իրենց կառավարությունների հանձնարարությամբ։

8) Հայկական հանձնաժողովը կհայտնի Երևան կայարանում գտնվող դրեզինների և պոմպերի քանակի մասին, որից հետո, երկուստեք համաձայնությամբ, այդպիսիների մի մասը կհանձնվի Օսմանյան կառավարությանը։

9) Օսմանյան հանձնաժողովը հայտարարեց, որ Ղարաքիլիսայում եղած վիրավոր 9 սպայից և 33 զինվորից 2 սպա և 21 զինվոր հայեր են, իսկ մնացածները՝ ռուսներ։ Սպաներից մեկը, որպես տիֆով հիվանդ, մնացել է Ղարաքիլիսայում, իսկ մնացածները՝ 1 սպա և 21 զինվոր, գնացքով ժամանել են Ալեքսանդրապոլ։ Նշված անձնավորությունները 4 քույրերի հետ միասին հունիսի 6-ին գնացել են Երևան։

Խոսկանի հետ ճիշտ է.
Գործերի կառավարիչ (ստորագրություն)

ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 68(200), գ. 79, թ. 65—66։

№ 41

ПРОТЕСТ ТУРЕЦКОГО КОМАНДОВАНИЯ ДАШНАКСКОМУ ПРАВИТЕЛЬСТВУ С ЦЕЛЬЮ ПОКОНЧИТЬ С НАЧАВШЕЙСЯ ПАРТИЗАНСКОЙ БОРЬБОЙ ПРОТИВ ТУРЕЦКОЙ АРМИИ

Оттоманское командование Кавказского фронта,
№ 2891, Батум, 12 июля 1918 г.

Группа конных солдат, посланная занять станцию Камарлу на юге Эривани, 14-го июня 1918 г., к югу от Улуханлу подвергнувшись нападению со стороны вооруженного армянского населения и находящихся в этом районе солдат, дала потери убитыми—22 солдата и 46 лошадей. Это происшествие полностью противоречит установленным между нашим и армянским правительствами мирным и добросовестным отношениям, которые мы искренне хотим продолжать с упомянутым правительством. Поэтому просим произвести следствие по этому делу, с целью наказания зачинщиков происшествия, оштрафовать за наших убитых солдат и лошадей и не повторять подобных действий, чтобы не были порваны дружеские отношения, которые мы искренне хотим поддерживать и продолжать с армянским правительством и не вынуждать нас перейти к подобным действиям.

Примите, милостивый Государь, уверение моего глубокого уважения.

И. О. командира группы постоянных армий
Генерал-лейтенант Эссад

ЦГИА Арм. ССР, ф. 68(200), д. 33, л. 4.

№ 41

ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀՐԱՄԱՆԱՏԱՐՈՒԹՅԱՆ ԲՈՂՈՔԸ ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ՝ ԹՈՒՐՔԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ԴԵՄ ՍԿՍՎԱԾ ՊԱՐՏԻԶԱՆԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻՆ ՎԵՐՋ ՏԱԼՈՒ ՀԱՄԱՐ

Կովկասյան ռազմաճակատի Օսմանյան հրամանատարություն,
№ 2891, Բաթում, 1918 թ. հուլիսի 12

Հեծյալ զինվորների մի խումբ, որը ուղարկված էր Երևանի հարավային կողմում գտնվող Ղամարլու կայարանը գրավելու, 1918

Ք. Հունիսի 14-ին Ուլուխանլուի հարավային կողմում, գինված հայ բնակչության և այդ շրջանում գտնվող գինվորների կողմից հարձակման ենթարկվելով, տվել է սպանված՝ 22 գինվոր և 46 ձի։ Այս պատահարը բոլորովին հակառակ է մեր և Հայկական կառավարության միջև ստեղծված հաշտության և բարիդրացիական հարաբերությանը, ինչ որ անկեղծորեն ցանկանում ենք շարունակել հիշյալ կառավարության հետ։ Ուստի խնդրում եմ այս առթիվ քննություն կատարել՝ սույն պատահարի հեղինակներին պատժելու, մեր սպանված գինվորների ու ձիերի համար տուգանք նշանակելու և այս կարգի դեպքերն այլևս չկրկնվելու համար, որպեսզի այդ բարեկամական հարաբերությունները, որ անկեղծորեն ցանկանում ենք պահպանել և շարունակել Հայկական կառավարության հետ, չխանգարվեն և մենք ստիպված չլինենք փոխադարձաբար նույնը կատարել։

Ընդունեցեք, ողորմած Տեր, իմ խորին հարգանքի հավաստիքը։

Ի. ա. Արևելյան բանակների խմբի հրամանատարի,
գեներալ-լեյտենանտ Էսատ

ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 68(200), գ. 33, թ. 4։

№ 42

ОТВЕТ ЕГО ВЫСОКОПРЕВОСХОДИТЕЛЬСТВУ ЭССАД-ПАШЕ, КОМАНДУЮЩЕМУ ОТТОМАНСКИМИ АРМИЯМИ НА КАВКАЗСКОМ ФРОНТЕ ОТНОСИТЕЛЬНО СОПРОТИВЛЕНИЯ, ОКАЗАННОГО ВОЙСКАМ В РАЙОНЕ СТ. УЛУХАНЛУ

Оператив
2 августа

Ваше высокопревосходительство Милостивый Государь!

По поручению правительства республики Армении имею честь, по поводу Вашего сообщения от 12 июля сего года за №2891, сообщить Вам нижеследующее:

Ваше сообщение получено правительством лишь 28 июля, почему и настоящий ответ является несколько запоздалым.

В столкновении, имевшем место 24 июня сего года к югу от ст. Улуханлу, в районе станции Камарлу, армянские войска участия не принимали, ибо уже к 14 июня они были отведены на территорию Армении. Таким образом сопротивление Оттоманским войскам могло быть оказано лишь вооруженными местными жителями, а также солдатами, дезертировавшими из своих частей, а так как инцидент произошел не на территории Армении, то розыск и наказание виновных не представляются возможными.

В силу тех же соображений правительство Армении не может взять на себя ответственность за действия отдельных лиц.

Поручив мне довести об этом до сведения Вашего Высокопревосходительства, правительство республики Армении выражает полную уверенность, что инциденты, подобные указанному, происходящие независимо от воли правительства и предупредить которые оно не имеет ни возможности, ни даже права, ибо они происходят вне пределов государства, не послужат причиной нарушения добрососедских отношений, поддержание коих составляет одну из главнейших задач правительства.

С своей стороны считаю долгом сообщить Вашему Высокопревосходительству, что по этому же вопросу исчерпывающие данные уже были сообщены мною Его Превосходительству Командиру 1 Кавказского корпуса Киазим Карабекирбеку радиограммами от 3 июля сего года за №137 и от 9 июля за №1069.

Прошу принять уверение в совершенном моем к Вам уважении

О. Назарбеков.

ЦГИА Арм. ССР, ф. 68 (200), д. 33, л. 4.

№ 42

ՊԱՏԱՍԽԱՆ ՆՈՐԻՆ ԲԱՐՁՐ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅՈՒՆ ԷՍՍԱԴՓԱՇԱՅԻՆ՝ ԿՈՎԿԱՍՅԱՆ ՌԱԶՄԱՃԱԿԱՏԻ ՕՍՄԱՆՅԱՆ ԲԱՆԱԿՆԵՐԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԻՆ, ՈՒԼՈՒԽԱՆԼՈՒ ԿԱՅԱՐԱՆԻ ՇՐՋԱՆՈՒՄ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՋՈՐՔԵՐԻՆ ՅՈՒՅՑ ՏՎԱԾ ԴԻՄԱԴՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Գաղծնական
Օգոստոսի 2

Ձերդ գերազանցություն Ողորմած տեր.

Սույն թվականի հուլիսի 12-ի Ձեր № 2891 գրության կապակցությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության հանձնարարությամբ պատիվ ունեմ հայտնելու Ձեզ հետևյալը։

Ձեր հայտարարությունը Երևանում կառավարության կողմից ստացվել է միայն հուլիսի 28-ին, որի պատճառով էլ ներկա պատասխանը փոքր-ինչ ուշացած է։

Սույն թվականի հունիսի 24-ին Ուլուխանլու կայարանից հարավ, Զամբուլու կայարանի շրջանում տեղի ունեցած ընդհարմանը հայկական զորքերը մասնակցություն չեն ունեցել, քանի որ հունիսի 14-ին նրանք արդեն փոխադրվել էին Հայաստանի տերիտորիան։ Այդպիսով, օսմանյան զորքերին զինված դիմադրություն կարող է ցույց տրված լինի միայն տեղական զինված բնակիչների կողմից, ինչպես և իրենց զորամասերը դասալքած զինվորների կողմից, իսկ այնքանով, որքանով միջադեպը տեղի է ունեցել ոչ Հայաստանի տերիտորիայում, ապա մեղավորներին փնտրելն ու պատժելը անհնար է դառնում։

Այդ նույն նկատառումներով էլ Հայաստանի կառավարությունը չի կարող իր վրա պատասխանատվություն վերցնել առանձին անձնավորությունների գործողությունների համար։

Ինձ հանձնարարելով այդ մասին հայտնել Ձերդ բարձր գերազանցությանը, Հայաստանի Հանրապետության կառավարությունը լրիվ համոզմունք է արտահայտում, որ վերոհիշյալ նման միջադեպերը, որոնք տեղի են ունենում կառավարության կամքից անկախ և որոնք կանխելու համար նա չունի ոչ հնարավորություն և ոչ էլ նույնիսկ իրավունք, քանի որ նրանք տեղի են ունենում պետության սահմաններից դուրս,—պատճառ չեն դառնա բարիդրացիական հարաբերությունների խանգարման, որոնց պահպանումը հանդիսանում է կառավարության ամենագլխավոր խնդիրներից մեկը։

Իմ կողմից պարտք եմ համարում Ձերդ բարձր գերազանցությանը հայտնելու, որ այդ նույն հարցի կապակցությամբ սպարիչ տվյալներ սույն թվականի հուլիսի 3-ի № 137 և հուլիսի 9-ի № 1069 ռադիոգրամներով ևս արդեն հայտնել եմ առաջին կովկասյան կորպուսի հրամանատար, նորին գերազանցություն Քյազիմ Կարաբեքիր-բեյին։

Խնդրում եմ ընդունեք Ձեր նկատմամբ իմ կատարյալ հարգանքների հավաստիքը
Հ. Նազարբեկով

ՀՍՍՌ ԿՊԳԱ, ֆ. 68(200), գ. 33, թ. 4։

№ 43

ОБРАЩЕНИЕ ПРЕДСЕДАТЕЛЯ АРМЯНСКОЙ ДЕЛЕГАЦИИ АВЕТИСА АГАРОНЯНА К Е. П. ВЕЛИКОМУ ВИЗИРЮ ТАЛИАТ-ПАШЕ

Ваше превосходительство!

В ответ на приглашение Оттоманского императорского правительства, мы счастливы и рады пребывать в Константинополе, чтобы содействовать установлению мира и дружбы, которое, как мы надеемся, отныне свяжет молодую Армянскую республику с Оттоманской империей и ее союзниками...

Ваше высочество, правительство Армянской республики сделает все возможное, чтобы рассеять недоразумения и создать атмосферу мира и дружбы с Оттоманской империей. Мы уверены, что этот путь и этот дух мира целиком соответствует точке зрения и чувствам оттоманского императорского правительства, которое со своей стороны также приложит необходимые усилия для устранения всех этих недоразумений и забвения их последствий.

Идея независимости Армении, будучи поражением счастливого внушения оттоманских государственных людей кажется нам залогом и доказательством искренности и доброжелательности императорского правительства.

Наша территория очень недостаточна и ограниченна, но

мы твердо убеждены, что здравая и дальновидная политика государственных людей оттоманской империи способствовала формированию независимого армянского государства сочтет возможным, как справедливое и логическое следствие, обеспечить наше государство территориальными границами, удовлетворяя наши законные стремления, отвечая принципам справедливости и этнографии, что сделало бы новое армянское государство жизнеспособным к политическому и экономическому развитию на пути культуры и цивилизации.

Константинополь, 22-го июня 1918 г.

ЦГИА Арм. ССР, ф. 68 (200), д. 13, л. 7—8.

№ 43

ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ԱՎԵՏԻՍ ԱՀԱՐՈՆՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԸ Ն. Գ. ՄԵԾ ՎԵԶԻՐ ԹԱԼԻԱԹ-ՓԱՇԱՅԻՆ

Ձերդ գերազանցություն.

Պատասխանելով Օսմանյան կայսերական կառավարության հրավերին, մենք երջանիկ և ուրախ ենք Կոստանդնուպոլսում գտնվելու համար, որպեսզի աջակցենք հաշտության ու բարեկամության գործերը հաստատելուն, որ այսուհետև, հույս ունենք, պետք է երիտասարդ Հայկական հանրապետությունը կապի Օսմանյան կայսրության և նրա դաշնակիցների հետ...

Ձերդ բարձրություն, Հայկական հանրապետության կառավարությունը կանի հնարավոր ամեն բան, որպեսզի ցրի թյուրիմացությունները և ստեղծի համաձայնության ու բարեկամության մթնոլորտ Օսմանյան կայսրության հետ: Մենք վստահ ենք, որ այս ուղին և հաշտության այս ոգին ամբողջապես համապատասխանում են Օսմանյան կայսրության կառավարության տեսակետներին և զգացումներին, որը իր կողմից նույնպես, անհրաժեշտ ջանքեր կթափի այս բոլոր թյուրիմացությունների վերացման և նրանց հետևանքների մոռացման համար:

Հայաստանի անկախության գաղափարը, որ Օսմանյան պետական մարդկանց երջանիկ ներշնչման ծնունդն է, մեզ թվում է՝ կայսերական կառավարության անկեղծության ու բարյացակամության գրավականը և ապացույցը:

Մեր տերիտորիան շատ անբավական և սահմանափակ է, բայց մենք հաստատապես համոզված ենք, որ ինչպես Օսմանյան կայսրության պետական մարդկանց առողջ և հեռատես քաղաքականությունը նպաստեց Հայկական անկախ պետության կազմավորմանը, այնպես էլ որպես արդար և տրամաբանական հետևանք, կգտնի հնարավոր՝ մեր պետության համար ապահովելու տերիտորիալ սահմաններ, բավարարելով մեր օրինական ձգտումները, որը, արդարության և ազգագրական սկզբունքներին զոհացում տալով, հայկական նոր պետությունը կդարձներ կենսունակ և ընդունակ քաղաքական ու տնտեսական զարգացման, կուլտուրայի և քաղաքակրթության ճանապարհին:

Կոնստանդնուպոլիս, 22 հունիսի 1918 թ.

ՀՍՍՌ ԿԳԳԱ, ֆ. 68 (200), գ. 13, թ. 7—9:

№ 44

ПОСЕЩЕНИЕ ДЕЛЕГАЦИЕЙ АРМЯНСКОЙ РЕСПУБЛИКИ ВЕЛИКОГО ВИЗИРЯ ОТТОМАНСКОЙ ИМПЕРИИ ТАЛИАТ-ПАШИ

22-го июня 1918 г., в час 30 мин., председатель армянской делегации А. Агаронян, министр иностранных дел А. Хатисов, военный советник делегации генерал Корганов посетил Е. В. великого визиря. Этих господ сопровождал лейтенант Агабабов—адъютант председателя.

Господин А. Агаронян обратился в Е. В. великому визирю со следующей речью (речь приводится отдельно).

Е. В. Великий визирь ответил председателю, уверяя его, что императорское правительство всецело разделяет чувства и чаяния армянского народа, и молодая республика может быть спокойна и уверена, что оттоманская империя всячески поддержит и сделает все необходимое, чтобы этот сильный и трудолюбивый народ смог осуществлять свои программы.

Затем председатель делегации объясняет Е. В. великому визирю, что самый насущный вопрос, обращающий на себя все их внимание, это внутренняя организация...

Великий визирь признает, что между армянским и оттоманским народами имели место недоразумения, которые привели к печальным последствиям...

После этих сведений председатель делегации передал Е. В. великому визирю протокол объявления независимости Армении. Затем председатель, принимая наилучшие пожелания великого визиря, отбыл.

Свидание продлилось полчаса.

ЦГИА Арм. ССР, ф. 68 (200), д. 13, л. 7—8.

№ 44

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՅՑԸ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՄԵԾ ՎԵԶԻՐ ԹԱԼԻԱԹ-ՓԱՇԱՅԻՆ

1918 թ. հունիսի 22-ին, ժամը մեկն անց կեսին, հայկական պատվիրակության նախագահ Ա. Ահարոնյանը, արտաքին գործերի մինիստր Ա. Խատիսովը, պատվիրակության զինվորական խորհրդական գեներալ Կորգանովը այցելեցին Ն. Բ. մեծ վեզիրին։ Այս պարոններին ընկերակցում էր լեյտենանտ Ազաթաթովը՝ նախագահի թիկնապահը։

Պարոն Ա. Ահարոնյանը դիմեց Ն. Բ. մեծ վեզիրին հետևյալ ճառով (ճառը բերվում է առանձին)։

Ն. Բ. մեծ վեզիրը պատասխանեց նախագահին՝ նրան վստահեցնելով, որ կայսերական կառավարությունը ամբողջապես բաժանում է հայ ժողովրդի զգացումները, հույսերը, և երիտասարդ հանրապետությունը կարող է ապահով լինել, որ Օսմանյան կայսրությունը ամեն կերպ կաջակցի և անհրաժեշտը կանի, որպեսզի այդ ուժեղ և աշխատասեր ժողովուրդը կարողանա իրագործել իր ծրագրերը։

Ապա պատվիրակության նախագահը բացատրում է Ն. Բ. մեծ վեզիրին, որ ամենահրատապ խնդիրը այժմ, որ իրենց ամբողջ ուշադրությունն է գրավում, ներքին կազմակերպությունն է...

Մեծ վեզիրը ընդունում է, որ հայ և օսմանյան ժողովուրդների միջև տեղի են ունեցել թյուրիմացություններ, որոնք շատ ցավալի հետևանքների են հանգեցրել։

Այս տեղեկություններից հետո, պատվիրակության նախագահը հանձնեց Ն. Բ. մեծ վեզիրին Հայաստանի անկախության հռչակման արձանագրությունը։

Ապա նախագահը, ընդունելով մեծ վեզիրի լավագույն ցանկությունները հաջողության համար, մեկնեց։

Տեսակցությունը տևեց կես ժամ։

ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 68 (200), գ. 13, թ. 7—8։

№ 45

ПОСЕЩЕНИЕ ДЕЛЕГАЦИЕЙ АРМЯНСКОЙ РЕСПУБЛИКИ ВОЕННОГО МИНИСТРА ОТТОМАНСКОЙ ИМПЕРИИ ГЕНЕРАЛИССИМУСА ЭНВЕР-ПАШИ

Председатель делегации обратился к Е. П. Энвер-паше, от имени республики Армении в нескольких словах заверяя его в сердечных чувствах, которыми преисполнено к нему правительство республики... Затем он ознакомил его с вопросами, затронутыми на свидании с великим визирем.

Е. П. Энвер паша, отвечая председателю, выразил благодарность и в свою очередь заверил его, что он целиком разделяет эти чувства. «Я ожидал этого с Вашей стороны,— сказал его превосходительство,—чтобы сказать Вам правду, я должен отметить, что вы надеялись на Россию, и еще больше на Англию. Турция дала Вам независимость и дала ее после долгого обдумывания вашего положения. Есть моя подпись и она никогда не может быть стерта. Вы можете быть не только нашими хорошими соседями, но и нашими союзниками. Не нужно ускорять событий для этого: когда Вы убедитесь, что этого требуют наши общие интересы, тогда вы сами придете к этому».

Его превосходительство Энвер-паша и председатель делегации занимаются разными вопросами, после чего заканчивается свидание, продлившееся 40 минут.

ЦГИА Арм. ССР, ф. 68 (200), д. 13, л. 5–6.

№ 45

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՅՑԸ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՌԱԶՄԱԿԱՆ ՄԻՆԻՍՏՐ ԴԵՆԵՐԱԼԻՍԻՄՈՒՍ ԷՆՎԵՐ-ՓԱՇԱՅԻՆ

Պատվիրակության նախագահը դիմեց Ն. Գ. Էնվեր-փաշային՝ նրան վստահեցնելով, մի քանի խոսքով, Հայաստանի Հանրապետության անունից այն բարեկամական և սրտաբուխ զգացումների մասին, որ տոգորված է Հանրապետության կառավարությունը... Ապա նա ծանոթացրեց նրան մեծ վեզիրի հետ ունեցած տեսակցության ընթացքում շոշափված հարցերի հետ։

Ն. Գ. Էնվեր-փաշան, պատասխանելով նախագահին, շնորհակալություն հայտնեց և նրան վստահեցրեց իր հերթին, որ ինքը ամբողջապես բաժանում է այդ զգացումները։ «Ես Ձեր կողմից սպասում էի դրան,— ասաց նորին գերազանցությունը։— Ձեզ ճշմարտությունը ասած լինելու համար, պետք է ասեմ, որ Դուք ձեր հույսը դրել էիք Ռուսաստանի վրա, կամ ավելի ևս՝ Անգլիայի վրա։ Թուրքիան այժմ Ձեզ անկախություն տվեց, և այն տվեց ձեր դրության մասին երկար մտածելուց հետո։ Իմ ստորագրությունը կա, և նա երբեք չի ջնջվի։ Դուք ոչ միայն կարող եք մեզ հետ լավ դրացիներ լինել, այլ նաև՝ մեր դաշնակիցները։ Կարիք չկա դեպքերը փութացնել դրա համար. երբ համոզվեք, որ մեր ընդհանուր շահերը այդ են պահանջում, դուք ինքներդ կգաք դրան»։

Նորին գերազանցություն Էնվեր-փաշան և պատվիրակության նախագահը զբաղվում են զանազան հարցերով, ապա տեսակցությունը վերջանում է՝ 40 րոպե տևելուց հետո։

ՀՄՄՌ ԿԳԳԱ, ֆ. 68(200), գ. 13, թ. 5—6։

№ 46

ОБРАЩЕНИЕ ОТТОМАНСКОГО ПРАВИТЕЛЬСТВА К ГЛАВЕ АРМЯНСКОЙ ДИПЛОМАТИЧЕСКОЙ МИССИИ В ГРУЗИИ О ВЫВОДЕ ТУРЕЦКИХ ВОЙСК ИЗ ЗАКАВКАЗИЯ

Тифлис, 2 ноября 1918 г.

Ваше Превосходительство!

Имею честь сообщить Вам, согласно приказу, полученному мною сегодня от Его Высочества великого визиря и начальника штаба, главнокомандующего Иззет-паши о том, что приказано командованиям заинтересованных армий эвакуировать на протяжении шести недель, начиная с 24/10—1918 г., территорию, оккупированную на Кавказе в силу Брест-литовского мирного договора.

Благоволите, порядка ради, передать об этом Вашему правительству.

Пользуясь случаем, вновь выражаю Вашему превосходительству уверение в моем глубоком уважении.

Дипломатический и военный председатель Оттоманского императорского правительства.

Подпись: Абдул-Керим
С подлинным верно:
атташе Сурен Меликов

ЦГИА Арм. ССР, ф. 68(200), д. 73, л. 29.

№ 46

ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՄԸ ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՄԻՍԻԱՅԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ՝ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻՑ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՋՈՐՔԵՐԸ ԴՈՒՐՍ ԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Թիֆլիս, 1918 թ. նոյեմբերի 2

Ձերդ Գերազանցություն.

Պատիվ ունեմ հաղորդելու Ձեզ, համաձայն նորին բարձրություն մեծ վեզիր և շտաբի պետ, գլխավոր հրամանատար Իզզեթ-փաշայից այսօր իմ ստացած հրամանի, այն մասին, որ շահագրգռված բանակների հրամանատարություններին հրամայված է վեց շաբաթվա ընթացքում՝ սկսած 24/10—1918 թ. էվակուացնել Բրեստ-Լիտովսկի հաշտության պայմանագրի հիման վրա Կովկասում օկուպացված տերիտորիան։

Բարեհաճեցեք, ի սեր կարգի, հաղորդել այդ մասին Ձեր կառավարությանը։

Օգտվելով առիթից, նորից իմ խոր հարգանքի հավաստիքն եմ արտահայտում Ձերդ Գերազանցությանը:

Սամանյան կայսերական կառավարության զիմանադիտական և ռազմական ներկայացուցիչ:

Ստորագրությունն. Արգուլ Քեբիմ
Իսկականի հետ հիշտ է՝
կցորդ Սուբեն Մելիքով

ՀՍՍՌ ԿԳՊԱ, ֆ. 68(200), գ. 73, թ. 29:

№ 47

ИНФОРМАЦИЯ САРАТОВСКОГО БЕЖЕНСКОГО ОТДЕЛА КОМИССАРИАТА ПО ДЕЛАМ АРМЯН

6 октября 1918 г.

С первых же дней своей работы беженскому отделу Комиссариата по делам армян (Саратовский отдел) пришлось столкнуться с рядом неотложных вопросов жизни беженцев, требующих скорейшего разрешения.

Нужда, темнота и неорганизованность беженской массы, вот все, что было оставлено прежними беженскими организациями (Национальн. комитет, Беженская комиссия) в наследство бежотделу.

Работа бежотдела особенно затруднялась благодаря тому, что все эти беженские организации, ввиду неправильно поставленного дела помощи беженцам, создавали кадры бездельников и тунеядцев, не принося никакой существенной пользы. Главным вопросом, с которым прежде всего пришлось столкнуться бежотделу, был вопрос о материальной помощи беженцам.

По этому вопросу бежотдел пришел к такому заключению, что от системы систематичных денежных пайков, принятой прежними организациями, необходимо раз и навсегда отказаться, ибо мера эта почти не приносит пользы и приучает массы к безделью.

Бежотдел полагает, что наиболее рациональной была бы следующая система: безработные денежных пайков не получают, а непосредственно направляются в отдел социального

обеспечения при совдепе, где им оказывают определенную помощь.

Женщины, дети и больные получают на первых порах от бежотдела денежное пособие, а потом также направляются бежотделом в отдел социального обеспечения.

Кроме того, женщины, дети и больные получают от бежотдела белье, материю и пр.

В виду же того, что беженцы, вследствие незнания языка, незнакомства с местными условиями, а также вследствие продовольственного кризиса, не имеют возможности получать приличное (нормальное) питание, бежотдел задался целью организовать дешевую столовую, где бы за небольшую плату они могли получать обеды.

Неимущим, больным, женщинам и детям обеды отпускаться будут по самой минимальной расценке, а иногда и бесплатно. С этой целью бежотдел уже приступил к заготовке на зиму запасов картофеля, пока получено по 5 пуд. на 200 человек, капусты, зелени и пр.

Другой вопрос беженской жизни, стоящий не менее остро—это вопрос беженской безработицы. В целях борьбы с этим бежотдел предлагает организовать ряд мастерских (столярных, портняжных, сапожных и женскую, где бы шили белье и одежду для беженцев, и прочие организации), которые будут организованы на коммунистических началах.

Для тех же из беженцев, которые не знают никакого ремесла и желают обучаться ему, будут открыты при мастерских школы. Школы и мастерские было бы особенно легко открыть, если будет возможность скорого получения из Москвы необходимых инструментов.

Возможно, что среди беженцев найдутся и такие, которые не пожелают обучаться ремеслу. Бежотдел предполагает для таких подыскивать места чернорабочих (уже несколько раз на железную дорогу были отправлены рабочие дружины по 8—12 ч.).

В настоящее время бежотдел озабочен другим не менее важным вопросом—вопросом постоянной врачебной помощи. Особых больниц бежотделу создавать не придется потому, что во всех городских больницах примут наших больных-бе-

женцев, но амбулаторию, где бы ежедневно принимались беженцы создать необходимо. Заведующим амбулаторией будет приглашен врач, который должен устраивать ежедневно осмотр бараков. Кроме амбулаторного врача больных беженцев по специальностям будут осматривать и уже осматривают два врача (Багиров—венерические и Парсамов—женские). Для того, чтобы знать о количестве необходимых запасов, а также иметь более определенное представление о количестве беженцев, их положении, а также о движении главной массы, бежотдел организует регистрацию беженцев (выработана особая регистрационная карточка). Бежотдел полагает зарегистрировать всех беженцев из Камышина. Регистрация эта выяснит также количество детей, которые должны быть выделены из общей беженской массы в приюты-школы.

Создание детских приютов особенно необходимо потому, что дети, живя в бараках, не могут получать какого-либо воспитания а воспринимают ряд дурных привычек и портятся.

Создание такого приюта-детского сада, и вместе с ним и начальной школы проектируется в Вольске. Бежотдел полагает, что во всех его начинаниях ему будут помогать сами беженцы, которые начинают организовываться, создавать комитеты, и вместе с представителями бежотдела будут составлять коллегию, ведающую всеми делами.

ЦГИА Арм. ССР, оп. 6, д. 1, л. 6—7 (основание: фонд Сарат. отд. Комиссариата по делам армян).

№ 47

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ ՍԱՐԱՏՈՎԻ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ԲԱԺՆԻ ԻՆՖՈՐՄԱՑԻԱՆ

1918 թ. հոկտեմբերի 6

Իր աշխատանքի հենց առաջին օրերից Հայկական գործերի կոմիսարիատի (Սարատովի բաժանմունք) գաղթականների բաժինը առիթ ունեցավ շփվելու գաղթականների կյանքի մի շարք անհետաձգելի հարցերի հետ, որոնք պահանջում էին շուտափույթ լուծում։

Գաղթական մասսայի կարիքը, խավարամտությունն ու անկազմակերպվածությունը—ահա այն, ինչ գաղթականների նախկին կազմակերպություններից (Ազգային կոմիտեն, գաղթականական հանձնաժողովը), ժառանգություն է մնացել գաղթբաժնին։

Գաղթբաժնի աշխատանքը հատկապես դժվարացավ շնորհիվ այն բանի, որ բոլոր այդ գաղթականական կազմակերպությունները, գաղթականներին օգնելու գործի ոչ ճիշտ դրվածքի հետևանքով, ստեղծել էին անգործների և ձրիակերների կադրեր՝ չբերելով ոչ մի էական օգուտ։ Գլխավոր հարցը, որին գաղթբաժնին վիճակվեց ընդհարվել, գաղթականներին նյութական օգնություն ցույց տալու հարցն էր։

Այդ հարցի կապակցությամբ գաղթբաժինը եկավ այն եզրակացության, որ նախկին կազմակերպությունների կողմից ընդունված՝ դրամական սիստեմատիկ հատկացումների սիստեմից անհրաժեշտ է մեկընդմիշտ հրաժարվել, քանի որ այդ միջոցառումը համարյա ոչ մի օգուտ չի բերում և մասսաներին սովորեցնում է անգործության։ Գաղթբաժինը կարծում է, որ ավելի նպատակահարմար կլիներ հետևյալ սիստեմը. աշխատանք չունեցողները դրամական հատկացում չեն ստանում, այլ անմիջականորեն ուղարկվում են դեպուտատների Սովետին կից սոցիալական ապահովագրության բաժին, որտեղ նրանց ցույց են տալիս որոշակի օգնություն։

Կանայք, երեխաներն ու հիվանդները սկզբնական շրջանում գաղթբաժնից ստանում են դրամական նպաստ, հետո գաղթբաժնի կողմից նույնպես ուղարկում են սոցիալական ապահովագրության բաժին։

Բացի դրանից, կանայք, երեխաներն ու հիվանդները գաղթբաժնից ստանում են սպիտակեղեն, կտորեղեն և այլն։

Ելնելով այն բանից, որ գաղթականները լեզու չիմանալու, տեղական պայմաններին անծանոթ լինելու, ինչպես և մթերային ճգնաժամի հետևանքով հնարավորություն չունեն ստանալու կարդին (նորմալ) սնունդ, գաղթբաժինը նպատակ դրեց կազմակերպել էժան ճաշարան, որտեղ նրանք փոքր վճարով կարողանային ստանալ ճաշեր։

Ջուններներին, հիվանդներին, կանանց և երեխաներին ճաշերը բաց կթողնվեն ամենացածր գներով, իսկ երբեմն էլ՝ ձրի։ Այդ նպատակով գաղթբաժինը արդեն ձեռնամուխ է եղել ձմռան համար պաշարելու կարտոֆիլ, առայժմ ստացել ենք 200 մարդու համար 5-ական փութ, կաղամբ, կանաչեղեն և այլն։

Գաղթականների կյանքի մյուս, ոչ պակաս սուր հարցը գաղթականների գործազրկության հարցն է։ Այդ բանի դեմ պայքարելու նպատակով գաղթբաժինը առաջարկում է կազմակերպել մի շարք արհեստանոցներ (ատաղձագործական, կար ու ձևի, կոշկի և կանանց, որտեղ գաղթականների համար կարեին սպիտակեղեն ու հագուստներ, և այլ կազմակերպություններ), որոնք պետք է կազմակերպվեն կոմունիստական սկզբունքներով։

Իսկ այն գաղթականների համար, որոնք չունեն ոչ մի արհեստ և ցանկանում են սովորել, արհեստանոցներին կից կբացվեն դպրոցներ։ Դպրոցներն ու արհեստանոցը հատկապես հեշտ կլիներ բացել, եթե միայն անհրաժեշտ գործիքները շուտ ստացվեին Մոսկվայից։

Հնարավոր է, որ գաղթականների մեջ գտնվեն այնպիսիները, որոնք չցանկանան արհեստ սովորել և չգիտեն այն։ Այդպիսիների համար գաղթբաժինը մտադիր է գտնել սևագործ բանվորության տեղեր (արդեն մի քանի անգամ 8—12 մարդուց բաղկացած բանվորական դրուժինաներ են ուղարկվել երկաթուղի)։

Ներկայումս գաղթբաժինը մտահոգված է մի այլ, ոչ պակաս կարևոր հարցով՝ մշտական բժշկական օգնության հարցով։ Գաղթբաժինը ստիպված չի լինի հատուկ հիվանդանոցներ ստեղծել, քանի որ քաղաքային բոլոր հիվանդանոցներում կընդունեն մեր հիվանդ գաղթականներին, բայց բուժարան, որտեղ ամեն օր բնդունվելին գաղթականները, ստեղծել անհրաժեշտ է։ Իբրև բուժարանի վարիչ կհրավիրվի բժիշկ, որը ամեն օր կշրջագայի նաև բարաքները։ Բացի բուժարանի բժշկից, հիվանդ գաղթականներին բուն մասնագիտության պետք է նայեն և արդեն նայում են երկու բժիշկ (Բաղիրովը՝ վեներական, և Պարսամովը՝ կանացի)։ Անհրաժեշտ պաշարների քանակը իմանալու համար, ինչպես նաև գաղթականների քանակի, դրության, ինչպես և գլխավոր մասսայի շարժման ուղու մասին ավելի որոշակի պատկերացում ունենալու համար գաղթբաժինը կազմակերպում է գաղթականների հաշվառում (մբշակված է հատուկ հաշվառման քարտ)։ Գաղթբաժինը ենթադրում է հաշվառման ենթարկել Կամիշինից եկող բոլոր գաղթականներին։ Այդ հաշվառումը կպարզի նաև այն երեխաների քանակը, որոնք պետք է անջատվեն գաղթականների ընդհանուր մասսայից՝ դպրոց-մանկատներում տեղավորելու համար։

Մանկատների ստեղծումը հատկապես անհրաժեշտ է նրա համար, որ բարաքներում ապրող երեխաները չեն կարող ստանալ որևէ դաստիարակություն, յուրացնում են վատ սովորություններ և փչանում են։

Այդպիսի մանկատուն-մանկապարտեզի և դրա հետ միասին տարրական դպրոցի ստեղծումը նախագծվում է Վոլսկում։ Գաղթբաժինը կարծում է, որ սկսած բոլոր գործերում իրեն կօգնեն իրենք՝ գաղթականները, որոնք կսկսեն կազմակերպվել, ստեղծել կոմիտեներ, որոնք, գաղթբաժնի ներկայացուցիչների հետ, կկազմեն ամբողջ գործերը անօրինող կոլեգիա։

ՀՍՍՌ ԿԳՊԱ, ց. 6, գ. 1, թ. 6—7 (հիմք՝ Հայկական գործերի կոմիսարիատի Սարատովի բաժանմունքի ֆոնդ)։

№ 48

ПРОТОКОЛ СОВМЕСТНОГО ЗАСЕДАНИЯ ЧЛЕНОВ ПОВОЛЖСКОЙ МИССИИ ПО ОКАЗАНИЮ ПОМОЩИ БЕЖЕНЦАМ ЗАКАВКАЗЬЯ С ПРЕДСТАВИТЕЛЯМИ САРАТОВСКОГО ОТДЕЛЕНИЯ КОМИССАРИАТА ПО ДЕЛАМ АРМЯН ОТ 6-ГО ОКТЯБРЯ 1918 ГОДА

СЛУШАЛИ:

I. Доклад... об осмотре положения беженцев, находящихся в Саратове.

ПОСТАНОВИЛИ

...что для успешного разрешения беженского вопроса в Саратове и его районах необходимо:

1) произвести полную и точную регистрацию всех беженцев в кратчайший срок;

2) устроить общежитие более сносное в медико-санитарном и техническом отношениях;

3) устроить общую столовую;

4) выделить детей из общей массы и устроить дет-

ский приют по получении результатов регистрации, как в Саратове, так и в его районах;

5) немедленно создать беженские комитеты и теснее связаться с ними;

6) организовать постоянную медицинскую помощь с открытием амбулатории;

7) в срочном порядке организовать необходимую для беженцев школу-мастерскую;

8) посылать в центр еженедельное донесение о движении беженцев и присылать полный двухнедельный отчет о ходе и результате организационных работ.

Что же касается вопроса о приеме тов. Шамшинова в число сотрудников беженского отдела, то это предложение миссии отвергнуто в виду избытка технического персонала в отделе. Тов. Геонджян принят в качестве штатного врача при беженском отделе и на него возложена обязанность правильной постановки дела постоянной медико-санитарной помощи беженцам.

II. Отпуск товара беженцам.

Решено, согласно прилагаемому при сем списку, отпустить товар в распоряжение беженск. отд. для раздачи беженцам, соразмерно нуждам каждого.

III. Передача особняка.

В виду того, что для миссии был реквизирован особняк в 7 комнат, решено предоставить его в распоряжение местного комиссариата, нуждающегося в помещении.

С подлинным верно:
Делопроизводитель (подпись).

ЦГИА Арм. ССР, д. 110, оп. 5, л. 3.

№ 48

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻՆ ՕԳՆՈՂ ՊՈՎՈԼԺԻԵԻ ՄԻՍԻԱՅԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ ՍԱՐԱՏՈՎԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ 1918 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 6-Ի ՄԻԱՑՅԱԼ ՆԻՍՏԻ

ԼՍԵՑԻՆ

I. Ջեկուցում Սարատովում գտնվող գաղթականների վիճակի ուսումնասիրության մասին։

ՈՐՈՇԵՑԻՆ

...որ Սարատովում և նրա շրջաններում գաղթականների հարցը հաջողությամբ լուծելու համար անհրաժեշտ է.

1) Կարճ ժամանակամիջոցում անցկացնել բոլոր գաղթականների լրիվ ու ճշգրիտ հաշվառում։

2) Կազմակերպել բժշկասանիտարական և տեխնիկական տեսակետից ավելի տանելի հանրակացարան։

3) Կազմակերպել ընդհանուր ճաշարան։

4) Երեխաներին առանձնացնել ընդհանուր մասսայից և կազմակերպել մանկատներ՝ ինչպես Սարատովում, այնպես էլ նրա շրջաններում, հաշվառման արդյունքները սառնալուց հետո։

5) Անհապաղ ստեղծել գաղթականների կոմիտեներ և ավելի սերտորեն կապվել նրանց հետ։

6) Բուժարանի բացումով կազմակերպել բժշկական սիստեմատիկ օգնություն։

7) Շտապ կերպով կազմակերպել գաղթականներին անհրաժեշտ դպրոց-արհեստանոց։

8) Գաղթականների շարժման մասին ամեն շաբաթ զեկույց ուղարկել կենտրոնին և ուղարկել երկշաբաթյա լրիվ հաշվետվություն կազմակերպչական աշխատանքների ընթացքի և արդյունքների մասին։

Իսկ ինչ վերաբերում է ընկ. Շամշինովին գաղթականների բաժնի աշխատակիցների մեջ ընդունելուն, միսիայի այդ առաջարկությունը մերժված է, նկատի ունենալով բաժնում տեխնիկական անձնակազմի ավելորդ շատությունը։ Ընկ. Գյոնջյանը ընդունված է որպես գաղթբաժնին կից հաս-

տիքային բժիշկ և նրա վրա է դրված գաղթականներին սիստեմատիկ բժշկա-սանիտարական օգնություն ցույց տալու ճիշտ կազմակերպման պարտականությունը։

II. Գաղթականներին ապրանք բաց թողնելը։

Որոշված է՝ համաձայն այսօրինի կցված ցուցակի՝ բաց թողնել ապրանք գաղթբաժնին՝ գաղթականներին բաժանելու համար, յուրաքանչյուրի կարիքներին համապատասխան։

III. Շենքի հանձնումը։

Նկատի ունենալով, որ միսիայի համար բռնագրավվել է 7 սենյականոց մի շենք, որոշված է այն տրամադրել տեղական կոմիսարիատին, որը շենքի կարիք ունի։

Իսկականի հետ հիշտ է՝
Գործերի կառավարիչ (առորագրություն)

ՀՍՍՌ ԿՊՊԱ, գ. 110, ց. 5, թ. 3։

№ 49

ПРОТОКОЛ № 1
ЗАСЕДАНИЯ КОЛЛЕГИИ ОТ 14-ГО ОКТЯБРЯ 1918 ГОДА

СЛУШАЛИ:

1. По культурно-просветительному отделу.

Тов. Костандиан, имея ввиду то обстоятельство, что культурно-просветительная работа ведется комиссариатом, но нет ответственного заве-

ПОСТАНОВИЛИ

1. Заведующим культурно-просветительным отделом временно назначить тов. Алавердова и просить тов. Костандиана взять на себя руководство отделом.

дующего отделом, предлагает для более планомерной работы назначить одного заведующего культурно-просветительным отделом.

2. О библиотеке.

Выслушали доклад тов. Костандиана о том, что библиотека должна составлять секцию культурно-просветительного отдела и быть поставлена на должную высоту.

3. О народной аудитории. В виду необходимости устраивать как в народной аудитории, так и в бараках систематическое чтение лекций, и проведение бесед, предлагается немедленно приступить к работе в этом направлении.

4. В виду того, что за последнее время, беженцы проявляют особый интерес к совершающимся мировым событиям, но не имеют возможности следить за прессой, вследствие незнания русского языка, предлагается издавать бюллетень на армянском языке для распространения в армянской трудовой массе.

5. О беженском отделе. Тов. Авакян находит нужным открыть столовую для

2. Организовать библиотечную секцию при культурно-просветительном отделе, выписывать регулярно все газеты и журналы; сделать широкое оповещение об открытии библиотеки-читальни, выработать инструкции для библиотечной секции.

3. Организовать правильное чтение лекций, устраивать собеседования на различные темы. Техническую сторону в устройстве лекций поручить инструктору при культурно-просветительном отделе.

4. Принять срочные меры для приобретения армянского шрифта, временно приступить к изданию посредством шапирографа. Пригласить переводчика статей для бюллетеня и одного сотрудника для печатания; немедленно приступить к работе, выпускать часто воззвания к армянской трудовой массе.

5. Обратиться в Продовольственный комитет и, если последний даст гарантию

беженцев, т. к. вследствие дороговизны продуктов, они лишены возможности получать горячую пищу.

6. Тов. Авакян предлагает купить для беженцев 1000 пудов картофеля.

7. Предлагается открытье в особняке, отведенном в распоряжение комиссариата амбулаторию, остальные же комнаты отвести семейным беженцам, ввиду того, что им невозможно жить в общих бараках.

8. По заявлению заведующего бежотделом необходимо изготовить для беженцев матрацы и подушки.

9. Слушали доклад тов. Авакяна об организации беженских мастерских: портняжной, сапожной и женской швейной.

10. Выслушали просьбу члена исполкома тов. Парре о представлении комиссариатом отчета о своей деятельности.

в получении продуктов, приступить к открытию столовой.

6. Предложение принимается.

7. Обследовать помещения и затем приступить к распределению комнат, причем разместить главным образом многолюдные семейства.

8. Предложение принимается. Для изготовления привлечь к работе женщин-беженок за плату.

9. Предложить бежотделу представить доклад и смету по оборудованию мастерских и приступить к их организации.

10. Поручить составление отчета-доклада тт. Авакяну и Алавердову.

Уполномоченный комиссариата
по делам армян (подпись)
Секретарь:

ЦГИА Арм. ССР, д. 110, оп. 5, л. 4.

№ 49

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 1
ԿՈԼԵԳԻԱՅԻ 1918 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի ՆԻՍՏԻ

ԼՍԵՑԻՆ	ՈՐՈՇԵՑԻՆ
1. Կուլտուր-լուսավորական բաժնի գծով։ Ընկ. Կոստանդյանը, նկատի ունենալով այն հանգամանքը, որ կուլտուր-լուսավորական աշխատանքը տարվում է կոմիսարիատի կողմից, բայց չկա բաժնի պատասխանատու վարիչ, առաջարկում է ավելի համաչափ աշխատանքի համար մեկին նշանակել կուլտուր-լուսավորական բաժնի վարիչ։	1. Կուլտուր-լուսավորական բաժնի վարիչ ժամանակավորապես նշանակել ընկ. Ալավերդովին և խնդրել ընկ. Կոստանդյանին իր վրա վերցնելու բաժնի ղեկավարությունը։
2. Գրադարանի մասին։ Լսեցին ընկ. Կոստանդյանի զեկուցումը այն մասին, որ գրադարանը պետք է կազմի կուլտուր-լուսավորական բաժնի սեկցիա և դրվի հարկավոր բարձրության վրա։	2. Կուլտուր-լուսավորական բաժնին կից կազմակերպել գրադարանային սեկցիա, կանոնավոր ձևով դուրս գրել թերթերն ու ամսագրերը, անել յայն ծանուցում գրադարանընթերցարանի բացման մասին և մշակել հրահանգներ գրադարանային սեկցիայի համար։
3. Ժողովրդական լսարանի մասին։ Նկատի ունենալով ինչպես ժողովրդական լսարանում, այնպես էլ բարաքներում լեկցիաներ կարդալու և զրույցներ անցկացնելու անհրաժեշտու-	3. Կազմակերպել կանոնավոր լեկցիաներ և զրույցներ գաղթականների հետ զանազան թեմաների շուրջը, լեկցիաների կազմակերպման տեխնիկական կողմը հանձնարարել կուլտուր-լուսավորական

թյունը, առաջարկվում է անհապաղ աշխատանքի անցնել այդ ուղղությամբ։	բաժնի հրահանգչին։ Ընդ որում, հրապարակային լեկցիաներին զուգընթաց կազմակերպել միաիդներ, որոնցում պետք է խոսվի ընթացիկ մոմենտի ամենակարևոր հարցերի մասին, պետք է հաղորդվի պրոլետարիատի համար նշանակություն ունեցող բոլոր իրադարձությունների մասին։
4. Նկատի ունենալով, որ վերջին ժամանակներս գաղթականները ցուցարերում են հատուկ հետաքրքրություն կատարվող համաշխարհային իրադարձությունների նկատմամբ, բայց ոուսերեն չիմանալու հետևանքով չեն կարողանում հետևել մամուլին, առաջարկվում է հրատարակել հայերեն բյուլետեն՝ հայ աշխատավոր մասսայի մեջ տարածելու համար։	4. Անհապաղ միջոցներ ձեռնարկել հայկական շրիֆտ ձեռք բերելու համար, ժամանակավորապես ձեռնամուխ լինել հրատարակությանը շապիրոգրաֆի միջոցով, հրավիրել հոդվածների թարգմանիչ՝ բյուլետենի համար և մի աշխատակից՝ տպագրման համար, անհապաղ անցնել աշխատանքի, հաճախակի թողարկել կոչեր՝ ուղղված հայ աշխատավոր մասսային։
5. Գաղթականների բաժնի մասին։ Ընկ. Ավագյանը անհրաժեշտ է գտնում գաղթականների համար բացել ճաշարան, որովհետև մթերքների թանկության հետևանքով նրանք զրկված են տաք սնունդ ստանալու հնարավորությունից։	5. Դիմել Պարենային կոմիտեն և, եթե վերջինս նրաշխիք կատ մթերքներ ստանալու, ձեռնամուխ լինել ճաշարանի բացմանը։
6. Ընկ. Ավագյանը առաջարկում է գաղթականների համար դնել 1000 փութ կարտոֆիլ։	6. Առաջարկությունն ընդունվում է։
7. Առաջարկվում է կոմիսարիատի տրամադրության տակ	7. Հետազոտել շենքը և ապա ձեռնամուխ լինել սենյակ-

դրված շենքում բացել բուժարան, մնացած սենյակներն էլ տալ ընտանիքավոր գաղթականներին, քանի որ նրանց համար հնարավոր չէ ապրել ընդհանուր բարաքներում։

8. Ըստ գաղթաժնի վարիչի հայտարարության անհրաժեշտ է գաղթականների համար պատրաստել ներքնակներ ու բարձեր։

9. Լսեցին ընկ. Ավագյանի դեկուցումը գաղթականների համար դերձակների, կոշիկի և կանանց կարի արհեստանոցներ կազմակերպելու մասին։

10. Լսեցին գործկոմի անդամ ընկ. Պարրեի խնդիրքը՝ ներկայացնելու կոմիսարիատի հաշվետվությունը՝ իր գործունեության մասին։

ների բաշխմանը, ընդ որում տեղավորել գլխավորապես բազմանդամ ընտանիքներին։

8. Առաջարկությունն ընդունվում է։ Պատրաստելու համար աշխատանքում ընդգրկել գաղթական կանանց՝ վըճարով։

9. Առաջարկել գաղթաժնին՝ ներկայացնել դեկուցագիր և նախահաշիվ արհեստանոցները սարքավորելու մասին և ձևնամուխ լինել նրանց կազմակերպմանը։

10. Հաշվետվություն-դեկուցում կազմելը հանձնարարել ընկ. Ավագյանին և Ալավերդովին։

Հայկական գործերի կոմիսարիատի լիազոր (մատրագրություն) քարտուղար.

ՀՍՍՌ ԿԳԳԱ, գ. 110, ց. 5, թ. 4։

№ 50

ПРОТОКОЛ № 3
ЗАСЕДАНИЯ КОЛЛЕГИИ ОТ 30-ГО ОКТЯБРЯ 1918 ГОДА

Присутствовали: тт. Костандиан, Авакян и Алавердов.

СЛУШАЛИ:

. . . . . .

2. Об утверждении в должности библиотекаря временного заведующего тов. Назарянца.

ПОСТАНОВИЛИ

. . . . . .

2. Назначить библиотекарем тов. Акопяна, а тов. Назарянца — инструктором по регистрации беженцев Саратовской губернии, причем поручить тов. Назарянцу представить статистические сведения о количестве и положении беженцев по всей Саратовской губернии.

. . . . . .

4. О мастерских для беженцев, тов. Авакян заявляет, что он вступил в переговоры с Совнархозом о создании беженской мастерской фабричного характера, с количеством рабочих в 100—150 человек.

4. Предложить бежотделу представить инструкции по оборудованию мастерских на 120 человек.

5. Имея ввиду необходимость существования среди беженцев организации, как для успешной культурно-просветительной работы среди них, так и для руководства их внутренней жизнью, предлагается приступить к организации двух комитетов беженской бедноты.

5. Приступить к организации двух комитетов беженской бедноты: одного — из беженцев, живущих в «особняке», другого — из живущих в бараках, причем комитеты бедноты тесно связать с группой коммунистов-армян.

Уполномоченный (подпись)
Секретарь (подпись).

ЦГИА Арм. ССР, д. 110, оп. 5, л. 6.

№ 50

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3
ԿՈԼԵԳԻԱՅԻ 1918 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի ՆԻՍՏԻ

Ներկա էին ընկ. ընկ. Կոստանդյանը, Ավագյանը և Ալավերդով

ԼՍԵՑԻՆ	*ՈՐՈՇԵՑԻՆ*
. . . . .	. . . . .
2. Ժամանակավոր վարիչ ընկ. Նազարյանցին գրադարանավարի պաշտոնում հաստատելու մասին...	*2. Գրադարանավար նշանակել ընկ. Հակոբյանին, իսկ ընկ. Նազարյանցին՝ Սարատովի նահանգի գաղթականների հաշվառման գծով հրահանգիչ, ընդ որում ընկ. Նազարյանցին հանձնարարել ներկայացնելու վիճակագրական տվյալներ ամբողջ Սարատովի նահանգի գաղթականների թվի և վիճակի մասին;*
. . . . .	. . . . .
4. Գաղթականների արհեստանոցների մասին։ Ընկ. Ավագյանը հայտարարում է, որ նա բանակցություններ է մտել Ժողտնտխորհի հետ՝ բաւեղծելու ֆաբրիկայի բնույթի գաղթականների արհեստանոց 100—150 բանվորների համար։	*4. Առաջարկել գաղթբաժնին՝ ներկայացնել հրահանգ 120 մարդու համար արհեստանոց սարքավորելու մասին։*
5. Նկատի ունենալով գաղթականների մեջ կազմակերպության գոյության անհրաժեշտությունը՝ ինչպես նրանց մեջ հաջողությամբ կուլտուրլուսավորական աշխատանք տանելու, այնպես էլ նրանց ներքին կյանքը վերահսկելու համար, առաջարկվում է ձեռնամուխ լինել կազմակերպելու	*5. Ձեռնամուխ լինել գաղթական չքավորների երկու կոմիտեի կազմակերպմանը, մեկը՝ «առանձնատներում» ապրող գաղթականներից, մյուսը՝ բարաքներում ապրողներից, ընդ որում չքավորների կոմիտեները*

գաղթական չքավորների երկու կոմիտեի։

Լիպոր (տարագրություն)
Քարաուզար (տարագրություն)

ՀՍՍՌ ԿՊՊԱ, գ. 110, ց. 5, թ. 6։

№ 51

ПРОТОКОЛ № 2
ЗАСЕДАНИЯ КОЛЛЕГИИ ОТ 23-ГО ОКТЯБРЯ 1918 ГОДА

Присутствовали: т. т. Костандиан, Авакян и Алавердов.

СЛУШАЛИ:	ПОСТАНОВИЛИ:
1. Доклад заведующего бежéнским отделом Авакяна, который имел беседу с особо уполномоченным по делам беженцев тов. Хумарянцем о положении беженцев в г. Астрахани, где скопилось около 10 000 человек, не имеющих крова; т. Авакян предлагает принять по Астрахани в первую очередь 250 беженцев, затем выслать представителя комиссариата в гг. Баренск, Вольск и Хвалынск, подыскать помещения для беженцев, выяснить условия жизни, дабы иметь возможность через короткое время разместить в этих городах около 2000—3000 беженцев.	1. Принять меры для удовлетворения потребностей прибывающих беженцев, привести в порядок бараки, произвести нужный ремонт, закупить для выдачи беженцам картофеля и других продуктов, ускорить открытие амбулатории и мастерских. Командировать инструкторов в г. г. Вольск и Баренск, для выяснения условий жизни беженцев, войти в сношение с уездным исполкомом, жилищным отделом, продовольственным комиссариатом и действовать в контакте с ними во всех вопросах жизни прибывающих беженцев.

2. Ввиду того, что праздник годовщины Революции является одним из светлых праздников для пролетариата, предлагается принять все меры к тому, чтобы армянская беднота принимала участие в праздновании. Предлагается устроить для беженской бедноты литературно-музыкальный вечер, митинг, выступить с речами, с целью разъяснения значения социальной революции и совершающихся мировых событий.

3. Тов. Костандиан предлагает выдать к празднику беженцам некоторые продукты и разукрасить помещение комиссариата портретами вождей революции.

2. Переговорить по поводу устройства вечера с тов. Парре и выработать тов. Авакяну и Алавердову программу вечера; обратится к студенческому революционному комитету и армянскому кружку любителей искусства с предложением принять участие в устройстве празднования. Устроить, как в помещении комиссариата, так и в бараках митинги 7-го и 8-го ноября в 6 часов вечера; принять участие в устраиваемом латышами интернациональном вечере. Войти в сношение с Латышским клубом по вопросу о предоставлении Комделарму помещения для устройства празднования вечера специально для беженцев. Устроить лекцию 9-го числа в Народной аудитории.

3. Предложение принимается единогласно. Ассигновать на украшение тысячу пятьсот (1500) рублей.

Уполномоченный комиссариата
по делам армян: (подпись)
секретарь (подпись)

ЦГИА Арм. ССР, д. 110, оп. 5, л. 5. (Основание: фонд Сарат. отд. Комиссариата по делам армян).

№ 51

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2
ԿՈԼԵԳԻԱՅԻ 1918 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի ՆԻՍՏԻ

Ներկա էին՝ ընկ. ընկ. Կոստանդյանը, Ավագյանը և Ալավերդովը

ԼՍԵՑԻՆ

1. Գաղթականների բաժնի վարիչ Ավագյանի զեկուցումը, որը զրույց է ունեցել գաղթականների գործերի հատուկ լիազոր ընկ. Խումարյանցի հետ՝ Աստրախան քաղաքի գաղթականների վիճակի մասին, որտեղ կուտակվել են ապաստան չունեցող մոտ 10 000 մարդ: Ընկ. Ավագյանն առաջարկում է առաջին հերթին Աստրախանից ընդունել 250 գաղթական, ապա կոմիսարիատի ներկայացուցչին ուղարկել Բարենսկ, Վոլսկ և Խվալինսկ քաղաքները, փնտրել շենք՝ գաղթականների համար, պարզել կենսապայմանները, որպեսզի հնարավորություն լինի կարճ ժամանակից հետո այդ քաղաքներում տեղավորել մոտ 2000—3000 գաղթականների:

2. Նկատի ունենալով, որ Ռևոլյուցիայի տարեդարձի տոնը պրոլետարիատի համար հանդիսանում է պայծառ տո-

ՈՐՈՇԵՑԻՆ

1. Միջոցներ ձեռնարկել ժամանող գաղթականների պահանջմունքները բավարարելու համար, կարգի բերել բարաքները, կատարել հարկավոր վերանորոգում, գաղթականներին տալու համար դնել կարտոֆիլ և այլ մթերքներ, արագացնել բուժարանի և արհեստանոցների բացումը: Հրահանգիչներ գործուղել Վոլսկ և Բարենսկ քաղաքները՝ գաղթականների կենսապայմանները պարզելու համար, հարաբերության մեջ մտնել գավառային գործկոմի, բնակարանային բաժնի, պարենային կոմիսարիատի հետ և ժամանող գաղթականների կյանքի հարցերում համագործակցել նրանց հետ:

2. Երևոյի կազմակերպման առթիվ բանակցել ընկեր Պարրեի հետ և հանձնարարել ընկ. Ավագյանին և Ալավերդովին՝

ներից մեկը, առաջարկվում է բոլոր միջոցները ձեռնարկել այն բանի համար, որպեսզի հայ չքավորությունը մասնակցի տոնակատարությանը։ Առաջարկվում է գաղթական չքավորության համար կազմակերպել գրական-երաժշտական երեկո, միտինգ, հանդես գալ ճառերով, նպատակ ունենալով բացատրել սոցիալիստական revolutionի և կատարվող համաշխարհային իրադարձությունների նշանակությունը։

3. Ընկ. Կոնստանդյանը առաջարկում է տոնի առթիվ գաղթականներին տալ որոշ մթերքներ և կոմիսարիատի շենքը զարդարել revolutionի առաջնորդների նկարներով։

